


ԷՂՋԱՄԻՋԻՆ



Դ
1998



ԾՐ ՏԱՐԻ

ԷՂՄԻԼԾՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՐՄԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՎԹՈՒՈՅ

Ս. ԷՂՄԻԼԾՈՒՆ

Եղիշ
1998

ՀՐԱՄԱՆ

S. S. ԳԼՈՒԽՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՇԱՓԱԼ ԵՒ ՄՐԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



1942 Զ Հ

223-98

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ
Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

**ՃԾԱՐՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԱԱՆԱԿԲ
ԿԵՂԾԻՔԻՆ ՎՐԱՅ**

«Աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան՝
զնա, մինչ մեք ի բուն էաք ... Եւ ել համբաւ
այս ի Հրեհ մինչև ցայսօր»:

(Անոր աշակերտները գիշեր ատեն, մինչ մենք
բունի մէջ էինք, եկան և գողացն զայն... Այս
լուրը հրեաներուն մէջ տարածուած է մինչև
այսօր):

(ՄԱՏԹ. ԻԸ 13, 15):

Դարձեալ դէմ առ դէմ ենք կանգնած մեր Տիրոց՝ Յիսուսի Քրիստոսի,
բայց ոչ Անոր ծաւալած քարոզութեան և կատարած հրաշք-
բարիքներուն, խօսած առակներուն, խաչելութեան պահուն կամ քարով
կնքուած գերեզմանին դիմաց, այլ՝ Յարուցեալ գոյակերպին, մահէն
դուրս եկած ու յաւերծ ապրող անձին դիմաց:

Յարմանահրաշ դէպք է նկատուած Անոր յարութիւնը: Անհաւատալի
ըլլապու չափ գերբնական, անբնական և անկարելի նկատուեցաւ այդ
դէպքը նոյնիսկ այն պահուն երբ տեղի ունեցաւ և գերեզմանը թափուր
գտնուեցաւ ու գերեզմանեալը անձնապէս յայտնուեցաւ, տեսնուեցաւ
հարիւրատորներու և խօսեցաւ շատերու հետ: Անհաւատալի նկատուե-
ցաւ ան շատ շատերու կողմէ անցնող քասան դարերու ընթացքին: Անհաւատալի կը թուի նաև այսօր, գիտութեան, բանականութեան,
առարկայապաշտ գործնականութեան տիրապետութեան ներկայ
ժամանակներուն, նոյնիսկ իրենք վիրենք քրիստոնեայ, այսինքն՝
Քրիստոսի հետևող ճանչցող բազում անձերու կողմէ:

Եւ զարմանապի չէ որ անհաւատալի թուի: Պարզ է որ նման դէպք մը
- մեռեալ վիճակին դուրս գալ և ապրիլ այնպիսի կեանքով մը որ վեր է
ժամանակի և տարածութեան սահմանափակումներէն - մարդ էակի
բանական խորհողութեան ու կեանքի փորձառութեան մէջ տեղ չունի:

Բայց իրակա՞ն էր դէպքը ինք: Յիսուս դուրս էր եկած գերեզմանէն:
Ինչպէս բացատրէլ այդ երևողթը: Խիստ մոտահոգուած էին մանաւանդ
անոնք որոնք Յիսուսը մահուան էին դատապարտած, խաչ

բարձրացուցած և գերեզմանի մէջ պետեղած, գերեզմանն ալ մեծոյի քարով կնքած ու հոռմեական լեգենսական վինուրները տեղեկացան իրականութեան, երբ պահակ վինուրներէն ումասք եկան և յարունեցին որ իրապէս գերեզմանէն դուրս էր եկած խաչեալ ու թաղեալ նապովեցին, ահի ու սարսափի մատնուեցան: Ինչպէ՞ս արդարացնէին իրենց ըրածը: Ինչպէ՞ս իրենց ժողովուրդին կարենային բացատրել որ երեք օր առաջ Յիսուսի գոյութեան վերջ դրած էին և այժմ վերջը նոր սկիզբ էր դարձած...: Ուստի, իրենց յատուկ հնարամտութեամբ դիմեցին յերիւրանքի, կեղծիքի, ինչպէս անոր մահացումէն առաջ դիմած էին մատնութեան, անիրաւ դատավարութեան, անարդար դատասարանի, անազմի ճաղկումի, անմարդկային չարչարանքի և խաչապարտութեան: Պահակ վինուրներուն յանձնարարեցին որ ժողովուրդին մէջ տարածեն այն լուրը թէ երբ խոր գիշերին իրենք քնացած էին, Յիսուսի աշակերտները եկեր էին և գողցեր՝ Անոր մարմինը: Աւելին: Եթէ պատահէր որ այդ կեղծիք-լուրը դատաւր-կառավարիչին ականջը հասնէր՝ իրենք կը համոզէին այդ իշխանաւորը և վինուրները իրենք կրնային ապահով զգալ, որ ունէ վնաս, պատիճ ու չարիք չէր հասնէր իրենց: Դեռ աւելին. դրաւ տուին, կաշառեցին վինուրները, որոնք այդ կեղծ լուրը տարածեցին ժողովուրդին մէջ:

«Ետաքքրական է վերջին տողը Աւելարանի այս հատուածին որուն մէջ Մատուես Աւելարանիշ կ'ըսէ որ այդ լուրը տարածուեցաւ և մինչև Աւելարանի գրուած ատենը («մինչև ցայսօր»), այսինքն՝ Յիսուսի յարութեան 30-40 տարիներ ետք, հրեաներու մէջ այդ լուրը տարածուած կը մնայ:

Եւ ոչ միայն այն օրերուն, այլ յաջորդող դարերուն ևս այդ լուրը տարածուած մնաց: Եւ ոչ միայն հրեայ ժողովուրդին մէջ, այլ նաև ուրիշ ազգերուն, քրիստոնեայ անհատներու մօտ: Եւ մինչև այսօր, երբ կը մօտենամք Քրիստոսի 2000-րդ տարեդարձին, դեռ որքա՞ն մարդիկ կը մնան ընդառաջիղ և նոյնիսկ տարածող այդ լուրին, թէ՝ գերեզմանը քափուր էր ո՛չ անոր համար որ Յիսուս յարութիւն էր առած, այլ անոր համար որ Յիսուսի մարմինը գողցուած և անհետացուած էր...:

Աղյակէս մտածողներ ոչ միայն պատմական իրողութիւն չեն նկատեր Յիսուսի յարութեան դրուագը, այլ կ'ուրանան բոլոր յետ յարութեան այն երևումները որոնց մասին այնքան պերճախոս վկայութիւններ կան Պօղոս Սուաքեալի Թուղթերուն և Աւելարանիշներու պատումներուն մէջ: Աւելարաններու խմբագրումէն առաջ Կորնթացցց ուղած իր թուղթին մէջ Պօղոս Սուաքեալ պքանչելի վկայութիւն մը կուտայ Յիսուսի յարութեան մասին կոր անտեսել կը նշանակէ կամաւոր և յամատ, և յատաշագունէ կասկածող ըլլալ ամէն բանի մասին: Ան կ'ըսէ. «Ես ձեզի փոխանցեցի այն (հաւատքը) ինչ որ նախ ե'ս ընդունեցի. այն՝ թէ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ, բայտ Սուրբ Գիրքին, թէ՝ ան քաղուեցաւ և երրորդ օրը յարութիւն առաւ, դարձեալ Սուրբ Գիրքին Յիսոյ երևաւ միատեղ խմբուած հինգ հարիւրէ աւելի հետնորդներուն,

որոնցմէ շատերը կ'ապրին մինչև այսօր և ումանք մեռած են: Այնուհետև երեցաւ Յակոբոսին և ապա բոլոր առաքեայներուն: Ի վերջոյ, բոլորէն յետոյ, երեցաւ նաև ինձի՝ անարժանիս» (Ա. ԿՈՐՆԹ. ԺԵ. 3):

Բայց ի՞նչ փոյթ: Կարևորը, սակայն, պատմութիւնը չէ, որպէս դէպքերու ընթացք, որ այնքան յաճախ մեկնարանութեան առարկա է: Յիսուս պատմութիւն չէ: Կարևորը իրականութիւնն է: Այն որ պայծառ և ապրուող ճշմարտութիւն է, անառարկելի, թէ՛ Յիսուս մահով վերջ չգտաւ: Կ'ապրի այսօր այնպէս ինչպէս ապրեցաւ իր երկրաւոր կեանքի օրերուն, բայց ո՛չ մարմնեղին, հողեղին գոյութեամբ, այլ յախտենական կեանքի այնպիսի որակով մը որ վեր է մեր զուտ մարդկապին տրամախոհական մոտածողութեան չափանիշներէն: Բայց ո՞վ կը լրնայ ըսել որ մարդ ամէն ինչ գիտէ կամ կրնայ գիտնալ իմացական հակեցողութեամբ և սահմանաւոր կեանքի փորձառութեամբ: Խորիոյ մարդուն առաջ կայ գոյութեան և կարողութեան այնպիսի տարածք, որուն անունն է հաւատը և որ այնքան իրական է որքան բանական տարածքն ու կարողութիւնը:

Եւ եթէ նոյնիսկ գործածենք մեր ամրողական մարդկապին բնութեան տրամախոհական ոյժը, ինչպէ՞ս չտեսնել այն շօշափելի իրականութիւնը, որ Եկեղեցւոյ կեանքն իսկ է դարերու վրայ տարածուած և տարածուող, որ յարութեան վրայ է հիմնուած: Ամենէն կասկածու գիտական միտքերն անգամ չեն կրնար բացատրել այն յատակ իրողութիւնն ու պայծառ ճշմարտութիւնը թէ Սուաքեաները, Յիսուսի մուերիմները, որոնք յարութենէն ետք իրենք ալ կասկածով ընդունեցին յարութեան լուրը էապէս կերպարանապիհուեցան, երբ նոյն իրենց վարդապետը՝ Յարուցեալը՝ երեցաւ իրենց, խօսեցաւ իրենց, երբ իրենք տեսան ու հաւատացին: Եթէ իրենք գոյցած ըլլային մարմինը, կեղծիք մը յառաջ բերած ըլլային, ինչպէ՞ս սուտի և կեղծիքի, խարեւութեան և յերիւրանքի ոյժով պիտի կերպարափոխուեին: Ինչպէս իրենց կեանքերը պիտի զոհեին իրենց իսկ շինած սաղրանքին համար: Այն անձերը՝ որոնք Յիսուսի իմացելութենէն և քաղումէն ետքը ծայր աստիճան յուսպրուած, իրենք վիրենք պարտուած, իրենց ակնկապութիւններուն և սպասումներուն մէջ յուսախարուած կը զգային, ինչպէ՞ս յանկարծ դարձան արի, անվախ, յանդուզն, բարձրաքարոզ, արհաւարհեցին նախատինքն ու հաղածանքը, չարչարանքն ու մահը և պատրաստակամ, յօժարամիտ կեցուածքով ու երջանիկ զգացումով յանձն մարտիրոսութիւնը: Ո՞վ իր կեանքը կուտայ իր սարքած սուտին և կեղծիքին համար...: Ինչպէ՞ս Սողոսներն յանկարծ դարձան Պողոս...:

Քրիստոնէական հաւատոցին տարածումը ողջ աշխարհի մէջ մանանեխի հաստիկի առակին (Մատթ. ԺԳ. 31-32) ամենէն ճշմարտախօս և պերճարաբրած վկայութիւնն է: Քրիստոնէական Եկեղեցւոյ կեանքը, քանի դարերու վրայ տարածուած, Քրիստոսի յարութեան շարունակուող երգահանդէսն է մարդկութեան կեանքին մէջ: Յարուցեալ Փրկչի խօսքը «Երանի անոնց որոնք առանց տեսած ըլլալու պիտի հաւատան» (ՅՈՎՀ. Ի. 29) կեղրոնական մեղեդին եղաւ այդ համամարդկային երգահանդէսին, որուն մէջ իր առանձնակի տեղն ունեցաւ Հայց. Սուաքեական Ս. Եկեղեցին Քրիստոսին շառախղած կոյզ Սուաքեալ-

ներով և Ս. Գրիգոր Հուսատորչի Միածնակը տեսիլքով մինչև մեր հայ ժողովուրդի նոր օրերու նոր կեանքը իր Քրիստոսադրության հայրենիքով և ապաս ու անկախ պետութեան վերատեղծութեավ:

Կարիք կա՞յ աւելին բաեզու: Դիտեցէք հայ ժողովուրդի կեանքը անցնող երկու հապարամեակներուն: Խոչեղութեան բազմադրուագ և բազմաբնոյք տեսարաններուն մէջէն, և տեսարաններէն անդին, այսիի ամսայիման զգաք յարութեան շունչին անընդմէց ներգործութիւնը: Յարութեան շունչը անչէց մասց հայ ժողովուրդի կուրծքին տակ, կրակին նման՝ որ երբեմն-երբեմն մոխրով կը ծածկուի բայց երեք չի մարիր, երբեմն-երբեմն ուրիշ ոյժեր հող կը բափին անոր վրան, բայց հողն անսօր կ'ըլլայ անոր լոյն ու չերմութիւնը խափանեզու: Մեր ողջ մշակոյթը, մեր ազգի հարազատ ինքնարտապայտութիւնը իր բոլոր կողմերով ու երեսներով, արիացեալ և արիացնող զօրութեամբ, տոկունութեան առաջնորդով, գիրով ու ձայնով, նոյնիկ արցունքով ու արինով եղաւ անևահութեան հաւատքին լուսապայծած և անստուեր ճառագայթումը: Հաւատացինք Քրիստոսի յարութեան և յաղթեցինք մահուան: Այս է ամենապայծած յառաջարանն ու վերջարանը և յաւերժարան կարգահօսութեան:

Այօր, այդ հաւատքին կրակը վերատին նոր շունչ է սուացած: Եւ չըլոննանք, այդ հաւատքին կայծէն միշտ բոց կ'առնէ ապասութիւնը, որ մարդուն մէց Ասուուծոյ շունչին առկայութիւնն է: Գիտնանք մեր այդ աստուածադրությունը բնութիւնը պահել անսարսու, դարձնել կենդանի և կենդանարար, ստեղծագործ և երջանկաբեր մեր գոյութեան այս նոր դարձնուածքին որ մեկ կ'առաջնորդէ Յարուցեալ Փրկչի 2000-ամեակէն դէպի 3000-ամեակ, կնքուած մեր պետականօրէն ճանչուած քրիստութեան 1700-ամեակով: Կեղծիքը մեկ կ'ալլացնէ, հաւատքը մեկ կը մարդկայնացնէ և կը հայացնէ:

Քրիստոսի յարութիւնը շինչ իրականութիւն է տեսնել գիտցող աչքին, զգալ գիտցող սիրտին, խորիիլ գիտցող միտքին, խորհուրդ ընկալել գիտցող հոգիին և այս բոլորն իր մէջ ճշմարտորէն և գեղեցկորէն ներդաշնակել գիտցող ազգին համար:

Զատկի այս առաօսուն, ծաղկող բնութեան այս եղանակին, եկեք կենաստու արևին լոյս իշեցնենք մեր հոգիներուն, մեր սեփական, անհատական կեանքերուն մէջ մեր հայրենի աշխարհին և ողջ հայութեան համայնական կեանքին մէջ ի սիրու աշխարհի:

**Քրիստոս յարեալ ի մեռելոց
Յարեալ և ազգ հայոց
Օրինեալ է յարութիւնն Քրիստոսի.
Շնորհաւոր Ս. Զատիկ:**

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԱՅ ՀԱՅՈՑ

12 Ապրիլի 1998

ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին

ԽՍԹԱԳՐԱԿԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՆՔ

«Ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն
ի դրաց գերեղմանին»

(ՄԱՐԿ. ԺԶ 3)

«Ո՞վ պիտի քարը գլորի մեղ համար գերեզմանի դռնից», մտորումների մեջ էին Տիրող թաղումից հետո Նրա գերեզմանին այցի զնացող Ցուղարեր կանայք, որոնք, ըստ Հրեական սովորության, ցանկանում էին խնկով և յուղով օծել իրենց Վարդապետի մարմինը: Սակայն, ո՞վ հրաշք, քարը գլորված էր և գերեզմանը դատարկ. «Ո՞վ էր համարձակվել մոտենալ գերեզմանին: Արդյո՞ք զինվորներն ու ժողովուրդը, չբավարարվելով Նրան խաչելով, ցանկացել էին նաև մի վերջին և ամենասարսափելի անարգանք հասցնել՝ մարմինը արհերես դուրս բերել ու կեր զարձնել գիշատիչներին»: Այդուհանդերձ համարձակվեցին ներս մտնել և զարհուրեցին՝ տեսնելով ճերմակ պատմուճան հագած մի երիտասարդի, որն էլ ավետեց Հիսուսի Հարության բարի լուրը: Սակայն սարսափապատ հոգիների առաջին զգացումը անհավատությունն էր այս իրողության նկատմամբ: Զհավատալու դեսպերը հաջորդում էին մեկը մրուսին՝ նույնիսկ այն պարագայում, երբ Վարդապետը շոշափելի և տեսանելի էր: Անգամ աշակերտները, որ մշտապես ունինդիր էին եղել Նրան, չկարողացան միանշանակ հավատալ այս փաստին:

Վերջապես Քրիստոս Հայտնվեց՝ տասնմեկին և Համովիմանեց Նրանց անհավատությունն ու խստասրտությունը: Եվ բոլորը հավատացին...

* *

Մարկոս Ավետարանիչը այսպիսի սեղմ կերպով և հաջորդականությամբ է նկարագրում Հարության դեպքն ու նրա հոգեբանական ընկալումը: Հիսուսի մերձագորաններն անգամ նախ զարհուրեցին՝ իրենց իրենց գանելով դատարկ գերեզմանի և այնտեղից ճառագող սրանչելի լույսի առջև: Ապա մարդկայնորեն չհավատացին, սակայն լսելով Հարուցյալ Տիրոջ Համովիմանությունն ու հավանաբար նաև Հարության մասին բազմիցս կատարված խոստումների վերջիշեցումը՝ հավատացին:

Բայց մի՞թե այսպես չէ նաև մեր Հարության օրից ձգվող, արդեն 1998-րդ անդամ Հարությունը հիշատակվող ժամանակներում: Պարզագույն

ինքնաքննությամբ կարո՞ղ ենք հարցադրում կատարել, թե Քրիստոսի Հարության օրերից ի՞նչ է փոփոխվել մեր կյանքում: Բայց տեխնիկական, արտաքին և կենցաղային փոփոխություններից, ուրիշ ոչինչ: Նույն մարդն է, նույն հոգսերով, նույն ընկալումներով, ըմբռնումներով ու ապրումներով:

Հարության օրն իսկ գերեզմանն հսկող զինվորների և հրեա իշխանավորների հովանավորությամբ տարածվեց մի կեղծիք, որ Հիսուս գողացվել է իր աշակերտների կողմից, որի մասին խոսվում էր Մատթեոս Ավետարանչի կենդանության օրերին. «Այս լուրը տարածվում է մինչև այսօր» (ՄԱՏԹ. ԻՂ 15): Հրաշալի մարդարեությամբ այդ «մինչև այսօր»-ը մեզ համար ժամանակավրեալ չէ, անշուշտ, այլ դրսերումներով և մեկնարանություններով: Հասել ենք մի այնպիսի հանգրվանի, երբ բազմաթիվ անգամներ լսում ենք Հարության Հրաշքի մասին, բայց մենք ևս պիտի մտածենք, թե «ո՞վ պիտի քարը գլորի մեզ համար գերեզմանի դռնից»:

Մեր կյանքի բոլոր շերտերի ու մակարդակների վրա արմատացած է Հարության իսկության բացակայությունը կամ լավագույն դեպքում ձևական, ավանդության ուժով ակամայից ընդունումը: Ինչո՞ւ... Պատասխանը շատ պարզ է: Նախ վախենում ենք, որովհետև ընդունելը նշանակում է նաև պարտավորություններ ու պատասխանատվություններ ստանձնել, որից էլ ծնվում է ոչ թե անհավատությունը, այլ չհավատալու ցանկությունը: Սակայն չնչին մի դեպքն էլ բավարար է ամենաանհավատին դարձի բերելու համար, երբ նա գիտակցորեն կամ ենթագիտակցորեն հասկանում է իր հանդիմանված կամ պատժված լինելը:

Ազգային վերազրթոնք անվանվող այս շրջանին ավելի ու ավելի ենք հասկանում, որ անցյալից ժառանգած մի մեծ վեմ ունենք մեզ վրա դրված և ո՞վ պիտի գլորի այն, եթե ոչ՝ մենք: Սակայն ամեն բանից առաջ ցանկություն է պետք այն գլորելու համար, որը կամ մեռել, կամ էլ հոգեվարքի մեջ է: Որքան ճշմարիտ է անգլիացի մեծ քաղաքական գործիչ Գլազուռոնը, որը բազմահմուտ լինելով քաղաքականության մեջ, այնուամենայնիվ համոզված էր, որ «մարդկության երջանկությունն այժմ քաղաքականությունից կախված չէ. իսկական կրիվը տեղի է ունենում մտքի աշխարհում, ուր և կատարվում են մահաբեր հարձակումները մարդկության ամենամեծ գանձի՝ հավատի վրա, որ տանում է դեպի Աստված և Քրիստոսի Ավետարանը»:

Հասարակության կամ անհատի վրա երկրի օրենքներն ու կառավարման համակարգերը ոչ մի ազդեցություն չեն կարող ունենալ, եթե նա ներքնապես պատրաստ չլինի իր քաղաքացիական պարտականությունների կատարմանը: Ցոլոր դժբախտությունները կամ ձախողումները կյանքում արձանագրվելուց առաջ մեր մեջ են տեղի ունենում՝ ամեն օր հոգով մեռնելով և անհոգությամբ մեր մեջ Աստծուն սպանելով: Այս պատճառով է մեր Տերը շնչում, թե «Երկնքի արքայությունը ձեր ներսում՝ ձեր մեջ է»: Ե՞վ բարիքը և՝ չարիքը այդ խորհրդակոր՝ հոգի կոչվող ավազանում են ծնունդ առնում

մինչև գործադրվելը, որով գործը դառնում է մտածումի կամ ապրումի իրական հայելին ու արտափայլումը:

Ցավալի է, սակայն փաստ, որ վերջին խորհրդային տարիների թե ավելի վաղուցվա ազգեցությունների պատճառներով հարութենապաշտ և հարութենակյաց մեր ժողովուրդը թուլացել է ոչ միայն հոգեւոր կյանքի ըմբռնումների, այլև ընդհանրապես կյանքին իմաստ հաղորդող ոչ նյութական և կենցաղային ոլորտների նկատմամբ: Այսպիսի շարունակությունը հղի է ծանր հետևանքներով, եթե ոչ այսօրվա, ապա անպայմանորեն ապագայի համար:

1700-ամյա քրիստոնյա ազգ լինելու մեծագույն պատիվն ենք կրում:

1700 տարի մեր ճակատին խաչադրոշմել ենք Հարության լույսից ծնված սրբացնող մյուռունը այնքան պաշտելի հայի համար:

1700 տարի մեռեներից զատվելու և անկման ժամանակ բարձրանալու վերիվայրումներն են եղել մեր ընթացքը:

1700 տարիների երկար ու ճիգ ժամանակահատվածում ազգային հպարտության տեղիք տվող և Քրիստոսին հավատարմության վկայագիր հանդիսացող բոլոր սիրագործությունները ծնվել են ամենաղաժամն և ապրելու համար ծանր պայմաններում: Սոցիալական, տնտեսական և անշուշտ քաղաքական:

1700 տարի Խաչեցյալի հետ խաչվել և Հարուցյալի հետ հառնել ենք, վկան՝ ԱՊՐԻԼ 24-ը, որ զարմանալիորեն զուգադիպում և ընդգրկված է մեր Տիրոջ Հարության հիսուն օրերի վրա տարածվող տոնախմբության ժամանակահատվածում: Այստեղ խաչաձևվում են մահվան և կյանքի խորհուրդները՝ միաժամանակ հիշատակվելով: Սա՛ է իրական հայկականը, որն իր արմատներով ու ակունքներով անբաժան է քրիստոնեականից, կյանքի նկատմամբ ունեցած իր ենթապատկերացմամբ, մահվան հանդեպ արտահայտված անբացատրելի քամահրանքով:

Հպարտանում ենք, որ առաջին ազգն ենք քրիստոնյա, և աշխարհում այսօր չկա մի ուրիշ ազգ, որ իր երկրի ու ժողովրդի մկրտության 1700-ամյակը կարողանա տոնել: Բայց մի՞նչեւ սին ու դատարկ հպարտություն չէ սա, երբ Ում անունով և խաչելությամբ որ մկրտվել ենք, Նրա իսկ մատնության և «սոսկալի չարչարանաց» գիշերը՝ Ավագ Հինգշարթի, ազգովին մասնակցում ենք Ազատության հրապարակում տեղի ունեցող հրավառությանը, երբ ամբողջ քրիստոնյա աշխարհը՝ ոչ 1700-ամյա մկրտությամբ, սուրգի և տրտմության մեջ վերհիշում է Տիրոջ հետ կատարված այդ անպատմելի իրադարձությունները: Սա մի պարզ դեպք չէ, որի կողքից հպանցիկ անցնեինք, այլ մտածողության և կերպարի կամաց-կամաց ձեւավորում: Զլինենք Տիրոջը մատնողի ու խաչ հանողների գործակիցը, այլ Հարության ականատեսները:

Յուրաքանչյուրիս վիճակված է մեր մարդկային բնությամբ, Յուղաբեր կանանց կամ Տիրոջ մերձավորների նման զարհուրել և չհավատալ, և միևնույն ժամանակ անդրադառնալ հանդիմանության անխուսափելիությանը: Բայց այդ հանդիմանությունը չինի ի դատապարտություն, այլ ի շահ և հօգուտ մեր ապրելիք կյանքի՝ բոլոր մակարդակների վրա:

Զատիկը գալիս է զատելու, անընդհատ նորոգելու, կյանքի, ապրելակերպի և մտածողության մեջ ամեն ինչ նորացնելու, որովհետև առանց նորի չի կարող լինել և հինը, ինչպես որ չի կարող կայանալ շարունակությունը:

Տեսնում ենք Աստվածորդու Հարությունից հետո նյութական դատարկ գերեզմանը: Խորհրդանշական կերպով մենք էլ յուրահատուկ մի գերեզման ենք Տիրոջը պարունակելու իմաստով, սակայն ի տարբերություն նյութական գերեզմանի, որ տեղի տվեց Նրա Հարության առջև, մենք, որպես անհատ և հասարակություն, չգիտես ինչու, չենք ցանկանում զիջել և վեմը՝ մեղքի ծանրությունը գլորել մեր վրայից: Եվ ինչպես Հարության սքանչելի լուրը գերեզմանում նստած հրեշտակն ավետեց աշխարհին, այնպես էլ մենք վստահաբար կարողանանք ասել, որ Հարուցյալ Հիսուս գերեզմանված չէ իմ մեջ, «այլ յարեա՛ւ»:

ԴՐԱՅ ՏՐԴԱՀԵ

ՊԵՂՏՈՒԵԿԵՐ



բարձրացուցած և գերեզմանի մեջ վետեղած, գերեզմանն ալ մեծի բարով կնքած ու հոռմեական լեգենսական վինուորներ պահակ կարգել տուած: Երբ հրեայ ազգի այդ օրուան իշխանաւորները տեղեկացան իրականութեան, երբ պահակ վինուորներէն ումանք եկան և յայտնեցին որ իրապէս գերեզմանէն դուրս էր եկած իւաչեալ ու թաղեալ Նապովեցին, ահի ու ապասփի մատնուեցան: Ինչպէ՞ս արդարացնէին իրենց ըրածը: Ինչպէ՞ս իրենց ժողովորդին կարենալին բացատրել որ երեք օր առաջ Յիսուսի գոյութեան վերջ դրած էին և այժմ վերջը նոր սկիզբ էր դարձած....: Ուստի, իրենց յատուկ հնարաւորթեամբ դիմեցին յերիւրանքի, կեղծիքի, ինչպէս անոր մահացումէն առաջ դիմած էին մատնութեան, անիրաւ դատավարութեան, անարդար դատաւանի, անապնի ճաղկումի, անմարդկային չարչարանքի և իւաչապարտութեան: Պահակ վինուորներուն յանձնարարեցին որ ժողովորդին մեջ տարածեն այն լուրը թէ երբ խոր գիշերին իրենք քնացած էին, Յիսուսի աշակերտները եկեր էին և գողցեր՝ Մոր մարմինը: Աւելին: Եթէ պատահէր որ այդ կեղծիք-լուրը դատաւոր-կառավարիչին ականջը հասնէր՝ իրենք կը համոզէին այդ իշխանաւորը և վինուորները իրենք կրնային ապահով զգալ, որ ունէ վնաս, պատիճ ու չարիք չէր հասնէր իրենց: Դեռ աւելին, դրամ տուխն, կաշառեցին վինուորները, որոնք այդ կեղծ լուրը տարածեցին ժողովորդին մեջ:

Հետաքրքրական է վերջին տողը Աւետարանի այս հատուածին որուն մեջ Մատթեոս Աւետարանից կ'ըսէ որ այդ լուրը տարածուեցաւ և մինչև Աւետարանի գրուած աստենը («մինչև ցայսօր»), այսինքն՝ Յիսուսի յարութեան 30-40 տարիներ ետք, հրեաներու մեջ այդ լուրը տարածուած կը մնայ:

Եւ ոչ միայն այն օրերուն, այլ յաջորդող դարերուն ևս այդ լուրը տարածուած մնաց: Եւ ոչ միայն հրեայ ժողովորդին մեջ, այլ նաև ուրիշ ազգերուն, քրիստոնեա անհատներու մօս: Եւ մինչև այսօր, երբ կը մօտենանք Քրիստոսի 2000-րդ տարեկանին, դեռ որքան մարդիկ կը մնան ընդառաջիկ և նոյնիսկ տարածող այդ լուրին, թէ՝ գերեզմանը թափուր էր ո՛չ անոր համար որ Յիսուս յարութիւն էր առած, այլ անոր համար որ Յիսուսի մարմինը գողցուած և անհետացուած էր....:

Աղապէս մտածողներ ոչ միայն պատմական իրողութիւն չեն նկատեր Յիսուսի յարութեան դրուագք, այլ կ'ուրանան բոլոր իւս յարութեան այն երևումները որոնց մասին այնքան պերճախոս վկայութիւններ կան Պողոս Սուաքեալի Թուղթերուն և Աւետարանիչներու պատումներուն մեջ: Աւետարաններու խմբագրումէն առաջ Կորնթացոց ուղղած իր թուղթին մեջ Պողոս Սուաքեալ սրանչելի վկայութիւն մը կուտայ Յիսուսի յարութեան մասին կոր անսեսել կը նշանակէ կամաւոր և յամառ, և յառաջազունէ կամածող ըլլայ ամէն բանի մասին: Ան կ'ըսէ. «Ես ճեկի փոխանցեցի այն (հաւատքը) ինչ որ նախ ե՛ս ընդունեցի. այն՝ թէ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ, ըստ Սուրբ Գիրքին, թէ՝ ան քաղուեցաւ և երրորդ օրը յարութիւն առաւ, դարձեալ Սուրբ Գիրքին Յետոյ երևաւ միատեղ խմբուած հինգ հարիւրէ աւելի հետևողներուն,

որոնցմէ շատերը կ'ապրին մինչև այսօր և ումանք մեռած են: Այնուհետև երեցաւ Յակոբոսին և ապա բոլոր առաքեալներուն: Ի վերջոյ, բոլորէն յետոյ, երեցաւ նաև ինծի՝ անարժանիս» (Ա. ԿՈՐՆԹ. ԺԵ. 3):

Բայց ի՞նչ փոլթ: Կարևոր, սակայն, պատմութիւնը չէ, որպէս դէմքերու ընթացք, որ այնքան յաճախ մեկնարանութեան առարկայ է: Յիսուս պատմութիւն չէ: Կարևոր իրականութիւնն է: Այն որ պայծառ և ապրուող ճշմարտութիւնն է, անառարկելի, թէ՝ Յիսուս մահով վերջ չգտաւ: Կ'ապրի այսօր այնպէս ինչպէս ապրեցաւ իր երկրաւոր կեանքի օրերուն, բայց ոչ մարմնեղէն, հողեղէն գոյութեամբ, այլ յախտենական կեանքի այնպիսի որակով մը որ վեր է մեր զուտ մարդկային տրամախոհական մտածողութեան չափանիշներէն: Բայց ո՞վ կրնայ ըսել որ մարդ ամէն ինչ գիտէ կամ կրնայ գիտնապ իմացական հայեցողութեամբ և սահմանաւոր կեանքի փորձառութեամբ: Խորիոյ մարդուն առաջ կայ գոյութեան և կարողութեան այնպիսի տարածք, որուն անունն է հաւատը և որ այնքան իրական է որքան բանական տարածքն ու կարողութիւնը:

Եւ եթէ նոյնիսկ գործածենք մեր ամբողջական մարդկային բնութեան տրամախոհական ոյժը, ինչպէս չտեսնել այն շօշափելի իրականութիւնը, որ Եկեղեցւոյ կեանքն իսկ է դարերու վրայ տարածուած և տարածուող, որ յարութեան վրայ է հիմնուած: Ամենէն կասկածուող գիտական միտքերն անգամ չեն կրնար բացատրել այն յատակ իրողութիւնն ու պայծառ ճշմարտութիւնը թէ Սուաքեալները, Յիսուսի մտերիմները, որոնք յարութենէն եւոք իրենք ալ կասկածով ընդունեցին յարութեան լուրը էապէս կերպարանապիտուեցան, երբ նոյն իրենց վարդապետը՝ Յարուցեալը՝ երեցաւ իրենց, խօսեցաւ իրենց, երբ իրենք տեսան ու հաւատացին: Եթէ իրենք զոյցած ըլլային մարմինը, կեղծիք մը յառաջ բերած ըլլային, ինչպէս սուտի և կեղծիքի, խարէութեան և յերիրանքի ոյժով պիտի կերպարափիտուեին: Ինչպէս իրենց կեանքերը պիտի զոհեին իրենց իսկ շինած սաղրանքին համար: Այն անձեռը՝ որդոնք Յիսուսի խաչելութենէն և թաղումէն եւոքը ծայր աստիճան յուսապրուած, իրենք պիտենք պարտուած, իրենց ակնկապութիւններուն և սպասումներուն մէջ յուսախարուած կը զգային, ինչպէս յանկարծ դարձան արի, անվախ, յանդուզն, բարձրաքարով, արհամարհեցին նախատինքն ու հաղածանքը, չարչարանքն ու մահը և պատրաստակամ, յօժարամիտ կեցուածքով ու երջանիկ զգացումով յանձն առին մարտիրոսութիւնը: Ո՞վ իր կեանքը կուտայ իր սարքած սուտին և կեղծիքին համար...: Ինչպէս Սողոսներն յանկարծ դարձան Պողոս...:

Քրիստոնէական հաւատքին տարածումը ողջ աշխարհի մէջ մանանէիմի հատիկի առակին (Մատթ. ԺԳ. 31-32) ամենէն ճշմարտախօս և պերճարարքառ վկայութիւնն է: Քրիստոնէական Եկեղեցւոյ կեանքը, քսան դարերու վրայ տարածուած, Քրիստոսի յարութեան շարունակուող երգահանդէսն է մարդկութեան կեանքին մէջ: Յարուցեալ Փրկչի խօսքը «Երանի անոնց որոնք առանց տեսած ըլլալու պիտի հաւատան» (ՅՈՎ. Ի. 29) կենդրուական մեղեդին եղաւ այդ համամարդկային երգահանդէսին, որուն մէջ իր առանձնակի տեղն ունեցաւ Հայց. Սուաքեական Ս. Եկեղեցին Քրիստոսէն շատափիղած կոյզ Սուաքեալ-

ներով և Ս. Գրիգոր Լուսաւորչի Միածնակք տեսիլքով մինչև մեր հայ ժողովուրդի նոր օրերու նոր կեանքը իր Քրիստոսադրոշ հայրենիքով և ապատ ու անկախ պետութեան վերատեղումով:

Կարիք կա՞յ աւելին բաերու: Դիտեցէք հայ ժողովուրդի կեանքը անցնող երկու հակարասեակներուն: Խաչելութեան բազմադրուած և բազմաբնոյթ տեսարաններուն մեջն, և տեսարաններէն անդին, պիտի անսպայման զգաք յարութեան շունչին անընդմէջ ներգործութիւնը: Յարութեան շունչը անշէց մնաց հայ ժողովուրդի կուրծքին տակ, կրակին նման՝ որ երեմն-երեմն մոլորով կը ծածկուի բայց երբեք չի մարիր. երբեմն-երբեմն ուրիշ ոյժեր հող կը թափէն անոր վրան, բայց հողն անզօր կ'ըլլայ անոր լոյսն ու չերմութիւնը խափանելու: Մեր ողջ մշակոյթը, մեր ազգի հարազատ ինքնարտայալութիւնը իր բոլոր կողմերով ու երեսներով, արիացեալ և արիացնող զօրութեամբ, տոկունութեան առաքինութեամբ, յուսահայեաց ուժգնութեամբ, քարով ու մագաղաթով, գիրով ու ձախով, նոյնիսկ արցոննորով ու արիւնով եղաւ անմահութեան հայատքին յուսապայծառ և անստուեր ճառագայրումը: Հայատացինք Քրիստոսի յարութեան և յաղթեցինք մահուան: Այս է ամենապայծառ յառաջարանն ու վերջարանը և յաւերժարան կարգախոսր հայ ժողովուրդի երկարաւամեա պատութեան:

Այսօր, այդ հայատքին կրակը վերատին նոր շունչ է առացած: Եւ չմոռնանք, այդ հայատքին կայծէն միշտ բոց կ'առնէ ապատութիւնը, որ մարդուն մէջ Ասուծոյ շունչին առկապութիւնն է: Գիտնանք մեր այդ աստուածադրոշ բնութիւնը պահել անսաղարտ, դարձնել կենդանի և կենդանարար, ատենածագործ և երջանկաբեր մեր գոյութեան այս նոր դարձուածքին որ մեզ կ'առաջնորդէ Յարուցեալ Փրկչի 2000-ամեակէն դէպի 3000-ամեակ, Կնքուած մեր պետականօրէն ձանչցուած քրիստոնեութեան 1700-ամեակով: Կենծիքը մեզ կ'այլացնէ, հայատքը մեզ կը մարդկայնացնէ և կը հայացնէ:

Քրիստոսի յարութիւնը ջինց իրականութիւնն է տեսնել զիտցող աչքին, զգալ զիտցող սիրտին, խորիկ զիտցող միտքին, խորհուրդ ընկալել զիտցող հոգիին և այս բոլորն իր մէջ ճշմարտօրէն և գեղեցկօրէն ներդաշնակել զիտցող ազգին համար:

Զատկի այս առաօսուն, ծաղկող բնութեան այս եղանակին, եկեք կենաստու արևին լոյսը իջեցնենք մեր հոգիներուն, մեր սեփական, անհատական կեանքերուն մէջ մեր հայրենի աշխարհին և ողջ հայութեան համայնական կեանքին մէջ ի ափիւու աշխարհի:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց

Յարեաւ և ազգս հայոց

Օրնեալ է յարութիւնն Քրիստոսի.

Ըստրիաւոր Ս. Զատիկ:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՅ

ԽՍԹԱԳՐԱԿԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԵՎ ՄԵՆՔ

«Ո՞վ թաւալեցուցէ մեզ զվէմն
ի դրաց գերեզմանին»

(ՄԱՐԿ. ԺԶ 3)

«Ո՞վ պիտի քարը զլորի մեզ համար գերեզմանի դռնից», մտորումների մեջ էին Տիրոջ թաղումից հետո նրա գերեզմանին այցի գնացող Ցուղաբեր կանայք, որոնք, ըստ Հրեական սովորության, ցանկանում էին խնկով և յուղով օծել իրենց Վարդապետի մարմինը: Սակայն, ո՞վ հրաշք, քարը զլորված էր և գերեզմանը դատարկ: «Ո՞վ էր համարձակվել մոտենալ գերեզմանին: Արդյո՞ք զինվորներն ու ժողովուրդը, չբավարարվելով նրան խաչելով, ցանկացել էին նաև մի վերջին և ամենասարսափելի անարդանք հասցնել՝ մարմինը արևերես գուրս բերել ու կեր դարձնել գիշատիչներին»: Այդուհանդերձ համարձակվեցին ներս մտնել և զարհուրեցին՝ տեսնելով ճերմակ պատմուճան հագած մի երիտասարդի, որն էլ ավետեց Հիսուսի Հարության բարի լուրը: Սամայն սարսափապատ Հոգիների առաջին զգացումը անհավատությունն էր այս իրողության նկատմամբ: ԶՀավատալու գեպերը հաջորդում էին մեկը մյուսին՝ նույնիսկ այն պարագայում, երբ Վարդապետը շոշափելի և տեսանելի էր: Անգամ աշակերտները, որ մշտապես ունկնդիր էին եղել նրան, չկարողացան միանշանակ հավատալ այս փաստին:

Վերջապես Քրիստոս Հայտնվեց՝ տասնմեկին և Հանդիմանեց նրանց անհավատությունն ու խստասրտությունը: Եվ բոլորը հավատացին...

* *

Մարկոս Ավետարանիչը այսպիսի սեղմ կերպով և հաջորդականությամբ է նկարագրում Հարության գեպքն ու նրա Հոգերանական ընկալումը: Հիսուսի մերձավորաններն անգամ նախ զարհուրեցին՝ իրենք իրենց գտնելով դատարկ գերեզմանի և այնտեղից ճառագող սքանչելի լույսի առջև: Ապա մարդկայնորեն չհավատացին, սակայն լսելով Հարուցյալ Տիրոջ հանդիմանությունն ու հավանաբար նաև Հարության մասին բազմիցս կատարված խոստումների վերհիշեցումը՝ հավատացին:

Բայց մի՞թե այսպիս չէ նաև մեր՝ Հարության օրից ձգվող, արդեն 1998-րդ անդամ Հարությունը հիշատակվող ժամանակներում: Պարզագույն

ինքնաքննությամբ կարո՞ղ ենք հարցադրում կատարել, թե Քրիստոսի Հարության օրերից ի՞նչ է փոփոխվել մեր կյանքում: Բացի տեխնիկական, արտաքին և կենցաղային փոփոխություններից, ուրիշ ռչինչ: Նո՞ւյն մարդն է, նո՞ւյն հոգսերով, նո՞ւյն ընկալումներով, ըմբռնումներով ու ապրումներով:

Հարության օրն իսկ գերեզմանն հսկող զինվորների և հրեա իշխանավորների հովանավորությամբ տարածվեց մի կեղծիք, որ Հիսուս գողացվել է իր աշակերտների կողմից, որի մասին խոսվում էր Մատթեոս Ավետարանի կենդանության օրերին. «Այս լուրը տարածվում է մինչև այսօր» (ՄԱՏԹ. հ. 15): Հրաշալի մարգարեռությամբ այդ «մինչև այսօր»-ը մեզ համար ժամանակավորեալ չէ, անշուշտ, այլ դրսեորումներով և մեկնարանություններով: Հասել ենք մի այնպիսի հանգրվանի, երբ բազմաթիվ անդամներ լսում ենք Հարության Հրաշքի մասին, բայց մենք ևս պիտի մտածենք, թե «ո՞վ պիտի քարը գլորի մեզ համար գերեզմանի դռնից»:

Մեր կանքի բոլոր շերտերի ու մակարդակների վրա արմատացած է Հարության իսկության բացակայությունը կամ լավագույն դեպքում ձևական, ավանդության ուժով ակամայից ընդունումը: Ինչո՞ւ... Պատասխանը շատ պարզ է: Նախ վախինում ենք, որովհետև ընդունելը նշանակում է նաև պարտավորություններ ու պատասխանատվություններ ստանձնել, որից էլ ծնվում է ոչ թե անհավատությունը, այլ չհավատալու ցանկությունը: Սակայն չնչին մի դեպքն էլ բավարար է ամենաանհավատին դարձի բերելու համար, երբ նա գիտակցորեն կամ ենթագիտակցորեն հասկանում է իր հանդիմանված կամ պատճեած լինելը:

Ազգային վերազարթոնք անվանվող այս շրջանին ավելի ու ավելի ենք հասկանում, որ անցյալից ժառանգած մի մեծ վեմ ունենք մեզ վրա գրված և ո՞վ պիտի գլորի այն, եթե ոչ՝ մենք: Սակայն ամեն բանից առաջ ցանկություն է պետք այն կլորելու համար, որը կա'մ մեռել, կա'մ էլ հոգեվարքի մեջ է: Որքան ծշմարիտ է անդիմացի մեծ քաղաքական գործիչ Գլածատոնը, որը բազմահմուտ լինելով քաղաքականության մեջ, այնուամենայնիվ համոզված էր, որ «մարդկության երջանկությունն այժմ քաղաքականությունից կախված չէ. իսկական կոփլ տեղի է ունենում մտքի աշխարհում, ուր և կատարվում են մահաբեր հարձակումները մարդկության ամենամեծ գանձի՝ հավատի վրա, որ տանում է դեպի Աստված և Քրիստոսի Ավետարանը»:

Հասարակության կամ անհատի վրա երկրի օրենքներն ու կառավարման համակարգերը ոչ մի ազդեցություն չեն կարող ունենալ, եթե նա ներքնապես պատրաստ չլինի իր քաղաքացիական պարտականությունների կատարմանը: Բոլոր դժբախտությունները կամ ծախողումները կյանքում արձանագրվելուց առաջ մեջ են տեղի ունենում՝ ամեն օր հոգով մեռնելով և անհոգությամբ մեր մեջ Աստծուն սպանելով: Այս պատճառով է մեր Տերը չեշտում, թե «Երկնքի արքայությունը ձեր ներսում՝ ձեր մեջ է»: Ե'վ բարիքը և չարիքը այդ խորհրդավոր՝ հոգի կոչվող ավագանում են ծնունդ առնում

մինչև գործադրվելը, որով գործը դառնում է մտածումի կամ ապրումի իրական հայելին ու արտափայլումը:

Ցավալի է, սակայն փաստ, որ վերջին խորհրդային տարիների թե ավելի վաղուցվա ազդեցությունների պատճառներով հարութենապաշտ և հարութենակյաց մեր ժողովուրդը թուլացել է ոչ միայն հոգեւոր կյանքի ըմբռնումների, այլև ընդհանրապես կյանքին իմաստ հաղորդող ոչ նյութական և կենցաղային ոլորտների նկատմամբ: Այսպիսի շարունակությունը հղի է ծանր հետևանքներով, եթե ոչ այսօրվա, ապա անպայմանորեն ապագայի համար:

1700-ամյա քրիստոնյա ազգ լինելու մեծագույն պատիվն ենք կրում:

1700 տարի մեր ճակատին խաչադրուցմել ենք Հարության լույսից ծնված սրբացնող մյուսոնը այնքան պաշտելի հայի համար:

1700 տարի մեռելներից զատվելու և անկման ժամանակ բարձրանալու վերիվայրումներն են եղել մեր ընթացքը:

1700 տարիների երկար ու ձիգ ժամանակահատվածում ազգային հպարտության տեղիք տվող և Քրիստոսին հավատարմության վկայագիր հանդիսացող բոլոր սիրագործությունները ծնվել են ամենադաժան և ապրելու համար ծանր պայմաններում: Սոցիալական, տնտեսական և անշուշտ քաղաքական:

1700 տարի Խաչեցյալի հետ խաչվել և Հարուցյալի հետ հառնել ենք, վկան՝ ԱՊՐԻԼ 24-ը, որ զարմանալիորեն զուգադիպում և ընդգրկված է մեր Տիրոջ Հարության հիսուն օրերի վրա տարածվող տոնախմբության ժամանակահատվածում: Այստեղ խաչածեվում են մահվան և կյանքի խորհուրդները՝ միաժամանակ հիշատակվելով: Սա՛ է իրական հայկականը, որն իր արմատներով ու ակունքներով անբաժան է քրիստոնեականից, կյանքի նկատմամբ ունեցած իր ենթապատկերացմամբ, մահվան հանդեպ արտահայտված անբացարելի քամահրանքով:

Հպարտանում ենք, որ առաջին ազգն ենք քրիստոնյա, և աշխարհում այսօր չկա մի ուրիշ ազգ, որ իր երկրի ու ժողովրդի մկրտության 1700-ամյակը կարողանա տոնել: Բայց մի՞թե սին ու դատարկ հպարտություն չէ սա, երբ Ում անունով և խաչելությամբ որ մկրտվել ենք, Նրա իսկ մատնության և «սոսկալի չարչարանաց» գիշերը՝ Ավագ Հինգչարթի, ազգովին մասնակցում ենք Ազատության հրապարակում տեղի ունեցող հրավառությանը, երբ ամբողջ քրիստոնյա աշխարհը՝ ոչ 1700-ամյա մկրտությամբ, սուրբ և տրտության մեջ վերհիշում է Տիրոջ հետ կատարված այդ անպատմելի իրադարձությունները: Սա մի պարզ դեպք չէ, որի կողքից հպանցիկ անցնեինք, այլ մտածողության և կերպարի կամաց-կամաց ձևափորում: Զլինենք Տիրոջը մատնողի ու խաչ հանողների գործակիցը, այլ Հարության ականատեսները:

**ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ
ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ,**

Ն.Ս.Օ.Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա

ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ

**ՊԵՏԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ՀԱՅ
ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՄԻԶԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ
ՆԱՄԱԿՆԵՐԻ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ**

Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ /Հռոմ/

Կոստանդնուպոլիսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն

ԲԱՐԹՈՂՈՄԵՈՍ /Ստամբուլ/

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ԱՄԲԱՌ ՇԲՆՈՒԴԱ Գ /Կահիրէ/

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք, Նորին Սրբություն

ԱԼԵՔՍԻՅ Բ /Մոսկվա/

Ասորական Արևելյան Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք,

Նորին Սրբություն

ԽԱՆԱՆԻՍ ՄԱՐԴԻՆԿԱ Խ /Նորտոն Արուվ, ԱՄՆ/

Աճտիորի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱՍ Ա ԻՎԱՍ /Դամակոս/

Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն

ԱԲԲԱՍ ՊԱՈՒԼՈՍ /Աղիս Աբերա/

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն

ԻԼԻԱ Բ /Թբիլիսի/

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ԹԵՇԿԻՍ /Բուխարեստ/

Աճտիորի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,

Նորին Սրբություն

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ /Դամակոս/

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ԳԻՈԴՈՐՈՍ /Երուսաղեմ/

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՄԱՔՍԻՄ /Սոֆիա/

Սերբիայի Պատրիարք, Նորին Սրբություն

ՊԱՎԵԼ /Բելգրադ/

Աթենքի և Համայն Հելլադայի Արքեպիսկոպոս,

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ /Նիկոսիա/

Ֆինանժիայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԶՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ /Հեղմակի/

Անտիռքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ՄԱՐ ՆԱՍՐԱԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐ /Բքերք, Լիբանան/

Անտիռքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄ /Դամակոս/

Հովհան Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՀԱՔԻՄ Ե /Լիբանան/

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք,

Նորին Սրբություն

ՊԵՏՐՈՍ /Եգիպտոս/

Քենթրքերի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և

միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ԶՈՐԶ ՔԵՐԻ /Լուսոն/

Երոսաղեմի Անգլիկան Եկեղեցու եպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ՍԱՍԻՐ ՔԱՖԻԹԻ /Երոսաղեմ/

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ընդհանուր քարտուղար

Դոկտ. ԿՈՆՐԱԴ ՌԱՅՉԵՐ /ԺԱՆ/

Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի Ընդհանուր քարտուղար

Դոկտ. ՔԻՍ ԿԼԵՄԵՆՑ /ԺԱՆ/

Միջին Արևելքի Եկեղեցիների Ընդհանուր քարտուղար

ՐԻԱՆ ԺԱՐԺՈՒՐ /Կիպրոս/

Ավստրալիայի Եկեղեցիների Ազգային Խորհրդի ընդհանուր քարտուղար

ԳԵՅՎԻԴ ԿԻԼ /Կանեքրա/

Միացյալ Նահանգների Եկեղեցիների Ազգային Խորհրդի

Ընդհանուր քարտուղար

Տիկին ԶՈՒ ՔԵՄՊԵԼ

Ծվեյցարիայի Եկեղեցիների Միջօգնության Մարմանի

քարտուղար

ՌՈՒԴՈԼՖ ՐԵՆՖԵՐ

PRO ORIENTE կազմակերպություն /Ավստրիա/,

Ավստրալիայի Ազգային Եկեղեցիների խորհուրդ,

Միախառյան Միաբանության աբբահայր

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԵՇԻՇՅԱՆ

**

Հայաստանյաց Եկեղեցու Ավիրապետական Աթոռներից՝

Կաթողիկոս Մեծի Տաճա Կիլիկիո, Նորին Սուրբ Օծություն

ԱՐԱՄ Ա /Ամերիկա/

Պատրիարք Հայոց Երոսաղեմի, Նորին Ամենապատվություն

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ /Երոսաղեմ/

Կ. Պոլս Պատրիարքական Ընդհանուր փոխանորդ և Պատկառելի Կրոնական ժողովի Աստենապետ

ՄԵՍՐՈՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆ /Մտամբով/

Թեմակալ բոլոր Առաջնորդներից և Թեմական Խորհուրդներից, Համայնքներից:

Բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել քուր Եկեղեցների կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից, Էկումենական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Պետական և ազգային շրջանակներից՝
Հայաստանի Հանրապետության Նախագահ, Վանմաշուր

ՈՐԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ,

Մեծահարդ

ԽՈՍՔՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ, Մեծահարդ

ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Սահմանադրական դատարանի նախագահ, Մեծահարդ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ, Վանմաշուր

ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վարչապետ, Մեծահարդ

ԼԵՌՆԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կառավարության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական, համալսարանական անձնավորություններից, իրավագետներից և քաղաքական գործիչներից, Հայաստանում գործող քաղաքական կոսակցություններից և հասարակական կազմակերպություններից, Քաղաքացիական Ավիացիայի վարչությունից, Միջազգային «Կարմիր Խաչ»-ի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, Հ.Բ.Ը.Մ.-ից, Հայկական Համագումարից, Հ.Օ.Մ.-ից, Կյուպենյան հաստատությունից, Լոնդոնի Ս. Սարգսի եկեղեցու խնամակալությունից, Կարագյովյան հիմնարկությունից, Զիմիշյան Փոնդից, Վեր. Մովսես Զամբազյանից՝ հանուն Ամերիկայի Հայ Ավետարաննական ընկերակցության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի բաժնից, Մելքոնյան Կրթական Հաստատությունից և մի շարք այլ ավագություններից:

Լիբանանի Խորհրդարանի Նախագահ
Լիբանանի Վարչապետ

ՆԱԲԻ ԲՐՈՒ
ՈՍՖԻԿ ՀԱՐԻՐԵ

Ծնորհակորականներ են ուղարկել Հայաստանում գործող օտար բոլոր դեսպանները, արտասահմանում գործող հայ դեսպանները, սփյուռքահայ հասարակական-քաղաքական և կրթամշակության կազմակերպությունները:

«ԱԻԱԳ ՇԱԲԱԹԸ» ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայց. Եկեղեցու ծիսակարգում Ս. Հարուրյանը նախորդող շաբաթը ընդունված է անվանել «Աւագ»: Այս շաբաթվա ընթացքում Եկեղեցին ոգեկոչում և հիշատակում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կյանքի և տնօրինական գործունեության վերջին օրերը, երբ անդրադառնում ենք Նրա ուսուցումներին, մատնությանը, շարշարանքին, խաչիությանը և Հարուրյանը: Այս շաբաթը իր այս նշանակությամբ առավել է կարևորվում, որի համար էլ անվանվում է «Աւագ»: «Աւագ» են անվանվում նաև այս շաբաթվա բոլոր օրերը:

Այս օրերին կատարված իրադարձությունների վրա է խարսխում Եկեղեցին իր ժարողչությունը, առաքելությունը: Այս օրերին կատարված իրադարձությունների բացատրությունները դարձան գաղափարական այն հիմքը, որը Տիրոջ հետևող ներին ի մի հավաքեց: «Աւագ շաբաթ» հավատացյալին պատրաստում է Ս. Հարուրյան հրաշափառ տոմին, որն էլ քրիստոնեության առանցքն է:

Մեր Տերը խոնարհվեց, աշխարհ եկավ՝ մարդուն իր հետ վեր բարձրացնելու, նրան մաքրելու իր մեղքերից: Ուսուցանեց, բացատրեց նշմարիտ բարոյականության սկզբունքները, բարողեց Մեր, եղբայրասիրություն, խոնարհություն, առաքինություն: Ճշմարիտ կյանքի դասը պատգամեց: Սիրեց և սիրով մահը նախընտրեց որպես փրկագին իր սիրեցյալներին մահվան ահասարսուու վախից ազատելու՝ իր արդար արյամբ խաչափայտը ներկելով, որպես պատվար ընդդեմ չարի, Խաչի հրաշագործ ուժականությունը պարզեց: Անպարազրելին իշավ գերեզման սովորական մահկանացուի պես, սակայն դամբարանը անկարող եղավ պարփակել հավիտնական ու հզորագույն ուժը: Լույս սփռվեց գերեզմանում, ուր հրեշտակը ավետում էր գերեզման շտապող յուղաբեր կանանց՝ «Զէ աստ, այլ յարեա» (Ղուկ. ի Դ 5): «Յարեա Տէրը» և իր հրաշափառ Հարուրյամբ հաստատեց կյանքի իրականությունն ու հավերժությունը, ևս մեկ անգամ վավերացրեց բարու գերազանցությունը չարի նկատմամբ՝ «Որտե՞ղ է քո հաղթանակը, մահ: Որտե՞ղ է քո խայրոցը, դժոխ» (Օվկիս Ժ Գ 14):

Եկեղեցական հայրերը դարերի ընթացքում հարստացրել, գեղեցկացրել ու առավել արտահայտչական իմաստ են հաղորդել Ավագ շաբաթվա ծիսակատարություններին, արարողություններին, ու ժամերգություններին:

Այն տևում է Մաղկազարդին հաջորդող երկուշաբթից մինչև Ս. Հարուրյան տոննը:

Աւագ Երկուշաբթի. - Հիշատակմ է չորացած թգենու: Կատարվեցին Առավոտյան և Երեկոյան ժամերգություններ: Ժամերգությունների ընթացքում կարդացվեցին օրվա խորհուրդը ներկայացնող Ս. Գրային հատվածներ (Թղենու առակը, Մատք. Ի Ա. 18-22):

Աւագ Երեքշաբթի. - Օրվա խորհուրդը ներկայանում է Տասը կույսերի առակով: Այս օրը կատարվեցին Առավոտյան և Երեկոյան ժամերգություններ, կարդացվեց իմաստուն և հիմար կույսերի առակը պատմող ավետարանական հատվածը (Մատք. Ի Ա. 1-13)

Աւագ Չորեքշաբթի.- Հիշատակն է պոռնիկ կնոց կողմից Հիսուսին յուղով օծելու: Կատարվեցին Առավոտյան և Երեկոյան ժամերգություններ, ընթերցվեց կնոց կողմից Քրիստոսին յուղով օծելու ավետարանական դրվագը (Մարկ. Իջ 3-16):


Աւագ Հինգշաբթի.- Այս օրը Ս. Հաղորդության Խորհրդի հիշատակությունն է: Հիսուս Քրիստոս Վերջին ընթրիփի ժամանակ հացը և գիճին բաժանեց առաքյալներին որպես Իր Մարմինն ու Արյունը և պատվիրեց, որ այնուհետև Իր հիշատակի համար նույնը իրենք կատարեն: Տիրոջ կողմից հաստատված Հաղորդության Խորհուրդը հետաքյառում առավել նոխացվեց Եկեղեցու Հայրերի կողմից և այսօր ներկայանում է Ս. Պատարագի տեսնով: Ս. Պատարագը արտահայտում է նաև գոհարերության գաղափարը, այն է՝ մեր Տերը մարդկության փրկության համար իր կյանքը զոհարեց խաչի վրա:

Ապրիլի 9-ին Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մասուցեց Տ. Տիրայր ժին. Գըլըճանը: Ս. Պատարագի ընթացքում ընթերցվեց Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդության վերաբերյալ նառը: Մեծարիկ հավատացյաններ Սուրբ Հաղորդություն ստացան:

Կեսօրից հետո կատարվեց Ռունղվայի գեղեցիկ, սիրո և խոնարհության արտահայտչականություն ունեցող արարողությունը: Այն հիշատակն է Հիսուս Քրիստոսի կողմից իր իսկ աշակերտների ոստիքը լվանալու Ավետարանական դրվագի, երբ Տերը կատարյալ խոնարհության գործնական օրինակ ցույց տվեց, խոնարհություն, որը ընկալելի չէր նույնիսկ իր աշակերտների համար:



Մայրավանելում հանդիսավորությամբ կատարվեց Ռունղվայի արարողությունը: Հանդիսավետն էր Վեհափառ Հայրապետը: Խորին Սրբությունը զգեստափորված քարձարացավ Ս. Խորան՝ շրջապատված միաբաններով: Երգվեցին հոգեապարար շարականներ, կարդացվեցին Ս. Գրային հատվածներ, այնուհետև ընթերցվեց Հովհաննես Պլուղ վարդապետի կողմից գրված աղորքը Միրո մասին, ապա



U. ၃၂၀၂၁၀၃၀၂၈

օրինվեցին յուղը (խորհրդանշում է պոռճիկ կնոշ՝ Հիսուսի ոտքերին հեղած անուշահոտ յուղը) և ջուրը, որից հետո Գևորգյան ձեմարանի տասը և ԵՊՀ Աստվածարանական ֆակուլտետի երկու ուսանողներ բարձրացան Ս. Խորան, ուր Վեհափառ Հայրապետը լվաց նրանց ոտքերը և օծեց յուղով: Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը հարող խոսեց օրվա խորհրդի վերաբերյալ: Հավարտ արարողության օրինված յուղը բաժանվեց հավատացյալներին:

Նույն օրը, ուշ երեկոյան, կատարվեց մեր Տիրոջ մատնության և չարչարանքի հիշատակությունը, որը ժողովրդին հայտնի է Խավարում անվամբ: Կարգը կատարվեց հանդիսավորությամբ, Գիշերային ժամերգության ընթացքում ընթերցվեցին Ավետարանական յոր ընդարձակ հատվածներ, որոնք բովանդակում են Գերսեմանիի պարտեզում Հիսուսի աղորելը, մատնությունը, ծեծվելը, չարչարանքը, անարգվելը և Պետրոսի երեխ անգամ ուրանալը: Յուրաքանչյուր հատվածի ընթերցելուց հետո հանգցվում էին Ս. Խորանում դրված 12 մոմերից (մեկը սև գույնի, որը խորհրդանշում է Հուդա Խվարիովտացուն) երկուսը: Ժամերգությունը շարունակվեց մինչև «Փառք ի քարծուն» գոհարանական օրիներգը, որի երգեցողության ընթացքում հանգցվեցին եկեղեցու բոլոր լույսերը: Խակ երգի կամաց դորս բերվեց նաև մեծ մոմը (խորհրդանշում է Հիսուսին, որ մենակ էր մնացել ձերքակալումից հետո): Խավարման գիշերվա խորհրդանշական մբնուրատում հարող խոսեց Գեր. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը՝ «Ելի, ելի, լամա սարաբանի» (Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր բողեր զիս») (Մատթ. Իէ 46) բնարանով:

Աւագ Ուրբաթ. - Այս օրը կատարվում է Տիրոջ Խաչելության և Խաչից իշեցվելու կարգը: Առավոյսյան, հանդիսավորությամբ Գեր. Տ. Հուսիկի արքեպոս. Սահերությանի, կատարվեց Խաչելության կարգը: Ըբերցվեցին ավետարանական հատվածներ, որոնք ներկայացնում են Պիտասոսի մոտ տարվելը, մահվան վիճուր, Խաչվելը, արեգակի խավորումը և Հիսուսի մահը Խաչի վրա: Ավագ Ուրբաթ օրը Պատարագ չի մատուցվում Եկեղեցու ծիսակարգի համաձայն, քանի որ այս օրը Հիսուս Քրիստոս որպես Կենդանի Պատարագ հենց Երեխ մատուցեց Խաչի վրա:

Երեկոյան Գեր. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանի հանդիսավորությամբ կատարվեց Թաղման կարգը: Նախապես պատրաստված և ծաղկի կներով զարդարված Հիսուսի խորհրդանշական գերեզմանը դրված էր ասյանում: Արարողության ժամանակ Գերեզմանի առջև ծնկած երգվեց «Սուրբ Աստուած» երգը՝ առանց Փառաւորեալ հատվածի: Այնուհետև «Պարգևատուն» շարականի երգեցողությամբ քափորը, առջևում ունենալով խորհրդանշական Գերեզմանը, պտտվեց եկեղեցու շուրջը՝ հավատացյալների ուղեկցությամբ:

Աւագ Շաբաթ. - Այս օրը ձրագալույց է: Ձրագալույց են կոչվում Ս. Ծննդին և Ս. Հարությանը նախորդող օրերը:

Երեկոյան, հավարտ ժամերգության, ընթերցվեցին Սուրբքրային հատվածներ: Զորս սարկավագներ հանդիսավորությամբ Ավագ բեմից ընթերցվեցին Գանիելի բուլը, որից հետո անմիջապես սկսվեց ձրագալույցից Սուրբ Պատարագը: Պատարագին էր Գեր. Տ. Գրիգորիս արքեպոս. Բնի հայրայնը: Ս. Պատարագին հաջորդեց Սուրբ Հարության նախատնակը:

Ս. Պատարագից հետո «Այսօր բարեւալ» շարականի երգեցողությամբ

հոգևորականների և ուսանողների բափորը Վեհափառ Հայրապետին առաջնորդեց Վեհարան, ուր կատարվեց *Տնօրինեքի* արարողություն, որից հետո շնորհափրեցին Վեհափառ Հայրապետին *Ս. Հարության* տոնի առիթով:

Վերջում Մայր Արոռի Միարանությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, հավաքվեց միարանական սեղանատանը՝ միասին անցկացնելու խրմանը ընթրիքը, որի ժամանակ հնչեցին Հարության շարականներ, ինչպես նաև ազգային երգեր: Այս ուրախ սիրո նաշը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի խոսքով, որում նորին Սրբությունը շեշտեց Ս. Հարության գաղափարի՝ կյանքում ներքափանցման կարևորությունը:

ԶԱՏԻԿ, Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.- Օրն սկսվեց առավոտյան ժամերգությամբ, հընթաց որի երգվում է օրվա խորհությն ու իմաստն արտահայտող «Այսօր յարեա ի մեռելոց» շարականը:


Ժամերգությունից հետո Մայր տաճարում Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընթերակայությամբ Գեր. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանի և Կիրիկյան Արոռի միարան Գեր. Տ. Տարեկ արքեպոս. Սարգիսյանի: Ս. Պատարագի ընթացքում համայն հայությանը հայրապետական պատգամ հղեց Վեհափառ Հայրապետը՝ «Հաւատացինք Քրիստոսի Յարութեան եւ հայրեցինք մահուան: Այս է ամէնապայծառ յառաջարանն ու վերջարանը և յաւերժարան կարգախոսը հայ ժողովորդի երկիազարամեայ պատմութեան» (Վեհափառ Հայրապետի Զատկական պատգամը տե՛ս էջ 3):

Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետն իր Զատկական ողովյանները հղեց համայն հայությանը, ՀՀ նորընտիր նախագահին, ԱԺ նորընտիր նախագահին, նոր փաշապետին:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ նորընտիր նախագահ պարոն Ռոբերտ Քոչարյանը, Ազգային ժողովի նորընտիր նախագահ պարոն Խոսրով Հարությունյանը, Վարչապետ Արմեն Դարբինյանը, Սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գագիկ Հարությունյանը, նախարարներ, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանական և պաշտոնական այլ անձնինք:

Հավարտ Ս. Պատարագի Վեհարանի ընդունելության սրահում տեղի ունեցած հյուրաքիրություն՝ ի պատիվ հյուրերի:

ԱՐԵԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ



ՎԵՐԱՓՈՍՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՅ ՍԱԼԻՎԱԶՅ Ո. ԹՈՂԱՐԵԱՆԻ ԵՎ ԱԺ ԽՈՍՄԱԿ
Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ՎԵՐԱԲԵՐ ՍՈՒՏՔԻ ՄՈՒՏ

Ո-ՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետությունում կայացած նախագահական արտահերթ ընտրությունների երկրորդ փուլում մարտի 30-ին, ՀՀ նախագահ ընտրվեց Վարչապետ Ռոբերտ Քոչարյանը:

Ապրիլի 9-ին գումարվեց ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճում, որը տեղի ունեցավ Ռոբերտ Քոչարյանի՝ ՀՀ նախագահի պարտականություններն ստանձնելու երդման հանդիսավոր արարողությունը:

Պետական օրիններգի հունվարյան ունկնդրումից հետո, ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը հրապարակեց ընտրությունների արդյունքների մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերջնական որոշումը Ռոբերտ Քոչարյանի ընտրության վերաբերյալ:

Այնուհետև դահլիճ բերվեցին ՀՀ պետական դրոշը, ՀՀ Սահմանադրության մայր օրինակը և Մաշտոցյան Մատենադարանից բերված է դարի «Վեհամոր Ավետարանը»:

Նորընտիր նախագահը, ձեռքը դնելով Ավետարանի և Սահմանադրության վրա, կարդաց երդման տեքստը՝ պարտավորվելով լինել հանրապետության անվախտության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը, առաջնորդվելով սահմանադրությամբ և օրենքներով, նվիրումով և հավատարմորեն ծառայել ժողովրդին՝ հանուն հայոց պետականության հզորության և համագոյին նպատակների իրագործման:

Ապա նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր հայրապետական մայթանքն ու օրինությունն հիեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Վերջում նորընտիր նախագահը շնորհակալություն հայտնեց ընտրությունների մասնակիցներին և հանդես եկավ ծրագրային դրույթներ պարունակող ելույթով:

**ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ
ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԵՐԴՄԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ**

Ողջո՞յն Ձեզ մեր Հայոց ազգի քրիստոնէական ծննդավայր և Հայց.
Սուպերեական Եկեղեցու Մայր Աթոռ Ս. Էջմիածնից,

Ողջո՞յն Ձեզ՝ նորընտիր և արժանընտիր Վահեաչուք Նախագահ
Հայաստանի Հանրապետութեան՝ Ռոբերտ Քոչարեան,

Ողջո՞յն Ձեզ, մեծարգոյ Նախագահ Ազգային Ժողովի և խորհրդա-
րանական պատգամաւորներ՝ անդամներ Հայաստանի Հանրապետու-
թեան Գերագոյն օրէնսդիր Ժողովի, որ այս պահին յատուկ նիստ էր
գումարում Հանրապետութեան նորընտիր նախագահի երդման արա-
րողութեան երջանկաբեր առիջով:

Ողջո՞յն Ձեզ՝ Սահմանադրական դատարանի Նախագահ և անդամ-
ներ, Կառավարական կազմի անդամ նախարարներ, հոգևոր եղբարներ,
մարզպետներ, դիականագիտական մարմնի ներկայացուցիչներ, հրաի-
րեալ պաշտօնական այլ անձններ և սիրեցեալ ժողովուրդ Հայոց,

Ես զգում եմ, որ Հայոց ազգի բազմազբքի այնքան հարուստ էջերին մի նոր էջ ենք աւելացնում, երբ այս նուիրական
պահին վկաներն ենք դառնում քրիստոնէական պատմութեան երկրորդ
հազարամետակի այս վերջապահ հորիզոնի վրայ արշալուսուած և արե-
գակուած մեր հայրենի աշխարհի և հայկազնեան ազգի Հանրա-
պետութեան երկրորդ նախագահի երդման այս հանդիսաւոր
արարողութեանը:

Նախ փառք և գրիութիւն եմ ընծայում Ամենակալին Աստուծոյ, որ
շնորհեց մեզ՝ ազգի հայոց՝ անվտանգ և ապահով բոլորել առաջին եօր-
նամեակը մեր նոր, ապաս ու անկախ Հանրապետութեան: Ցարգանք
բոլոր նրանց, ովքեր այս Հանրապետութեան առաջին նախագահ
Մեծարգոյ Լևոն Տէր-Պետրոսեանի զիաւորութեամբ՝ դրական, կառու-
ցողական հիմնադրութային և զարգացողական դեր կատարեցին այս
Հանրապետութեան եօրնամեայ փատակի կայացման գործում:

Ամենատաս և անսպաս ու աննուաղ ոյժ և արիութիւն, անսահման
իմաստութիւն և անսկուն կորով, ժայռանման համբերութիւն Ձեզ՝ մեր
նոր Նախագահիդ, որպէսզի ի կատար ածէք այն բոլոր իշճերն ու
սպասումները, որոնք արտացոլացնում են մեր ժողովրդի կամքը,
կարիքը և բարիքը միանգամայն:

Վատահ ենք, որ Դուք Ձեր հայրենասիրութեան առաքինութեամբ քաջ
գիտակցում էք այն ծանր, բայց ազնուագոյն պարտաւորութիւնները,
որոնք կապուած են Նախագահի Ձեր բարձրագոյն ազգային-պետական
պաշտօնին: Մեր հայրենիքն ու ժողովուրդը կենցաղային ու քաղաքա-
կրթական բառացիմութեան ճանապարհով առաջնորդելու, մեր ազգա-
յին ինքնութեան և արժանապատութեան առողջ ըմբռնումները,

անժանգ արժէքները և հարազատ ու կենսագործ աւանդոյթները վերակենդանացնելու հրամականին առաջ էք կանգնած: Եւ՝ կանգնած ենք Զեկ հետ, Զեր Կողբին, մենք բոլոր ի Հայաստան, յԱրցախ և ի սփիսու աշխարհի, առանց խորութեան: Ի խորոց սրտի ցանկանում ենք յայտնել Զեկ, որ մեր Հայց. Սուպերկական Սուրբ և ազգային Եկեղեցին իր աղօքքն ու օրինութիւնն է բաշխում Զեկ և իր ամբողջական և անվերապահ զօրակցութիւնն է ընծայում Զեր առաքելութեան:

Երեք տարիներ առաջ, և ճիշտ այս օրը, 9 Սպրիլին, երբ յետ Կաթողիկոսական ընտրութեան և զահակաղութեան ստանձնեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծանրագոյն պարտականութիւնը Ս. Էջմիածնում, այնքան մօտից չէինք ճանաչել մեր ժողովրդին Հայաստանում և Արցախում: Սիա այս երեք տարիների ընթացքում Մեր կենացք պատասխանառութեան շահախով միահատնելով մեր ժողովրդի կեանքին, անձնապէս համոզուեցինք, որ մեր վերանկախացեալ հայրենիքի առաջնահերթային կարիքը՝ մարդու կարիքն է. -

— Ճշմարիտ, վաւերական, պարկեշտ մարդու,
— Աստծու պատկերն իր մէջ անաղարտ ու կենդանի պահող մարդու,
— Հայրենիքը և ազգը իր անհատական անձից վեր դասել գիտցող մարդու,

— Ընդհանրական շահը մասնաւոր ու խմբակցական շահերից գերադասել իմացող մարդու,

— Հանրային ժողովրդանուէր և հայրենաշինական պարտաւորութիւնը անձնակերոն շահից գերակայ ճանաչող և բար այնմ արժեցնող մարդու, ով ուզես լինի նա, հոգնորական, կամ պետական, կամ հասարակական սպասաւոր և կամ պարզ քաղաքացի:

Մեր հայրենիքը, պետութիւնն ու ժողովուրդը չեն փրկուի սուկ դրամով ու միայն զէնքով: Երկիր չի փոխուիր միայն կառոյցներ ու դրոյթներ (սիստեմներ) փոխելով: Երկիր կը փոխուի, երբ մարդը ինք ունենայ քաջութիւնը փոխուելու և պատրաստ ու ատակ լինի ինք իրեն վերափոխելու, մշտապէս բարեփոխելու, ինքնաճանապահութիւն և ինքնակերտութիւն չափամիջներով և բարձրահայեաց նպատակալաց տեսլականով: Ի վերջոյ, չպէտք է մոռանալ, որ կառոյցն ու դրոյթը, գործիքն ու գործարանը, դրամն ու զէնքը մարդու ծնունդ են և երբ ճիշտ ուղղուածութիւն ունենան՝ նրանք բարիքի կը վերածուեն, այլապէս՝ չարիքի աղբիւր կը դառնան:

Մեր Հայաստան աշխարհում և ողջ հայ ժողովրդի կեանքում հարկ է ստեղծել ներդաշնակութիւն հոգևոր և նիւթեղին իրականութիւնների, արժէքների և երևոյթների միջև, միշտ բարձր պահելով հոգևորին գերիշխանութիւնը, առանց որի կեանքը կը դառնայ սպառողական և սպառուղական մի անմիաստ գոյութիւն: Յաւէտ ճշմարիտ է մեր Երկնաւոր Վարդապետի՝ Յիսուս Քրիստոսի խօսքը. «Տուք զկայսերն՝ կայսեր և Աստուծոյն՝ Աստուծոյ»:

Մեր Սուրբ Եկեղեցու կոչումն է լինել այս ճշմարտութիւնների քարոզիչը իր կեանքով, խօսքով, գիրով և գործով, ինչպէս եղել է նա աւելի քան 1700 տարիներից ի վեր: Սիա թէ ինչո՞ւ, որպէս Կաթողիկոս

Ամենայն հայոց, հաւաստիացնում ենք Ձեզ, Վսեմաշուք Նախագահ և մեր Հանրապետութեան բոլոր պատասխանատու այլ անձինք, որ մեր Ս. Եկեղեցու բոլոր կարողութիւններն ու կարելիութիւններն ի սպաս ենք դնելու մեր նոր ազգային վերակերտումի և վերարիւրեղացումի ազ նուիրական և անմիջականօրէն ստիպողական գործին:

Միա թէ ի՞նչ զգացումներով, խոհերով և տրամադրութիւններով այժմ արտասամնելու ենք մեր օրինութեան աղօթքը՝ հայցելով Բարձրեալն Աստծուց, որ մեր երկիրն ու ժողովուրդը պահի ապահով և անվտանգ «յերնելի և յաներնոյթ թշնամոյն» և ջնորիի բարգաւաճնան նոր շրջան ընդ նախագահութեամբ Ձերդ Սիրելութեան:

«Պահպանիչ և յուս հաւատացելոց, Քրիստոս Աստուած մեր, օրինեա՛, պահեա՛, պահպանեա՛ զնորդնորդեալ Նախագահն Հանրապետութեան հայոց և զիայրենի աշխարհն մեր և զՀանրապետութիւնն սորա, և առաջնորդեա՛ զսա ի շատին խաղաղութեան, արդարութեան, բարօրութեան և բարգաւաճութեան, ի վայելումն համայն ժողովրդեանս մեր հայկակնեան ընդ հովանեան սուրբ և պատուական խաչիդ քո ի խաղաղութեան: Փրկեա՛, Տէր յերնելի և յաներնոյթ թշնամոյն, արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել կթեզ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգուոյ, այժմ և միշտ և յախտեանս յախտենից. Ասէն»:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՅՑԵԼԵՑ

«ՆԱԽԱԳԱՀԻՆ»

Ապրիլի 13-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ն, Հայ Առաքելական Եկեղեցու հայատաման թեմերի առաջնորդների և բարձրաստիճան այլ հոգևորականների ուղեկցությամբ, այցելեց նախագահ Ռոբերտ Քոչարյանին և իր հայրապետական մատթանքները հաղորդեց նորընտիր նախագահին: Վեհափառ Հայրապետի խոսքերով՝ Հայ Եկեղեցին միշտ կանգնած է եղել պետականության կողքին, և դարեր շարունակ չունենալով պետականություն՝ հայ ժողովուրդը Եկեղեցու շնորհիվ է պահպանել իր ազգային նկարագիրն ու դերը: Այսօր, երբ հայոց պատմության մեջ նոր է բացվում, Եկեղեցին իր ողջ կարելիությամբ, ներքին և արտաքին հզոր կառուցմերով պատրաստ է զորավիճ լինել հայրենի պետությանը: Շնորհակալություն հայտնելով ջերմ բարեմաղյանների համար՝ պրա. Ռոբերտ Քոչարյանն ասաց. «Նախագահի պաշտոնն ստանձնել եմ պատասխանատվության մեջ զգացումով և պատրաստ եմ արդարացնել ժողովորդի վստահությունը»:



Նախագահի գնահատմամբ՝ հասարակության տրամադրություններում կա որոշակի դրական տեղաշարժ, ստեղծվել է բավականին բարենպաստ միջավայր, և այդ մժմուրտի պահպանման գործում մեծ է նաև Եկեղեցու դերը: Հանդիպման ընթացքում խոսվեց նաև հոգևոր դաստիարակության դորոտում Հայ Եկեղեցու դերի և կրթական համակարգում կրոնի դասավանդման մասին: Անդրադանալով քրիստոնեության պետական կրոն հիշակման 1700-ամյակից՝ նախագահը նշեց, որ այն նաև լուրջ քաղաքական իրադարձություն է, ուստի անհրաժեշտ է, որ անցնի բարձր մակարդակով և որակով:

«ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՆՈՒՀԻ գրասենյակ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՅՅԵԼԵՑ

«ՎԱՐՉԱՊԵՏԻՆ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Հայրապետը հայաստանյան թեմերի առաջնորդների ուղևորությամբ ապրիլի 13-ին այցելեց վարչապետ Արմեն Դարբինյանին: Վեհափառ Հայրապետը շնորհավորեց պարոն Դարբինյանին՝ ՀՀ վարչապետի պաշտոնում Աշանակվելու կապակցությամբ: Կարևորելով պետական իշխանության գործադիր մարմնի դերը անցումային փուլում տնտեսության և հասարակության կայուն, շարունակական զարգացման գործընթացում՝ Նորին Սրբությունն ասաց. «Գաղափարների իրականացումը կպահանջի բացառիկ ունակություններ»: Վեհափառ Հայրապետը համոզվածություն հայտնեց, որ արհեստավարժության և իրազեկության սկզբունքներով ձևավորվող կառավարությունն ի գորու կիհնի լուծել նիշտ խնդիրները:

Պատասխան խորքում վարչապետ Արմեն Դարբինյանը նշեց, որ իր հիմնական խնդիրը տնտեսական բարեփոխումների շարունակական ընթացքի ապահովումն է: Խնդիրի լուծման նպատակով կառավարության ղեկավարն առանձնապես կարևորեց կառուցղական ուժերի նկատմամբ ներքին վստահության ամրապնդման, արտերկրում մեր պետության գործընկերներին այդ վստահության ներշնչման անհրաժեշտությունը:

Քննարկվեցին քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հոչակման 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստման, հայեցի կրթության և դպրության համակարգում Հայ Եկեղեցու դերի և նշանակության, զանգվածային լրատվական միջոցներով նրա դավանանքի քարոզության, ինչպես նաև Երևանի Մայր տաճարի շինարարությանը վերաբերող հարցեր:

«Վարչապետի մամուլի գրասենյակ»

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԵԼ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Կիրակի, ապրիլի 5-ին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Աշվեց Նորին Սուրբ Օծություն S.S. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երրորդ տարեդարձը:

Հընթացս Սբ. Պատարագի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երեք տարիների գործունեությանն անդրադապ Մայր Աթոռի դիվանագիտ Տ. Ներսէս արք. Պողապայշան:

Ապա՝ Մայր Տաճարի Սբ. Խորանին Հայատանի թեմակալ առաջնորդների և եպիսկոպոսաց դասի մասնակցությամբ կատարվեց հայրապետական գոհաբանական առողջք:

Պատարագին ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Այթողի միաբանության, Գերագոյն Հոգևոր Խորհրդի, Ծարտարապետական հանձնաժողովի անդամներ, Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Սուչյանը, ինչպես նաև Մեծի Տանը Կիլիկիոյ կաթողիկոսության ներկայացուցիչներ, որոնք Հայաստան են ժամանել մասնակցելու Հայաստանի Հանրապետության նորունիշ նախագահի երդան արարողության:

Հավարտ Սր. Պատարագի Վեհարանում տեղի ունեցած ճաշկերույթ: Ամենայն Հայոց Կաթողիկոսին բարեմաղթանքի ու զնահատանքի խոր ուղղեցին Մայր Տաճարի լուսարարավագու Տ. Հովհաննի արք. Սանթուրյանը, Տ. Ներսես արք. Պողա-պալյանը, Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը, Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գևորգ արք. Սերայդարյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գրիգոր արք. Ներսիսյանը, Շիրակի թեմի Առաջնորդական փոխանորդ Տ. Փառեն ծ. Վլոդ. Ավետիքյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Եպո. Զովչյանը, Կիլիկիո Աթոռի Անդրկայացուցիչներ Տ. Սուրեն արք. Գաթարյանը և Ուկերերան Արզու-մանյանը, Մայր Աթոռ Սր. Էջմիածնում Անգիկան Եկեղեցու Անդրկայացուցիչ հայր Ֆիլիպը և այլ հրավիրայաներ:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒ

ՎԵՇԱՓԱՈ ՀՈՐԸ

**ՄՐՏԻ ԽՈՂԱՔ ԻՄ, ՔՈ, ԻՄԿ ԱՎԵԼԻ ՃԻԾՏ՝
ԱՄԵՆՔԻՄ ԿՈՂԱՔ**

Լո՛յս առավոտի,
Դու, որ նման ես հավիտենության...
Տո՛ք ամենեցուն դու խաղաղության շնորհը վերին,
Հեղի՛ր ամենուր արդարությունդ որպես մանաճա...

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

Դուք եկամ, երբ Հայոց աշխարհում կրկին գարուն էր, զեփյուտի մեղմ խալից հեղիկ խոնարհվում էր ծաղկած ծիրանին... Եկամ ամենին հետ՝ Լուսավորչանիստ գահից վերցնելու սպո ժողը, ի լուր համայն հայության ավետելու այն անունը, որ ուկյա տառերով պիտի գրվեր ազգիս պատմության անցյալի ու ներկայի փառակեղ էջերից ամենանորում: Եկամ, որ ես դառնամ, քանզի Հայոց Սկյուռեկում մի մեծ ընտանիք ունեիք, որի ամեն մի անդամն իր այգարացն առանց Զեզ չեր պատկերացնում:

Սյո, Վեհափառ Տեր, դա ճիշտ երեք տարի առաջ էր: Սովորականի նման Դուք՝ Մեծի Տանը Կիլիկիո Կարողիկոսդ, Մայր Տանար մտաք՝ մասնակցելու երեկոյան ժամերգությանը: Դեռ ընտրությունները չեին սկսվել: Հանդարտ ու վեհ բայլվածով առաջացած դեպի ձախակողմյան դասը, և ամենին հետ սկսեցիք աղոթել առ Բարձրյալը: Գուցե Զեր շուրբերին, ժպիտի հետ մեկտեղ, բրոռում էր նաև նույն ցանկությունը, ինչն այդ օրերին համարվում էր համայն հայությանը: Հիմա դժվար է ասել: Զգիտեմ ինչու, երբ այդ օրը տեսա Զեզ, ինձ բվաց, թե Դուք էլ, ինչպես շատ տարիներ առաջ լուսահոգի Վազգեն Ա. Վեհափառը, եկել եք վերադառնալու պայմանով, բայց պիտի մնամ Սուրբ Էջմիածնում առանց պայմանի՝ հայոց ազգի հավատավոր գավակների նվիրական ցանկությանն ընդառաջ գնալով:

ՀԻՇՈ՞ԻՄ ԵՔ...

1995 թվականի ապրիլի 3-ին հայոց լույս հավատի հոգևոր կենտրոն Մայր Արոռ Էջմիածնում գումարվեց Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը: Աշխարհասփյուռ հայության պատգամավորները հավաքվեցին վերանկախացյալ Հայաստանում՝ մեկ կամք ու մեկ հոգի դարձած ընտրելու առավելահիմնե և լուսավորչահաստատ գահի 131-րդ գահակալին:

Ազգային-Եկեղեցական ժողովն սկսվեց Մայր Տանարում մատուցված Սուրբ և անման Պատարագով: Պատարագիչն ու բարողխոսը ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանն էր: Հընքաց Սուրբ Պատարագի, տեղի ունեցավ աշխարհական պատգամավորների երդման հանդիսավոր արարողություն՝ կարողիկոսական տեղապահ, Երուսաղեմի

Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի երդմնեցությամբ, որից հետո տարրեր նախասիրությունների ու ցանկությունների տեր բոլոր պատգամավորներն ստացան Ս. Հաղորդություն: Հավարտ Սուրբ Պատարագի, երշանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի շիրմի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Ժամը 11-ին Վեհարանում սկսվեց Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների գրանցումը: Գրանցվեց 398 պատգամավոր:

Հետմիջօրեին, ժամը 14.30-ին, Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ ժողովի բացումը՝ Կոստանդնուպոլիսի Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գաղանցյանի աղորքով:

Ժողովական ընթացիկ հարցերի լուծումից հետո, պետական ավագանու ուղեկցությամբ, ժողովասրահ մտան կարողիկոսական տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Դուք՝ Մեծի Տաճի Կիլիկիո Կարողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետ, ՀՀ վահմաշուր նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Կարողիկոսական տեղապահ Թորգոմ արքեպիսկոպոսն իր ողջույնի խոսից հետո ճայնը տվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, ապա դիվանի քարտուղարությանը հանձնվեցին ԼՂՀ ղեկավարության շնորհավորագրերը:

Այնուհետև ժողովին Զեր խոսքն ուղղեցիք Դուք՝ Մեծի Տաճի Տաճ Կիլիկիո Կարողիկոսուն:

Հաջորդ օրը, ապրիլի 4-ի առավոտյան, սկսվեց երկրորդ նիստը: Տեղապահի գեկույցից հետո, պատգամավորները դիմեցին դեպի Մայր Տաճար, ուր գաղտնի բվեարկության ընթացքում, Խման Սուրբ Սեղանի առջև մնալով բվեարերթիկի ու իրենց խնդիր հետ, համաձայն նախորդ օրվա տված երդման, պետք է ընտրեին Հայոց Առաքելահիմն գահի 131-րդ գահակալին:

Հետո ընտրության երկար ու ճիգ ժամերն էին: Ամեն ոք յուրովի էր ապրում այդ ժամերը...

Ի վերջո ավարտվեցին բվեարկությունը և բվեների հաշվումը: Զայները բաշխվեցին հետևյալ կերպ.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ - 186 ճայն,

բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան - 145 ճայն,

գ) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան - 61 ճայն:

Համաձայն կանոնակարգի, հետագա ընտրությունը պետք է ընթանար Զեր և Արարատյան Հայրապետական թեսի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի միջև: Սակայն Գարեգին Սրբազնը, դրսւորելով որդիական ակնածանն, դիմելով սրբագումար ժողովին, ասաց. «Ի՞նձ թվում է, այսօր պետք է ավարտենք այս ընտրությունները: Իմ կողմից ես ուզում եմ շնորհավորել Վեհափառ Հոռը, որպես նորընտիր Հայրապետ, Ամենայն Հայոց Կարողիկոս...»:

ՀԵՏՈ...

Հետո, երբ բարակ-բարակ անձրև էր մաղում, իսկ գարնանային ցուրտ երեկոն փորձում էր Մայրավանքի բակում անհամբերությամբ ճշմարտության ավետմանն սպասող հավատավորին հաղթել, ի լուր ամենքի, համայն աշխարհի ցնծագին,

քարձը ու հնչեղ դողանջեցին Մայր Տաճարի զանգերը՝ ավետելով Հայոց Ընդհանրական Մայր Արռոի նոր Գահակալիդ ընտրությունը: Իշման Սուրբ Սեղանի առջև հաստատեցի հավատարմության Զեր ուխտը էջմիածնի նախամեծար և գերագահ Արռոի նկատմամբ: Ապա բացվեցին Մայր Տաճարի դռները, և Դուք, որպես նորընափի Հայրապետ, Զեր հայրական օրինությունը բաշխվեցի ժողովրդին: Ուրախության կանչերը դարձան համբույր ու գրկախառնություն, ողջագուրանին ու շնորհավորանին շերմ խոսեր, դարձան նաև գունագեղ լուսեր ու բոցեղեն ցոլերով սահեցին երկինքն ի վար: Հրավառություն էր ու ցնծություն Հայոց աշխարհում:

Այդ օրերին լրագրողներից մեկն իր հոդվածում գրեց, թե նոյն պահին, երբ դողանջեցին զանգերը, Մայր Տաճարի զմբերն ի վար մի լույս իշավ: Զերդ Սրբություն, մի զարմացիք: Եթե այն նոյնիսկ իրականություն էլ չէր, ապա հենց գուցեց ազգին վեհարոիչ ցանկությունն էր, որ այդ լրագրողի երկալայության շնորհիկ իրականությամբ էր զգեստավորվել: Զե՞ս որ համայն հայոց անմեկնելի երազանքն էր՝ Լուսավորչահաստատ Արռոի հաջորդ գահակալին տեսնել նիշտ այդպիսին. շնորհաշատ, Աստվածահան և ազգանվեր...

Տակավին չէր իշել ցնծության առաջին ալիքը, երբ նորընափի Կարողիկոսիդ որդիական իր խոնարհումը բերեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Ապրիլի 5-ի առավոտյան չորրորդ և վերջին նիստն արդեն նախագահում էիր Դուք՝ Ն. Ս. Օ. Ռ. Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետդ Ամենայն Հայոց:

ՄԻ ՆՈՐ ՈՒ ԿՐԿՆԱԿԻ ԾԱՂԿԱՉԱՐԴ

1995 թվականի ապրիլի 9: Ծաղկազարդի այս օրը կրկնակի ուրախություն էր, բանցի Ծաղկազարդով Հայաստանյայց Եկեղեցին ծաղկազարդվեց: Սուրբ էջմիածնի զանգերը, միանուված ժողովրդի սրտի ձայնին, ավետում էին նոր Հայրապետի մուտքը Մայր Տաճար: Նորընափի Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոսդ, առընթերակայությամբ Երուսաղեմի և Կոստանդնուպոլիսի Սրբազն Պատրիարքների, ամփոփանու ներքո, առաջնորդում էիր Զեր հավատավոր ժողովրդին դեպի նոր Երուսաղեմ՝ Սուրբ էջմիածնի Մայր Տաճար, ուր պիտի հոչակվեի եպիսկոպոսապետ:

Հընթաց Սուրբ և անման Պատարագի, ի լուր ամենին, ընթերցեցին Զեր ուխտագիրը, որից հետո Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 12 եպիսկոպոսներ իրենց ձեռքը դրեցին ընտրյալիդ գլխին և աղոթքով ու մաղթանելով կոչեցին Զեր Առաքելական Արռոի անարատ իշխանության: Ապա, որպես Ամենայն Հայոց Հայրապետ, անդրանիկ պատգամը տվեցին Զեր հավատավոր հոտին:

Սուրբ Պատարագին և գահակալության արարողությանը ներկա էին ՀՀ վահանական նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր ավագանիով, ներկա էին նաև նույր Եկեղեցների Հայրապետներն ու ներկայացուցիչները, մեծարիվ հյուրեր ողջ աշխարհից:

ԻՍԿ ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿՐԿԻՆ ԳԱՐՈՒՆ Է...

Ամենասիրելի Վեհափառ Հայոց, նիշտ երեք տարի է Զեզ բաժանում պատմություն դարձած այս ժամանակից: Սակայն անցյալը երբեք, Զեր իսկ բառերով ասած, անցած չէ: Նրա մեջ ներկան է, նաև՝ ապագան, եթե փոքր-ինչ ուշադիր լինենք: Այսօր Դուք իրավամբ կարող եք շիտակ ու հստակ հայցենք նայել հավատացյալ հայորդուն: Հիմա ես՝ այս տողերին նվաստ ու տկար հեղինակը, չեմ պատրաստվում մեկ առ մեկ բվարկել երեք տարում Զեր արածը: Դրա անհրաժեշտությունը չկա, բանգի ամեն ու տեսնում է այն: Անկարող եմ նաև գնահատանի խոսք ասել, որովհետև մեծերը դրա անհրաժեշտությունը չունեն: Նրանց գնահատում են ժամանակն ու պատմությունը:

Բայց այս մեկը հաստատ ինձ կարելի է: Ամենայն Հայոց Հայրապետ, այս երեք տարվա ընթացքում Դուք հասցրեցիք մոտիկից նանաչել Զեր ժողովրդին, տարրեր թեմեր՝ Շիրակ, Գուգարք, Արցախ, Վիրք, Օդեսա, Մոսկվա, Լիրանան, Ռումինիա, ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Կանադա, Եգիպտոս, Գերմանիա, Խոալիա և այլուր այցելելով, եղաք նրա հետ, կիսեցիք նրա հոգսն ու ցավը, ուրախության համատեղ պահեր ապրեցիք, քազմաքիվ պաշտոնական այցելությունների ընթացքում առաջնային խողիր համարեցիք Հայոց հինավորց հողում հանուն հավերժության մաքառող ազգիդ նվիրական երազանքը, Զեր հայրենանվեր ու ազգապահպան գործունեությամբ կարողացաք սիրով տրոփող սրտեր նվաճել, Զեր հայրական պատգամին, խրատ-խորհուրդներին անհամբերությամբ սպասող հավատավորներ շահել, աշխարհի բոլոր ծագերում Զեզնով հապատացող, Զեզ արևշատություն մաղրող հայորդիներ գտնել:

Հիմա իմ երկրում դարձյալ գարուն է: Այս երեք տարիների ընթացքում Դուք նույնպես ունեցաք Զեր հոգու օվկիանոսի ալերախումները: Դրանք առավել էին, նման Զեր անհանգիստ, միշտ պրատող, սակայն բարին արարելիս, բարու հետ դեմ-հանդիման ելնելիս մանկան պիս ուրախացող բնավորությանը: Հիմա Դուք էլ Զեր յուրահատուկ ու ներանձնական հաշվետվությունն եք թերևս պատրաստել: Ոչ, անշուշտ, իմ նմանների, այլ Զեր ու Տիրոց համար: Բայց գուցե ավելի շուտ միմիայն Զեզ համար: Հասկանում եմ, անելինենքը շատ են, ժամանակը՝ սահմանավոր: Բայց չէ՞ որ Դուք մտիքի թիջչքը երբեք չեմ սանձում ժամանակի պարանով: Հետևարար, Զեզ համար ժամանակը անժամանակ է, անենարինը՝ հնարավոր, չարը՝ պարտվող, իսկ բարության երկնակամարում միշտ փայլատակում է երշանկության ու խաղաղաբեր արեգակը:

Թող հենց այդ արեգակն էլ լինի Զեր հարատև ուղեկիցը, Վեհափառ Հայոց, որպեսզի լինենք Զեր հոտը դեպի նշմարտության ու անմահության առաջնորդող արժանի հովիկ, որպեսզի դեռ երկար տարիներ Զեր ներկայությամբ գարունը գա Հայոց աշխարհ ու Զեր ազգանվեր գործունեության շնորհիվ չիենանա այդ հինավորց հողից, որպեսզի նոյի շունչը պարագրող ալեհեր լեռան հովանու տակ լույս նառագի Հայոց առաքելահաստատ Աբոնից՝ Սուրբ էջմիածնից:

ՅԱՐՈՒՅՆԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սր. Էջմիածնի դիվանը հայտնում է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետը ապրիլի 14-ին, բժշկական քննության ճամատակով, ուղարկվեց Լոնդոն:

Ապրիլի 20-ին Վեհափառ Հայրապետը Լոնդոնից մեկնեց Նյու Յորք՝ շարունակելու բժշկական քննությունը, նիամատեղելով այն նախապես ծրագրված հովվապետական այցելության հետ: Այցի ընթացքում Նորին Սուրբ Օծությունը նախագահելու է Հայ Առաքելական Եկեղեցու Ամերիկահայոց թեմի 100-ամյակի տոնակատարությանը:

Ուրախությամբ հայտնում ենք, որ որևէ մտահոգիչ հարց չկա
Վեհափառ Հոր առողջության կապակցությամբ:

Ծուտափույթ և կատարյալ առողջություն ենք ցանկանում մեր սիրեցյալ
Վեհափառ Հայրապետին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍը
«Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ»
ԸՐԱՆԿԱՆՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ
ԽՐԻՍՏՈՍ ԼԱՄՊՐԱՔԻՒՆ**

**ՍԻՐԵՑԵԱԼ ՍՊԱՍԱԽՈՐԻՆ
ՀԵԼԵՆԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ
ՏԻԱՐ ԽՐԻՍՏՈՍ ԼԱՄՊՐԱՔԻՍ
ՈՐ յԱԹԵՆՔ, Ի ՅՈՒՆԱՍՏԱՆ**

Մրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Յունահայոց Թեմի բարեզան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Ուկան Արքեպիսկոպոս Գալիքարեանէն Ձեր բազմամեայ, բազմաճիւղ և բազմաբեղուն ծառայութեանց մասին, գորս այնքան սիրով և նուիրումով մատուցած էք Հելլէն ժողովուրդին թէ՛ մամուլի, թէ՛ գրականութեան, թէ՛ արուեստի և այլ բնագաւառներուն մէջ:

Վերջերս անհուն որախսութեամբ իմացանք Ձեր հովանատրած Արուեստի Համալիրին՝ ՄԵԿԱՐՈՂՆԻ երաժշտական կերորնին միջոցաւ հայկական մշակոյթի և արուեստի հետ Ձեր ստեղծած նոր և բարոր յարաբերութեանց զարգացման մասին: Վստահաբար, այդ փոխ-հաղորդակցութիւնները պիտի դառնան փոխադարձ հարատացման գեղեցիկ առիթներ Հելլեն և Հայ ժողովուրդներու շարունակական եղբայրական գործակցութեան զարգացման տեսակետէն:

Ի գնահատութիւն Ձեր բազմօգուտ ծառայութիւններուն և քաղաքակրթական նուաճումներուն՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Կերորնին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շքանշանը

Ա. ԱՌԵՀԵԿ-Ա. ՄԵՍՐՈՊ :

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր գործակիցներուն պարզէ քաջառողջ և երկար կեանք և նորանոր իրագործումներ հելլենական և հայկական մշակոյթներու փոխ-յարաբերութեան այնքան կարևոր բնագաւառին մէջ:

Ողջ լեռուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգուն, և յաւտ օրհնեալ ի Մէջջ. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տուաւ Կոնդակս ի 2 Ապրիլի

Յամի Տեսան 1998 և ի թուին Հայոց Ունիսէ:

ի Մայրավան Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ է/157

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայոց թեմի հիմնադրության առիթով և ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպոս. Պարսամյանի ներկայացմամբ, Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը հայրապետական գնահատության է արժանացրել Եկեղեցական, ազգային և համայնքային կյանքում իրենց աշխալով մասնակցությունն ու աշակցությունը բերած հետևյալ անհատներին:

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՎՈՐԻՉ» Հքանչանով պարգևատրվել են.

1. Վահագն և Հասմիկ Հովհաննեսեր
2. Տեր և Տիկին Ալեքս Տատուրյան
3. Տիար Սարգիս Տատուրյան
4. Տեր և Տիկին Հայկ Տատուրյան
5. Տեր և Տիկին Ժիրայր և Մերի Տեմիրյաններ
6. Տեր և Տիկին Մուշեղ և Մարի Հարությունյաններ
7. Տեր և Տիկին Ռաֆիկ և Ծողակ Հովհաննիսյաններ
8. Լոիկ Միմոն-Մանուկյան
9. Տեր և Տիկին Նազար և Արտամիս Նազարյաններ
10. Տեր և Տիկին Նշան և Մարգարիտ Աթընըզյաններ
11. Տեր և Տիկին Գեորգ և Ժարիլին Աթընըզյաններ
12. Տիկին Կարոլայն Մուլկար
13. Օրիորդ Անուշ Մաթևոսյան
14. Տեր և Տիկին Սարգիս և Սիրան Գաբրիելյաններ
15. Տեր և Տիկին Սարգիս և Թագուհի Սուլթանյաններ
16. Տեր և Տիկին Ասակես և Մարգարեթ Զարարյաններ
17. Տեր և Տիկին Սարգիս և Այդա Քեչեճյաններ
18. Տեր և Տիկին Հայկ և Էլզա Գիղիզյաններ
19. Տեր և Տիկին Սարգիս Հակոբյան
20. Տեր և Տիկին Բյուզանդ և Աւանիտ Փիրանյաններ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ.

1. Տեր և Տիկին Հարություն և Շաքէ Մխոյյաններ
2. Տեր և Տիկին Հրայր և Աննա Հովհաննեսեր
3. Տեր և Տիկին Գերոգ և Սիրվարդ Հովհաննեսեր
4. Տեր և Տիկին Հարուլի և Ջողեփին Կյուլամերյաններ
5. Տիար Սուրեն Ֆեճեյյան
6. Տեր և Տիկին Գրեգորի և Քրիստին Բարսեղյաններ
7. Տեր և Տիկին Էդուարդ և Բերբորա Փիրորդներ
8. Տեր և Տիկին Հայկ և Վարդուհի Թութակներ

9. Տիար Ալբերթ Զուտանճյան
 10. Տեր և Տիկին Հովհաննես և Անի Պետճեքյաններ
 11. Տեր և Տիկին Զորյ և Լյուսի Դարալյաններ
 12. Դոկտոր Կարապետ Կարիպյան
 13. Տիար Էդ Կյուլպենկյան
 14. Տ. Գառնիկ Ա. քհն. Հալաճյան
 15. Տեր և Տիկին Զորյ և Զիլ Քասիններ
 16. Տեր և Տիկին Հերի և Էդենա Քելեշյաններ
 17. Տեր և Տիկին Հակոր և Իգա Գոյցումճյաններ
 18. Տեր և Տիկին Գեղամ և Սոնիկ Գրանջյաններ
 19. Տեր և Տիկին Զարլ և Գրեյս Փիճաճյաններ
 20. Տեր և Տիկին Զեյմս և Սանդրա Լայթնորններ
 21. Տեր և Տիկին Մարտիրոս և Մարիամ Թադոսյաններ
 22. Տիկին Հելեն Մարտիկյան
 23. Տեր և Տիկին Էդուարդ (Զեյմի) Ժամագործյան
 24. Տիար Արսեն Ծերեճյան

Իսկ Կանադահայոց Առաջնորդ գերազնորհ S. Հովհանն արքեպո. Տերտերյանի ներկայացմամբ «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանի է արժանացել տիար Պատրիկ Ա.Փեյանը՝ իր երկարամյա և բազմաթերուն գործունեության համար:

«ԽԱԶՆ ԿԵՆԱՐԱՐ, ՈՐ ԵՂԵՒ ՄԵԶ ՓՐԿՈՒԹԻՒՆ»

«Կ'ապրիմք...

Մեր ճահատակներուն հոգիներուն
համար այսօ՞ր մոմ կը վառեմք...

Որ վաղը, բանատեղծին Բնաւ միասին,
կարենանք ըսեզ.

- Մեռեներուն իբրև խաչ ես այս ծառը
տնկեցի»:

ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Մեր պատմութեան ընդարձակ դաշտին վրայ հոկայ գերեզմանոց մը ուժինը, որուն մեջտեղը հոգեղէն Յուշարձան մը կանգնած է, ու խաչ մը տնկուած է անոր վրայ, համան Գողգոռայի խաչին, կարճ արձանագրութիւն մը դրոշմուած է այդ կորողին վրայ - «1915, Ապրիլ 24. Աստ հանգչին մէկ միլիոն հայ ճահատակներ», այսքան միայն»¹: Սակայն հայոց հոգեղէն հուշարձանը, ելենով սեփական ժողովոյի պատմության ընդարձակ սահմաններից, խախտելով անձեռակերտ կորողի ընդգրկումությունն ու անպարագրելիությունը, ձեռակերտ հուշարձաններ դարձած «շրջեց» Երկիր մոլորակով՝ սրափության կոչելով համայն մարդկությանը, ճշմարտության անեղծելի ձայնը հնչեցնելով ամենուր, թե անմար է հայը, իր մեզ լեռների պես անկոտրում նրա ոգին, իր երկրի պես հապարտ... Եվ աշխարհասիյուն հայության առջև, ի վերջո, խոնարհվեց առաջադեմ մարդկությունը: Հասկացավ, որ Ապրիլ 24-ի արմատները դեպի մեզ են ձգվում Հայկ Նահապետից, Վարդանանց դյուցազնամարտից, Վահանյանց անմենելի հայուանակից, որ Զեյթունի ու Վահի, Այնթապի ու Հաճին և մյուս քաղաքների անհավասար մարտերը մեր փոքրիկ ածոնի հերոսական մաքառումների ու ինքնապաշտպանության անեղծելի պատմության անօրինակ էջերն են:

Հասկացավ նաև Ապրիլ 24-ի մեծ խորհրդությը. այն հայի համար սգո օր չէ, այլ՝ ոլստի օր: Ողբի ու լացի օր չէ, այլ՝ քաջության ու հավատարմության, քրիստոնեական հավատքի ու աղոթքի, վերընայումնան ու Տիրոջ փրկարար խաչի զորությամբ անմահության որդեգրման օր: Հենց այս խորհրդի մեծ գիտակցումով էլ ամեն տարի Ապրիլ 24-ին բարձր ու հնչելու դրանքում են Հայաստանայց Եկեղեցու զանգերն ի Հայաստան, ի Արցախ և ի Սփյուռք աշխարհի, ու Ծիծենակարերի բարձունք են ենում բոլորը, մեծ թե փոքր՝ մասնակցելու հայոց հավատքի ու անմահության դասին:

Եվ 1998 թվականի ապրիլի 24-ին այդ դասը կրկնվեց 83-րդ անգամ, որին մասնակցելու համար դեռ վաղ առավոտից հայ ժողովոյի երախտագետ զավակները, աշխարհի տարբեր ծագերից ժամանած, բարձրանում էին Ծիծենակարերի բարձունք՝ խոնարհության ու հարգանքի տուրք մատուցելու Մեծ եղեննի

¹ Սիոն եպիսկոպոս Մանուկեան, Լուսաշող դեմքեր և կյանք և խորհրդ, Բոստոն, 1949, էջ 111:

անմեղ գոհերի հիշատակին, ծնրադրելու նրանց արդար դատի առջև, որ մերօրյա հայորդու դավանանքն է:

Առավոտյան ժամը 11.00-ին իրենց խոճարհությունը բերեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Քչչարյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը, ՀՀ Վարչապետ Արմեն Դարրինյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Ազգային Ժողովի պատգամավորներ, կառավարության անդամներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, զինվորականության ներկայացուցիչներ, ՀՀ հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, դիվանագիտական այլքեր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևորականաց դասը՝ դիվանապետ Տ. Ներսես արքեպոս. Պոգապալյանի նախագահությամբ:

Նահատակաց հուշարձանին ծաղկեապակներ դրվեցին ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային Ժողովի, ՀՀ Կառավարության, ՀՀ Սահմանադրական դատարանի, Ն.Ս.Օ.Շ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Պատկեր դրվեցին նաև ԼՂՀ հշիսանությունների, Երևանի քաղաքապետարանի, քաղաքական կուսակցությունների, արտասահմանյան երկրների դեսպանությունների, Ամերիկայի Հայկական Համագումարի, Միջանի քաղաքային խորհրդի, ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, տարբեր կազմակերպությունների, անհատ անձանց կողմից:

Տաղիկներ դրվեցին նաև Սումգայիթում և Աղբեջանի մյուս քաղաքներում կատարված մերօրյա ցեղասպանության գոհերի հուշաքարին:

Հավերժական կրակի մոտ Հայաստանի Հանրապետության դեկավարությունը, հոգևորականաց դասը և հյուրերը մեկ րոպե լուսամբ նախ հարգեցին մեկ ու կես միլիոն գոհերի անմահ հիշատակը, որից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևորականաց դասը, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, կատարեց հոգեհանգստյան կարգ, ապա հակիրճ խոսրով օրվա մեծ խորհուրդը մեկ անգամ ևս մեկնեց դիվանապետ Տ. Ներսես արքեպոս. Պոգապալյանը: Դիմելով ներկաներին, Սրբազն Հայրը պատօնամեց մշտավառ պահել Եղեռնի անմեղ գոհերի հիշատակը և հավատարիմ մնալ նրանց ուխտին:

**

Նույն այդ ժամին, երբ հավատավոր հայ ժողովրդի զավակների մի ստվար մասը խոնարի հոգով բարձրանում էր դեպի Միջեռնակաբերդի բարձունք, Հայաստանյաց բոլոր եկեղեցիներում մատուցվում էր Սուրբ և անմահ Պատարագ՝ ի հիշատակ Ապրիլյան նահատակների և ի ոգեկոչումն Մեծ Եղեռնի 83-րդ տարելիցի:

Սուրբ Պատարագ էր մատուցվում նաև Էջմիածնի Մայր Տաճարում: Օրվա պատարագիչն ու քարոզիչն էր Գևորգյան Հոգևոր Շեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն Մ. Վոր. Նաշարյանը:

Օրվան պատշաճող գեղեցիկ քարոզում հայր սուրբը նախ անդրադարձավ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության խորհրդին՝ զուգահեռաբար հայոց պատմության 1915 թվականի մերմակ էջը համադրելով քառանորյա Մեծ Պահքին հաջորդող շրջանի խորհրդի հետ:

Ծարունակելով խոսքը, հայր սուրբն ի մասնավորի ասաց. «Ահա Զատկա»

հետիարության շրջանի մեջ է, որ գտնվում ենք գուգադիպությամբ այն դեպքին, որ մեզ՝ հատկապես քրիստոնյաներուս համար կյանքի, մահվան ու հարության խմասը է քացահայտվում: Այդ նոյն դեպքի շրջանում է, որ գալիս ենք որպես հայ ժողովորդ, հատկապես հիշատակելու համար մեկ ու կես միլիոն մեր նահատակներին, որոնք ընկան վասն Հիսուսի և վասն հայուննեաց:

Սիրելի հավատացլյաներ, մեր ժողովուրդը դժվար պատմություն է ունեցել: Մենք չենք նմանվում այն ժողովուրդներին, որոնք մի քանի հարյուր տարվա պատմություն ունեն: Մենք երկար ճանապարհ ենք անցել: Եվ միգուցե առաջին հազարամյակը մեր հեթանոսական միջավայրում, իսկ երկու հազարամյակը՝ քրիստոնեական լուսի ներքո: Եվ այդ երկու հազարամյակի ընթացքում հատկապես ունեցել ենք լավ օրեր, խաղաղ օրեր և ստեղծագործել ենք, սակայն եթե նայելու լինենք, պիտի տեսնենք, որ պատերազմները, ավերները ավելի շատ են եղել այն աշխարհագրական դիրքի պատճառով, որ ունի մեր Հայունները:

Այստեղով հնուց ի վեր եկել ու անցել են հոումեացիները, բյուզանդացիները, հարավից՝ արաբները, արևելքից՝ պարթևները, սասանյանները և այնուհետև սեղուկները, մոնղոլները, թաթարներ և վերջին շրջաններում նաև ոռուները:

Այստեղ՝ Հայաստան աշխարհում երբ քայլում են, ամեն մի քար պատմություն է, մի դյուցագներգություն, և, ինչպես մի ալեօպարդ ծերունի, զգիտի, իր կյանքի ո՞ր դեպքը հիշի, ո՞ր մենքը՝ անտեսի, մեզ համար ել դժվար է՝ ո՞ր մենք մենք ասենք և ո՞ր մենքը մոռանանք: Սակայն 20-րդ դարու սկզբի մի դեպք՝ Հայոց Եղեռնը, անմոռանալի պիտի մնա»:


Այսուհետև իր քարոզում հայր սուրբն անդրադավ նաև Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի վիճակին, 1915-ին նախորդող ջարդերին, երիտրութերի կեղծավոր ու շողուռը քաղաքականությանը, առաջին աշխարհամարտի ժամանակ ծրագրված կերպով կազմակերպված համընդհանուր ջարդերին՝ չմոռանալով հայոց հերոսական ու անհավասար մարտերը, ինքնապաշտպանական կոփիւները: Ապա շեշտեց Սարդարապատի հերոսական ճակատամարտում հայ ժողովրդի զավակների սիրանը, անդրադավ նահատակ հոգևորականներին, գրանց, ովքեր Սուրբ Գիրքը գենքով փոխարինած, առաջնորդեցին սեփական ժողովրդին դեպի հայութանկ: Հայր Հայկազունն առավել հանգամանորեն ներկայացրեց Եղեռնի հիշատակության, ոգեկոչման խորհուրդը՝ մերօյա հայորդու համար: Արտագողթից ծագող վտանգը ևս դուրս չմնաց հայր սուրբի քարոզից: Նա հիշեցրեց, որ «հայության հավիտենականության պայմանը այս հողն է, այստեղ ապրող ժողովուրդն է»:

Լուսաշող մի հայացը Շետելով դեպի հարազատ ժողովուրդի ապագան, հայր սուրբը լավատեսական այս խոսքերով ավարտեց իր քարոզը. «Արդարության ժամը պիտի հնչի, և Եզեկիել մարգարեի նման տեսիլը ունեցող մարգարեներ պիտի վկայեն, թե այն օրը պիտի գա, երբ հայ շարականներ պիտի հնչեն Ամիի Մայր Տաճարում, Աղթամարի Սուրբ Խաչում, Կարսի Առաքելոցում, Սովորելություն և ամեն տեղ, որ գոյություն է ունեցել սուրբ խորան»:

Հավարտ Սուրբ Պատարագի Մայրավանքի բակում գտնվող Ապրիլյան համատակների հիշատակն անմահացնող հուշարձան-կոթողի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Հոգեհանգստյան կարգն ավարտվեց, սակայն միայն ուշ գիշեր հայ ժողովրդի

Հայոց Կիոնի Սուրբ Վահագուշակ
Կաթողիկոս Ովոյ Տառէ ՂԱՅԵԱՆԻ ՍՈՒՐԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ



բոլոր զավակները, ավագ թե կրտսեր, շարունակում էին խոնարհության ու հարգանքի ծաղկվերով բարձրանալ դեպի Միջեռնակաբերդ՝ հոգիներում մեկ ու կես միլիոն նահատակների սուրբ կտակը սեփական ազգին. հավատարիմ մնալ այն արդար դատին, հանուն որի իրենք նահատակվեցին, չդրժմ քրիստոնավանդ այն հավատքի լուսը, հանուն որի իրենք զոհվեցին, սիրել հայոց Ազգ ու Հայատանյաց Եկեղեցին:

Հայր կղաղաքի գոյատևելուց միայն այն ժամանակ, եթե թշնի այդ ոգին, եթե մշուշփի նախատակաց հիշատակը: Սակայն մեր բոլոր հերոսամարտերի բյուր նախատակաց հոգիները Ռսկելենիկ Եղիշեի բերանով պատզամում և պատզամելու են մեզ, որ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՕՐԹՈԴՈԽԸ ԵԿԵՂԵՅՈՒԻ ՍՈՒՐԲ ՄԻՆՈԴԻՆ**

Աթենքի և համայն Հունաստանի Օրթոդոքս Եկեղեցու պետ Սերաֆիմ արքեպիսկոպոսի մահվան կապակցությամբ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետևյալ ցավակցական հեռագիրը հղեց Աթենքի և Հունաստանի Սուրբ Սինոդին.

«Սիրելի եղբայրը ի Քրիստո,

Մենք խորապես Վշտացանք՝ խելով Հունաստանի Ուղղափառ քոյր Եկեղեցու պետ Սերաֆիմ արքեպիսկոպոսի մահվան լուր:

Աղոթք ենք հղում առ Աստված, որպեսզի ընդունի ճրա հոգին հավիտենական խաղաղության և երանության մեջ:

Սերաֆիմ արքեպիսկոպոսի ավանդը Հունաստանի Եկեղեցուն միշտ կմիշվի երախտագիտությամբ: Հայաստանայց Առաքելական Եկեղեցու և ճրա սուրբ կենտրոնի Մայր Աթոռ Սր. Էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսարանի անունից Մենք մեր խորին ցավակցությունն ենք հայտնում Սր. Սինոդի նվիրյալ անդամներին, բոլոր եպիսկոպոսներին և հոգևոր դասին, ինչպես նաև Հունաստանի ժողովորդին:

Աղոթք ենք առ Աստված, որ Սր. Սինոդի բոլոր անդամներին, եպիսկոպոսներին և հոգևորականներին շնորհի երկար կյանք և արժանի ծառայություններ Հունաստանի Եկեղեցուն և ժողովորդին»:

Վեհափառ Հայոցապետի բարձր կարգադրությամբ Մայր Աթոռ Սր. Էջմիածին անունից Սերաֆիմ արքեպիսկոպոսի թաղման արարողությանը կմասնակցի Հունաստանի թեմի հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Ուկան արք. Գալիքաքյանը:

**ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐ ՀՆԵՑ ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՕՐԹՈԴՈԽԸ
ԵԿԵՂԵՅՈՒԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԵՏԻՆ**

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ապրիլի 30-ին ԱՄՆ-ից շնորհավորական հեռագիր է հղել Աթենքի և համայն Հունաստանի Օրթոդոքս Եկեղեցու նորընտիր պետ Խրիստոդուլու արք. Պարակևայիդիսին:

Հեռագրում Վեհափառ Հայոցապետն իր և Հայ Առաքելական Եկեղեցու անունից բարեմաղթանքներ է հայտնում երջանկահիշատակ Սերաֆիմ արքեպիսկոպոսի հաջորդը դարձած Աթենքի և համայն Հունաստանի Օրթոդոքս Եկեղեցու հոգևոր նոր պետին և հովու հայտնում, որ Հայ և Հովու երկու Եկեղեցիների բարեկամությունը այսուհետ ևս կշարունակվի:

«Հովու և Հայ Եկեղեցիների ու ժողովուրդների սերտ համագործակցությունը սկիզբ է առնում դարերի խորքից: Նրանք հաճախ կիսել են նույն ճակատագիրը, դիմագրավել նույն դժվարությունները ու մարտահրավերները:

Մենք Զեզանից ու Ս. Սինոդից ակնկալում ենք, որ այսուհետ ևս կնպաստեք մեր Եկեղեցիների և ժողովուրդների միջև եղբայրական հարաբերությունների և համագործակցության խթանմանը», - ասկում է հեռագրում:



ԿԵՐԱՎ - ԲԵՆԵՍԻՐԱԿԵՐ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ «ԱՅՍՈՐ ՅԱՐԵՎԻ»-Ի ԱՌԹԻՒ

Հայ հոգեւոր Երաժշտութեան ամիատնում գանձերին հաղորդ դառնալու եւ ներկայացնել փորձելու եւս մի կարելիութիւն ստեղծուեց, երբ 1996-ի ձմեռնամուտին Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կարողիկոսի կողմից առաջարկ եղաւ մեր Եկեղեցական խոշորագոյն տօներից իւրաքանչիւրին նուիրուած մեկական ձայներից պատրաստել՝ փնջուած տուեալ տօնի կանոնի կամ կանոնների ամենացայտուն շարականներից եւ երգերից: Այդ աշխատանքների իրականացման պատիւն ու բախտը վիճակուեց «Հոգեւոր Երգի Երգչախմբին», որն այդ առաքելութեանը նուիրուած էր իր կազմաւորման օրից՝ 1990 թուականից:

Անշուշտ բոլորիս համար էլ պարզ էր, թէ ինչպէս խորհրդային Հայաստանում հայ մասնագիտական (պրոֆեսիոնալ) Երաժշտութեան իրական զարգացման ծիրից դուրս ու գրեթե անտեսուած մնաց հայ Երաժշտութեան հոգեւոր (Եկեղեցական) ծիւղը (ի բացառեալ Երկրորդ հանրապետութեան վերջին մէկ-մէկուկէս տասնամեակի մէկ ափ նուիրեալների խիզախումները):

Զեռնարկելով նիւթերի հաւաքնան նախապատրաստական աշխատանքներին, շատ յաճախ բախտում էինք այն իհմնահարցին, երբ անհրաժեշտ շարականը բազմածայն մշակում չուներ: Այդ խնդրի լուծման իր լաւագոյն առաջարկներով մեզ օգնութեան եկաւ հայ Եւ Երուպական հոգեւոր Երաժշտութեան անուանի գիտակ՝ Երգահաննուագավար Դանիէլ Երաժիշտը («Խորհուրդ Մեծ» շարականի նրա մշակումը տես՝ «Եջմիածին» ամսագրի 1-ին համարում), որը շուրջ Երկու տասնամեակ նուիրուած է յատկապէս հայ Երաժշտութեան մշակման ու մատուցման շնորհակալ գործին:

«Հոգեւոր Երգի Երգչախմբի» կողմից առ այսօր պատրաստուած է երեք ձայներից՝ նուիրուած Ս. Ծննդեան, Ս. Յարութեան եւ Ս. Վարդանանց տօներին: Ստորեւ ներկայացուողը Ներսէս Լամբրոնացու «Այսօր Յարեաւ» օրինութեան շարականն է Ս. Զատկուայ կանոնից եւ մեր բազմածայնեցման առաջին փորձերից մէկը:

ՄԻՋՐԱՆ ՂԱԶԵԼԵԱՆ

ԱՅՍՈՐ ՅԱՐԵԱԻ

Խօսք և երաժշտ. Ներսէս Համբրոնցոյ

Մշակումը Միհրան Ղազարեանի

Համդիանոր

Սլու - սօր յար - եաւ
Ոլ - սօր յար - եաւ
Ոլ - սօր յար - եաւ
Ոլ - սօր յար - եաւ

Ոլ - սօր յար - եաւ
Ոլ - սօր յար - եաւ
Ոլ - սօր յար - եաւ
Ոլ - սօր յար - եաւ

սալն ան - մահ
նալն ան - մահ
սալն ան - մահ
սալն ան - մահ

եւ երկ - նա
եւ երկ - նա
եւ երկ - նա
եւ երկ - նա

նա - ւոր
նա - ւոր
նա - ւոր
նա - ւոր

բնկ ա - ւն - տիպ
բնկ ա - ւն - տիպ
բնկ ա - ւն - տիպ
բնկ ա - ւն - տիպ

տիպ ա - ւն - տիպ
տիպ ա - ւն - տիպ
տիպ ա - ւն - տիպ
տիպ ա - ւն - տիպ

ինըն - ղու - թեան
ինըն - ղու - թեան
ինըն - ղու - թեան
ինըն - ղու - թեան

p

հարսն ի
յիբկ - բէ հ - կէ ղէ ղի

հարսն ի
յիբկ - բէ հ - կէ ղէ ղի

հարսն ի
յիբկ - բէ հ - կէ ղէ ղի

հարսն ի
յիբկ - բէ հ - կէ ղէ ղի

f

օրհ - նես ի մայն

գըն ծու թևան

գըն ծու թևան

գըն ծու թևան

գըն ծու թևան զւս-տը

զւս - տը - ուած

p *Uf* *u:*

զւս - տը - ուած

զւս - տը - ուած

զւս - տը - ուած

p *Uf* *o* *u:*

ուած

զւս - տը - ուած

p *Uf* *o* *u:*

ԱՅՍՈՐ ՅԱՐԵԱՎ

**Այսօր յարեաւ ի մեռելոց
փեսայն անձահ եւ երկնատոր,**

**թեզ աւելպիր խընդուրեան
հարսն ի յերկոէ ևկեղեցի,
օրինեա ի ծայն գընծուրեան**

զԱպուած քո Սիօն:

**Այսօր անձառ լոյս ի լուսոյ
լուսատորեաց զմանկունք քո,
լուսատորեան Երուաղէն,
քանզի յարեաւ լոյս քո Քրիստու,**

օրինեա ի ծայն գընծուրեան

զԱպուած քո Սիօն:

Այսօր խաւարն անզիպուրեան

հալածեցաւ երբեակ լուսով,

եւ թեզ ծագեաց լոյս զիկուրեան

յարուցեալն ի մեռելոց Քրիստու,

օրինեա ի ծայն գընծուրեան

զԱպուած քո Սիօն:

ՀԱՅՈՒՆԵՐԱ ՃԱԶԱԿԱՆԻ

ՂԳՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ «ՄԱՐԿՈՍԻ ԶԱՅՆԵ» ԼՐԱԹԵՐԹԻԿ

ԱՍՎԱԾԱԾՆԻ ՀՐԱՇԱԼԻ ՀԱՅՏԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՅԹՈՒՆՈՒՄ

(1968 ապրիլ 2, 1998 ապրիլ 2)

ԱՍՎԱԾԱԾՆԻ ԵՐԵՎՈՒՄՆԵՐԻ ՅՈ-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ Փախուստ դեպի Եգիպտոս

«Երբ նրանք այնտեղից գնացին, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց Հովսեփին ու ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ այդ մանկանը և նրա մորը ու փախի՛ր Եգիպտոս. և այնտեղ մնա՛, մինչև որ քեզ ասեմ, բանի որ Հերովդեսը փնտրում է այդ մանկանը՝ կորսայան մատնելու համար»: Եվ նա վեր կացավ, առավ մանկանն ու իր մորը, գիշերով, և գնաց Եգիպտոս ու այնտեղ մնաց մինչև Հերովդեսի մահը, որպեսզի կատարվի մարգարեի բերանով Տիրոջ կողմից ասվածը, թե՝ Եգիպտոսից պիտի կանչեմ իմ Որդուն» (ՄԱ.ՏԹ. Բ 13-15):

Այսինքն է Ավետարանիչը պատմում փախուստը դեպի Եգիպտոս: Ավանդուրյունը պատմում է, թե ինչպես Սուրբ Ընտանիքն Արարական անապատով Կանտարայից և Բաստայի բլուրներից ուղևորվեց Գեսենի հող: Ենթադրվում է, թե Նեղոս գետն անցնելը տեղի է ունեցել Սամանութում: Նրանց անցած ճանապարհի վրա հետագայում հիմնվել են վանքեր: Երկու վանքեր կառուցվել են Ռւադի Նատրուն բաղակում:

Վերադարձի ճանապարհին Սուրբ Ընտանիքը կանգ առավ Հին Կահիրեի մի քարայրում, որի անունը Բարիլոն է: Այս նոյն տեղում հիմնվեց Սուրբ Սարգիս վանքը՝ Արու Սերգայի եկեղեցին: Այս եկեղեցին գոյություն ունի մինչև այսօր: Սրբավայրը գտնվում է քարայրի վրա:

Անցան ճական Զեյրունով: Մարտարիելում կանցնեցին մի ծառի մոտ, որը մինչև այսօր ցույց է տրվում, ապա ուղևորվեցին Մոսքորոդ: Զեյրունում կա մի եկեղեցի՝ Սուրբ Կույսի անունով, որ հիշատակում է Սուրբ Ընտանիքի այցելությունը: Այս Ռւղղափառ Ղպտի եկեղեցին կառուցված է Թուման-Բեյ փողոցում, որը Կահիրեի արվարձանի հիմնական քաղաքան է: Եկեղեցին կենտրոնագմբեր է, ինչպես նաև ունի չորս գմբերներ՝ եկեղեցու չորս անկյուններում:

Եկեղեցու դիմաց գտնվում է հասարակական տրանսպորտի կենտրոնակայացնը:

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՎՈՒՄԸ

1968 թվականի ապրիլի 2-ին, մայրամուտից մի քանի ժամ հետո, վարորդների և մեխանիկների ուշադրությունը գրավեցին փողոցից եկող ձայներն ու

շարժումները: Ապա տեսան մարդկային մի կերպարաներ, մի սպիտակազգեստ կին, որ կանգնած էր կենտրոնական գմբերի վրա՝ խաչը ձեռքին: Տեսնողները մտածեցին, թե այս անձնավորությունը մի մայրապետ էր: Նկատելով, որ գտնվում էր գնդակև և սահուն գմբերի վրա՝ ազդարարեցին, որ զգույշ լինի և սպասի: Նրանցից մեկը, վախենալով, որ նա փորձում է ինքնասպանություն գործել, ոստիկանություն է կանչում, մեկ ուրիշը, որ գաղութի քահանայի որդին էր, բակեց եկեղեցու դուռը և կանչեց իր հորը, որը նույնափս տեսնելով կույսին, լուր է տալիս իր առաջնորդին: Այդ ժամանակ մի մեծ քաղմություն հավաքվեց եկեղեցու առջև՝ խափանելով Թուման-Բեյ փողոցի երթևեկությունը:

ԳԱԴՈՒԹԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԶԵԿՈՒՅՅՐ

Գաղութի հահանա հայր Կոնստանդին Մուսան պաշտոնական մի զեկույց գրեց այս մասին, որում մասնավորապես նշում է. «Այս հիշատակելի երեկոյից հետո Սուրբ Կույսը երևաց մեկից ավելի անգամներ և հայտնից զանազան մարդկանց, այդ քվում նաև՝ Միշել Սոլիմային և իր ընտանիքին, որոնք եկեղեցու դիմացն են բնակվում, Սուրբ Կույսը վերստին երևաց ապրիլի 9-ին: Հաջորդ երեկոյան հարեւան դպրոցի մայրապետները, ինչպես նաև անդրանիկ զավակս ասացին, որ դարձյալ տեսել են Սուրբ Կույսին: Փուրացի դեպի հրապարակ և հայտնությունը տեսա այս անգամ ծառի նմանողությամբ, եկեղեցու հյուսիս արևելյան գմբեթի կողմից: Դա լուսավորված և ուկայ մի մարտին էր»:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԸ

Բազում մահմեղականների վկայությունները խտացրեցին զեկույցների շարքը:
Իմիջիալոց կարող ենք նշել մի բանի անունները. Մահմուդ Արդի Խոհման՝ «Ել
Մասահ» օրաթերթի լրագրող, Համդի Հիրազ՝ Զեյրուլիֆ տեղական խորհրդի
երեսփոխան, Մահմուդ Նագիբը՝ «Ալ Գումրիեհյա» լրագրի բղրակից, և այլով:

ԲԱԶՈՒՄ ԵՐԵՎՈՒՄՆԵՐ

Հարյուրավոր երկուումների ընթացքում Սուրբ Կույսը կատարյալ լուռքը ունէ պահել: Կարող ենք նրան շփորել մի արձանի հետ, բայց նա անշարժ չէր: Եկեղեցու տաճիքի վրա նա անցնում էր մեկ կողմից մյուս կողմ, որպեսզի բոլորը բախտն ունենան իրեն տեսնելու: Խնարդիվում էր, որպեսզի ողջուներ բազմությանը: Իր շարժումը որևէ քայլվածքի նման չէր, այլ կարծես սահում էր օդի մեջ: Նրա զգեստը ծածանվում էր օդի շարժման հետ, իսկ դեմքը հաճախ ժպտում էր, մեկ այլ անգամ ավելի խիստ և տխուր, բայց միշտ բարյացակամ:

Նրա գլուխին երթեմն սպիտակ պասկ կար, որը հրեց վեհ կերպարանք էր տալիս, երթեմն՝ բազ, խոկ երթեմն ել՝ ոչինչ։ Նույն երեկոյի ընթացքում երկումից երկում այս կերպարանքը փոխունվում էր։ Պատահել էր, որ Նրա գրկում լիներ Հիսուս Մանուկը (ինչպես սրբապատճենին իր Աստվածածինը)։ Զավակն ու իր Մայրը երթեմն-երթեմն բազադրված էին լինում։ Առնվազն մեկ անգամ Սուրբ Կույսը երկացել է նաև Հովսեփի և Հիսուս Մանուկան ընկերակցությամբ, որտեղ Հիսուս տաճեներկու տարեկանի հասակում էր։ Իր ամելան տոններին ավելի հաճախ էր երկում։

Տիրամոր երևումը կանոնավոր կերպով շարունակվում էր երեկոյան ժամը 21.00-ից մինչև առավոտյան ժամը 06.00-ն՝ երբեմն տևելով մի ժամի րոպե, իսկ երբեմն էլ՝ երկու ժամ և ավելի, երբեմն էլ ընդմիջվում էր և ապա շարունակվում նույն երեկոյի ընթացքում: Ընդհանրապես առաջին ամիսների ամեն մի երևում ավելի երկար էր լինում: 1968 թվականի հունիսի 8-ի երեկոյան երևումն անդադար շարունակվեց երեկոյան ժամը 21.00-ից մինչև առավոտյան ժամը 04.30: Ակզրում գրեթե ամեն երեկա երևում էր լինում, այնուհետև շարարը երեք անգամ՝ անկանոն կերպով, այնպես որ չէին կարողանում գուշակել երևումների ընթացքը:

ՀԱՅՏԱԼՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Սովորաբար Աստվածածնի երևումները ուղեկցվում էին խորհրդավոր լույսելով՝ երբեմն այնքան լուսավոր մի գնդով, որ որոշակի ժամանակ էր պետք, մինչև լուսակվեր Սուրբ Կույսի դեմքը, երբեմն շանթանման փայլերով, երբեմն էլ՝ աստղերի աղամանդանման հառագայթներով: Հաճախ լույսը երևում էր գմբերներից մեկի վրա, ապա լուսավորում ամրող տանիքն ու մնացած գմբերները:

ԹՌՉՈՒՆՆԵՐ

Այս երևումներին զուգահեռ տեսնվում էին աղավնիներից մեծ սպիտակ և լուսավոր բռչութեաբեր: Նախապես հայտնվում էին երևումների ժամանակ և դրանցից հետո, բայց երբեմն երևում էին այն երեկոներին, երբ Աստվածածնը չէր երևում: Հաճակարծակի երևում էին և ապա անհայտանում: Այս բռչութեաբերը, ինչպես նաև Սուրբ Կույսը լուսանկարվել են:

ԶԵՅԹՈՒՆԻ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԸ

Երևումների 14 ամիսների ընթացքում մեծ բազմություն էր հավաքվել Զեյրունի Սուրբ Մարիամ եկեղեցու շուրջ: 1968 թվականին օրական մոտավորապես 50.000 հոգի ուխտավոր էր լինում, իսկ երբեմն էլ՝ 100.000 և ավելի: Եկեղեցու արևմտյան կողմի բակը այնքան փոքր էր, որ ցանկապատը բանդվեց: Կանիբեկի հաղաքապետարանը որոշեց եկեղեցու բաղամասում երթևեկությունն արգելել: Այս բոլորով հանդերձ, բազմությունն այնքան շատ էր, որ դժվար էր մի փոքր տեղ գտնել: Այն մեծ ցնծությամբ ողջունում էր Սուրբ Կույսի յուրաքանչյուր երևումը և դեպի նա էր դիմում մեծ հավատքով: Մահմեդականները Պուրանից հասվածներ էին արտասանում, Ղափի ուղղափառները և կարողիկները աղորում և երգում էին մեղեդիներ արարերենով, ոմանք աղորում էին հունարենով և այլն: Նկատվում էր հավատի վերանորոգում, նույնիսկ շատերը դարձի եկան: Ուղղափառ, Կարողիկ և Բողոքական եկեղեցականները միաձայն նկատում էին, որ ավելի մեծ բազմությամբ էր ժողովուրդը մասնակցում արարողություններին:

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1968 թվականի ապրիլի 23-ին Աղեքսանդրի Պապ և Սուրբ Մարկոսի հաջորդ նորին Սրբություն Կյուրեղ Զ-ն մի հանձնախումբ կազմեց, որը պետք է

ուսումնասիրեր այս բոլոր դեպքերը: Այս ժամանակավոր հանձնախմբի անդամներն էին պապական գրասենյակի ընդհանուր տնօրեն հայր Գիրգիս Մարան, եկեղեցական գործերի հանձնախմբի անդամ, երեսփոխան հայր Հաննա Արդիմեսիկը, Նորին Սրբության անձնական ժարտուղար հայր Բենիամին Քամիլը:

Երկարատև ուսումնասիրություններից հետո պաշտոնական այս հանձնախումբը պաշտոնական զեկույց երապարակեց, որում մասնավորապես նշվում է հետևյալը.

«Մեր աչքերով ցանկացանք այս երկումները տեսնել, մի ժամի երեկոներ գնացինք եկեղեցու մոտակայքը, վերջապես Սուրբ Կույսի դեմքը տեսանք՝ պատկը գլխին, ապա ամրողապես երևաց, այնուհետև խաչի առջև ծնրադրեց, և վերջապես, օրինեց բազմությանը: Մեկ այլ երեկո ձյունից ավելի ենրմակ լուսապայծառ աղավնիներ տեսանք, որոնք հանկարծ հայտնվում էին և խկույն անհայտանում խորհրդավոր կերպով: Կարծես թե գմբերից դեպի երկինք էին բռչում, բայց իրենց թևերը չէին բափահարում ինչպես մյուս բռչումները»:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

Լրատվության տնօրեն, տուրիզմի նախարար Հաֆեզ Ղաննմին մի զեկույց ներկայացրեց, որտեղ գտնվում էին ավտոհավաքայանի գործավորների վկայությունները՝ ֆաստելով Սուրբ Կույսի 27 երկումների մասին 1968 թվականի ապրիլի 2-ից մինչև զեկույցի բարեկանը: Ղափի-Կարոլիկ Պատրիարք Ստեփանոս կարդինալը և Հույն-Կարոլիկ եկեղեցու վարդապետ հայր Այրուրը կառավարական զեկույցի առիթով վերահաստատեցին իրենց վկայությունները Սուրբ Կույսի հրաշալի երկումների մասին: Ստեփանոս կարդինալն ավելացրեց, որ այս հրաշքը բարի պատգամ է, որն աշխարհի բոլոր ուխտավորներին Զեյրունի եկեղեցի է հրավիրում:

Բենիսույնեֆի եպիսկոպոս Աքանանիսոսը ապրիլի 29-30-ի գիշերը գտնվում էր բազմության մեջ: Նա ասաց. «Առավոտյան ժամը 02.45-ին Սուրբ Կույսը հայտնվեց, և բոլոր տեսան նրան: Ամբողջությամբ երևաց ֆոսփորե արձանի պես: Քիչ հետո նա անհայտացավ և վերահայտնվեց առավոտյան ժամը 04.00-ին: Սուրբ Կույսը գնում էր դեպի արևմուտք, երբեմն ձեռքն էր պարզում, գլուխը խոնարիում և օրինում բազմությանը: Մի լուս պատկ ուներ գլխին: Տեսնում էինք նաև մի ժամի լուսավոր պատկերներ կապույտ գույնով՝ աստղերի նման: Այս տեսարանը հուզիչ և հոյակապ էր»:

ՀՐԱՇՎԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատրիարքարանի կողմից բժշկական հանձնախումբ կազմվեց, որպեսզի հայտնված բժշկություններն ուսումնասիրվեն: Զանազան հիվանդությունների (քաղցկեղ, մկանային հիվանդություններ և այլն) բժշկումներ ի հայտ եկան:

ՊԱՊԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աղեքսանդրիո Պապ Նորին Սրբություն Կյուրեղ Զ-ն, այս բոլոր զեկույցներից և վկայություններից հետո, հայտարարեց իր խորունկ հավատքը այս հրաշքի իրողության հանդեպ: Նա ասաց. «Այս երկումները երկու մեծ շնորհներ

քերեցին. առաջինը՝ հավատի գորացում, իսկ երկրորդը՝ անհուսալի հիվանդությունների պարագաներում՝ հրաշալի բժշկություն»: Նա շնորհակալություն է հայտնում Տիրոջը այս հրաշալի երևումների համար այն եկեղեցում, որտեղ Հերոդոտոսի ամսորի ժամանակ հանգրվանել է Սուրբ Հայութիք:

ՖՐԱՆՍԵՔՆԻՑ ՔԱՐԳՄԱՆԵԿ ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱԼՃՅԱՆԸ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Սույն հաղորդագրությունը մենք իրատարակում ենք առանց մեկնարանության՝ եզրակացությունները բողնելով մեր ընթերցողներին: Մնում է միայն ավելացնել, որ Աստվածածին նմանարնույր հայտնություններ տեղի ունեցան նաև մեզ մոտ՝ Հայաստանում, 1988 թվականի ահեղ երկրաշարժից հետո, Մասիսի շրջանի Սայար-Նովա գյուղում, ապա շարունակվեցին Հայաստանի տարրեր շրջաններում: Սակայն, ցավով մենք և՝ չցանկացանք, և՝ չկարողացանք հավատալ այդ իրողությանը: Դեռ ավելին, մամուլում հնչեցին հայտարարություններ, կարծիքներ, տեսակետներ, վարկածներ, որոնք բոլորը այս դեպքը բացատրում էին հոգերանական ցանկալին իրականություն ներկայացնելու տեսանկյունից:

Ինչևէ, այս տեղեկությունը ևս մեկ անգամ փաստում է մեզ մոտ տեղի ունեցած Աստվածածնի հայտնության վավերականությունը:

Ընթերցելով վերոբերյալ նյուրը, հոգեկան հրեճանքի մեջ մենք ևս աղորք հղենք բոլորին հովանակնոր Մայր Աստվածածին, Մոլիսի Խորենացու շարականի աղոքնով՝ միացած մեր բույր Ղպտի Եկեղեցու հավատացյալների աղոքներին:

Քեզ ենք ապավինել, մեր Քրիստոս Աստուծո Մայր,

Որ քարձոր ես, բան երկինքը՝ պարծանք Եկեղեցու

Մեր Քրիստոս Աստուծո Մայր:

Ո՞վ Մարիամ, որ պայծառ ես, բան արեգակը,

Մի դադարիր բարինոսել մեզ համար,

Մեր Քրիստոս Աստուծո Մայր:

Քագրատ արեղա Գալստյան

ՀԱՅՐ ՖԻԼԻՊ ՍԹՈՐԻ-ՎԵՆԹԵՐԻ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՍԲ. ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(15 ապրիլի, 1998)

«Ահա յառաջազդյան երթայ քան զձեզ ի Գալիլիա,
անդ տեսանիցէք զնա, որպէս ասացն ձեզ»:

«Նա գնում է Ձեր առջևից դեպի Գալիլիո երկիր:
Դուք կտեսմեք նրան այնուեղ, ինչպես որ նա խոստացել էր»:
(ՄԱՐԿ. ԺԶ 7-8)

Այսօր մենք կկարդանք հատվածներ Սբ. Մարկոսի Ավետարանից, ամենավաղ և համառոտ գրված Ավետարանից: Այն գրված է պարզ և կենդանի հոնվ՝ ընթերցողին հակիրճ ու հստակ ներկայացնելով մեր Տիրոջ կյանքը երկրի վրա: Սբ. Մարկոսի Ավետարանը ավարտվում է Տիրոջ հարության լորով: Ի տարրերություն Սբ. Մատթեոսի ու Սբ. Ղուկասի Ավետարանների, Սբ. Մարկոսի Ավետարանում չկան մանրամասներ Քրիստոսի հարությունից հետո իր հետևորդների հետ հանդիպումների մասին: Սբ. Մարկոսը միայն ասում է, որ Քրիստոս հարություն է առել, և որ նրան կարելի է տեսնել Գալիլիո երկրում: Ըստ Սբ. Մարկոսի, Տիրոջ հարությունից հետո մանրամասների կարիք չկա, քանի որ իր համար հենց այդ փաստն է ամենից կարևորը: Փաստ, որ Քրիստոս հարություն առավ մահացածներից, ինչպես և խոստացել էր: Այդ իրադարձությունը որքանով էլ միակն է աշխարհի պատմության մեջ, դեռևս պատմության վերջը չէ, այլ մի նոր սկիզբ:

Ավետարանի երիտասարդի համար գտնել Քրիստոսին Գալիլիո աշխարհում մի քիչ տարօրինակ ու անսպասելի է, քանի որ Քրիստոսը պետք է լիներ Երուսաղեմում՝ Հուդակամի Սուրբ քաղաքում: Երուսաղեմը Դավիթ արքայի քաղաքն էր, տաճարների քաղաք էր, քաղաք, ուր Քրիստոսը եկել էր նշելու հրեաների՝ եզիդական լծից ազատագրվելու տոնը: Դա նաև այն քաղաքն էր, որ մերժել էր Նրան ու Նրա միջոցով՝ Աստծո ուղարկած լորը: Գալիլիո երկիրը Սրբազն հողի առևտրատեղն ու շուկայատեղն էր ու շատ հեռու Երուսաղեմի աստվածապահությունից ու նրա ուղափառությունից: Խորայելն այսօր ճիշտ այդ ձևով է քաժանիքած: Երուսաղեմը Մովկեսի կրոնի գերուդափառ քաղաքն է, ուր պահպանվում է օրենքի տառը: Վերելակները չեն աշխատում, կերակուրը չի տաքացվում, ո ծխելն արգելվում է շաբաթ օրը, քանի որ լուցկի վառել՝ նշանակում է աշխատանքի մեջ ընդգրկվել: Երուսաղեմից դուրս կյանքը տարբեր է ու եռում է ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսի ժամանակ:

Ես հավատացած եմ, որ Քրիստոս չգնաց Երուսաղեմ ոչ այն քանի պատճառով, որ այդ քաղաքը չէր ընդունել իրեն, այլ որ նա ժամանակ չուներ դատարկ ու ամիմաստ արարողությունների համար, որ ուղափառ հրեա հոգևորականությունն առաջարկում էր ժողովրդին: «Բացեք ձեր սրտերը» արտահայտությունը

տեղին է հիշել այստեղ: Քրիստոս գնաց Գալիլիո երկիր, որովհետև դա այն տեղն էր, որ մարդիկ ապրում էին իրական աշխարհում, որ կար կյանք, որ կարելի էր գտնել կյանքը իր լավ և վատ կողմերով: Եվ այսօրքա աշխարհում մենք ապրում ենք մեր «Գալիլիո» աշխարհում, այն առևտրատեղում, որ կարելի է գտնել աշխարհի լավն ու վատը: Եվ ինչպես մեր հարություն առած Տիրոջը մենք գտանք Գալիլիո աշխարհում (ըստ Սուլը Մարկոսի Ավետարանի), ճիշտ այդպես էլ մեր հարություն առած Տիրոջը մենք կգտնենք մեր «Գալիլիո» երկրում այս Զատկին:

Անցյալ շաբաթ ես այցելեցի Խոր-Վիրապ: Այն եղել է Սուլը Գրիգոր Լուսավորչի բանտարկության վայրը երկար տարիներ: Մինչ ես կանգնած էի այդ խոր գնտնափոր բանտախցում՝ նայելով այդ փոքրիկ լուսի նշուվին, որ թափանցում էր բանտախուց, ինձ հանկարծակի ապշեցրեց մի հակասող գաղափար այն առումով, որ այդ Սուլը մարդու բանտարկված էր մթության մեջ՝ նայելով վերև, դեպի լուսը, մինչեն իրականում այդ երկրային խավարի մեջ նա այն միակն էր, որ ապրում էր Հիսոս Քրիստոսի իրական լուսով: Իսկ նրանք, ովքեր ապրում էին երկրային լուսի մեջ, իրականում խարխափում էին խավարում: Նրանց աշքերը դեռևս պիտի բացվեին մկրտությամբ և Քրիստոսին որպես մեր Տեր ընդունելով:

Աշխարհը, որ մենք ապրում ենք, այսօր ոչնչով չի փոխվել: Գիտությունն առաջ է գնում, և մեր գիտելիքներն ավելանում են, բայց մենք մեզ դեռևս պահում ենք այնպես, ինչպես Քրիստոսից առաջ: Նայեք ձեր շուրջը ընթացող պատերազմներին, աղքատությամբ, ատելությանն ու տգիտությանը: Մարդը մարդու ըկատմամբ անմարդկային է: Եվ այս ամենից հետո մենք համոզում ենք մեզ, որ մենք կարող ենք վերաբեր մարդու կյանքը լարորատոր պայմաններում, արթնտական միջոցներով:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որը լավատեսությունը, որը ողջունեց ժմդարի հայտնագործությունները, երբ գիտենականներն ու ճարտարագետները կարծում էին, թե գիտեն աշխարհի բոլոր խնդիրների պատասխանները, փոխառնվեց իրականությամբ, այն է՝ երկրի պաշարները անսահմանափակ չեն, և որ մարդկային ցեղը պատասխանատու է երկրագնդի ոչնչացման համար: Բայց դեռևս մենք չենք ընդունում այն, որ Քրիստոսի մեծության հետ համեմատած մենք պարզապես երեխաներ ենք, որոնց աշքերը նոր են բացվում:

Նրանք, ովքեր հավատացած են, թե գիտեն աշխարհի բոլոր խնդիրների պատասխանները, պարզապես հիմարներ են, որ ապրում են այս աշխարհի կեղծ լոյսով, ճիշտ այնպես, ինչպես Գրիգոր Լուսավորչին տաճողներն իրենց կերպարանափոխությունից առաջ: Սուլը Պողոսը ճիշտ հմանատիպ իրավիճակ ապրեց: Նա հավատացած էր, թե ապրում է ճշմարտության լուսով ողողված մի աշխարհում, աշխարհ, որ կառուցված էր հունական տրամաբանության վրա, որ ամենից վերն ու հզորն էր: Բայց միայն կուրանալուց հետո նա գիտակցեց, թե որն է իրական լուսը: Դա Հիսոս Քրիստոսի լոյսն էր: Իրականում նա ապրել էր խավարում ողջ ժամանակ: Այս Զատկին, ինչպես միշտ, մեզ հնարավորություն է ընծեռնված: Խորին հարության ճշմարտության մասին: Հարության պատմությունը մեզ հիշեցնում է Հիսոս Քրիստոսի՝ մեզ հաղորդած լուրի լուրահատկության մասին: Հիսոս Քրիստոս հարություն առավ մահացածներից և հայտնվեց իր հետևողներից՝ ապացուցելու Ավետարանում ասվածի ճշմարտությունը: Եթե

բարեպաշտությունն իր խորքուն Աստուծո նկատմամբ սերն է: Աստված է
պարզում մարդուն բարիք գործելու ունակությունը: Բարեպաշտությունն այդ
ունակության գերազուն արտահայտությունն է: Զայլամներն ընդունակ չեն
թռչելու և երթեր չեն թռչում, հավեր թեն թռչում են, բայց մի կերպ և հազվադեպ:
Այնինչ արծիվները, աղավնիները և ծիծենակները թևածում են մշտապես,
արագ և բարձր: Մեղավորները ամենակին չեն ձգտում թռչել Աստուծոն մոտ, նրանք

իրենց մտածումներով և գործերով ամուր կառչած են հողին: Մարդիկ, ովքեր կատարում են բարի գործեր, բայց դեռ չեն հասել կատարյալ բարեպաշտության, ինչ խոսք, իրենց բարի գործերով մոտենում են Աստծուն, բայց հազվադեպ, դանդաղորեն և դժվարությամբ: Մինչեռ բարեպաշտները սլանում են վեր՝ առ Աստված՝ հաճախ, արագ և բարձր:

Սերը մեզ հնարավորություն է տալիս գործնական և հարատ կատարելու Աստուծու պատվիրանները: Սերն է օգնում գործել էլ ավելի արագ և ջանադրաբար: Նա, ով մշտապես չի հսկում ինքն իրեն՝ ամեն բարեպաշտիսին հետևելու Աստծու պատվիրաններին, ոչ բարի է և ոչ էլ կրոնասեր, որովհետև բարի լինել՝ նշանակում է սիրո գործեր կատարել, իսկ բարեպաշտ լինել՝ նշանակում է այդ անել ամենայն պատրաստականությամբ և ջանասիրությամբ: Իսկ քանի որ բարեպաշտությունը զգալի չափով հենց կատարյալ սիրո արտահայտություն է, այն ոչ միայն մեզ դարձնում է ավելի գործունյա և ջանասեր Աստուծու բոլոր պատվիրանները կատարելու մեջ (Սղմ. ճԺԸ 32), այլև մղում մեզ արագ և ամենայն պատրաստականությամբ անելու այնպիսի բարի գործեր, որոնք մենք կարող ենք նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք մեզ պարտադրված չեն, այլ միայն ցանկալի են, այսինքն՝ կատարել ոչ միայն հրահանգները, այլև խորհուրդները:

Ինչպես հիվանդությունից նոր ապաքինվող մարդն ընդամենը անհրաժեշտ քայլերն է անում, այն էլ դանդաղ և նժվարությամբ, այնպես էլ մեղավորը, որը դեռ չի հասել բարեպաշտության, փորձում է ի կատար ածել Աստուծու պատզամները, սակայն դանդաղորեն և ուժերի լարումով: Եւ ինչպես կատարելապես առողջ ի վիճակի է ոչ միայն քայլելու, այլև վագելու, ցատկելու, այնպես էլ բարեպաշտության մեջ հմտացածը ոչ միայն կատարում է այն, ինչ սահմանված է, այլ նաև ի վիճակի է առաջնորդվելու խորհուրդներով և ի վերուստ ոգեշշնամբ: Սերն ու բարեպաշտությունը զանազանվում են իրարից, ինչպես կրակը՝ հրից: Սերը հոգու կրակն է, բոցավովելիս վերածվում է բարեպաշտության: Բարեպաշտությունը ոչինչ չի ավելացնում սիրում, այլ միայն հաղորդում է կենդանություն, եռանդ և հարատևություն ոչ միայն աստվածային պատվիրանների, այլ նաև հորդորների և խրատների կատարման համար:

ԳԼՈՒԽ Բ

Բարեպաշտության յուրահատկությունները և գեղեցկությունը

Դեպի Ավետյաց երկիր խրայելացիների ուղևորվելու ընթացքում շատերը հակածառում էին պատճառաբանելով, որ այնտեղ ապրելն անհնար է, որ այն երկրի բնակիչները մարդակերներ են (Թվ. ՃԳ 33-34) և այլն: Սիրելի բարեկամ, նոյս ծնով և աշխարհի մարդիկ են վարվում նրանց հետ, ովքեր մտադրվում են ընթանալ բարեպաշտության ծանապարհով՝ վախեցնելով, թե բարեպաշտ մարդկանց դեմքերը միշտ մռայլ են, տրտում և թախծու, որ բարեպաշտության հետևանքով ծնավորվում է մելամաղձոտ և անտանելի բնավորություն: Եւ ինչպես Դեսուն և Թաղերն էին առարկում ազգակիցներին՝ Վատահեցնելով, որ

Ավետյաց երկիրը չափազանց լավն է, և նրան տիրամանալը ուրախություն և երանություն կրերի (Թվ. ԺԴ 7-8), նույնպես և Սուլը Շոգին բոլոր սրբերի և Տիրող քերանով (Մտք. ԺԱ 28-30) վկայում է, որ բարեպաշտ կյանքը հիանալի է և երջանիկ: Աշխարհը տեսնում է, որ կրոնասեր մարդիկ պահը են պահում, աղորում, տանում վիրավորանքներ, խնամում հիվանդներին, օգնում աղքատներին, հսկում գիշերները, զսպում զայրույթը, հագուրդ չեն տալիս կրթերին, իրաժարվում են զգայական հաճույքներից, ինչը թվում է ծանր, խիստ և դժվարին, սակայն չէ՝ որ աշխարհն անհաղորդ է սրտի մեջ տեղ գտած աստվածիրությանը, որն այս բոլոր գործերը դարձնում է հաճելի, թերև և ցանկալի:

Նայեմք մեղուներին: Նրանք ծաղկից վերցրած կծու հյութը վերածում են մեղորի, ինչը նրանց յուրահատկությունն է: Ո՞վ աշխարհի մարդիկ... Իրապես շատ դառն է պայքարն ինքը քեզ հետ, բայց ի վերջո այդ դառնությունը վերածվում է քաղցրության և միսիրարության: Կրակը, հուրը, անիվներն ու բրիչները նահատակներին բուրումնավետ ծաղկեներ են թվում, որովհետև նրանք աստվածապաշտ են: Ուրեմն եթե բարեպաշտությունն ախտրժելի է դարձնում սոսկալի տաճանքները և անգամ մահը, ապա որքան առավել են նրանով զարդարվում առարինի կյանքը:

Չաքարն ավելի հաճելի համ է տալիս թերահաս պտուղներին և մեղմում չափից ավելի հսած մրգերի սուր համը: Բարեպաշտությունն ասես հոգնոր շաքար լինի: Այն թերևացնում է տաճանքների սաստկությունը և միսիրարությամբ լցնում: Այն վերացնում է աղջատների տրտմությունն ու հարուստների սնապարծությունը, անտեսվածի վիատությունն ու պատվարժանի մեծամտությունը, մենակության մատնվածի տիսրությունն ու լայն հասարակության հետ գործակցողի ցրվածությունը, ջերմացնում է ցուրտ ձմռանը և զովացնում շոգ ամռանը, օգնում է մարդու սրտին համարյա նույնանձան արձագանքելու եւ վշտին, եւ ուրախությանը, եւ նույն օգուտը քաղելու թե՛ պատվից, թե՛ անպատվությունից:

Դակորի սանրութքը (Ծնդ. ԴԸ 12) բարեպաշտ կյանքն է պատկերում: Երկու կողմի բազրիքները խորհրդանշում են աղորքներն ու խորհուրդները՝ բարեպաշտ կյանքի հենարանները, աստիճանները՝ սիրո տարբեր չափերը, որոնցով հոգին բարձրանում է մեկ առաջինությունից դեպի մյուսը: Երբեմն գործողությամբ իշնում է մերձավորին օգնելու, երբեմն հայեցությամբ բարձրանում աստվածային սիրուն միանալու:

Խնդրում եմ, նայի՛, ովքեր են սանրութքի վրա: Մարդիկ՝ հրեշտակային սրտերով, կամ հրեշտակներ՝ մարդու մարմին առաջ: Նրանք բոլորը մանկահսակ են թվում, որովհետև լի են հոգնոր զրությամբ և կայտառությամբ: Նրանք թևավոր են և աղորքով վաճառւ են առ Աստված, բայց նաև ոտքեր ունեն, որպեսզի գնան մարդկանց հետ զրուցելու: Նրանց դեմքերը ուրախ են ու գեղեցիկ, գլուխները, ծեղքերն ու ոտքերը բաց են, որովհետև նրանց միակ նպատակն Աստծուն հաճելի լինելն է եւ գործով, եւ մտքով, եւ սրտով: Իսկ մարմնի մնացած մասերը ծածկված են թերևն և հիանքանչ զգեստով, քանի որ նրանք կապված են աշխարհին և աշխարհային բարքերին, սակայն պարզ և անկենք, միայն թերևակի առնչվելով՝ ըստ հանգամանքների: Ահա այսպիսին են բարեպաշտ, աստվածասեր մարդիկ: Դավատացնում են քեզ, աստվածասեր

բարեկամ, աշխարհում եղածից ամենաքաղցր, ամենաճնշուշ բանը բարեպաշտությունն է: Նա առաքինության թագուհին է, իր մեջ պարունակում է կատարյալ սերը: Եթե սերը ծիլն է, ապա բարեպաշտությունը՝ ծաղիկը, եթե սերը փայլատակող անգին քար է, ապա բարեպաշտությունը նրա փայլն է, եթե սերը բուրմունք է արձակում, ապա բարեպաշտությունը հենց այդ բուրմունքն է, որը միշտարում է մարդկանց և զվարթացնում իրեշտակներին:

ԳԼՈՒԽ 4

Բարեպաշտություն՝ անկախ զբաղմունքից և դիրքից

Բուսական աշխարհն ստեղծելիս Աստված յուրաքանչյուրին հրամայեց պտղաբերել «իր տեսակին համապատասխան» (Ծնն. Ա 11): Աստված ակնկալուն է, որ քրիստոնյաները՝ Եկեղեցու կենդանի բույսերը, առատանան բարեպաշտության պտուղներով, յուրաքանչյուրն ըստ իր ունակությունների և կոչման: Բույրովին այլ են ազնվականի, արհեստավորի, ծառայի, իշխանի, այրու, օրիորդի, ամուսնացած կնոջ բարեպաշտության դրսնորումները: Բացի դրանից, այն պիտի լինի ամեն մեկի մտավոր և ֆիզիկական հնարավորություններին, զբաղմունքին, պարտականություններին համապատասխան: Բարեկամս, փորձիր պատկերացնել, ի՞նչ կատարվեր, եթե եպիսկոպոսը հեռանար անպատ, իսկ արհեստավորն օր ու գիշեր անցկացներ Եկեղեցում վաճականի պես, իսկ վաճականն ընդուներ տարրեր այցելուների՝ ինչպես եպիսկոպոսը: Չե որ այդ բարեպաշտությունը կլիներ սխալ, ծիծաղաշարժ, անընդունելի: Այսուամենայնիվ, ննան սխալներ հաճախ են պատահում, և աշխարհը, որ չի կարող կան չի ուզում տարրերակել, բողոքում է, թե բարեպաշտության հետևանքով կյանքում խառնաշփոր է առաջանում:

Արմատապես սխալ է այն կարծիքը, իբր բարեպաշտությունը անհարիր է զինվորական զորանոցին կամ արհեստավորի արտադրանասին, իշխանական ապարանքին, ընտանիքի կյանքին: Իրապես, նրանց անհարիր է վաճականին հատուկ հայեցողական բարեպաշտությունը, բայց նրանց համար, ովքեր ուզում են փրկվել՝ մնալով աշխարհում, կան բազմաթիվ այլ հնարավորություններ և տարրերակներ բարեպաշտ կյանք վարելու: Արրահամը, Խասիակը և Յակոբը, Ղավիթը, Յորը, Տորիթը, Սարան, Ուերեկան և Յուլիթը՝ ահա բարեպաշտ մարդկանց օրինակներ Յին Ուխտից: Իսկ Նոր Ուխտից՝ Սր. Յովսեփիք, Սր. Լիդիան, Սր. Կրիսպոս միանգամայն բարեպաշտ կյանք էին վարում իրենց արհեստանոցներում, Սր. Ակյուղասը, Սր. Պրիսկիլլան իրենց ընտանիքներում, Սր. Կոռնելիոսը՝ զինվորական ծառայության մեջ, Սր. Կոստանդիանոսը, Սր. Յեղինեն գահի վրա:

Առանձնությունը, ինչ խոսք, նպաստում է կատարելությանը: Սակայն եղել են դեպքեր, երբ միայնության մեջ չի հաջողվել կատարելության հասնել, այլ հաջողվել է մարդկային հասարակության մեջ, ինչն առաջին հայացքից թվում է անիրագործելի: Ինչպես ասում է Գրիգոր Նազիանզացին՝ Ղովոր պահպանում էր իր մաքրությունը այլասերված քաղաքում, սակայն առանձնության մեջ մեղանչեց: Ուր էլ որ լինենք, մենք կարող ենք ծգտել կատարյալ կյանքի:

ԳԼՈՒԽ Դ

**Անհրաժեշտ է առաջնորդող ունենալ սկսելու և բարեպաշտության
ուղիղով ընթանալու համար**

Մարաց երկիր ուղևորվելով՝ պատաճի Տորիան ասաց.

-Ես ճանապարհը չգիտեմ:

-Դու քեզ համար մի մարդ փնտրիր, որ հետդ գա և ճանապարհը ցույց տա, - պատասխանեց հայրը: Նույնն ասում եմ և քեզ, աստվածասե՞ր բարեկամս: Եթե մտադիր ես ընթանալ բարեպաշտության ուղիղով, գտիր մեկին, ով քեզ ծիշտ ուղղություն ցույց կտա:

Իմացիր, հնազանդությունից բացի ուրիշ ճանապարհ չկա: Այդ են վկայում հոգնոր հայրերը հնուց ի վեր:

Տեսնելով Եկատերինա Կարորոնացու ապաշխարությունը՝ Մր. Թերեզան¹ մղվեց նմանվելու նրան: Բայց նրա խոստովանահայրն ասաց. «Աստված քեզնից ոչ թե ապաշխարության սիրանք է ակնկալում, այլ՝ հնազանդության»: Շատ ազնիվ հոգիներ բարեպաշտության ճանապարհով ընթանալու համար իրենց կամքը հնազանդեցրին Աստուծու սպասավորների կամքին:

«Հավատարիմ բարեկամը», - ասում է Մր. Գիրքը, - «հզոր պատվար է, ով գտնի նրան գանձ է գտել... Տիրոջից երկնչողները միայն կգտնեն նրան» (Սիրաք Զ 14:16): Նա իմաստության գանձ է մեզ համար՝ մեր փորձությունների, վշտերի, անկումների ժամանակ, սփոփում է մեր սիրտը հոգնոր տկարությունների ժամանակ, գորչացնում չարից: Ո՞վ կարող է նման բարեկամ գտնել: «Տիրոջից երկնչողները» (Սիրաք. Զ 16). - պատասխանում է իմաստունը, հոգով խոնարհները, ովքեր ծգոտում են հոգնոր առաջնօթացի: Բանի որ դու նպատակադրվել ես մեկնելու հոգնոր ճամփորդությամբ՝ վստահելի առաջնորդի ղեկավարությամբ, առանց երկմտելու խնդրի Աստուծուն, որ քեզ նման առաջնորդ ուղարկի*: Աստված կկատարի քո խնդրանքը, եթե նույնիսկ ստիպված լինի հրեշտակ ուղարկել, ինչպես արեց պատաճի Տորիային: Եվ երբ գտնես, մի վերաբերվիր նրան որպես սովորական մարդու, այլ որպես հրեշտակի՝ վստահելով ոչ թե նրան և նրա մարդկային գիտելիքներին, այլ Աստուծուն, որ այդ մարդու միջոցով օգնելու է քեզ: Բաց արա սիրտով նրա առաջ, և այն, ինչ բարի է քո մեջ, կծշտվի, իսկ այն, ինչ վատ է, կշոկվի. քո հարգանքն ու վստահությունը նրա նկատմամբ թող լինի մարդու, հոգնոր և անկեղծ: Ավիլան ասաց. «Ընտրիր հազարից մեկին», իսկ ես ասում եմ՝ տասը հազարից մեկին, որովհետև չափազանց քիչ են այնպիսի մարդիկ, ովքեր իրականում ընդունակ են ստանձնելու այդ պարտականությունը: Այդ մարդու մեջ միավորված պիտի լինեն սերը, գիտությունը և իմաստությունը: Վստանգավոր է վստահել մեկին, ով չունի այս երեք բաղադրիչներից որևէ մեկը: Իսկ երբ, Աստուծու օգնությամբ, գտնես նման առաջնորդի, այլևս ուրիշին մի որոնիր, այլ լիակատար վստահությամբ և խոնարհությամբ մեկնիր ճամփորդության, որն անպայման կասակվի հաջողությամբ:

¹ Սուրբ Թերեզա Ավիլացի (1515-82)՝ խսանացի կարմելիտ միանձնութիւն և միստիկ, որը մեծ ազդեցություն է թողել կաթոլիկ խորիրդապաշտական աստվածաբանության վրա:

* Հեղինակը առաջնորդ ասելով նկատի ունի միայն հոգեւորականի կոչում ունեցողին:

ԳԼՈՒԽ Ե

Թեոր է սկսել հոգին մաքրելուց

«Ծաղիկները երևացին մեր երկրում, ետելու ժամանակը հասավ» (Երգ Բ 12), ասում է փեսան: Մեր սրտի ծաղիկները, ո՞վ աստվածասեր բարեկամ, մեր բարի ցանկություններն են: Նրանց երևալուն պես պետք է զինվել դանակով, պետք է կտրել մեր հոգու անպիտան և անկենդան ծիլերը: Երբ օտարազգի աղջիկն ամուսնանում էր իսրայելացու հետ, նա հանում էր իր վրայից գերության զգեստները (Բ Օր. ԻԱ 12-13): Նույնպես և հոգին, որ ցանկանում է դառնալ Քրիստոսի հարսնացուն, «պետք է հեռու վանի իրենից հին մարդուն և հազար նոր մարդուն» (Եփ. Դ 22-24) և թողնի այն ամենը, ինչ հեռացնում է իրեն Աստուծու սիրուց:

Մաքրված հոգին մեր առողջության սկիզբն է: Պողոս առաքյալի հոգու մաքրագործումը կատարվեց ակնթարթորեն, ինչպես շատերինը, օր. Սր. Եկատերինա Զենովացու², Սր. Սագդայենացու, Սր. Պելագեայի³ և ուրիշների: Մենք չենք կարող ակնկալի նմանության մաքրագործում՝ աստվածային շնորհի բացառիկ և սրանչելի պարզեցիք:

Մաքրագործումը աստիճանաբար է ընթանում, ինչպես և ֆիզիկական ու հոգևոր հիվանդությունից ապահովումը: Հակոբի սանդուղքի վրայի հրեշտակները թևավոր են, բայց չեն թռչում, այլ բարձրանում և իջնում են աստիճաններով: Այն հոգին, որ բարձրանում է մեղսալի կյանքի խավարից դեպի բարեպաշտ կյանք, նման է արշալույսի, որը, թռնկվելով արևելքում, ոչ թե միանգամից է ցորում գիշերվա մթնշաղը, այլ հետզիեստ: Թե՛ հոգևոր, թե՛ մարմնավոր հիվանդությունները, ինչպես ասում է ժողովուրդը, «գալիս են փթերով, բայց հեռանում հատիկներով»: Այս գործնարացը, աստվածասեր բարեկամ, պահանջում է քաջություն և համբերություն: Խղճալի են այն հոգիները, որոնք բարեպաշտության ճանապարհին առաջին քայլերն անելիս երբ գիտակցում են իրենց անկատարությունը, շատ շուտ սկսում են տագնապել, սասանվել և նույնիսկ ենթարկվում ամեն ինչ թողնելու և նախկին կյանքին վերադառնալու գայթակղությանը: Բայց պակաս վլունգավոր չէ և մյուս վիճակը, երբ հոգին առաջին իսկ օրվանից համարում է իրեն մաքրված, հասած կատարելության և փորձում է թռչել դեռ թևերը չաճած: Ի՞նչ մեծ Վտանգ է սպառնում նրան: «Իգուր եք վաղ արթնանում» (Սաղմ. ճիզ 2), - ասում է մարգարեն: Մեր հոգու մաքրագործումը կարող է ավարտվել միայն մեր կյանքի հետ: Ուրեմն չտրտմնենք մեր անկատարությունից: Մենք հասնում ենք կատարելության միայն մեր անկատարության դեմ պայքարելով, իսկ որպեսզի կարողանանք պայքարել նրա դեմ, պետք է տեսնենք նրան, իսկ հաղթելու համար՝ ելնենք նրա դեմ կովելու: Յաղթել՝ չի նշանակում չզգալ սեփական անկատարությունը, այլ նշանակում է չկարեկցել նրան, մերժել, ընդունել: Մենք

² Սուրբ Եկատերինա Զենովացի (1447-1510)⁴ կին մխատիկ, որ 26 տարեկան հասակում դարձի եկալ և հասավ հոգևոր բարձությունների, թենի ամուսնացած էր:

³ Սուրբ Պելագեա (Ա. 311)⁵ կոյս և համատակ, որ մահը գերադասեց անպատվությունից և կայսեր սիրութին շդարձավ:

միայն այն ժամանակ կհասկանանք, թե ինչ բան է խոնարհությունը, եթե պարտություններ կրենք այդ հոգևոր մարտերում: Բայց մենք պարտված չենք, քանի դեռ չենք զրկվել կյանքից կամ կորորել արիությունը: Չոգին սպանել կարող է միայն մահացու մեղքը: Մեր խնդիրն է մնալ արի և անկոտրում: «Նայիր ինձ, քանզի անձկությամբ տրտնեցի ու խօսվեցի» (Սղմ. ԾԴ 3): Այս հոգևոր պատերազմի առանձնահատկությունն այն է, որ քանի դեռ մենք պատրաստ ենք մարտնչելու, մեզ հաղթեն անհնար է:

ԳԼՈՒԽ Զ

(Մաքրագործման առաջին աստիճանը)

Մեղքից մաքրագործվելու միջոցը ապաշխարության խորհուրդն է: Պատրաստիր խիդեր խոստովանության: Վերիշիր քո բոլոր մեղքերը գիտակցական կյանքից սկզբից ի վեր: Եթե չես վստահում քո հիշողությանը՝ գրի առ, ինչ հաջողվեց մտաբերել: Այս կերպ խիդեր քննելուց հետո, զանա զայրությով և սրտմտությամբ մերժել, վանել մեղքերը, որոնք զրկում են մեզ Աստուծո շնորհից և հեռացնում Աստուծո հավիտենական սիրուց: Դու կուսում ես, աստվածասեր բարեկամ, որ ես խոսում եմ ամրող կյանքին վերաբերող խոստովանության մասին, որը չափազանց օգտակար է սկզբում, և այդ իսկ պատճառով խրախուսում եմ թեզ: Մեծ ուշադրության արժանացնել նրան: Դաճախ աշխարհիկ կյանքով պարող մարդկանց խոստովանությունը բազմաթիվ բացընումներ է ունենում, նրանք անփույք են գտնվում և վատ նախապատրաստվում: Մարդիկ գալիս են խոստովանության առանց մեղքից երես թեքելու կամ մեղքի պատրվակներից խուսափելու վճռականության, առանց կյանքը փոխել ցանկանալու՝ անցյալից հրաժարվելու, Աստուծո երկայնամտությունը գիտակցելու մտադրության: Լիարժեք խոստովանությունը խաղաղեցնում է մեր սիրուց. բխեցնում բարի նկատառումներ, մեր հոգևոր հորը հնարավորություն տալիս ավելի հսկակ պատկերացնելու մեր վիճակը, նպաստում էլ ավելի խորը վնտահության հաջորդ խոստովանության ժամանակ:

ԳԼՈՒԽ Է

(Մաքրագործման երկրորդ փուլը՝ ազատագրում մեղքի հակումից)

Բոլոր խրայելացիները եգիպտոսից դուրս եկան, բայց ոչ բջլորը բոլեցին նախկին սովորություններն ու նախասիրությունները: Ահա թե ինչու նրանցից ոմանք անապատում դեգերելիս ափսոսանըով էին հիշում միսն ու բանջարելենք, որ ուստում էին եգիպտոսում (Թվ. ԺԱ 4-5): Նույնան և ապաշխարությունը հաճախ խոստանում են չկրկնել մեղքը, բայց պահպանում են մեղքի նկատմամբ հակվածությունը: Նրանց սրտերը ժամանակ առ ժամանակ դարձյալ դեպի ետ են շրջվում, ինչպես Սոդոմից հեռանալիս արեց Ղովտի կինը (ԾԱՆ. ԾԹ 26): Նրանք հիշեցնում են այն հիվանդներին, ում բժիշկը խստիվ արգելել է սեխ

ուտել, քանի որ այն կարող է մահացու վնաս պատճառել, բայց նրանց չի լրում սեխին ծեղը տալու, հոտոտելու ցանկությունը, և նրանք երջանիկ են համարում բոլոր նրանց, ում թույլատրովում է սեխ ուտել: Տես ու երկզոտ են այն մեղավորները, ովքեր ափսոսում են, որ թողել են մեղքը: Նրանք հաճույքով են այն մտարերում և համարում են, թե ովքեր չեն հրաժարվել, բավարարվածություն են գտնում: Օրինակ՝ մեկը, որ տառապում էր վրեժինդրությունից, խոստովանությունից հետո հրաժարվեց իր մտադրությունից, բայց որոշ ժամանակ անց նա պատմում է ընկերներին վեծի մանրամասները, ասում, թե վրեժինդրի կիխեր, եթե Աստծուց չվախենար, և թե որքա՞ն ծանր է ներելու աստվածային պատվիրանը: Օ՛, եթե միայն կարելի լիներ վրեժ լուծել... Մի՞՞ք պարզ չէ, որ այս մարդը թեև «Եգիպտոսից դուրս է Եկել», սակայն չի մոռացել այնտեղի խորտիկների համը: Սի կին, որը թեև մեղքել է անօրինական սերը, բայց ամենահն էլ դեմ չէ, որ իրեն շրջապատեն և սիրահետեն...: Ի՞նչ վտանգավոր է նրանց կացությունը: Իմ աստվածասեր բարեկամ, առաքինի կյանք վարելու համար անհրաժեշտ է ոչ միայն դադարել մեղանչել, այլև սրտից անխնա վտարել այն ամենը, ինչ նպաստում է մեխանգործությանը: Այդ չարաբաստիկ հակումները կարող են արմատանալ և նորանոր անկումների առիթ հանդիսանալ: Նրանք այնպես են ծանրաբեռնում հոգին, որ այն անկարող է դառնում հաճախակի, արագ և ջանասիրաբար բարիք գործելու, ինչուն էլ կայանում է ճշնարիտ բարեպաշտության եւթյունը: Այն հոգիները, ովքեր արդեն մեղսունակ չեն, բայց դեռ պահպանում են հակումը և կապվածությունը մեղքին, իմ կարծիքով, նաև նա տկար օրիորդների, որ իրականում իիվանդ չեն, բայց նրանց բոլոր դրանորումները հիվանդագին են ուտում են, բայց չեն հագենում, քնում են, բայց չեն հանգստանում, ծիծաղում են, բայց չեն ուրախանում, և կարծես հազիվ են զոյատնում, այլ ոչ թե ընթանում կյանքի ճանապարհով: Ամեն մի բարի գործ այնպես է հոգնեցնում նրանց, որ գործերը քանի գնում, սակավարիվ և անարդյունավետ են դաշնում:

ԳԼՈՒԽ

Երկրորդ մաքրագործմանը նպաստող միջոցները

Երկրորդ մաքրագործմանը նպաստող առաջին պահն է մեղքը՝ որպես ահավոր չարիք, վառ և հստակ պատկերացնելը: Ծննարիտ ապաշխարությամբ և խորհուրդների ներգործությամբ մաքրվում ենք ոչ միայն մեղքի ներգործությունից, այլև հակվածությունից: Եթե մենք բարյացակամ չենք Վերաբերվում մեկին, ապա պարզապես խույս ենք տալիս նրան հանդիպելուց, իսկ եթե ատելությամբ ենք լցված նրա նկատմամբ, ապա ոչ միայն նրանց ենք նողկում, այլև մեզ տիհանություն է պատճառում անգամ նրա դիմանկարը, նրան պատկանող իրերը, մենք խորշում ենք անգամ նրա ազգականներից և ընկերներից: Նույնը կատարվում է և այն դեպքում, եթե գործած մեղքի համար զղումը մակերեսային է, մենք ուղակի աշխատում ենք այն չկրկնել, բայց եթե մեր ապրած գործումը խորհ է և հզոր, մեզ համակում է ատելությունը ոչ միայն տվյալ մեղքի, այլև նրա հետ կապված բոլոր զգացմունքների, արարքների և

պարագաների նկատմամբ: Այդ իսկ պատճառով, աստվածասեր բարեկամ, պետք է զղումը հասցնել այնպիսի ուժգնության, որպեսզի այն տարածվի մեղքի հետ կապվող ամեն ինչի վրա: Իր դարձից հետո Մարիամ Մագդա-ղենացին երես թերեց ոչ միայն մեղքից, այլև նրա հետ կապված բոլոր հաճույքներից: Դավիթն ատեց ոչ միայն գործած մեղքը, այլև չարիքի բոլոր ծանապարհները (Սղմ. ճժԸ 104-128): Այս թե ինչումն է կայանում հոգու երիտասարդության նորոգումը, որի մասին ասում է մարգարեն՝ համեմատելով այն արձիկ նորոգության հետ (Սղմ. ճԲ 5):

Այս հոգեվիճակին մերձենալու համար անհրաժեշտ է, Աստուծո շնորհի ներգործությամբ, ծգտել արմատախիլ անելու սրտի միջից ամեն տեսակ մեխունակ հակվածություններ:

Այս լուրջ գործնքացը մատչելի դարձնելու համար անհրաժեշտ է լրջորեն խորին հետևալ հարցերի շուրջ:

ԳԼՈՒԽ Թ

Արարչագործության մասին

Խորիր այսպես. մի քանի տասնյակ տարի առաջ ես դեռ աշխարհում չկայի: Որտե՞ղ էինք այն ժամանակ քեզ հետ, հոգի իմ: Աշխարհը գոյություն ունի վաղնջական ժամանակներից, եթիւ իմ և քո հետքն անգամ չկար: Աստված ոչնչից ստեղծեց ինձ՝ միայն ու միայն իր գրասրտության շնորհիվ: Մարդը միակ արարածն է տեսանելի աշխարհում, որն ընդունակ է միանալ Աստծուն և ապրել հավերժ: Խորապես խոնարհվիր Աստուծո առջև, սրտի խորքից կրկնիր սաղմուերգուի խոսքերը. «Ով իմ Տեր, ես ոչնչություն եմ թո առջև, ինչպե՞ս հիշեցիր, որ ստեղծես ինձ» (Սղմ. ԼԸ 6 և Ը. 5): Ով հոգի իմ, որև մինչև կիմա անգոյության գրկում կլինեիր, եթե Աստված չիհաներ քեզ այնտեղից: Ով իմ ամենագութ Արարիչ, դու ինձ անգոյությունից կերտեցիր: Ինչպե՞ս շնորհակալ լինեմ քեզ: Ի՞նչ կարող եմ անել, որ թո անունը փառավորվի: Կայ ինձ, ես ոչ միայն չեի ծգուում միանալ քեզ և ծառայել քեզ, այլև մշտապես հեռանում եի իմ մեղքերի պատճառով; Ով իմ անձ, հիշի՛ր, որ քո Արարիչը Տերն է, դու նրա ծեղքի գործն ես (Սղմ. ՂԹ 3): Դու չեիր կարող ինքը քեզ ստեղծել: Ինչո՞վ կ կարող եմ փառավորել թո անունը, ես, որ հոդ ու մոխիր եմ (Սղր. Ժ 9): Ես ուզում եմ նվիրել քեզ իմ սիրոտ և իմ ամրող կյանքը:

Օրինիր Տիրոջը, ով իմ անձ, և իմ բոլոր ուսկորները թող օրինեն սուրբ անունը նրա (Սղմ. ճԲ 1):

ԳԼՈՒԽ Ժ

Ո՞րն է մեզ ստեղծելու նպատակը

Աստված ինձ ստեղծեց միայն ու միայն իր գրասրտության շնորհիվ: Նա օժտեց ինձ բանականությամբ, որ ճանաչեն իրեն, հիշողությամբ, որ իիշեն իրեն, կամքով, որ սիրեն Աստծուն, երևակայությամբ, որ պատկերացնեն իր բարերա-

րությունները, աչքերով, որ ականատես լինեմ իր ստեղծագործության հրաշալիքներին, լեզվով, որ փառաբանեմ Նրան, և բազմաթիվ այլ ընդունակություններով:

Եթե հասկանանք, թե ինչի համար ենք ստեղծված և ինչու ենք եկել այս աշխարհ, մենք պետք է հրաժարվենք այն ամենից, ինչ այդ նպատակին չի ծառայում, ինչպես հրաժարվում են անպետք իրերից: Խորհրդաժիր մարդկանց տառապանքների մասին, որոնք այնպես են ապրում, կարծես ստեղծված են միայն տներ կառուցելու, ծառեր տնկելու և նյութական բարիքներ դիմելու համար:

«Ինչո՞վ էր զբաղված իմ միտքը, երբ չեմ մտածում Աստուծոն մասին: Ի՞նչ էի սիրում, երբ դեռ լցված չեմ Աստուծոն սիրով: Ես լի էի ունայնությամբ և ծառայում էի աշխարհին, որն ստեղծված է ինձ ծառայելու համար»:

Դրաժարվիր նախկին կյանքից՝ անօգտակար և ունայն մտածումներից, ավելորդ հիշողություններից, թեթևամիտ և անկայուն ընկերակցություններից, դարձիր Աստծուն:

«Աստված, Փրկիչ իմ, այս պահից Դու ես լինելու իմ մտածումների միակ առարկան, ես այլևս չեմ զբաղեցնելու իմ միտքը թեզ ոչ հաճելի բաներով: Կյանքիս ամբողջ ընթացքում հիշողությանս մեջ վար կպահեմ թու բոլոր բարերարությունները: Թեզնով է ուրախանալու և դեպի թեզ են ուղղվելու իմ սրտի բոլոր մղումները»:

Մտածիր-քննիր, թե ինչն է անհրաժեշտ փոխել քո կյանքում: Գոհացիր Աստծուց, որ թեզ ստեղծել է այդքան վեհ նպատակի համար: «Դու ստեղծեցիր ինձ, Տե՛ր, թեզ համար, թու հավիտենական փառքին մասնակից լինելու համար: Ինչպե՞ս կարող եմ կատարել իմ պարտքը և արժանանալ թու փառքի մեջ մտնելուն: Ես աղոթում եմ, որ իմ իդերն ու խոստումները ընդունելի լինեն թու առաջ, և խնդրում եմ թու օրինությունը, որ հոգիս ի գորու լինի կատարելու իր խոստումները»:

ԳԼՈՒԽ ԺԱ

Աստվածային բարեգործությունների մասին

Եկ, տեսնենք, թե Աստված ինչ կենսական բարիքներ է բաժին հանել թեզ:

ա. Ֆիզիկական. Որոշ մարդկանց արողությունը կամ մարմնի անդամները խեղված են: Ունանց կյանքն էլ անցնում է քամահրանքի կամ անպատվության, կամ ծայրահեղ աղքատության պայմաններում: Դու աղող ես, ապահովված, ունես ընկերներ և այլն:

բ. Դիմա նշենք, թե ինչ մտավոր կարողությունների է արժանացրել թեզ Աստված: Մարդկանց մի մասը գործի է խոսելու կամ այլ ընդունակություններից, կամ հոգեպես հիվանդ է, կամ կրորություն ստանալու հնարավորություն չունի: Իսկ թեզ Աստված տվել է այս ամենը:

գ. Ուշադրություն դարձու հոգևոր բարիքներին. Դու Եկեղեցու զավակ ես, աստվածասեր բարեկամ, դու վաղ հասակից Աստծուն ճանաչելու հնարավորություն ես ունեցել: Ոգեշնչման, մերժին պայծառացման քանի՝ պահեր ես ապել: Որքա՞ն հաճախ ես մեղքերի բողություն ստացել, քանի-քանի անգամ ես

ազատվել քեզ սպառնացող վտանգից: Ինչպիսի՝ պայմաններ են ստեղծվել քո հոգևոր առաջընթացն ապահովելու համար անցած տարիների ընթացքում: Քանի՝ անգամ ես մնացել հաղորդությանը: Ուշադրություն դարձրու Աստուծոն գրասրտությանը, որքան ողորմած է եղել քո հանդեպ: Ինչքան բարիքներ է շնորհել քեզ կյանքում: Իսկ իհմա մտաբերի քո անշնորհակալությունը. «Տե՛ր, ես չեմ գնահատել քո ողորմությունները, չարաշակել եմ քո պարզմները և իմ անհուն անշնորհակալությամբ հակադրվել քո անհուն գրասրտությանը»:

«Անհնազանդ ու անշնորհակալ մի եղիր, սիրու իմ: Ինչպե՞ս կարող ես, հոգի, անտարբեր մնալ Աստուծոն բոլոր պարզմների հանդեպ» (Սղմ. ԿԱ 2): Բարեկամն, քո ամբողջ ուշադրությանը ուղղիր այն բանին, որ ճանաչես և իմանաս Աստծուն Եկեղեցու նատնանշած բոլոր ճանապարհներով:

ԳԼՈՒԽ ԺԲ Մեղքի մասին

Մտաբերիր, թե երբվանից ես մեղանչել, և տես, թե որքան են բազմացել քո մեղքերը այն ժամանակից ի վեր, ինչպես են օրսստորե ավելացել մեղքերդ Աստուծոն, մերձավորիր և հնքը որ դեմ, որ կատարել ես գործով, խոսքով, մտքով և ցանկությամբ: Մտածիր քո չար հակումների մասին, թե որքան հաճախ էիր տեղի տալիս նրանց, և կիամոզվես, որ մեղքերդ ավելի շատ են, քան գլխիո մազերը, քան ծովի ավազը:

Առանձնապես մտածիր Աստուծոն համեսք անշնորհակալ լինելու մասին: Այդ մեղքն ամենակարևորն է և, գումարվելով մյուս բոլոր մեղքերիդ, շատ ավելի ծանրացնում է նրանց:

Որքան պարզմների է արժանացրել քեզ Աստված, իսկ դու չես օգտագործել: Քանի՝ անգամ ես հաղորդվել, իսկ ո՞ւր են պտուղները: Ինչպե՞ս ես նախապատրաստվել հաղորդությանը: Քանի՝ անգամ Աստված քեզ ընդառաջ է եկել, որ փրկի, իսկ դու երես ես թքել նրանից, որ կործանվես:

«Տե՛ր իմ, ինչպե՞ս եմ կանգնելու քո առջև: Ես անհետողական և անշնորհակալ մեկն եմ: Իմ կյանքում մի օրն անգամ չի անցել առանց մեղանչելու, ոչ մի ընդունակություն չեմ թողել, որ չփչացնեմ: Ես արհամարհել եմ իմ Արարչի բարերարություններն ու իմ Փրկչի արյունը»:

Ներում խնդրիր, ընկիր նրա ոտքերը, ինչպես անառակ որդին, ինչպես Մարիամ Սագդաղենացին, ինչպես պոռնիկը. «Տե՛ր իմ, ողորմիր իմձ, մեղավորին»:

Զանա փոխել քո կյանքը: Աղորի՛ր, որ Աստված զորացնի քեզ:

ԳԼՈՒԽ ԺԳ Մահվան մասին

Մերն մահվան օրը հայտնի չէ: Յօդի իմ, անխուսափելի է այն օրը, երբ պիտի բաժանվես մարմնից: Ե՞ր է դա լինելու ձմռա՞նը, թե՞ ամունը, քաղաքո՞ւմ, թե՞

զյուղում, ցերե՞կը, թե՞ գիշերը, հանկարծակի՞ է վրա հասնելու, թե՞ նախօրդ պատրաստվելուց հետո, հիվանդությունի՞ց, թե՞ դժբախտ պատահարից, ժամանակ կունենա՞ս խոստվանելու, թե՞ ոչ, արդյո՞ք այդ պահին ներկա կլինի քն խոստովանահայրը: Մենք ոչինչ չենք կարող իմանալ այդ ամենի մասին: Մենք միայն ստույգ գիտենք, որ անպայման մերնելու ենք, և շատ ավելի շուտ, քան ենթադրում ենք: Աշխարհն այլև գոյություն չի ունենալու մեջ համար, և այնժամ մեր բոլոր հաճույքները, երկրային ուրախությունները, ունայն կապվածությունները հօդս կցնեն: Դու կտեսնես, կհասկանաս, որ լքում էիր Աստծուն դատարկության համար: Դակառակը, աստվածպաշտությունն ու բարեզդորությունը այնքա՞ն հաճելի ու ցանկալի կրվան: «Ինչո՞ւ ես չեի ընթանում այդ հրաշալի ճանապարհով», - կմտածես դու: Այս մեղերը, որ աննշան էիր կարծում, սարեր կիհաճարես, իսկ բարեպաշտություն՝ այնքան խղճուկ: Մտածիր այն տիսուր պահի մասին, երբ հոգին հրաժեշտ է տալիս աշխարհին, հարստությանը, վայելքներին, ընկերներին, հարևաններին, երեխաներին, կնոջը, ամուսնուն, բոլոր արարածներին և վերջապես՝ մարմնին, որը վերածվելու է մի գունատ, անկենողան, տգեղ դիակի: Մտածիր, թե ինչպես են շտապելու այն թաքցնել հողի տակ և հետո աշխատելու են այլևս չնտածել քն մասին, ինչպես դու հիմա չես մտածում ուրիշների մասին:

«Տե՛ր, իսաղապեքյուն տուր Օրա հոգուն», - կասեն մարդիկ: Ընդամենը այդքանո՞ւ: Ով ճահի, ինչ անոռողո՞ւ և Եցանակալի էս որ:

Մտածիր այն մասին, որ հոգին մարմնից բաժանվելուց հետո պիտի գնա կա՞զ աջ, կա՞մ ձախ: Ո՞ր ուղղությամբ կգնա քո հոգին: Այն ուղղությամբ, որի սկիզբը դուք եք ուրե այս կանոնում:

Այսպես աղորիք. «Տե՛ր, օգնության հասիր ինձ այդ ահարկու օրը, թող իմ կյանքի մնացած ժամերը տիսուր լինեն, բայց այդ ժամը լինի խաղաղ ու երանիկ»:

Ես չեմ ուզում կապվել քեզ, աշխարհ, որովհետև զգիտեմ, թե որ ժամին եմ բաժանվելու քեզանից: Իմ բանկագին ընկերներ, ես ուզում եմ ծեզ սիրել այն սուրբ սիրով, որ հավիտենական է, ես չեմ ուզում այնպիսի բարեկանություն, որ պիտի ոնդիհատի ու անհետանա:

Ես ուզում եմ նախապատրաստված դիմավորել այդ ժամը, հոգալ, որ ուրախութեամբ լինառուիմ աս աշխատի:

፩፻፲፭

Դատաստանի մասին

Երբ զա Աստուծոն կանխորոշած աշխարհի վախճանի ժամանակը, կիրականան բազմաթիվ սարսափազդրու կանխատեսումներ, որ մարդիկ ահից կործանվելու են (Ուուկ. ԻՄ 26): Կրակե հուը մնխրացնելու է երկրի երեսը: Կրակե հեղեղից հետո, հրեշտակապետի փողի հնչմանք բռլոր մարդիկ հարություն են առնելու: Բայց ավա՞ղ... ոմանք՝ փառավորված, իսկ ոմանք՝ ահավոր զգվելի մարմիններով:

Դատավորը հայտնվելու է իրեշտակաների և իրեշտակապետերի շքախմբի ուղեկցությամբ, երկնօրմ երևալու է արևի պես փայլող խաչը: Ափա, Գերագույն Դատավորը բարիմերին կանգնեցնելու է իր աջ, իսկ չարերին՝ ծախ կողմում, և նրանց առհավետ բաժանելու է իրարից:

Խոճմտանքի գրեթերը բացվելու են, և ամեն բան ի հայտ է գալու:

Ինչ շփորություն ունան, և ինչ միշտարություն՝ մյուսների համար: Լսիր, թե ինչ վերջնական վճիռ է կայացվում չարերի համար. «Անիծյալներ, հեռացրեք ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր իրեշտակաների համար»: (Մատթ. հԵ 41): Աստված Վտարելու է չարերին իր առջևից: Ի՞նչ զարդուելի է այս հավիտենական անեծքը: Դավիտենական կրակ: Ի՞նչ սարսափելի են ճշտնդենական տառապանքները:

Յիմա լսիր, թե որն է բարիմերի դատավճիռը. «Եկեք, իմ հոր օրինյալներ, ժառանգեցք աշխարհի սկզբից ծեզ համար պատրաստված արքայությունը»: Ո՞վ Աստված, ինչպիսի օրինություն, այս թագավորությանը վերջ չի լինելու:

ԳԼՈՒԽ ԺԵ Դժոխիք մասին

Դատապարտվածները գտնվում են դժոխային անդունդում, կարծես մի դժբախտ քաղաքում: Նրանք չարաչար տանջվում են իրենց մարմնի բոլոր անդամներով և զգայարաններով: Քանի որ նրանց անդամները և զգայարանները ծառայում են մեղքին, ապա իիմա բոլորը ենթակա են տանջանքի: Չար և կեղծավոր հայացքներ նետող աչքերի առաջ այժմ դժոխըն է ու նրա բնակիչները՝ դմերը: Անմաքուր խոսքեր ախորժող ականջներին հավիտյան հեկեկոցների, հառաջանքների, լացի ծայներ են հնեցնու:

Այս բոլոր տառապանքներից բացի, կա ևս մեկը, ամենածանրը՝ նրանք երբեք չեն տեսնելու Աստուծու փառքը: Աբիսողոմի համար ոչ այնքան ծանր էր իր արտաքսումը, որքան իր սիրելի հոր՝ Դավթի դեմքը տեսնելու հնարավորությունից զրկվելը (Բ Թագ. ժԴ 32):

Պատկերացրեք այս տանջանքների հավերժությունը, որն ինքնըստինքան անտանելի է դարձնում դժոխքը: Եթե ականջի ցավից կամ բարձր ջերմությունից կամ գիշերը թվում է երկար և տրոտում, ապա որքան ահավոր է հավիտենական տանջանքների գիշերը՝ անսպառ, անվերջանալի հուսահատություն:

Դոգի՛, ահաբեկվիր Եսայի մարդարեի խոսքերից. «Դոգի՛ իմ, դու ուզո՞ւմ ես ապրել բորբոքված լափող կրակի մեջ» (Ես. ԼԳ 14):

Մի՞թե դու ուզում ես ընդմիշտ թողնել քո Աստծուն...

ԳԼՈՒԽ ԺԶ Դրախտի մասին

Պատկերացրու մի հիասքանչ, խաղաղ գիշեր. Ի՞նչ հաճելի է դիտել երկինքն ու աստերի բազմությունը: Ավելացրու սրանց նաև օրվա խաղաղ գեղեցկու-

բյունը և մտածիր, որ այս ամենն անհամենատելի է դրախտի շքեղությանը: Ի՞նչ քանի, բաղձակի և սիրելի է այդ վայրը:

Տես, որքա՞ն գեղեցիկ են այդ երջանիկ երկրի անհամար բնակիչները՝ միլիոնավոր հրեշտակներ, քերովբեներ և սերովբեներ, առաքյալներ, մարտիրոսներ, վկաներ, կույսեր, սուրբ կանայք: Նրանց թիվն անսահման է, նրանցից յուրաքանչյուրն ավելի հրաշալի է, քան ամբողջ աշխարհը:

Որքա՞ն երջանիկ են նրանք, որ մշտապես վայելում են Աստուծոն Երեկայությունը: Նրանք թօնակների պես թևածում են ու երգում այդ աստվածային մքնուրուտում լցված անհմանալի բերկրանքով: Նրանցից ամեն մեկը գովե է երգում Ստեղծչին: Նրանք անդադար օրինում են իրենց Արարշին ու Փրկչին, և ևա իր հերթին օրինում է իր սրբերին. «Օրինված եք դուք, ի՞մ թանկագին արարածներ, որ ծառայում եք իմն և հավերժ փառարանում ծեր սիրով»:

Զնայլվիր և փառակորի երկնային հայրենիքը: Ի՞նչ հրաշալի են դու, երուսաղեմ, և որքա՞ն երջանիկ են քո բնակիչները: Դու այնքան քիչ արիություն ունեիր սրտումդ և այնքան հաճախ էիր երեսդ թեքում դեպի փառի բնակավայրը տանող ճանապարհից: Դու կհարցնես քեզ. «Ինչո՞ւ էի ես հեռանում գերագույն երջանկություննից»: Խեթի մարդ, քանի՞ անգամ ես հեռացել հարատև ուրախություններից՝ հանուն ունայն ու փուչ հաճույքների: Ինչո՞ւ էի ես աննշան ցանկություններն ավելի բարձր դասում, քան այս երանավետ բարիքները: Զգտեք հասնել այդ հրաշալի բնակավայրը:

ԳԼՈՒԽ Ժ

Ընտրություն

Քեզ պատկերացրու մենակ, դաշտի մեջ, քո պահապան հրեշտակի հետ, ինչպես Տոքիան էր Մարաց երկիր գնալիս, և թող նա քեզ ցույց տա վերնային դրախտը՝ իր երկնային բոլոր ուրախություններով, իսկ ներքնում դժոխքը՝ իր բոլոր տանջանքներով հանդերձ:

Պատկերացրու, որ դու գտնվում ես դժոխքի և դրախտի մեջտեղում և պիտի ընտրություն կատարես: Չիշիր, որ այս աշխարհում կատարած ընտրություննից է կախված քո հավիտենական ճակատագիրը:

Դու ազատ ես քո ընտրության մեջ, բայց Աստված իր անսպառ գրասրտությամբ ուզում ե, որ ընտրես դրախտը: Նույնը քեզ դրդում է և պահապան հրեշտակի՝ աշխատելով օգնել քեզ:

Յիսուս Քրիստոս նայում է քեզ երկնային բարձրունքներից և ասում. «Արի իմ հավիտենական համգիստը, հոգի, իմ սիրո հարատև բերկրանքին ընդառաջ»:

Աստվածանայրն աղերսում է քեզ. «Զավակս, մի՛ մերժիր Որդուս հրավերը և անսա՛ իմ հառաջանքներին, շտապի՛ր դեպի հավիտենական փրկություն»: Միլիոնավոր սրբագրծված սրտերի ցանկությունն է, որ քո սիրտն էլ միանա իրենց բազմությանը: Նրանք հավաստիացնում են քեզ, որ դեպի երկինք տանող ճանապարհն այնքան էլ դժվար չէ, ինչպես կարծում են աշխարհում: «Դամարձակ եղիր,- ասում են նրանք,- սերելի՛ բարեկամ, նայի՛ր աստված-պաշտության մեր անցած ուղուն, որով հասանք աշխարհին անհայտ այս մեծ ուրախություններին»:

Պատկերացրու, որ դու մենակ ես ամայի դաշտում, աջից քո բարի հրեշտակն է, իսկ ձախից՝ բարձր գահին բազմած սատանան՝ շրջապատված ընկած ոփներով։ Նրա առաջ մարդկային մի ամբողջ է կուտակված, որ հաճոյանում է նրան մեկ այս, մեկ այն մեղքով։ Տես, ինչ զարհութելի են այդ ահարկու թագավորի պալատականները։ Նրանցից ոմանք լի են ատելությամբ, նախանձով, բարկությամբ, ոմանք սպանություն են ծրագրում, ոմանք հարստության և փառքի հետևից են վագում, շատերն այլակերպված են իրենց ըիրու նախասիրություններից ու հակումներից։ Տես, նրանք չափ ու սահման չեն ծանաչում, այնտեղ կարդ ու կանոն գոյություն չունի, հանգիստ չունեն, նրանց սերը կեղծավոր է, նրանք արհամարհում են միմյանց։ Դու շատ կցավես այդ դժբախտ երկրի համար, ուր թագավորում է հրեշավոր բռնակալը։

Իսկ աջից կտեսնես խաչին գամված Յիսուս Քրիստոսին, որն աղոթում է այդ դժբախտների համար և կանչում նրանց իր մոտ, որպեսզի նրանք ազատվեն զարհութելի բռնակալի իշխանությունից։

Յիմա հայացք ուղղիր դեպի բարեպաշտության հրաշալի երկիրը։ Դու կտեսնես շուշանների պես մաքուր կույսերի, այրերի և կանանց։ Ահա՝ պարկեշտ կյանք վարող այրիներ, ահա՝ փոխադարձ սիրո և հարգանքի վրա խարսխված ընտանիքներ։ Դու կտեսնես, թե ինչպես են այդ աստվածասեր հոգիները հաջողությամբ հոգում թե՛ իրենց արտաքին աշխարհիկ, թե՛ ներքին հոգուր հոգսերը, թե ինչպես է սերն ընտանիքի հանդեպ միաբանվում Երկնային Փեսայի հանդեպ տածած սիրո հետ։ Բոլորն ականջ են դնում Աստուծուն խոսքին և այն պահում իրենց սրտերի խորօսում։ Նրանց ուրախությունները գեղեցիկ են, հանդարտ և զուսպ, նրանք սուրբ և մաքուր սիրով են կապված իրար։ Տրտությունը չի անդրադառնում նրանց տրամադրությանը։ Նրանք Աստծով են միսիթարվում և ամրող սրտով ձգտում առ Աստված։

Քո բարի զգացմունքների և ձգտումների շնորհիվ դու արդեն հեռացել ես սատանայից և նրա սարսափելի կամակատարներից, սակայն դեռ չես միացել սուրբերի երջանիկ և անարատ ընտանիքին, դեռ գտնվում ես նրանց միջև։

Սր. Աստվածամայրը, Սր. Յիսուսի և հարյուր-հազարավոր սրբեր, որ ապրել են աշխարհիկ կյանքով, թեզ կանչում և քաջալերում են։

Խաչին գամված Տերը կանչում է թեզ քո անունով. «Եկ ինձ մոտ և կարժանանա պատկի» (Երգ Դ 8):

«Ով աշխարհ, ես այլս չեմ քայլելու քո դորոշ տակ։ Ես ընդմիշտ բողոքում եմ քո ունայնությունը, ես հրաժարվում եմ քեզանից, հպարտության թագավորություն, տառապանքի թագավոր, դժոխքի ոգի, քո բոլոր դատարկ հանդիսություններով հանդերձ, ես նողկում եմ քո բոլոր գործերից։ Ես դառնում եմ դեպի թեզ, Յիսուս, հավիտենական փառքի և երջանկության թագավոր, հոգով և սրտով ամբողջությամբ հանձնվում եմ թեզ, մեկընդմիշտ ընտրում թեզ, որպես իմ հոգու թագավոր, հնազանդվում քո սուրբ օրենքին և պատվիրաններին։ Ով իհասքանչ կույս, Երկնային թագուհի, Դու առաջնորդիր ինձ, խոնարհաբար մեծարում եմ թեզ։»

Իմ պահապան հրեշտակ, ինձ ընկերակից դարձրու սուրբերին, մի թող ինձ այնքան ժամանակ, մինչև չդասվեմ նրանց շարքին և իմ ձայնը միացնեմ հավելու նրանց ձայններին «Փառք Յիսուս Քրիստոսին»։

Հայուսաց ո նսածախոսա բառուապահուուր ո Ա վարուս գրախուուք
նորո մե նութայուց զմուց ԳԼՈՒԽ ԺՈՒՅԵ Ա վարուսու ո պահուած ընդո
ցուու օ լուսա Ա լուսա
Ժ ի մ աստվածասեր բարեկամ, սրանք են մեր նպատակին հասնելու համար
անհրաժեշտ բոլոր մտորումները: Այս ամենի մասին խորհրդածելուց հետո
կարող են խոնարհարա դիմել այս խոստովանությանը:

Կարիճի խայրը թունավոր է: Բայց եթե նույն թույնը լուծենք համապա-
տասխան բաղադրության մեջ, այն դառնում է դեղ կարիճի խայրի դեմ:
Կատարման պահին ամորալի մեղքն ապաշխարության ընթացքում փրկարար է
դառնում: Խոստովանությունն ու զղումն այնքան հիմնալի են, որ ոչնչացնում
են մեղքի այլանդակությունը: Սիմոն Փարիսեցին ասաց, որ Մագդաղենացին
մեղսագործ է, բայց Տերն ասաց «ոչ», որովհետև գնահատեց նրա սիրո
վեհությունը (Ղկ. է 39):

Եթե մենք իսկապես խոնարի լինենք, բարեկամս, մենք կատենք Աստծուն
անարգող մեր մեղքերը: Չոժարարար խարազանենք մեզ մեր մեղքերի համար,
որովհետև այդպիսով է փառավորվում Աստված:

Չե որ մենք թերևսություն ենք գգում, երբ պատմում ենք բժշկին մեր ցավերի
մասին: Երբ գալիս ես խոստովանության, պատկերացոր, որ Գողգոռայում ես,
խաչված Քրիստոսի ոսքերի մոտ: Բաց արա սիրտո, որ մաքրվես մեղքերից,
որովհետև որքան սիրտ մաքրուր լինի մեղքից, այնքան ավելի պատրաստ լինի
ընդունելու աստվածային շնորհը: Խոսիր պարզ, անկենջ: Սահմանափակվիր
առայժմ դրանով և հանգստացոր Խոհճմտանքը: Չետո ուշադրությանք լսիր
հոգիոր հոր նախազգուշացումները և ցուցումները: Լսիր նրան այնպես, ինչպես
կլսեիր Տիրոջը, որ ասաց. «Ով լսում է ձեզ, ինձ է լսում»:

ԳԼՈՒԽ ԺԹ

Պետք է ազատվել ամեն տեսակի մեղքերի գերությունից

Որքան ավելի է բացվում առավոտը, այնքան ավելի է լուսավորվում, և մենք
հայելու մեջ պարզ տեսնում ենք դեմքի կեղտն ու նուրը: Ծիշտ նույնն է
կատարվում, երբ Սուրբի Անդրքին լույս սկսում է լուսավորել մեր խիդեր, ավելի
բացահայտ և հստակ ենք տեսնում մեր մեղքերը, ինչպես նաև մեր բոլոր
թերություններն ու հակումները, որոնք խանգարում են մեզ հասնել ծշմարիտ
բարեպաշտության: Եւ այդ նույն լույսը, որն օգնում է գիմանկել մեր
անկատարությունը, դրդում է մեզ մաքրագործվելու և ազատվելու մեղքերից:
Անհնար է ամբողջովին մաքրուր լինել մեղքից կամ, համենայն դեպս, նման
վիճակը երկար տևել չի կարող, բայց կարող ենք գոնե կապված չլինել մեղքին:
Օրինակ մի բան է, երբ մարդը կատակով մեկ անգամ խարում է մեկին որևէ
մանրություն, և այլ բան, եթե խաբելը նրա համար սովորական է և հաճելի: Սեղը
միշտ տիհած է Աստծուն, ինչքան էլ փոքր լինի: Կապված լինել որևէ մեղքի՝
նշանակում է միտումնակիր հակարովի Աստծու կամքին: Մի՞ թե հնարավոր է, որ
բարի հոգին ոչ միայն որոշի ամել այն, ինչ հաճելի չէ Աստծուն, այլև անի

միտումնավոր կերպով: Այդ կապվածությունները, աստվածասեր բարեկամ, ուղիղ հակադիր են բարեպաշտությանը: Նրանք թուլացնում են հոգին, խափանում Աստվածային միհրարության ներհոսքը, բացում դրները գայթակղությունների առջև: Եթե անգամ չեն սպանում հոգին, ապա, անշուշտ, հիվանդացնում են: Սարդոստային մեջ ընկած մեղուն չի սատկում, բայց եթե երկար է խճված մնում ցանցի մեջ, կորցնում է մեղը պատրաստելու ընդունակությունը: Նույնը վերաբերում է հոգուն: Այն կարող է ապաշխարությամբ մաքրվել բազմաթիվ մեղքերից, բայց եթե պահպանում է կապվածություն որևէ, թեկուզ աննշան, մեղքին, ապա կորցնում է գործնականորեն բարեպաշտ կյանք վարելու ընդունակությունը:

Մի փոքրիկ տուտը, դատարկաբանությունը, ավելորդությունները վարքում, խոսքում, ստվորություններում, հագուստի, զվարճությունների մեջ,- ահա այն հոգնոր սարդոստայնը, որի մեջ խճվում է մեր գիտակցությունը; և մենք այսի ամեն կերպ ջանանք դուրս պրօնել, ազատվել, ինչպես մեղուններն են ձգտում դուրս սողալ ֆիզիկական սարդոստայնից: Բայց եթե մենք կառչում ենք մեր թերություններից և բույլ ենք տալիս, որ նրանք գրավեն մեր սիրտը, և նոյնիսկ պահպանում և բազմապատկում ենք նրանց, ապա շատ շուտով նկատելի կդառնա, թե ինչպես է հոգնոր կյանքի մեղը հետզիետն ցամաքում, և մեր հոգու փերակը մնում թունավորված և դատարկ:

ԳԼՈՒԽ ԺԻ

Անհրաժեշտ է ազատվել անօգուտ և վտանգավոր երևույթների գերություննից

Խաղերը, պարահանդեսները, տոնախմբությունները, ներկայացումները, ինքնըստինքյան, մեղսալից չեն, բայց չարաշահելիս դառնում են այդպիսին, և նաև բաներին կապվածությունը վտանգավոր է հոգու համար: Եթե բույլ տանք, որ մեր հոգուն տեղ գտնեն այդ փուչ և ունայն կապվածությունները, մեր հոգնոր կյանքը խիստ կտուժի:

Չնում նազովեցի ուխտավորները ոչ միայն խուսափում էին արբեցությունից, այլև չեն փորձում ոգելից խմիչքի համը, որպեսզի ախորժելի չդառնա: Ես չեն հորդորում բոլորովին հրաժարվել նման ժամանցից, բայց պետք է չափազանց գգուշավոր լինել, որովհետև այդ կապվածությունների հետևանքով քայլավոր է բարեպաշտությունը:

Եղերուն գերադասում է թաքնվել թիերում, եթե չափից շատ է կերել վայրի հատապտուղներ, քանի որ կոժվարանա փախչել վտանգից: Անհմաստ, մակերեսային և վտանգավոր ստվորություններով և հակումներով լեցուն սիրտն ի վիճակի չէ առանց արգելքի և անհողողդ ձգտել առ Աստված: Ահա թե ինչու է անհրաժեշտ, սիրելի՛ բարեկամ, լիովին ազատվել բոլոր մոլություններից, որոնք թեև առաջին հայցքից չեն հակասում բարեպաշտությանը, բայց իրականում միշտ վտանգավոր և քայլավիչ են:

Ո՞ւ չ ունենան ձե՞ս մ մղութակ տունաւ յարցաքան գոյամատութ և սորութաց մունաւ է համար չմու միա յմն մշող մարդ չ մուրու մղուաց

ԳԼՈՒԽ ԻԱ
Պետք է մաքրվել վատ հակումներից

Կան մարդկային այնպիսի հակումներ, որոնք իրականում բնական են ամեն մարդու համար և ներ ինձատով մեղք չեն համարվում, բայց դիտվում են որպես թերություններ: Օրինակ՝ տիրության և անցյալի համար ափսոսելու հակումը: Ոմանք բնականից թերևամիտ են, մյուսները՝ մռայլ, ուրիշները՝ բարկացկու, մի մասը չի հանդրւծում այլ կարծիքներ: Չատ քիչ են թերություններից ամենին գուրկ մարդիկ: Մարդն, անշուշտ, կարող է պայքարել իր թերությունների դեմ, ուղղել և նույնիսկ բոլորովին ազատվել նրանցից, և ես պնդում եմ, բարեկամս, որ այդ անելն անհրաժեշտ է: Չե՞ որ մարդիկ գտել են դառը նուշը քաղցրացնելու ծնկը: Ուրեմն, ինչո՞ւ մեր վատ հակվածություններին չհակադրենք լավերը: Ի ծնե մարդկային լավ բնավորությունն էլ կարող է արատավորված լինել վատ սովորությունների հետևանքով: Դակառակը՝ նույնիսկ ամենավատ բնավորության տեր մարդը կարող է ուղղվել Աստուծոն շնորհով և բավականաչափ ջանք թափելուց հետո: Եթեագայում մենք կանդադանանք, թե ինչ միջոցներով կարող ենք մաքրվել վտանգավոր հակվածություններից, թերություններից և մեղսալից կապվածություններից: Թող Աստված քեզ ամբողջ կյանքում այդ ուղղությամբ ջանասիրաբար աշխատելու վճռականություն շնորհի:

Ուսերենից թարգմանեց
ԱՐՓԻՆԵ ՊԱՊԱՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ԱՏԵՓԱՆՅԱՆԻ

Պատմական գիտությունների թեկնածու

ԴԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԴԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1914 թ. հուլիսի 15-ին (28) սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, որը հայ ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում դարձավ ամենաողբերգականը:

Արևելյան Դայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, արևմտահայության հայացքն անընդհատ շրջվում էր դեպի քրիստոնյա ռուսական պետության կողմը: Դայերին դեպի Ռուսաստան էր ճգում Բալկանյան ժողովուրդների օրինակով ծեղը բերելու երկարատև ազատություն ու անկախություն: Դայ Եկեղեցին, ի դեմ Կ. Պոլսի Պատրիարքի, Կիլիկիի Կաթողիկոսի, թեմերի առաջնորդների, ամբողջությամբ պաշտպանում էին իրենց ժողովրդի ծգտումը, մանավանդ 1909 թ. Աղանայի ջարդերից հետո: Քրդական աշխիքերները և չերքեզ ավազակախները, քուրքական իշխանությունների դրդմամբ, ամենօրյա բռնությունների էն Ենթարկում հայ ազգաբնակչությանը: 1912 թ. հուլիսի 19-ին և օգոստոսի 25-ին Արշամարի Կաթողիկոսական տեղապահ Եզմիկ Վարդապետն իր նամակներում՝ ուղղված Կ. Պոլսի Պատրիարքությանը, հայտնում էր հայերի բազմաթիվ սպանությունների մասին, որ կատարում էին թուրքերն ու քրդերը, հայկական գյուղերում կատարվող թալանի, ինչպես նաև այն մասին, որ հայերը սարսափի ներքո ստիպված են լրել հարազատ գյուղերը, իսկ Դամնի թեմակալ առաջնորդ Պետրոս Եպիսկոպոս Սարացյանը Կ. Պոլսի Պատրիարքին գեկուցում էր քուրդ Բեկ Միր-Միսեի գազանությունների մասին, որը բռնությունների էր Ենթարկում Շատախի հայ բնակչությանը:

Թուրքական իշխանությունների խիստ ուժեղացող հակահայկական տրամադրությունները ստիպեցին Կ. Պոլսի Դայոց Պատրիարք Շովիաննես Արքափսկոպոս Արշարունուն 1912 թ. սեպտեմբերի 4-ին օգնության դիմել Ամենայն Դայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ին: Նա գրում էր. «Ակսվեց նոր ժամանակաշրջանը՝ ամենուր լի նոր չարիքներով և այժմ մասնավորապես նրանց համար թեն հանդիսացան Վանի, Արշամարի, Քիթիսի, Սուշի, Սղերդի թեմները: Նորերս ստացված հեռագրերը հայտնում են սպանությունների, ավերածությունների, կանանց առևանգման և նույնիսկ անշափահասների իսլամացման մասին»: Պատրիարքը Կաթողիկոսին խնդրում էր անհրաժեշտ «ցուցում կամ խորհրդուր տալ, որին Ենթարկվելով հնարավոր լինի խելամիտ և գործնական ելք գտնել»: Պատրիարքի այս ուղերձն ստիպվեց Գևորգ Ե Կաթողիկոսին դիմել Կովկասի փոխարքա կոմս հ. հ. Վորոնցով-Դաշկովին: Նա իր ուղերձ-խնդրանքում մասնավորապես գրում էր. «Դայոց Կ. Պոլսի Պատրիարքը բազմից դիմել է Բ. Դուանը արդարադատության և իր հոտը պաշտպանելու խնդրանքով, բայց ստանալով սուկ դատարկ խոստումներ, իր հայացքը իմ միջոցով ուղղում է ուս մեծ ժողովրդին և ինքնակալ մեր Տիրոջը և Նորին Մեծությունից սպասում է պաշտպանություն և հովանավորություն»: Եվ այդ բանի համար Ամենայն Դայոց Կաթողիկոսը, Լսելով քուրքական հալածանքների տակ գտնվող սեփական ժողովրդի ծայնը, փոխարքայից

խնդրում էր. «Բարեխոսել մեր միապետի առջև և աղերսել Նորին Մեծությանը Թուրքիայի հայ ժողովրդին վերցնել իր հզոր հովանավորության տակ»:

1912 թ. դեկտեմբերի 24-ին Կաթողիկոսն ուղղակիորեն դիմում է Նիկոլայ Երկրորդ կայսրին, խնդրելով նրան անհրաժեշտ բարենորդումներ անցկացնել Թուրքահայաստանում «Զերդ կայսերական մեծության հզոր և բարձր հովանավորության ներքո»։ Կայսրը Վեհափառին խոստացավ մեծ հովանավորություն ցուցաբերել և պաշտպանել Թուրքիայի հայ ազգաբնակչությանը։

Սակայն բարենորդումները չթերևացրեցին հայ ժողովրդի վիճակը, քանի որ դրանց իրագործմանը խանգարեց Երիտրուրքական կառավարությունը և սկսված Յամաշխարհային պատերազմը։ Յայերի համար ստեղծված կացությունից դուրս գալու ելքը պիտի լիներ 1914 թ. հոկտեմբերի 16-ին (29) Ուստատանի և Թուրքիայի միջև սկսված պատերազմը, որը խոստանում էր, վերջինիս ջախջախումից հետո արևմտահայությանն ազատել թուրքական լոից։

Լինելով իմաստուն և հեռատես հոգևորական, Գևորգ է Կաթողիկոսը չեր կարող չնկատել, որ կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողությունների հենց սկզբից և հատկապես ռուսական զորքերի թուրքական տարածքները մտնելուց հետո, հայ ազգաբնակչությունը, որը գտնվում էր ռազմաճակատի գծից ներս, հայտնվելու էր ծանր վտանգի առջև։ Այս պատճառով Վորոնցով-Դաշկովին ուղղված իր նոր ուղերձում Վեհափառ Յայրապետը գրում էր. «Կովկասյան սահմանի վրա պատերազմական գործողություններն սկսվելու ժամանակից, որոնք առաջացան մեր սևծովյան ափերի վրա տաճկական նավատորմիդի դավադիր հարձակմանը, պատերազմի գլխավոր բենջ Տաճկաստանի հետ ներկայացնում է Տաճկահայաստանը, և կասկած չկա, որ սկսված սարսափները հենտագայում առաջ կրերեն անհամար և անլսելի դժբախտություններ բազմաչափ հայ ժողովրդի համար»։

Արևմտահայաստանի հայ բնակչության ոչնչացումը սկսվեց Բաշկալեի հայերի 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերի կոտորածից։ Բայց դա դեռ զանգվածային ոչնչացում, եղեռն չէ։ Առաջին փախստականները հայտնվեցին Նախիջևանում։ Տեղի հոգևոր հովիվ Սիոն Վարդապետը, դիմելով Մայր Աթոռ Ս. Էջմիածին, փախստականների համար, իբրև օգնություն, սննդանթերը և դեղորայք խնդրեց։ Յայտնվելով փախստականների դժվարին խնդրի առջև, Կաթողիկոսը ստեղծեց «Եղբայրական օգնություն» կոմիտեն, որի հիմնական նպատակը բժշկական, ֆինանսական և նյութական օգնության ցուցաբերումն էր փախստական հայերին, ինչպես Թուրքիայից, այնպես էլ Յոյսիսային Իրանից։ Գլխավոր կոմիտեն դեկապարեց Յայոց Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Եփրեմ Եպիսկոպոս Սուրբայանը, իսկ նրա մահից հետո՝ Բագրատ Եպիսկոպոս Վարդապարյանը։ Երևանի նահանգային բաժանմունքի նախագահ Դարձավ Երևանի փոխթեմակալ Խորեն Եպիսկոպոս Սուրբ Ալեքսանդր։ 1915 թ. սկզբին Կալկաթայի հայերը, իբրև օգնություն փախստականներին, ուղարկեցին 800 ֆունտ ստերլինգ։ Սուրբայանը քաղաքի հայերից փախստականների հաշվին փոխանցվեց 48.510 ռուբլի, Պետրոգրադի հայ Եկեղեցիների խորհրդություն վկիրաքերեց 25 հազար ռուբլի, իշխան Ս. Ա. Արամելիք-Լազարեև և Պետրոգրադյան «Եղբայրական օգնություն» կոմիտեի նախագահ գեներալ Պ. Ս. Սուլթանշահը 25 հազար ռուբլի, Մոսկվայի կանանց կոմիտեն «Կովկասի պատերազմի վիրավորների և զոհերի համար Ս. Էջմիածին ուղարկեց այսուր, թե շաքար և տար սպիտակեղեն։ Պետրոգրադում կազմակերպվեց հայերին

օգնող կոմիտե, որի պատվավոր նախագահ ընտրվեց Պետրոգրադի քաղաքացիությունը կոմ է. և Տոլստոյը: Մայրաքաղաքի քաղաքային բաժինը 50 հազար ռուբլի տրամադրեց, իսկ Պետրոգրադի բնակչությունը՝ 78 հազար ռուբլի:

1915 թ. հունվարի 19-ին ռուսական բանակի գնդապետ Վերերդ հեռագրեց Երևանի փոխթենակալ Խորեն Եպիսկոպոսին հետևյալը. «Ղարաքիլիսայից Ալաշկերտ հասան հազարավոր կանայք և երեխաներ՝ բոլորը քաղցած ու ցնցոտիավոր: Անհրաժեշտ է 30 ֆուրգոն երեխաների տեղափոխման համար»: Խորեն Եպիսկոպոսը օգնության համար դիմեց Կովկասյան բանակի 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Պ. Օգանովսկուն, և նա ուղարկեց կարիքավոր հայերին ամեն անհրաժեշտը:

Վերջապես, 1915 թ. ապրիլին արևմտահայության վիճակն էլ ավելի ողբերգական դարձավ՝ նրանք այնտեղ մնացին իրեն գերի: Ապրիլի 4-ին Բուլղարիայից Թիֆլիս՝ Ազգային Բյուրոյի հասցեով ստացվեց հեռագիր՝ հետևյալ բովանդակությամբ. «Դայ բնակչության անընդհեց ջարդերը տեղի են ունենում Երզրունում, Դերջանում, Զերթունում և շրջաններում: Անողոր ընդհարումներ են տեղի ունենում Բաղեջում, Վանում, Մուշում, ապստամբություններ Կիլիկիայում, բռնություններ, կողովուտ, սպանություններ Ակնում և Փոքր Ամիայում: Բողոքեք չեզոք Երկրների կառավարությունների առջև, որպեսզի արգիլի ընդհանուր սպանդը»: Ստանալով այդ հեռագիրը, Թիֆլիսի Ազգային բյուրոյի նախագահի տեղակալ Հովսեփ Խանոնցը հայտնեց նրա բովանդակության մասին Մայր Արքու Ս. Էջմիածին և նոր նախարարականի և Բեսարաբիայի թեմի կոնսիստորիայի նախանդամ Տիրայր Վարդապետ Տեր-Հովհաննեսյանին: Կարողիկոս Գևորգ Ե-ն դիմեց ԱՍՍ-ի և Խուալիայի ղեկավարներին: ԱՍՍ-ի նախագահ Վ. Վիլսոնին Վեհափառ գրում էր. «Մեզ հասած տեղեկությունների համաձայն, Միջագետքում, Դալեպի և Մոսուլի միջև, ինչպես նաև Կիլիկիայում և Կ. Պոլսում մի քանի հարյուր հազար հայեր անելանելի վիճակում են, որը սպառնում է նրանց գոյատևմանը: Ուզմական գործողությունների թատերաբեմում հայտնված իմ ժողովորի միջոցները չնչին են, որպեսզի օգնություն ցույց տա իր թշվար Եղբայրներին: Ընդ որում նենք զրկված ենք օգնությունը տեղ հասցնելու հնարավորությունից: Ինանալով Զեր մարդասիրական վերաբերմունքը տանջվածների նկատմամբ և Զեր բարեհոգի սիրտը, դիմում եմ Զեզ մեծ խնդրանքով՝ ստանձնել Թուրքիայում մահվան դատապարտված իմ ժողովորին փրկելու և նրան սնունդով, հագուստով և կացարանով ապահովելու նախաձեռնությունը»: Կարողիկոսը նաև պատվիրեց ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար Փաշային՝ պաշտոնական բոլոր ներկայացնելուանակից և չեզոք պետություններին հայերի զանգվածային ջարդերի և բուրքական կառավարության հայերին Միջագետք թշելու ծրագրի վերաբերյալ:

1915 թ. մայիսի 4-ին Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին ուղղված իր դիմումում Կարողիկոս Գևորգ Ե-ն գրում է. «Ճշշկած ժողովուրդը անփոփոխ ուշադրությամբ հետևում է ծեր փառավոր բանակի հաղթական արաջններացին, որը ամրապնդում է ծեր արդյունավետ քաղաքականության իրական նվաճումները: Սակայն որքան մոտենում է պատմականության հասունացած հարցերի իրագործումը, այնքան ավելի գազանքարոր են թուրքիան, որը ծգուում է անեղող մարդկանց թափառ արյան հեղեղներում

տպավորել իր տիրապետության սարսափները քրիստոնյա խաղաղ տարրի վրա»: Մայիսի 17-ին Երևանի փոխթենակալ Խորեն Եպիսկոպոս Մոլարդեկյանը և Արսեն Վարդապետ Ղուջանը Եգիդիրում այցելեցին գեներալ Պ. Օգանովսկուն և փոխանցեցին Ամենայն Յայոց Կարողիկոսի ուղերձը, գեներալից խնդրելով օգնել փախստականներին տեղափոխվել նոր Վայրեր, ապահովելով նրանց սերմերով և գյուղատնտեսական գործիքներով:

«Եղբայրական օգնություն» գլխավոր կոմիտեն 1915 թ. հունիսի 4-ի նիստում որոշեց. 1. Ալաշկերտի շրջանում փախստականներին օգնություն ցույց տալ քայլայված տնտեսությունների վերականգնման համար, 2. փախստականներին ապահովել գյուղատնտեսական գործիքներ, 3. փախստականներին վերադարձել հայրենիք:

Նրանց հոսքը դեպի Արևելյան Յայաստան մեծանում էր: 1915 թ. հուլիսի 10-ին Անդրանիկը Բերկլիկալեից հեռագործ է Խորեն Եպիսկոպոսին. «Իմ անունից և իմ ժողովորի անունից խնդրում եմ Աստուծոն սիրույն, իրար հետևից Եգիդիր ուղարկեք 20 և 40 ֆուրզոն՝ հայ փախստական հայերի համար: Յոկայական քանակով փախստական է գալիս ծեզ մոտ Վանից, բոլոր տեղերից, Վանա լճի շրջակայրից, ինչպես նաև Մուշի շրջանից: Յացը ուղարկեք հինա և մինչև այն ժամանակ, քանի դեռ չի ավարտվել փախստականների հոսքը»:

Կարողիկոսը փախստականներին ընդառաջ հգիր է ուղարկում Խորեն Եպիսկոպոսին, Արսեն Վարդապետին, ինչպես նաև հայ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ փախստականներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Այդ առաքելության իրականացման համար Յակոբ քահանա Խաչվանքյանը Ալեքսանդրապոլից Երևան ուղարկեց 600 փութ հաց: Շուտով առաքելությունը հասավ հգիր: Այստեղ Խորեն Սրբազնը նորից հանդիպեց 4-րդ քանակային կորպուսի հրամանատար գեներալ Պ. Օգանովսկուն և զայրացած ասաց նրան, որ ռուսական քանակի գործողությունները հիշեցնում են մազուրկա պարը — մեկ ռուսները հարձակվում են, մեկ էլ անսպասելի նահանջում, իսկ արդյունքում տուժում է խաղաղ հայ բնակչությունը: Փախստականների հիմնական մասը վերջապես հասնում է Արևելյան Յայաստան: Սարդիկ քաղցած էին ու կեղեքված: Փախստականների մեծ մասը տեղափոխվեցին Երևանում և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Մայր Աթոռի միաբանությունը անընդմեջ անհրաժեշտ օգնություն էր ցույց տալիս հայրենիքը կորցրած մարդկանց: Մայր Աթոռի միաբանության աստվածահանք գործունեության մասին 1915 թ. օգոստոսի 7-ին Օդեսա Շիրայր Վարդապետին ուղղված նամակում Գերագույն Յոգևոր Խորիրոյի անդամ, «Արարատ» ամսագրի Խմբագիր Բարեկեն Վարդապետ Աղավելյանը գրում էր. «Իմ շուրջը գտնվող փախստականների քազմությունը ներկայացնում է ահավոր տեսարան: Ամբողջ օրը զբաղվում եմ նրանցով: Ամեն օր եկեղեցի են մտնում և դուրս գալիս 5-6 հազար, իսկ այստեղ՝ Էջմիածնում, մշտապես գտնվում են ավելի քան 60000 մարդ: Որբերին հավաքել են Վեհարանում, որը վերածվել է որբանոցի և հիվանդանոցի: Չի եերիքում աշխատող ուժ: Այստեղ ամեն օր մահանում է 120 փախստական: Վիճակը սարսափելի է: Թաղված է ավելի քան 3000: Մահացած Վահագավ Վահան հայր սուրբը, իսկ Երեկ՝ Եփրեմ Եպիսկոպոսը»: Շուտով տիֆով հիվանդացավ Բարեկեն Վերդապետը և 1916 թ. հունվարի 4-ին մահացավ:

1915 թ. դեկտեմբերի 28-ին Կ. Պոլսի Պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը, իր նամակում ԱՄՆ-ի հոգևոր հովիկ Արսեն Վարդապետ Վեհունուն

նկարագրելով հայ ազգաբնակչության ջարդերը, չեր կարող չնշել արևմտահայոց եկեղեցու կորուստները. «...Կանքերն ու եկեղեցիները մեծ մասամբ կործանվեցին կամ անարդ գործունեությանց հատկացվեցան: Մշո Ս. Կարապետը թնդանոթի բռնված և հիմնահատակ փլած է, նույնպես Կարնո Կարմիր վաճը, Սեբաստիո Ս. Փրկիչ և Ս. Սարգիս եկեղեցիները և այլն: Խոկ եկեղեցականությունը գրեթե ամբողջովին կոտորված է, ոչ մեկ քահանայի ողջ մնացած լուրջ ունինք ցարդ: Առաջնորդներեն Կարնո Սնբառ եպիսկոպոս Սաատեթյանը իր ժողովրդին հետ դեպի Միջագետը տարված ժամանակ քեմախի մոտերը հրոսակներու կողմն սպանված է: Տրապիզոնի Գեորգ ծ. վարդապետ Թարյան Կարնո պատերազմական ատյանին որկված ըլլալով ճանփան սպանված է: Շապին Գարահիսարի Վաղինակ ծ. վարդապետ Յազարապետյան կախաղանի վրա իր հոգին ավանդած է տեղական վճռով: Մշո Վարդան ծ. վարդապետ Յակորյան բանտին մեջ բրածեծ ճահացած է: Տիգրանակերտի Մկրտիչ ծ. վարդապետ Չըլդատյան բանտին մեջ զանահար սպանված է: Եվդոկիայի Շավարշ ծ. վարդապետ Սահակյան ծերբակալվելով Սեբաստիա, որկված ատեն ճամփուն սպանված է: Խարբերդի Պասակ ծ. վարդապետ Տեր-Խորենյան շղթայակապ դեպ Տիգրանակերտ այլոց հետ որկված ատեն խողխողված է: Ցողատի Ներսես եպիսկոպոս Ղանիելյան Սեբաստիո մուտերը Ալիսի ափերուն վրա ուրիշ 450 յոզդատցիներու հետ սպանված է: Եդեսի Արտավազդ ծ. վարդապետ Գալենտերյան քաղաքին մեջ սպանված է ուրիշ 60-70 հայերու հետ վերջին ջարդեն առաջ: Բալուի Եզնիկ եպիսկոպոս Գալիհարճյանի, Բաղեշի Սուրեն ծ. վարդապետ Գալենյանի, Սղերդի Եղիշե վարդապետ Չանոյանի, Չարսանճաքի Գեորգ ծ. վարդապետ Նալբանդյանի, Սեմանյանի, Երզնկայի և Քեմախի Սելքիսերեկ վարդապետ Հովհաննի, Սամսոնի Ղանազասակ ծ. վարդապետ Եղեսյանի և Կյուրինի Խորեն եպիսկոպոս Ղիմարսյանի մահե ստույգ է, բայց պարագաները տակավին անծանոթ կմնան: Կեսարի Խոսրով եպիսկոպոս Պեհրիկյան նշտնչենական և Պրուսայի Պարգև ծ. վերդապետ Ղանիելյան հնգամյա երեղարգելության դատապարտված են: Սակայն հայտնի չէ, թե ուր կգտնվին: Խիկոմիդի Ստեփանոս եպիսկոպոս Շովակիմյան, Կոնիայի Գարեգին վարդապետ Խաչատրյան և Պանորմայի Կարապետ եպիսկոպոս Մազլումյան տարագրված են իրենց հոտին հետ, և առաջինը Ղալեպ, Երկրորդը Մումպիծ և Երրորդը Երևանի Ազգիկե գյուղը: Ասոնցնե զատ ողջ մնացող առաջնորդներն են՝ Գնել եպիսկոպոս Գալեն-քերյան, որ կմնա Սեբաստիա տան մը մեջ արգելափակ, հզմիր Մատթեոս եպիսկոպոս Խնձյան և Ղածընի Պետրոս եպիսկոպոս Սարացյան իրենց վիճակներու մեջ: Ղինայելով նույնիսկ Կիլիկիո Սահակ Ա Կաքողիկոսը, որ Ղալեպի ըովերը Պապ աքսորդվեցավ և ապա ղրկվեցավ Երուսաղեմ, ուր կմնա այժմ»:

Այսպիսով թուրք զավթիչներն առաջին հարվածը հասցրեցին Հայ Եկեղեցուն: Հայոց Եղեռնից անցել է ավելի քան 80 տարի, մինչեղ բոլոր այդ տարիներին Հայ Եկեղեցին, հանդիսանալով քրիստոնեական հավատի ջատագով և տարածող, շարունակել է իր մեծ առաջելությունը՝ հսկայական կորուստներ տալով ստալինյան բռնապետության օրոք: Եթե 1915 թ. Եղեռնին զոհ է գնացել ավելի քան 1200 հոգևորական, ապա ստալինյան բռնապետության «խաղաղ» ժամանակներում բռնադաշտվել է ավելի շան 200 հոգևորական: Հայ Եկեղեցին սակայն դիմացակ այս ա Ինըն և Հայաստանում իրավունքները, արևանի դիրքը և հեղինակությունը:

Ա. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀԱԳԻՐ ՅՈՒՆՆԵՍ ԼԵՓՈԽՈՒՄԻՆ

Հանուն հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների պաշտպանության բոլորանկար այրված և հայոց երկնակամարում լուսաշող փայլող ասանդերից մեկն է Յոհաննես Լեփոխումին, որն իր պայծառ կյանքի համարյա կեսը նվիրաբերեց ի նպաստ տառապյալ հայ ժողովրդի, լինելով նրա հետ երեսուն տարի շարունակ, մինչև իր փառավոր կյանքի վերջին բոպեն, 1926 թ. փետրվարի 3-ը, գգտեց իր ուժերի հնարավորությունների սահմաններում օգտակար լինել նրան:

Լեփոխումին խառնվածքի մարդը, որի ամբողջ կուրյունը շաղախված էր երկնային արդարության բախմորով, որի հոգին չէր կարող չտառապել մարդկային տվյալներից ու անարդարություններից, չանալ նրա օգնության աղերսանքին ու փրկության ճիշճրին, բնականորեն անտարբերությամբ չէր կարող անցնել հայոց դաժան ճակատագրի կողեվ, որը բաժին էր ընկել նրան բուրքական բռնատիրության անել պայմաններում:

Ի պատասխան Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի պահանջների, բուրքական կառավարողները կենսագործեցին Սասունի կոտորածը, որին զոհ գնացին 300.000 անմեղ հայեր:

Միանգամայն բնական էր, որ Լեփոխումին պես առաքինի հոգու տեր մարդը չէր կարող անտարբեր մնալ հայության բախտի նկատմամբ, և նա նետվեց այդ մարդակուլ հորձանութը: Նա մանրամասն ուսումնասիրելով իրական վիճակը և արհեստականորեն եվրոպական տերությունների բողոքությամբ ու աշակցությամբ Օսմանյան կայսրության մեջ հայության համար ստեղծված անասելի ծանր պայմանները, 1896 թ. իրատարակեց «Հայաստանը և Եվրոպան» վերտառությամբ մի սահնելի աշխատություն, որը մի շառաչուն ապտակ էր բաղաքակիրք Եվրոպայի դեմքին՝ հայ ժողովրդի նկատմամբ բուրքական բարբարոսությունների համար կանաչ ճանապարհ բացելու գործում: Նրա այդ աշխատությունը բարգամանվել է ֆրանսիերեն և անգլիերեն լեզուներով, որը ոչ միայն ընթերցող լայն հասարակայնությանը ծանրացնում է մեր ժողովրդի ծանր վիճակը, այլև պաշտպանում նրա պատմական իրավունքները:

Նա, բացի վերը հիշատակված աշխատությունից, իրատարակել է «Քրիստոնեական արևելք», «Արևելյան Առաքելության տարեգիրք», «Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին Թուրքիայում» ու «Գերմանիան և Հայաստանը» աշխատությունները: Մեր նապատակից դուրս է վերլուծել այդ աշխատությունները, սակայն նշենք, որ դրանց հիմնական լեյտոնսիվը կազմում են Հայաստանը ու հայ ժողովությը, նրա պատմական իրավունքների ոտնահարման դատապարտումը մեծանուն հեղինակի կողմից, որն այնքան սառնասրությամբ իրականացնում էին մեծ տերությունները բուրքական արյունոտ ձեռքբուժ:

Հանրահայտ է այն փաստը, որ Բեղլինի վեհաժողովի նախատեսած քարենությունների իրականացմանը մեծապես խանգարում էր մեծ տերությունների, այդ թվում հենց Գերմանիայի անհետևողականությունը, եթե չասենք՝ ցանկության բացակայությունը։ Զնայած այն բանին, որ վեհաժողովից արդեն անցել էր 35 տարի, սակայն Գերմանիան դեռևս ոչ միայն չէր ճշգրտել իր դիրքը այդ հարցում, այլև բացահայտորեն դեմ էր հայկական նահանգներում քարենորդումներին։ Այդ հանգամանքը, և ոչ միայն այդ, խստրեն անհանգստացնում էր Լեփսիուսին, որը նրան ստիպեց դեռևս 1913 թ. մեկնել Կ. Պոլս և հանդիպում ունենալ գերմանական դեսպանի հետ։ «Հիշյալը Պալքանյան պատերազմին (1913) եկավ Պոլս ու յժ տալու գերման դեսպանատան մոտ հայ նահանգներում քարեկարգման ծրագրին և հաջողեցավ բարյացակամ դարձնել գերման դեսպանը, որ մինչ այն արդեն հակառակ էր նույն ծրագրին» (Եվրոպայում հայոց կարողիկոսական պատվիրակության նամակից)։ Բացի այդ, մեծ մարդասերին մտահոգում էին նաև Թուրքիայում ապրող հայության գլխին կուտակված մահարեր ամբարը։ Նա չի խորշում նաև հանդիպումներ ունենալ երիտրուրքական դեկավարների հետ և փորձում է նրանց մոտ արքնացնել մարդկային բանականության ձայնը՝ կանխել նրանց կողմից արդեն ծրագրված հայկական կոտորածները։ Բայց, ավա՞ն՝ Մարդակերները անդրդվելի էին։ 1921 թ. Բեղլինում կայացած Սոլոմոն Թեհելերյանի դատավարության ժամանակ իր պաշտպանողական ելույթում Լեփսիուսը նշում է. «Ես 1913-ին Կոստանդնուպոլսում էի... երիտրուրքը շատ զայրացած էին, որ հայկական բարենորդում հարցը դարձալ կզրակեցնե պետությունները... կըսեին։ «Եթե Դուք, հայերդ, բարենորդումները ձեռք չեք բաշեր, պիտի պատահի քան մը, որուն հանդեպ Արդուլ Համիլի շարդերը տղու խալալիի էին»։

Պոլսում ձերբակալված Վարդգեսը՝ «անձնական բարեկամը Թալեարին», երբ տակավին չէր աքսորված, կհարցնե իրեն. «Ուրեմն կդիտվի Արդուլ Համիլի գո՞րծը շարունակել»։ Թալեար պատասխանեց. «Այո՛»։

Նույն դատավարության վկա կանչված Գ. Պալաքյանն ասաց, որ Թալեարի արածը չի պատահած նույնիսկ 500 տափա մեջ, որ Զանդրում եղած ժամանակ քուրք հազարապետը ըսավ. «Ինչ որ մեր նախկին սուլթանները ըրբին, մենք ըրինք, պատմական ազգ մը երկու ամսվան մեջ մեղ մեղոցուցինե»։

Այսպիսով Լեփսիուսի շանձերը՝ Թուրքիայում հայոց կոտորածները կանխելու ուղղությամբ, ի դերև անցան։

Բացի գիտական աշխատություններից, նա լուրջ գործնական բայլեր է կատարել մեր ժողովրդին ամենօրյա օգնություն կազմակերպելու համար։ Նա հիմնադրել է «Դոյչե Օրիենտ Միսիոն» ընկերությունը, որը 1895-ից մինչև համաշխարհային առաջին պատերազմը պատսպարել և խնամել է Պարսկաստանի և Հայաստանի տարրեր շրջաններում որք երեխաներին ու այրիներին։ Պատերազմի արհավիրքից հետո Միջազգետի շիկացած ավազուտներից նա հավաքում է 800 հայ որրուկների և նրանց հայեցի կրթելու, դաստիարակելու նպատակով Սիրիայում հիմնում է վարժարան՝ յուրաքանչյուր երեխայի համար հանգանակելով 120 մարկ կամ 6 անգլիական ոսկի։ Զնայած իր առաջացած տարիքին, նա մեծ խանդաղաւնելով է մոտենում մեր ժողովրդին ու նրա պատմությանը, նախապատրաստվում էր հրատարակել «Հայ ժողովրդի նորագույն պատմությունը» աշխատությունը։ Նա ցանկանում էր Գերմանիայում բացել մի հայկական վարժարան, որի

«տնօրինությունը հանձնված է Պ. Քրիչյանի, որ այս պատճառով հրաժարեցավ քահանայանալի» (Եվրոպայի հայերի կարողիկոսական պատվիրակության 1925 թ. օգոստոսի 12-ի նամակից):

Ցոհաննես Լեփիուսի հայանվեր գործունեությունը ամբողջությամբ ներկայացնելը մի փոքրիկ հոդվածում ոչ միայն անհնարին, այլև աննպատակ կլինի, ժանգի նրա սահմանները անընդգրկելի են: Այդ նպատակին պետք է նվիրել ծավալուն աշխատություն: Բայց, այնուամենայնիվ, չենք կարող չնշել, որ նրա մեծագույն հաղթանակը բուրքական մարդակերների ու նրանց հովանավորող ուսակցիայի նկատմամբ դարձավ 1921-ին Բեռլինում բուրքական եռապիտության պարագունակներից առաջինի՝ Թալեաք Փաշայի սպանության համար Սովորութեակցիայի նամականի դատավարությունը:

Գերմանական իրավագիտությունը, որն այնքան էլ զերծ չէր ոչ հեռու անցյալի բաղաժականության նեցումից և իր, արդեն երբեմնի դարձած, դաշնակից Թուրքիային հովանավորելու գգացումից, դոկտոր Լեփիուսի անհնառելի մերկացնող փաստերի նեշման տակ ստիպված եղավ մինչ այդ «Վտանգավոր ահարեկիչ» նանչչաված Սովորութեակցիան անպարտ նանաչել և դատարանի դակինից ազատ արձակել:

Գերմանական դատավարական գործելակերպում դա մի աննախադեպ իրադարձություն էր, երբ դատարանը ազատ էր արձակում մեկնի, որը մեղադրվում է դաշնակից պետության ամենաբարձր աստիճանի գործիչներից մեկնի, օրը ցերեկով, Բեռլինի փողոցներից մեկում սպանելու մեջ. «հանցագործություն», որը գերմանական բրեեկան օրենսգրքով խստագույն պատժվում էր:

Հայկական հարցին նիրված Լեփիուսի տասնամյակների գիտական ու գործնական նպատակալաց աշխատանքը և դատարանում ներկայացրած հավաստի փաստարկները մինչև արմատները բացահայտեցին բուրք դահնապետի կողմից հայ ժողովրդի բնաշնչման ու սառնասրտորեն իրականացման աներևակայելի պատկերը, որոնց մղամականացային ազդեցության տակ հայ երիտասարդը իրագործել էր այդ արդար դատաստանը:

Լեփիուսի գերմարդկային ջանքերի շնորհիվ էր, որ Սովորութեակցիան դատիվ գերմանական դատարանին, անպարտ նանաչչավեց, իրադարձություն, որը համընդհանուր արձագանք գտավ միջազգային մամուլում:

Դատավարությունից հետո գերմանական մամուլը գրեց Լեփիուսի ծառայությունների մասին: «Berliner Tageblatt» թերթը գրել է, որ «Հայերը որսում են Թալեաքին, էնվերին և ուրիշների. «Արքա աշխարհը գիտե, թե ինչու: Արդեն դոկտոր Լեփիուսի հրատարակություններից բոլորն ել գիտեն, որ 1915 թ.-ի գարնանը Ժիոն (Երիտ.-Խմբ.) բուրք կառավարությունը փորձեց, իրեն օրինակ առնելով Արդուլ Համիդի նախորդ կառավարությունը, բոնի միջոցներով ընդմիշտ լուծել հայկական հարցը»:

Անկախ սոցիալիստների օրգան «Freiheit»-ը, բննադատելով սոցիալ-դեմոկրատական կուսակցության «Vorwärts»-ի բրդամոլական դիրքը, ցույց է տալիս, որ Լեփիուսի հրատարակած դիվանագիտական փաստարդերը լիովին մերկացնում են Թալեաքին, որը «ուզում էր երկրի մեջ միատարրություն ապահովել, օտար կրօնների ժողովուրդների ոչնչացումով»:

Խիստ ուշագրավ է այս կապակցությամբ դոկտոր Յոհաննես Լեփսիուսին հղված Հայոց քարեգործական ընդհանուր միության նախագահ Պողոս Նուրար փաշայի 1921 թ. հունիսի 6-ի նամակը, որում ասված է. «Սիրելի տոկտոր Լեփսիուս. Քերքերու մեջ կարդացի Թեհերյանի դատավարության ընթացքին Զեր վկայության մանրամասն զեկուցումը: Անաչառության և արդարամտության ազնիվ զգացումով հիշտավեցիք ու դատապարտեցիք էնվեր ու Թալեար փաշաներու իրամանով գործադրված վայրագությունները, շարադրելու համար արարքը անոր, որ Պեղլինի դատարանը հանած է:

Զեր մեծ սիրտեն ուրիշ կերպ չեմ սպասեր, հիշելով Զեր ժաջությունն ու անձնութացությունը, որով Դուռ երեք չկարանեցաք ստանձնելու հայության պաշտպանությունը այնպիսի շրջանի մը, երբ այդպիս ձեռնարկումը աղետարքը էր, մանավանդ Զեզ համար:

Մեր հայրենակցին անպարտ արձակումը ևս ապացուցեց, որ դատավորներ կան Պեղլինի մեջ և չեմ տարակուսիր, որ Զեր միշտամտությունը մեծապես ծառայեց լուսարանելու և շարժելու խիդեն անոնց, որոնք անմեղ հոչակեցին Թեհերյանը:

Իմ, Ազգային պատվիրակության և համայն հայության, բոլոր սրտով Զեզի կիայտնեմ մեր խոր երախտագիտությունը շահագրգության այս նոր փաստին համար, որ կրերեք մեր դատին ի նպաստ:

Ընդունեցեք, Սիրելի Լեփսիուս, իմ լավագույն զգացումները»:

Ընթացող հասարակայնությանը բող չըվա, թե Յոհաննես Լեփսիուսը իր հայանապատ մարդասիրական առաքելության իրականացման ընթացքում արժանանում էր կայզերական Գերմանիայի կառավարիչների օրինությանը: Ընդհակառակը, այդ վեհ գործի նանապարհը նա անցել է բազում անասելի դժվարություններ հաղթահարելով, արժանացել իր խսկ կառավարության և թուրքական ուսակցիայի անլոր հալածանեներին, որի հետևանենով նա ստիպված է եղել բողնել իր հայրենիքը՝ Գերմանիան, և վտարանդու կարգավիճակով ապաստանի Հոլանդիայում: Նրա գործունեության համար որոշակի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին միայն կայզերական Գերմանիայի անկումից հետո, որը նրան հնարավորություն ընձեռեց հայրենիք վերադառնալ և շարունակել իր համարդակյան առաքելությունը:

Երախտագետ հայ ժողովուրդը ինչպիս բուն հայրենիքում, այնպիս էլ ի սիյուսու աշխարհի, քարձ է գնահատել իր խսկական քարեկամներին, որոնք, չընկրկելով ոչ մը դժվարությունից, աշխատել են իրենց կյանքի գնով աշակից լինել իրեն: Յոհաննես Լեփսիուսի անունը հպարտության, մարդասիրության ու ազնվագույն բաշամարտիկի խորհրդանիշ է դարձել համայն հայության համար, որը կարատուի այնքան, քանի դեռ ապրում է մեր հավերժող ժողովուրդը:

Հայոց ոգու և արդարության կրող Հայ Առաքելական Եկեղեցին, որը 1700 տարի շարունակ եղել է իր ժողովրդի հետ, եղել է նրա լուսավոր իդաերի ու ծրագրերի իրականացման նանապարհ լուսավորող կանթեղը, ընկել ու քարձացել նրա հետ, երեք չդավանանելով արդարության ու ազատության վեհ գաղափարին, չէր կարող անտես առնել այն լուսավոր բաշամարտիկ «օտարեներին», որոնք իրենց կյանքն են դրել հնշված ու հալածված փոքրաբիկ ազգերի ու ժողովուրդների ազատության ու արդար իրավունքների պաշտպանության զոհասեղանին: Մեր ժողովրդի Գողգորայի փոշոտ նանապարհին այդպիսի անհատ բաշամարտիկներից

մեկն էլ հենց Ցոհաննես Լեփսիուսն էր: Եվ բոլորովին էլ պատահական չէր, երբ 1925 թ. սեպտեմբերի 28-30 թեոլինում կազմակերպվում էր նրա գործունեության 30-ամյակի հորելյանական հանդիսությունները, Ս. Էջմիածնի Եվրոպայի հայության կարողիկոսական պատվիրակությունը միջնորդեց Ամենայն Հայոց Կարողիկոս Տեր Տեր Գևորգ Կարողիկոսին Լեփսիուսին պարզեատրել Ս. Գրիգոր Լուսավորչի բարձրագույն պատվո նշանով: Ավելորդ չենք համարում ընթերցողներին ներկայացնել պատվիրակության 1925 -ի օգոստոսի 12-ի միջնորդությունը ամբողջությամբ, որն ընդհանուր գծերով ներկայացնում է այդ պայծառակիշատակ գերմանացու ծառայությունները մեր ժողովրդին՝

«Կարողիկոսական պատուիրակութեան Ս. Էջմիածնի հայոց Եվրոպայի

12 օգոստոսի 1925
Փարիզ

h. 288

Նորին Ս. Օծուրիւն

S.S. Գևորգ Սրբազնագոյն Կարողիկոս
Ամենայն Հայոց
ի Ս. Էջմիածնին

Վեհափառ Տէր,

Հայ ժողովուրդին և անոր քաղաքական արդար դատին 1895-96-ի ահաւոր կոտորածներէն ի վեր անկեղծ ու անճնուէր բարեկամ Տօֆոն. Johannés Lepsius յառաջիկայ սեպտեմբեր 28-30 պիտի տօնէ իր հայանպաստ գործունէութեան երեսնամեակր:

Յիշեալը Պալքաննեան պատերազմին (1913) եկաւ Պոլիս ուժ տալու գերման դեսպանատան մոտ հայ նահանգներու բարեկարգման ծրագրին և յաջողեցաւ բարեացակամ դարձնել գերման դեսպանը որ մինչ այն ատեն հակառակ էր նոյն ծրագրին:

Համաշխարհային պատերազմին (1915) կրկին եկաւ Պոլիս հայ ժողովուրդին նակատագրական ահաւոր օրերուն, տեղեկութիւններ քաղելու համար հայ նահատակութեան մասին և գերմաններուն գեր բարոյական աշակցութիւն ապահովելու հայութեան գոնք մնացորդն ազատելու համար:

Ապա Պերլին դառնալով հրատարակեց հոյակապ գործ մը, քաղելով գերման արտաքին գործոց արխիվէն և ապացուցանելով, որ հայ ժողովուրդն ապստամբութիւն չէ ըրած ու անմեղ էր, և եղած թրքական բնաջնությունի քաղաքականութիւնը յաւիտենական արատն է և բուրքութեան, և՝ մարդկութեան: Նա գերման միապետական կառավարութենէն հալածուեցաւ և կամաւոր ախոր եղաւ ի Հոլանտա մինչև որ գերման հանրապետութիւնն հաստատուեցաւ և կրցաւ դառնալ Պերլին:

Դալիարք Փաշայի սպանման դատավարութեան պահուն ինք եղաւ սպաննիչ Դայլերեանը մեր կողին պաշտպանող թէ՛ դատարանէն ներս և թէ՛ դուրս:

Իսկ այժմ արդեն իր ծերունազարդ հասակին մէջ կրկին սկսած է հայանպաստ իր գործունէութեան և պատրաստութիւն կը տեսնէ հրատարակելու «Հայ ժողովուրդին նորագոյն պատմութիւնը» նորագրով գիտական աշխատութիւն մը և Գերմանիոյ մէջ բանալու հայ ուսուցչանոց մը, որուն տնօրէնութիւնը յանձնուած է Պ. Քրիշեանի, որ այս պատճառով հրաժարեցաւ քահանայանալէ:

Նոյնպէս 800 հայ որրեր Միջագետի անապատներէն հավաքելու և Սուրիոյ մէջ հայ ոգիով կրթելու համար (իւրաքանչիւր որրի 120 մարֆ կամ 6 ամգդ. ուկի) հանգանակութեան ձեռնարկած է:

Վերջապէս հայ ժողովուրդին բաղաքական և բարոյական շահերուն նույիրուած է Տօֆք. Լեփսիուս աւելի քան 30 տարիներէ ի վեր, գրչով, խօսքով և գործքով, գերման ժողովուրդեան մէջ համարեայ միակն է, որ զուտ քրիստոնէական և մարդասիրական վեհ նպատակով ծառայած է հայ ժողովուրդին, առանց մարդորսական եպերելի նպատակներու, ուստի արժանի է, որ Զերդ Վեհափառուրիւնը վարձատրէ հայոց այս անշահախնդիր և ուխտեալ բարեկամն Ս. Գրիգոր Լուսաւորիչի պատուանշանով, որ արդեն հաստատուած է հայոց բարեկամ օտարներու համար մանաւանդ:

Ցուսալով, որ այս առաջարկը կարժանանայ Զեր Ս. Օծութեան բարեացակամ ուշադրութեան, կը խնդրենք փութացնել և յառաջիկայ սեպտեմբեր 28-30-էն առաջ հասցնել, որպէսզի կարենանք, եթէ հնար է, անձամբ յանձնել մեր անձնուէր բարեկամին Հայրապետական օրինագիր կոնդակն պատուանշանին հետ, յառաջիկային ճգելով իրեն գործակից ուրիշ գերման հայասէրներու վարձատրութեան պարագան:

Մատչելով ի համրոյր Ս. Աջոյն Վեհափառութեանդ,

Մնամ որդիական ակնածանօթ,

Կարողիկոսական Պատուիրակ Մայր

Արոռոյ Հայոց Եվրոպայի.

Գրիգորիս Եպիսկոպոս Պալաբեան

Հ. Գ. Պատուանշանն այստեղ կրնանք պատուիրել տալ:

Այսուհետո:

Անշուշտ, յուրաքանչյուր մեծ անհատականություն խորապես զգացվում է, երբ այն գործը, որին նվիրել է իր ողջ էռուրյունն ու շանքերը, ցանկացած հանգուցալուծումը չի ստանում: Այդպիսիներից մեկն էլ Յոհաննես Լեփսիուսն էր, որը 30 տարի անընդմեջ իրեն նվիրեց հայոց դատին, բայց չկարողացավ ապրել նրա բոնարարված իրավունքների վերականգնման բերկրանքը:

Նա, ինչպես նորվեգ ժողովրդի մեծ զավակ Ֆրիտյոֆ Նանսենը խորը վիշտ ապրեցին, երբ չկարողացան տեսնել այն վեհ գործի հաղթահանդեսը, որին նվիրեցին իրենց կյանքի լավագույն տարիները:

Չնայած այդ ամենին, հայ երախտապարտ ժողովուրդն իր սրտում ու հոգում հավերծ է պահում նման անմար անունները և իր ողջ էռուրյամբ պաշտում այդ նվիրյալներին:

Մարդ արարածը մահկանացու է: Այդ անմահ մահկանացուներից էր նաև Յոհաննես Լեփսիուսը, որը 68-ամյա հասակում, 1926 թ. փետրվարի 3-ին, առհավետ փակեց աչքերը: Սակայն նման մարդիկ չեն մեռնում, այլ անմահանում են, քանզի նրանք իրենց նվիրել են աստվածային արդարության անմահ գործին:

Մեր վիրավոր ժողովուրդը խորապես սգաց Լեփսիուսի մահը և Սուրբ Էջմիածնի հոգևոր հայրերի միջոցով իր խորը վիշտն արտահայտեց նրա մահվան, իմա անմահացման առիթի գրելով. «Նորին Սբրությունը խորին վշտով ստացավ Զեր տիսուր հաղորդագրությունը դոկտոր Յոհաննես Լեփսիուսի մահվան մասին»:

Այդ կորուստը միայն Զերք չէ, այլ նաև այն հազարավոր խեղն որը երեխաների, որոնց նշարիտ հայր է հանդիսացել, փրկելով նրանց մահվան ու դժբախտության ձեռքից:

Հանգուցյալ դոկտոր Լեփսիուսի կյանքը նշարիտ հետևություն էր մեր Փրկչի (Ղուկաս Զ 37) հավիտենական և անսահման գրության ժամանակավոր և սահմանավոր կյանքի մեջ:

Նորին Սրբությունը հայտնում է Զեզ յուր սրտի ցավն ու վշտակցությունը, օրինում է հանգուցյալի հիշատակը. բող Աստված և նորա Սուրբ Հոգին Զեր խորը վշտի մեջ միշտարիչ և զորավիգ լինի:

Համայն հայությունը ոչ միայն բարձր է գնահատում Յոհաննես Լեփսիուսի անմար հիշատակը, այլև ակնդես հետևում է նրա անվան հետ կապված ամեն մի միջոցառման՝ իր խորին հարգանքի տուրքը մատուցելով նրա պայծառ հիշատակին:

Դեռևս 1986-ին Հալլեի «Մարտին Լուքեր»-ի անվան համալսարանում կազմակերպվում է Յոհաննես Լեփսիուսի մահվան 60-ամյակին նվիրված գիտական նիստ, որից անմասն չմնաց հայ ժողովուրդը: Երջանկահիշատակ Վազգեն Ա Կարողիկոսը 1986 թ. փետրվարի 10-ին Հայրապետական Կոնդակ հեղեց այս համալսարանի տնօրինությանը և հայագետ դասախոս դոկտոր Հերման Գոլյշին, որում օրինության հետ մեկտեղ հաղորդեց իր խորը երախտագիտության խոսքը մեծ մարդասերի նկատմամբ՝ հավաստիացնելով, որ Հայր Յոհաննես Լեփսիուսը հավերժ կապրի, բանզի հավերժ է հայ ժողովուրդը:

Մենք նպատակահարմար ենք գտնում ընթերցողին ներկայացնելու Վազգեն Ա Կարողիկոսի սրբատառ Հայրապետական Կոնդակն ամրողացնությամբ՝ ոչ միայն մեր ժողովրդի հիշողության մեջ վերանորոգելու մեր ազգի դատին իր կյանքը նվիրաբերած մեծ մարդասերի գործն ու հիշատակը, այլև ընդգծելու, որ մեր Եկեղեցին միշտ էլ, ամեն մի պարագայում եղել է իր ժողովրդի իդաբրի, մտածումների, գտնումների ու հոգու լավագույն քարգմանն ու արտահայտիչը:

«ԱՍԼԵՒ «ՄԱՐՏԻՆ ԼՈՒՔԵՐ»-Ի ԱՆՈՒԽԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏՆՈՐԵՆՈՒԹԵԱՆ, ԵՒ ՀԱՅԱԳԵՏ ԴԱՍԱԽՈՍ ՏՈՔԹ. ՀԵՐՄԱՆ

ԿՈԼՅԻՆ, ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԹՈՅ

ՕՐՀԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՉՄԻԱԾՆԻՅ

Հայոց Մայր Երկրից և Հայ Եկեղեցու պատմական կենտրոն Սուրբ Էջմիածնից բերում ենք ողջոյն և օրինութիւն Հայր Իոհաննես Լեփսիուսի յիշատակին, որին նույիրուած է մեր գիտական նիստը, նրա մահուան վարտուամեակի առքիւ, նպատակ ունենալով մեր օրերի աշխարհին ներկայացնելու մեծանուն գերմանացի հոգևորականի առաքելատիվ կեանքն ու կրօնական գիտական և ընկերային ծառայութեանց բեղուն վաստակը:

Մեր գոհունակութիւնը և Մեր չերմ գնահատանքն ենք յայտնում Զեզ, որ երջանիկ գաղափարն էլ ունեցել մեր պատմական համալսարանի յարկի տակ կազմակերպելու սոյն հանդիսաւոր նիստը, որին հանել էլ իրաւիրել Մայր Արոռին Երկու ներկայացնուցիչներին, որոնք պիտի լինեն Մայր Արոռին դիւանապետը Տ. Ներսէս Եպիսկոպոսը Պողապական և Կենտրոնական Եւրոպայի Մեր պատուիրակը

Տոմարոս ծ. վարդապետ Գրիգորիան: Նրանք պիտի մասնակցեն ձեր հանդիսուրիւններին բերելով բոլորիդ Մեր եղայրական ողջոյնը և բարի մայրաճները:

Հայ Եկեղեցու և ժողովրդի համար Հայր Լեփսիուսը խորհրդանշիշն է գերման ազգի Քրիստոնէական խղճի և արդարութեան զգացումի: Նրա անունը յաւերժ արձանագրուած կը մնայ բաներորդ դարի պատմութեան զրժում որպէս բացակորով ախոյեան մարդասիրութեան, որպէս անձնազոհ բարի հովիւ Յիսուսանման և որպէս դրօշ ու որպէս կոչ արդարութեան:

1915-1916 տարիներին էր, երբ Օսմանեան կառավարութիւնը ծրագրեց ու գործադրութեան դրեց բնաշնչումը հայ ազգաբնակչութեան Թուրքիոյ ամրող տարածքի վրայ: Իրենց պատմական հայրենի հողից տեղահան արուեցին ու կոսորուեցին անասելի տառապանցների մէջ աւելի քան մէկ ու կէս միլիոն հայ Քրիստոնէեաններ, քարուեցին հայաբնակ քաղաքներ, գիւղեր, քազմադարեան հայ Եկեղեցական ու մշակութային յուշարձաններ, հրկիզուեցին քազմահազար ձեռագրեր և հայ արուեստի գործեր: Կատարուեց բաներորդ դարի առաջին ցեղասպանութիւնը անմարդակային սառնասրտութեամբ: Այդ տարիներին պատերազմ էր աշխարհում, երբ սուլթանական Թուրքիայի կառավարիչները առիրը գտել էին մեծ ոնքը գործելու, վայելելով լուռ մեղսակցութիւնը դաշնակից Վիլհելմեան Գերմանիայի կառավարութեան:

Այս ողբերգական օրերին էր ահա, որ գտնուեց մի քաջ հովիւ՝ Հայր Իոհաննես կաթոլիկուսը, որ իր արդար ճայնը հնչեցրեց բարձր ու համարձակ ի պաշտպանութիւն նահատակուող մի Քրիստոնեայ ժողովրդի:

Ճշմարիտ է, որ Հայր Լեփսիուսի ճայնը խափանուեց կայսերական շահերի հարուածով, սակայն այդ ճայնը հզօր հնչեց քաղաքակիրք մարդկութեան դատաստանի առաջ և շարունակում է հետզհետէ աւելի հզօր հնչել մեր օրերին իրեն երկինք բարձրացող արդարութեան աղաղակ:

Հայ Եկեղեցին ու համայն հայ ազգը որ ի Սովետական Հայաստան և որ ի սփիւս աշխարհի, երախտապարտ հոգով յիշում են Հայր Լեփսիուսի արդար պայքարը, նրա երապարակած հայանպաստ պատմական զրժերը՝ «Հայաստան և Եվրոպա» 1896-ին և «Գերմանիա և Հայաստան» 1919-ին, խոնարհում են նրա յիշատակի առաջ ու աղօրում, որ նրա բարի հոգին միշտ լուսաւոր մնայ երկնային յաւերժութեան մէջ և այստեղ, երկրի վրայ, մարդկութեան յիշողութեան մէջ:

Հայոց ցեղասպանութեան օրերից անցել են 70 տարիներ, սակայն Հայր Լեփսիուսի բողոքող խօսքը հնչում է այսօր աշխարհով մէկ, առաւել ուժգնութեամբ, առաւել լայն արձագանքով:

Երբեմն ոնիրները միանամանակ մնում են բացուած կամ բողարկուած, սակայն արդարութեան լոյսը կարելի չէ ընդմիշտ խափանել: Արդարութեան լոյսը նեղում է յաւարը, փշում է ստի ու կեղծիքի պատմելը, բանդում ոնիրի բոյնը և յալրական նառագայրում հորիզոնից հորիզոն: «Յանցանել մրրկի, եղ ծանի ամրարիշտն, իսկ արդարոյն խոյս տուեալ՝ կեցցէ յաւիտեան» (Առակ Սողոմ. Ժ 25):

Հայ Եկեղեցին ու նրա ժողովուրդը հայցում են երկինքից ու մարդկանցից, մեր օրերի աշխարհից, ճանաչումը ցեղասպանութեան Եկեղեցական ճշմարտութեան և

արդար հատուցումը՝ հայութեան 1915-ի նահատակութեան: Այս նուիրական նախապարհի վրայ, 1915-ի ողբերգութեան մեծ վկան՝ Հայր Լեփսիուսը, այսօր էլ հանդիսանում է հայ ազգի անհուն վշտի միջիքարիչը ու բաշամարտ պաշտպանը նրա արդար դատի:

Ու այս հանդիսաւոր առիրով Մենք յոյս ենք յայտնում, որ Հայր Լեփսիուսի ձայնը լսելի կը դառնայ նաև բուրք ազգի մերօրեայ սերունդներին, և կը գայ աստուածադիր օրը, երբ նրանք էլ հայերի կողքին կ'աղօթեն մեր նահատակների հոգիների խաղաղութեան համար: Ազնիւ ու աստուածաէր մարդիկ երկրագնդի բոլոր հորիզոններից աղօքելու են ու գործելու, որ յետ այսու աշխարհում ոչ մի տեղ, ոչ մի ազգութեան կեանքում չկրկնուեն նման ողբերգութիւններ, և մեծ ու փոքր ժողովուրդներ ապրեն ու գոյատեն այս երկրագնդի վրա՝ որ բոլորին սննդում է հաւասարապէս, այս արկի տակ՝ որ բոլորին լուսաւորում է հաւասարապէս, Աստուծոյ օրհնութեան ներքև՝ որ բոլորին բաշխուում է հաւասարապէս:

Երանի մարդիկ ու ազգութիւններ լսէին եղբայրացնող այս պատգամը՝ Աստուծոյ, արկի ու մայր հողի:

Երանի մարդիկ ու ազգութիւններ կեամբի կոչէին պատգամը մեծ սաղմութեագուի՝ «Ողորմութիւն և հշմարտութիւն պահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին» (Սաղմ. ԶԴ 11): Ամէն:

ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուակ կուղակս ի 10 Փետրուարի

1986 Փրկչական ամի,

եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԵ

ի մայրավան Սրբոյ էջմիածնի:

Հմբ. 1410»:

Թող հայոց երկնակամարում հավերժեն Յոհաննես Լեփսիուսները, Ֆրիտյոֆ Նանսենները, Ֆրանց Վերֆենները և այլք, որոնք իրենց գրչով ու գործով նպաստամատույց են եղել մեր տառապյալ ու արյունաքամ ժողովրդի խորք վերին դարմանման սուրբ գործին:

ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆ

«ՏԵՆԶԱՅ ՍԱԹԵՆԻԿ»-Ի ԱՌԵՂԾՎԱԾԸ ԵՎՍ ՄԵԿ ՄՈՏԵՑՈՒՄ

Նբե ընթերցողը հիշում է, ապա մեր նախորդ հոդվածն ավարտել էինք Սարբենիկի տենչանք-աղորքի՝ Խորենացու մեջբերման մեր բացատրությամբ՝ հենվելով որոշ խրին բառերի և կապակցությունների գուտ լեզվական բնության վրա /«Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 92-96/: Այստեղ սակայն պետք է բնենք, թե ո՞ւմ էր դիմում Սարբենիկը, և ո՞րն էր այդ դիմումի նպատակը: Սա կարող է բացահայտվել միայն մեկ քանի հաշվի առնելու կամ հստակ պատկերացնելու դեպքում: Խորենացու մեջբերած կտորները ավելի ընդարձակ մի էպիկական ստեղծագործության փշրանքներն են, որ պատմահայրը իրեն հատուկ լրջախոհությամբ և, բող ներվի ասել, «Ժատությամբ» չի հրամցրել ընթերցողին, այլապես մենք այսօր գուցե կունենայինք դասական շրջանի կենդանի խոսի մի փայլուն և ամբողջական նմուշ: Ինչևէ, բավարպենք նրանով, ինչն առկա է, և հետևենք դեպքերի շղթային:

Նախ՝ անկասկած է, որ Խորենացու առասպելախառն կտորների մեծ մասը գուտ տիեզերածնական բնույթ ունի. դա առաջին հերթին վերաբերում է «Երկներ երկին, երկներ երկիր», «Տենչայ Սարբենիկ տիկին», «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ», «Ճաշ գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի», «Դու յորս հեծցիս յագատն ի վեր ի Մասիս» հատվածներին. երկրորդարար այս մոտիվներին են հարում նաև «Հեծաւ արի արքայն Արտաշէս» և «Մինչ դու գնացեր» կտորները: Սա պատմահական չէ, քանի որ յուրաքանչյուր առասպելական ստեղծագործության, այդ բվում և ամենից առաջ հենց էպիկական պոեմի մեջ պետք է որ ընկած լիներ ժամանակագրորեն ավելի հին և այուժեի կառուցվածքով պահի կայտն միջուկը: Ինչպիս իրավացնորեն նկատել է Արքոյանը, վիշապանքը տարրեր և իրար ուղղակիորեն չառնչվող պատմական հիշողությունների, կենցաղային գծերի և բուն առասպելների խառնուրդ է, որոնց մեջ նա, ի դեպ, առանձնացնում է՝ պատմական հիշողություններ Արտաշէս Ա, Բ /գուցե և Արտաշէս Գ/, Հրամիզգ և Տրդաս Ա բագավորների ժամանակից ու արքաներից և առասպելներ՝ 1. բագավորազն Արտավազդի կոփիւր վիշապ Արգավանի և վիշապների դեմ ու նոցա կոտորելը և 2. վիշապ կամ դև Արտավազդի կապվիլը բաշերի ձեռով Մասիս մեջ /Արքոյան, ը, 196-97/:

Վաղուց է նկատվել Օսական Սարբենի /Satana/ և հայկական Սարբենիկի անունների նմանությունը /տե՛ս օրինակ Դ. Լավրով, Заметки об Осетии и осетинах, "Сборник Материалов для описания Местностей и Племен Кавказа", Тифлис, 1883, вып. 3, разд. I; G. Dumézil, "Le Dit de la Princesse Satinik", REA, 1929, pp. 41-53/:

Ամեն դեպքում անունների բացարձակ նույնություն գոյություն չունի. բացի այդ, երկու կերպարների գործողության դաշտը արձանագրում է որոշ

տարբերակված երանգներ սյուժեի զարգացման առումով: Ահա այս տեսանկյունից մոտենալով հայկական վիպասանին, պետք է պնդել, որ ո՞չ Օսական /լայն առումով հյուսիսկովկասյան/, ո՞չ էլ հայկական նյութը չեն կարող բխել միմյանցից: Այստեղ պետք է փնտրել մեկ այլ ընդհանուր աղբյուր, թերևս, սկյուրասարմատական ցեղերի ավանդուրյունները, ըստ որում հյուսիսկովկասյան էպոսի համար աղբյուր է ծառայել բուն սկյուրական նյութը, հայկականի համար՝ մարական միջնորդուրյունը:


Մի քանի տասնամյակ առաջ շվեդացի նշանավոր իրանագետ Վիկանդերը անդրադարձավ «երկնային արքայուրյան» թեմայով ավանդուրյուններին՝ մասնավորապես բնելով իրանական վիպասանը և այն զուգադրելով հունական և փյունիկյան համանման նյութի հետ: Ավելի ուշ Լիրլոնը փորձեց դրանք համադրել սկանդինավյան, խուռա-խերական և քարելական էպիկական ասերի հետ: Եթե Վիկանդերը այն զուտ հնդեվրոպական թեմա էր դիտում, ապա Լիրլոնը փորձում է հաստատել, որ վերջինս մեծապես կրել է քարելական և հին առաջավորասիրական առասպելների ազդեցուրյունը: Բայց, դժբախտաբար, հայկական և օսական փաստերը այդ ուսումնասիրուրյուններում բնակ տեղ չեն գտել, իսկ դա անտարակույս անհրաժեշտ է, քանի որ դրանք ընդհանուր առասպելածիսական և հին մշակուրաքանական համատեսատից դուրս քուննելը կարող է հանգեցնել թերթմրոնումների և աղճատված մեկնարանուրյունների:

Ահավասիկ, համառոտ ներկայացնենք այդ ընդհանրական սյուժեն. առաջին սերնդի երկնային աստվածուրյունը ամուսնանում է երկրային դիցուհու հետ և ունենում երկրորդ սերնդի ներկայացուցչին, որը սակայն բնավորուրյամբ շատ հակասական և իշխանատենչ է, որպիսաւ մի կողմից վնասում է իր նախորդին /զրկում է հորը առնական ուժից/, մյուս կողմից կործանում է իր ժառանգներին և փորձում ինքն իրեն օժտել հավերժական իշխանուրյամբ: Բայց նակատագրի կամքով փրկվում է զավակներից կրտսերը, որն էլ վրեժ է լուծում և՝ հորից, և՝ նրա կողմից արարված հրեշավոր ուժից:

Արդ, եթե փորձենք վերականգնել իշխանուրյան ժառանգման՝ սերնդե-սերունդ անցնելու հաջորդական սխեման օսական էպոսի հիման վրա, ապա պետք է Ուրիշմագի մեջ տեսնել երկրորդ սերնդի հերոսին, որ «զրկում է» պապին՝ Ուարիսագին /այլ ավանդուրյուններում այդ դերը հատկացված է հորը/ «առնական ուժից», մյուս կողմից՝ պահնում որդուն /անանուն որդի/: Ուարիսագը Սարենից ունենում է Սոսլան դյուցազնին, որ դառնում է Ուրիշմագի խորը որդին և իր ծննդով վերադառնում է պապի՝ Ուարիսագի առնական ուժը և տեսդուրյունը:

Հարց կարող է ծագել, թե ինչո՞ւ ենք Ուարիսագին վերագրում Սոսլանի հոր դերը, այն դեպքում, եթե էպոսում այդպիսի ակնարկ չկա: Այդպիսի հետևուրյան ենք հանգում, որպիսաւ «ինչպես ծնվեց Սարենը» գլխի մի պատումի մեջ Սոսլան-Սողրիկոն փոխարինում է Ուարիսագ-Ասիրա /Սասանա/ զույգից ծնված Սուրացի հերոսին: Սա ինքնին ենթադրում է Ուարիսագ-Սարեն և սրանցից ծնված Սոսլան-Սողրիկոն կերպարային համապատասխանուրյան մասին:

Այսպիսով, առաջին սերունդը մարմնավորում է Ուարիսագը, երկրորդ սերունդը՝ Ուրիշմագը, երրորդ սերունդը՝ Բատրազը.



Վերադառնանք Սարբենիկի «ՏԵԽԱՆԲԺԻՆ» և տեսնենք, թե ինչ զուգահեռներ են առկա: Այդ նպատակով արժե համառոտ Եերկայացնել գլխավոր հերոսներից մեկի՝ Ուրիզմագի /հայէկ, վիպասանեռում՝ Արտաշես/ հետ կապված հիմնական մոտիվները. խորք քրոջ՝ Սարբենը հետ ամուսնանալուց հետո, նա միայնակ է քողմում նրան և ձեռնարկում արշավի: Սարբենը հղիանում է և, մինչև ամուսնու վերադարձը, ծնում մի որդի և հանձնում Դոնքետիրների՝ ջրային ոգիների խնամքին, բայց, դժբախտ պատահականությամբ, վերադարձի նանապարհին Ուրիզմագը հայտնվում է վերջիններիս մոտ և նակատագրի հեգնանեռով պատճառ դառնում իր անանուն որդու մահվան /այս պատումի որոշակի մի մասը շատ է նմանվում հայկական «Կիկոսի մահը» պատմությանը/: Եվ այսուղ նարտական հերոսներից մեկը՝ Սառւագը, որի հետ նակատագրիրը նույնպիսի, նույնիսկ ավելի չար մի խաղ էր խաղացել՝ իր խսկ ձեռքով սպանել տվել միանգամից յոր որդիներին, խորհուրդ է տալիս Ուրիզմագին շատ չվշտանալ և աղաչել Աստծուն, որ նա մի օր իրեն պարզմի անմահ և հավերժական կյանքով օժտված զավակ: Ավելի ուշ հայտնվում է այդ զավակը՝ Ուրիզմագի խորք որդին՝ Սոսլանը /հայկական վիպասանեռում՝ Արտավազդ/, արևային հերոսի մարմնավորումը:

Ժուլմեզիլը թեև անցողակի նշում է «Արգաւանայ նաշ գործեալ» հատվածի և նարտական էպոսի «Խնչույքի» էպիգորի զուգադիպման մասին /Հ. Դյոմեզիլ, Օсетинский Эпос и Мифология, с. 55/. սակայն համոզված չէ վերջնականապես, թե դա կարող է լինել փոխազդեցության հետևանք՝ գտնելով, որ այդ ծուղակ-խնչույքի թեման ընդհանուր տարածում ունի և կարող է լինել պատահականություն: Այդպիսի մոտեցումը բնական կարելի է համարել, քանի որ Դյուլմեզիլին անհայտ էր «ՏԵԽԱՆՅԱ Սարբենիկ տիկին...»-ի բովանդակային կողմը, մասնավորապես զարտախոյր խաւարտ և զտից խաւարծի կապակցությունների բուն խմասոր, այլապես հազիկ թե նրա պես մեծ մտածողը զանց առներ և մինչև վերջ չմեկնարաներ իր խսկ մատնանշած զուգահեռը: Այսպիսով, ինչ ենք մենք եզրակացնում. այն, որ «ՏԵԽԱՆՅԱ Սարբենիկ տիկին» հատվածը «Արգաւանայ նաշ գործեալ»-ի անմիշական շարունակությունն է: Ուստի անտրամարանական կլիներ, եթե այս դրվագը բացակայեր նարտական էպոսում. և իրոք այն գտնում ենք էպոսի «Խնչպես էին նարտերը ուզում արքեցնել Ուրիզմագին» գլխում, ըստ որում Ուրիզմագին փրկող հերոսը տարրեր պատումներում լինում է կամ Քատրագը, կամ Սոսլանը, կամ երկուսն էլ միասին: Եթե Սոսլանը անհծված հերոսի մարմնավորումն է, ապա Քատրագը՝ փրկչի և երկնային հոր կողմից զոհաբերվող որդու մարմնավորումը: Խսկ թե ով է սրանցից իրականում փրկում

Ուրիգմագին և կոտորում նարտերին՝ վիճարկելի է, թեև պետք է նկատել, որ Սարենը դիմում է Աստծուն և խնդրում, որ ուղարկի երկնային որդուն. եթե հավատանք Սարենի աղորքի մեջ հնչող "Եօց բօց սուրու չուծ. օտքան..." և այլն, ապա դա Բատրազն է, ինչպես և հաստատում է հայկական վիպասանքը /արտախոյր, քայլ ոչ Արտաւազդ/:

Օսական էպոսում Ուրիգմագի նկատմամբ Սարենի ունեցած հավատարմությունը կարծես թե սահմաններ չունի: Ամեն անգամ, երբ ամուսինը հայտնվում է ծանր կացության մեջ, ինարագետ Սարենը գտնում է ելքը և խորհուրդներ տալիս նրան: Ահա այդպիսի դրվագներից մեկն էլ ծեր Ուրիգմագին խնջույքի հրավիրելու հատվածն է, որի մոտիվը հետևյալն է. մի հին սովորույթի համաձայն, զառամյալ ծերունիներին, որոնք խուսափել են երիտասարդ հասակում ասպետական մահով իրենց մահկանացուն կնքելուց, ինչ-որ ինարենով կամ վերջ էլին տալիս նրանց կյանքին, կամ ծաղր ու ծանակի ենթակում մինչև մահ /տե՛ս Ժ. Դյոմեզիլ, Սկիֆի և Հարդы, Մոսկվա, 1990, XIX, ս. 199-204/:

Ահավասիկ, էպոսի այդ հատվածը. "Бората пригласили Оразмага на пир, и сказала ему Ахсина (կարդա' Сатана):

- Хотят тебя умертвить, и, когда поднесут тебе первую чашу, ты помолись и выпей ее. Вторую поднесут тебе как старшему среди нартов в ней будет яд, и ты выпей ее в трубку. Надень свою большую шубу, сам садись на шерстяные тюфяки, и тогда вся жидкость будет стекать в них" ("Нарты", с. 89).

Նարտական ավանդապատումներում սյուժեն ծավալվում է այսպես. Ուրիգմագը կատարում է Սարենի իրահանգները, քայլ նենց Սիրդոնի մատնությամբ վերջապես ընկնում է ծուղակը և չի կարողանում իրամարգել պարտադրվող գավաքներից: Հետո Սարենը, նարը կտրած, դիմում է Աստծուն. Օ բօց բօց! Դай эту силу, чтобы наше молодой человек, который теперь находится на небе, между твоими чистыми ангелами, был между нартовским собранием на хадзаре алагата теперь же и чтобы он избавил нашего старика от постыдной смерти ("Нарты" Осетинский Эпос, Москва, 1989, с. 240):

Մի պատումի մեջ "Сатана... пошла на Молитвенный холм, медовыми лепешками..." (տե՛ս "Нарты", 1991, III, с. 64): Արդ. ի բարձից Արգաւանայ կապակցությունը, առասպելական նյութը ներգրավելուց հետո, կարելի է մեկնարանել երկու կերպ. կամ այն, որ Սարենիկն է այդ անունը կրող աղորքի լեռան վրա կանգնած տենչում դրանց հայտնվելը. կամ եթե առկա է այլարանություն, ապա այն տեղը, որտեղից ակնկալում է Բատրազ-Արտախոյր-ի «ծնունդ-վերաբարտադրություն»: Այս առումով կարևորություն է ստանում Բատրազի առասպելական ծնունդը. Սարենը աշտարակի 7-րդ հարկում տեղադրում է պողպատե սուրբ, իսկ ներքեւում ջրով լի յոր կարսա: Հոր՝ Խամիցի մեջի վրայից պոկվելով, Բատրազն արագ բափով, երբ գնդի նման, ընկնում է ցած և, հերթով հայտնվելով կարսաներից յորաքանչյուրում, միայն յորերորդից դուրս գալուց հետո է պարպած լինում իր «մոլուցք» և «բողեղն էուրյունը»:

Բացի այդ, բարձր Արգաւանայ-ը իրացվում է ծխական մակարդակում՝ այն արհեստական լեռան ձևով, որ նարտերը պարտավոր էին «կառուցել» ամեն տարի՝ Բատրազի խորհրդանշական զենքը՝ սուրբ, որտ գագարին տեղադրելու

նապատակով, և որի մոտ հին ժամանակներում գերիների հոծ խմբեր էին զոհաբերվում՝ դրանով իսկ նմանակելով Բատրագի կողմից նարտերի կոտորամբ:

Եթե Սոսլանը (այլ պատումներում՝ Բատրագը) փրկում է Ուրիգմագին խայտառակ մահից և վերադառնում տուն, Սարենը հարցնում է նրան, թե որպես ի՞նչ է ընդունելու Սոսլանին, որ մինչ այդ քանտված էր ստորերկրյա տանը, նա պատախանում է. "Մու օհ ուշեն ուս ուսի, եթի ու մենա ուս ուրա ու անուրա". Այդ պատախանը լսելուց հետո, Սարենը ստորերկրյա տնից դուրս է բերում Սոսլանին և պատմում, թե ինչպես է նա ծնել հրաշածին մանկանը ու անվանակոչել Սոս քարի անունով: Ուշագրավ է այն, որ այս փրկչական առաքելուրյունը Բատրագին վերագրող իրոնյան քարքառով ավանդված պատումներում հոր և որդու փոխադարձ ծանրության, ինչպես նաև Ուրիգմագի կողմից նրան որդեգրելու մոտիվը բացակայում է: Սա մեկ անգամ ևս շեշտում է Սոսլան-Արուազգի համապատասխանության մասին, իսկ Արտախույրին պետք է փնտրել Բատրագի կերպարի մեջ:

Ավելորդ չէ, կարծում ենք, որոշ չափով ուրվագծել Բատրագի կերպարը՝ ակնկալելով, որ հետագայում գուցե ի հայտ գան Արտախույրի նմանօրինակ կերպավորման փաստեր, եթե ոչ հայկական մատենագրության մեջ, ապա գոնե իրանական ավանդույթում:

Բատրագն ինքը շատ շուտ որբանում է՝ չունենալով ի ծնե մայր, իսկ շատ շանցած՝ նաև հայր. մնում է Սարենի հովանակորության տակ և դառնում նրան հավատարիմ մեկը, սիալ չի լինի ասել՝ խորք որդին՝ Սոսլանի կրտսեր եղայրը: Հյուսիսկովկասյան ժողովրդական մի սովորույթի համաձայն, որք, անձնող մնացած տղաներին նվիրաբերում էին դարբնին: Այդ սովորույթն իր հաստատումն է գոնում նաև էպոսում՝ Բատրագի առնչությամբ:

Հստ որոշ հավատալիքային պատկերացումների, սրբազն կրակի (օչախ) պահապանը վերջինիս շուրջ գալարված օճն է (հունական առասպելներում կենաց ծառի պահապանը վիշապն է. հեղիրանական դիցարանության մեջ՝ Vitra-Վիշապը, որ պահպանում է Իտա-Ը): Արարչությանն անմիջականորեն նախորդող մենամարտում կայծակ-որոտի աստվածությունը կամ ամպրոպային հերոսը փորձում է վերանվանել Իտա-Ը (ինչպես, օրինակ, հեղիկական վեդաներում՝ Ինդրան, որ հաղթանակից հետո ստանում է Visvakarma (սողդ. Vispakar - հայ. Վիշապաքան) «արարիչ» մականունը: Արդ, մենամարտը ինքնանպատակ չէ. քուն դրդապատճառը արարչությունն է, թեև չպետք է մոռանալ, որ գոյություն ունի երրորդ և եզրափակող գործողությունը, որն է՝ կատարածարանությունը, որի շարժիքը թերևս պետք է որոնել երդմնազանցության մեջ. լինի դա դյուցազուների տոհմը, թե սովորական մահկանացուների համայնքը, միևնույն է, վերջիվերջո այն արժանանում է երկնային պատժին: Առասպելական հերոսների վերաբարդությունը կամ նորոգումը վիճակված է նույն պատումներում գլխավոր աստծու՝ տվյալ ֆունկցիան իրականացնող կերպարին (ասենք, Օսական էպոսում դա Kurdalægon - Ը է, արխազական ավանդության մեջ՝ Tleps - ը, նորվեգական ավանդության մեջ՝ Aslak - ը և այլն): Եվ ամեն անգամ արարչական որոշակի կոփում դարբնի կողմից:

ՔԵՆԱՐԻԿ ՏԵՐ-ԴԱՎԹԱՍԻ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ԹՈՎՄԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՍԻ ՀԵՏՔԵՐԸ ՀԱՅ ՄԻՋԱՊԱՐՅԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻՒՄ

Դայ միջնադարյան թարգմանական արձակում բավական պատկառելի տեղ են գրավում Դին և Նոր Կոտակարանների պարականոն կամ անկանոն գրքերը: Վ դարում և հետագայում հյայերեն թարգմանված այդ երկերը առաջին անգամ միջազգային ճանաչում ստացան XIX դարի վերջերին, հատկապես Սկրտիչ Էմինի կողմից հավաքված, ապա և ոռուերեն թարգմանված պարականոնների¹, նաև հենց Էմինի հիշատակին նվիրված միշտարյանների «Թանգարան հայոց հին և նոր դպրութեանց» երեք հատորների շնորհիվ, որոնք լույս տեսան 1896, 1897 և 1904 թվականներին²:

Այս վերջիններում ներկայացվեց ծեռագրերում պահպանված պարականոնների հարուստ ժառանգությունը, ինչը և սկիզբ դրեց նրանց գիտական ուսումնասիրությանը:

Մի առանձին ճյուղ է կազմում այդ ուսումնասիրությունների շարքում պարականոնների ազդեցության հարցը հայ միջնադարյան գրականության վրա, ինչպես և նրանցից ժողովրդական ստեղծագործություն անցած առանձին փոքրիկ գրույցների, ավանդույթների տեղայնացման հարցը: Այդ բնագավառում ուշադրության է արժանի Ա. Ղանալանյանի կատարած աշխատանքը: Տարբեր ծեռագրերից և հրատարակություններից նա հավաքեց Դին և Նոր Կոտակարանային պարականոն գրույցները: Դասելով դրանք եկամուտ գրույցների շարքը, նա միաժամանակ նշեց, որ հայկական պարականոն ավանդությունների մեջ կան և այնպիսիք, որոնց գործահեռները բացակայում են մեզ հայտնի տպագիր և ծեռագիր պարականոն գրքերի մեջ³:

Դայտնի է, որ տարբեր աղանդավորական շարժումների դեմ մղված պայքարում ոչնչացվել է նաև նրանց գաղափարախոսությունն արտահայտող

¹ Տե՛ս Էմին Հ. Օ., "К вопросу о собрании армянских апокрифов", հետևյալ հրատ. մեջ. "Переводы и статьи Հ. Օ. Էմինа по духовно́й армянско́й лите́рату́ре". Москва, 1897, с. 336-338. նույն տեղում տե՛ս հայկական պարականոնների ցուցակը. "Список армянских апокрифов, составленный по каталогу рукописей Эчмиадзинского библиотеки, изданному в 1863 году в Тифлисе", էջ 339-344:

² Տե՛ս 1. Թանգարան հին և նոր նախնեաց. Ա.- Անկանոն գիրք Դին Կոտակարանաց. Դրատարակիչ՝ Սարգսի Հովսեփյան: Վենետիկ, 1896: 2. Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց. Բ.- Անկանոն գիրք Նոր Կոտակարանաց: Դրատարակիչ՝ Եսայի Տայեցի: Վենետիկ, 1897: 3. Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց. Գ.- Անկանոն գիրք առաքելական: Դրատարակիչ՝ Թեր. Չրաբրյան: Վենետիկ, 1904:

³ Տե՛ս Ղանալանյան Ա., Ավանդապատում: Երևան, 1969: Առաջարան, էջ 629-67:

գրականությունը, այդ թվում և պարակրների մեջ մասը⁴: Սակայն անժխտելի է նաև այն փաստը, որ այդ գրականությունը, մասնավորապես պարականոն երկերը, հայ հասարակության որոշ շրջաններում գործածության մեջ են եղել և, անշուշտ, պետք է որ ազդեցություն բողած լինեին հայ միջնադարյան գրականության վրա: Դա հատկապես վերաբերում էր ժողովորական ակունքներ ունեցող, լայն զանգվածների ճաշակին և պատկերացումներին հարազատ վիպական արձակին, զրուցատիպ գրականությանը: Այդ կարգի գրականություն էր նաև ժողովորի կողմից շատ սիրված Մարիամ Աստվածածնին և Հիսուսին վերաբերող պարականոն ավետարանական զրուցները:

Սամվել Անեցու, Մխիթար Այրիվանեցու ցուցակներում, ապա Սարգիս Շնորհալու երկերում հիշատակվում են երկու նոր-ավետարանական պարականոններ, որոնք 591 թվականից առաջ Հայաստան բերվեցին նեստորականների կողմից և թարգմանվեցին հայերեն: Անեցին նշում է՝ «Աստուածածնի պատմութիւն»-ը և «Մանկութիւն Տեառն» երկերը, Մխիթար Այրիվանեցին և Սարգիս Շնորհալին՝ «Մանկութիւն Տեառն» և «Աւետարան Թովմայի» երկերը⁵: Ասել է, հայ մատենագիրների կողմից վկայված պարականոնները պատկանում են այն գրականությանը, որը գիտական շրջանակներում ստուգել է մի ընդհանուր անվանում՝ «Տղայութեան Աւետարան» (Paidika)⁶: Բազմաթիվ այդ տիպի Ավետարանների մեջ առավել արժեքավոր են համարվում հունարեն, ասորերեն, լատիներեն և այլ լեզուներով հայտնի «Խախաւատարան Յակոբյ» (Protevangelium Jakobi) և «Պատմութիւն Թովմայի» (Narratio Thome) երկերը, որոնք ստեղծվել են I դարի վերջում կամ II դարի սկզբում տարածված ավանդությունների հիման վրա և վերաբերում էին քրիստոնեական կրոնի սկզբնավորմանը: Նրանք հիմք հանդիսացան մնացած բոլոր Տղայության Ավետարանների համար, թարգմանվեցին նաև արաբերեն, պարսկերեն և այլ լեզուների՝ գոյատելով մինչև ուշ միջնադարը⁷:

⁴ Այսպես, Երվանդ Տեր-Մինասյանը ցույց է տալիս, որ նեստորականության դեմ պայքարը Հայաստանում ավարտվեց հաղթանակով արդեն VII դարի վերջերին: Ոչնչացվեց նաև նեստորականության և աղանդավորության կնիքը կրող գրականությունը, չհաշված առանձին հաստակությունների, որոնք փրկվեցին (տես Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից: Երևան, 1968, էջ 146): Իսկ Մեսրոպ Տեր-Մովսեսյանը մատնանշում է, որ Սամվել Անեցու և Մխիթար Այրիվանեցու ցուցակներում հիշատակված 10 անկանոն գրքերից հայ մատենագրության մեջ պահպանվել են միայն երկուսը՝ «Աղամի ապաշխարութիւնը» և «Մանկութիւն Տեառն», «Իսկ մնացյալները ոչ միայն հայ մատենագրությանը, այլ ընդհանրապես հայտնի չեն» (Տեր-Մօվսեսյան Մ., Իստորիա ու թարգմանություններ. 1902, ս. 251):

⁵ Տես Անասյան Յ., Հայկական մատենագիտություն. հ. Ա: Երևան, 1959, էջ XXI-XXIII, նաև հ. Բ, Երևան, 1976, էջ 948-949:

⁶ Տես A. Meher. Erzählung des Thomas hetsiljajl հրատարակության մեջ. E. Hennecke. Neutestamentliche Apokryphen in Verbindung mit Fachgelehrten in deutschen Übersetzung und mit Einleitungen herausgegeben von Edgar Hennecke. Tübingen und Leipzig, 1904, s. 63.

⁷ Տես Զարրհանալեան Գ., Սատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1883, էջ 193-199, նաև Evangelium Thome hetsiljajl հրատ. մեջ. Realencyklopädie für protestantische Theologie und Kirche. Leipzig, 1896, s. 657.

Նախավետարանը կամ «Գիրք Տղայութեան Քրիստոսի» անվանք հայտնի և Տեառներորդ Յակոբին վերագրվող Ավետարանը պահպանվել է նաև հայերեն թարգմանությամբ: Այն այլ ծեռագրական պարականոն նյութերի հետ երկու խմբագրությամբ կրատարակեց Եսայի Տայեցին⁸: Ուստինասիրողների կարծիքով (Զարբիանայան, Մար) հայկական թարգմանությունը շատ է տարբերվում Արևնուտքում տարածված նույն Ավետարանից և, ըստ երևույթին, սերում է ասորական կամ պարսկական բնագեղից⁹:

Սակայն հայկական ծեռագրերում չի պահպանվել կամ մինչ այժմ չի հայտնաբերվել Թովմայի Ավետարանը, որի լրիվ անվանումն է «Խրայելացի փիլիսոփա Թովմայի Պատմությունը Քրիստոսի մանկության մասին»¹⁰: Որ այն կարող էր ոչնչացված լինել Դայաստանում, շատ հավանական է: Նրանում առավել ցայտուն է ի հայտ գալիս մանիքեականների, նեստորականների և սրբաց հաջորդած աղանդավորականների կողմից որդեգրված գնուստիկյան գաղափարախոսությունը, նաևնավորապես, *Docetism*-ը, այսինքն՝ Քրիստոսի Երեսութականության և նրա աստվածային բնության վերաբերյալ ուսմունքը, նրա մարմնավորման փաստի ժխտումը: Դասուած իր հրաշագործություններով և իմաստությամբ, որոնք արտահայտություն են գտնում արդեն մանուկ

⁸ Տե՛ս Թանգարան հայկական իին և նոր դպրութեանց. Բ.-Անկանոն գիրը Նոր Կոտակարանաց, էջ 1-126, էջ 127-235, նաև Mapp H. Из лемней о поездке в Армению. Заметки и извлечения из армянских рукописей, ч. II (Омд. оттиск из "Записок из Вост. Омд. Импер. Рус. Археол. Общества". Том VI, с. 135-228): Ա. Սաղը ծեռագրեից քաղված նյութերով լրացրել է Եսայի Տայեցու ծեռագրում բացակայող Տեառներոր Ավետարանի 6 պատճությունները:

⁹ Տես Զարդիհանալիւեան Գ, Մատենադարան հայկական բարզմանութեանց, էջ 192. Mapp H. Из лепней поездки в Армению (Отд. оттиск из "Записок...", V, с. 212).

10 Թօվզայի Ավետարանի հնագույն բնագրերը՝ երկու հունական (Ընդարձակ և համառոտ) և մեկ լատիներեն հրատարակեց Տիշենդորֆը (տեսն Evangelia Apcorypha ... edidit Constantinus Tischendorf, hipsiae, Avenarius et Mendelsohn, 1835): Ընդարձակն ունի 19 գլուխ և ընդգրկում է Յիսոսի 5-12 տարեկան հասակում կատարած հրաշագործությունների պատմությունները, համառոտը 11 գլուխ, Յիսոսի 5-ից 8 տարեկանը և լատիներենը՝ մինչև Յիսոսի 8 տարեկանը և պարունակում է 15 գլուխ (տեսն նաև Evangelium Thomaе հետևյալ հրատարակության մեջ. Realencyklopädie für protestantische Theologie und Kirche, s. 657).

հասակում, ապացուցում է, որ ինքը չի պատկանում այս աշխարհին¹¹: Այս բնույթն ունեն նաև Հիսուսի Տղայությանը նվիրված Ավետարանները: Սակայն Թովմայի Ավետարանն ունի ևս մի առանձնահատկություն. այն տարրերվում է մնացած բոլորից Հիսուսի կերպարի կերտման ռեալիստական բնույթով: Մանուկ Քրիստոսի բնակորությունը աչքի է ընկնում արտակարգ խստությամբ և դաժանությամբ: Նա մերձավորի հանդեպ սեր չի քարոզում և հրաշագործ բարերարի դերում հանդես չի գալիս, այլ ներկայանում է որպես մի տղա, որն իրեն շրջապատող երեխաների հանդեպ ոչ միայն խիստ է, այլ հաճախ նաև դաժան: Օժոված լինելով երկնային ուժով, նա այդ ուժը գործադրում է պատմելու համար բոլոր նրանց, ովքեր չեն ընդունում նրա աստվածությունը: Զրույցներից մեկում պատմվում է մի երեխայի մասին, որին հինգ տարեկան Հիսուսը չորացնում է այն բանի համար, որ նա բաց էր բողել իր կողմից փոսում հավաքած ջուրը¹²: Մեկ ուրիշում, թե ինչպես, երբ յոթ տարեկան Հիսուսը անցնում էր գյուղով, մի տղա ետևից վագելիս, հրում է նրան: Հիսուսը՝ դառնալով երեխային, անհօրում է սրան՝ ասելով. «Դու քո ճանապարհի վերջին չես հասնի»: Երեխան տապալվում է գետնին և մահանում: Չովսեփի և Մարիամի մոտ բողոքով եկած երեխայի ծնողները կուրացվում են Հիսուսի կողմից¹³:

Հիսուսի այդ նկարագիրը շատ հեռու է կանոնական և նույնիսկ պարականուներում ներկայացված Քրիստոսից, և պարզ է, որ չէր կարող լայն տարածում ունենալ¹⁴:

Սաեւ նաև, որ Թովմայի Ավետարանը և «Գիրք Տղայութեան Քրիստոսի» առնչվում են միմյանց հետ¹⁵, և առաջինի գրույցների հայ բանահյուսության թափանցման ճանապարհներից մեկն է եղել և Տղայության կամ Սանկության Ավետարանը: Այս վերջինի հայերեն բարգմանության 28 գլուխներից առաջին 15-ը նվիրված են Մարիամի ծննդյան և մանկության, ապա Հիսուսի ծննդյան պատմություններին, իսկ 16-րդ գլուխ՝ Հիսուսի մանկությանը՝ մինչև 18 տարեկան հասակը կատարած հրաշագործությունների պատմություններին: Եվ այս մասում հանդիպում են մի շարք գրույցներ, առնվազն 5-6, որոնց գուգահեռները կան նաև Թովմայի Ավետարանում:

Այդ գրույցներից երկուսը՝ Հիսուսը հյուսն և Հիսուսը ներկարար, անցել են նաև հայկական գրույցների մեջ¹⁶: Համեմատելով այդ պարականուների

¹¹ Տե՛ս Երվանդ Տեր-Մինասյան, Մինահայրան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Գ. Գնոստիկականություն, էջ 17-21, նաև Եզնիկ Ծ. Վարդապետ, Պայտարանություն, Ա, էջ 234, 242-244, Ս. Էջմիածին, 1996:

¹² Տե՛ս «Առօրիփի գրեթեա հրամանական» գրքում, գրույց III, էջ 142:

¹³ Տե՛ս անդ, գրույցներ IV, V, էջ 142-143:

¹⁴ Ուստի հանրածանաչ գիտնական Ս. Ս. Սպերանսկին Թովմայի Ավետարանում Հիսուսի կերպարի այդ դաժան նկարագրով է բացատրում այն փաստը, որ հիշյալ Ավետարանը, ի տարրերություն այլ պարականուների, շատ հազվադեպ է հանդիպում (տե՛ս Պահսին Ա. Ի., Իստորիա ռուսկու լուսաբանություն, մ. I, Սանկտ-Պետերբուրգ, 1902, էջ 421):

¹⁵ Տե՛ս Զարքիանալեան Գ., Մատենադարան հայկական բարգմանութեանց, էջ 193:

¹⁶ Յննու. Ես. Տայեցու հրատ. Գիրք տղայութեան Քրիստոսի (Թանգարանի հ. Բ.), գլ. Ի. Ի.Ա., «Առօրիփի...», Եվանգելիս ձեռցւա, գրույց XIII, Հիսուսը հյուսն, նաև «Henecke Neutestamentliche Apokryphen...», գրույց XIII, «Առօրիփ»-ներում բացակայում է Երեկարարի մասին գրույցը: 801-ի 6, 7, ապա 3, 4, 5 գրույցների հետ:

համապատասխան գրույցները Ավանդապատումում հրատարակվածների հետ, զալիս ենք այն եղբակացության, որ նրանց համար աղբյուր է ծառայել Դակորի Գիրք Տղայության գրույցների խմբագրությունը:

Սակայն հայկական գրույցներում թեև շատ սակավ, ըստ մեզ, հանդիպում են նաև Թովմայի Ավետարանից հայ բանահյուսության անցած և տեղայնացած գրույցներ: Դրանք երկու տիպի են. 1) այնպիսիները, որոնք վերաբերում են անձիշապես Դիսուսին, և 2) ուր Դիսուսի մասին գրույցը վերագրվել է հայ ականավոր անձնավորությանը:

Դիսուսի կերպարը ընդօրինակման աղբյուր է հանդիսացել և հերոսին սրբացնելու միջոց հատկապես վարքա-վկայաբանական գրականության մեջ: Եվ դա առաջին հերթին կապվում է Գրիգոր Նարեկացու վարքի հետ, նրա անձի շուրջ ստեղծվել են բազմաթիվ գրույցներ:

Նարեկացու վարքը, ինչպես և գրույցները մանրազնին և լուրջ քննության է ենթարկել Նարեկացիագետ Պողոս Խաչատրյանը: Լրացնելով Ղանալանյանի՝ Նարեկացուն վերաբերող գրույցների հավաքածուն, նա ցույց տվեց, որ արդեն XIII դարում կար Նարեկացուն նվիրված հրաշապատումների գրանցված մի շարք¹⁷: Ահա այդ գրույցների մեծ մասում գերբնական ուժով օժտված Նարեկացին, քրիստոնի նմանությամբ, մեկ հանդես է զալիս հովվի, մեկ՝ պարտիզապանի դերում: Շատ բան այստեղ գալիս է կանոնական Ավետարաններից կամ Ուղղափառ Եկեղեցու կողմից ընդունված պարականներից, սակայն կան մի երկու գրույց, որոնք, ինչպես ասացինք, կրում են իրենց վրա Թովմայի Ավետարանի գրույցների կնիքը:

Կանգ առնենք հատկապես մեկի վրա: Մենք ի նկատի ունենք Գրիգոր Նարեկացու կողմից աղավանների կենդանացման մասին գրույցը, որն անցել է նաև նրա վարքի Ծերենցյան խմբագրության մեջ:

Զրույցի սկզբում ասվում է, որ Նարեկացին ջանքեր էր գործադրում ծովություն և մարմնասեր առաջնորդների կողմից անփութության մատնված Սուրբ Եկեղեցու կարգերը հաստատել և վերասին նորոգել: Այդ պատճառով նրան հայհյում էին բիրտ և սուպո մարդիկ և համբավում էին ծայր, այսինքն՝ աղանդավոր: Ապա եպիսկոպոսները և իշխանները, ազատների և տանուտերի հետ, հավաքվում են և, ինչպես ասվում է գրույցում «յեղալ կոչեցին զնա առ ի դատել և յանդիմանել հրապարակաւ և աքսորել զնա պատուհասիւ որպես գիտերծուածօն: Եւ Եկեղալ առ սուրբն հրաւիրեալըն, զի տարցեն զնա: Իսկ սուրբն գիտացեալ գիտորդու նոցա, կամեցաւ յանդիմանել զանմտութիւն նոցա: Ասաց.

— Նախ կերիցուք հաց և ապա զնասցուք:

Եւ ետ տապակել երկու աղանձիս: Եւ բերեալ եղ առաջի նոցա սեղան, որպես զի կերիցեն: Եւ օրն այն ուրբաթ էր: Ընդ որ ևս առաւել գայթակղեցան հրաւիրեալըն և ասեն.

— Ո՞չ է օրս ուրբաթ:

Եւ նա, իբրև յանդէտս եղեալ, ասաց.

— Թողութիւն արարե, եղբարք. ես ոչ գիտացի, թէ պահս է օրս այս:

Յայնժամ ասէ ցտապակեալ աղանձիս.

¹⁷ Տե՛ս Խաչատրյան Դ., Նարեկացին և հայ միջնադարը. Բանասիր. գիտ. դոկտ. գիտ. աստիճանի հայցնան ատենախոսության Սեղմագիր: Երևան, 1993, էջ 20-22:

— Արիք գնացէք ի տեղիս ծեր և յերամս զի պահս է օրս այս:

Եւ նոյն ժաման ընդ ասել սրբոյն կենդանացան աղաւնիքն և թևս առեալ թիեան առաջի ամենեցուն: Եւ տեսեալ զգարմանալի սքանչելիսն, որ եղեն; ապուշ մնացին. և յարուցեալ անկան յոտս նորա և երկիրպագին և թողութիւն անձանց հայցին և Աստուծոյ փառս տային: Եւ գնացեալ պատմեցին զիրաշն, որ եղև, և նորա լուցին ի շար խորիրդոցն և անուանեցին զնա երկրորդ Լուսաւորիչ և երկրորդ Սքանչելագործ»¹⁸:

Այժմ բերենք Թովմայի Ավետարանի երկրորդ գրույցը:

«Երբ Յիսուս մանուկը իինք տարեկան էր, նա խաղում էր առվակի ծանծաղուտի մոտ և ջրափոսի մեջ էր հավաքում ջուրը: Իր մի խոսքով նա դարձրեց այն զուլալ: Եվ փափկացրեց կավը ու ծեփեց 12 ճնճղուկ: Եվ շաբաթ օր էր, երբ նա արեց: Այնտեղ կային շատ երեխաներ, որոնք խաղում էին նրա հետ:

Բայց երբ ինչ-որ երրայեցի տեսավ, թե ինչ է անում խաղալով Յիսուսը, նա անմիջապես գնաց նրա հոր՝ Հովսեփի մոտ և ասաց.

— Նայիր, քո որդին ծանծաղուտում է և պղծեց շաբաթ օրը:

Երբ Հովսեփը գնաց այսուեղ և տեսավ (Յիսուսին), նա բռավեց.

— Ինչո՞ւ ես անում շաբաթ օրն այն, ինչը չպետք է անես:

Իսկ Յիսուսը՝ ափն ափին խփեց և դիմեց ճնճղուկներին.

— Թու՞ք:

Եվ ճնճղուկները ճլվալով թռան-գնացին:

Երրայեցիները զարմացան տեսնելով այդ, գնացին ու պատմեցին ավագներին, որ տեսան, թե ինչպես Յիսուսը կատարեց իր ասածը»¹⁹.

Ինչպես տեսնում ենք, և Յիսուսը, և Նարեկացին կենդանացնում են թռչուններին: Մեկը ծեփում է ճնճղուկներ հրեաների հանգստյան շաբաթ օրը, մյուսը աղավնիներ է տապակում ուրբաթ՝ հայերի պասի օրը, և ցանկանում հյուրասիրել իրեն այցելության եկամտներին: Երկուսն էլ անբույլատրելի գործ են անում արգելված ժամանակ: Երկուսն էլ պարսպավանքից հետո ափն ափին են խփում ու կենդանացնում թռչուններին: Դրանով հաստատվում է նրանց սրբությունը և գերբնական աստվածային եւթյունը:

Այստեղ պարզորդ կարելի է ասել, որ պարականոնի գրույցը գրեթե անփոփոխ տեղայնացել է և կապվել Գրիգոր Նարեկացու անվան հետ:

Մեկ այլ գրույց, որը նոյնպես անցել է Գրիգոր Նարեկացու վարքի խլայան խմբագրություն, կապված է Նարեկացու գերեզմանի հրաշագործ ուժի հաստատման հետ, որի շնորհիվ կենդանանում է թուխաց իր ճտերով²⁰: Թվում է, թե սրա հիմքում ևս ընկած է եղել նոյն պարականոն գրույցը:

Եթե մեր բերած այս գրույցները, հատկապես առաջինը, կարելի է համարել Թովմայի Ավետարանի անմիջական փոխառության հետևանք, ապա սրանց հետ մեկտեղ պետք է մատնանշենք մի երկու գրույց՝ կապված հենց

¹⁸ Յայսմաւուրք, 28 փետրվարի: Կ. Պոլիս, 1730 թ.:

¹⁹ Թարգմանությունը ռուսերենից (Առօքրփի գրեան հրուսակ, էջ 142, գրույց II) համեմատվել է նաև Տիշենդորֆի հրատարակած հունարեն խմբագրության հետ: Շնորհակալություն ենք հայտնում Օ. Վարդագարյանին Տիշենդորֆի հրատարակածը մեզ տրամադրելու համար:

²⁰ Տես Յայսմաւուրք, 27 փետրվարի:

Քրիստոսի անվան հետ, որոնք իրենց բնույթով են համահունչ Թովմայի գրույցներին: Նրանցում Քրիստոսի կերպարը աչքի է ընկնում նույն դաժանությամբ և խստությամբ: Դրանք են Ավանդապատումի հմը. 801-ի 8-րդ, ապա 13-րդ, 14-րդ գրույցները: Առաջինում ասվում է. «Երբ Քրիստոսը անցնում էր ճանապարհով, բոլորը գնում են նրան տեսնելու, բացի ջուլհակից, որն ասում է. «Այս էլ Վերջացնեմ հետո, այս էլ հետո»: Այդպես շարունակվում է մինչև Քրիստոսի հեռանալը: Յիսուսը տեսնելով, որ ջուլհակը չի եկել անհօնում է նրան, ասելով. «Ինչքան աշխատես, կուշտ չուտես»:

Երկրորդ գրույցում Քրիստոսը հանդիս է գալիս հարկահանի դերում, նա երեխաներից տասանորդ (հարկ) էր հավաքում: Սի կին, որ տասը երեխա ուներ, մի քանիսին թաքցնում է, որ տասանորդ չվճարի: Քրիստոսը գալիս է այս կնոջ մոտ: Վերջինս ցույց է տալիս իր երեխաներին: Յիսուսը հարցնում է.

— Էլ որդիք չունե՞ս:

— Չե,-պատասխանում է կինը:

Քրիստոսը լուր հեռանում է:

Կինը գնում, բաց է անում պահարանը, որտեղ թաքցրել էր իր երեխաներին, սակայն ոչ մեկին չի գտնում, բոլորը դարձել են Զաշանք (քաջեր-բարի հոգիներ):

Կա այս գրույցի մի այլ տարբերակ, ուր քահանան է ունենում 40 երեխա և 20-ին թաքցնում է:

Այս վերջին գրույցների գուգահեռները չեն հանդիպում Թովմայի Ավետարանի խմբագրություններում և չի կարելի պնդել, որ նրանք գալիս են այդ Ավետարանից, սակայն վստահորեն կարելի է ասել, որ նրանք նույն միջավայրի և նույն տիպի աղբյուրներից ծևած և տեղայնացած գրույցներ են:

Անփոփելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ Քրիստոսի Տղայության Ավետարանը, այդ բվում և Թովմայի, որոշակի հետք են բողել հայկական գրույցների վրա: Նրանք ոչ միայն Եերշնչան աղբյուր են հանդիսացել կանոնական Ավետարանների՝ Քրիստոսի տղայության պատմության պակասը լրացնելու, այլ նաև ինքնուրույն հայկական գրույցներ ստեղծելու համար:

ՀՐԱՅՅԱ ՄԻՐՋՈՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների
դրվագը, պրոֆեսոր

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆ ՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մշակույթի բազմադարյան պատմության մեջ աչքի ընկած մեծ երախտավորների շարքում իր ուրույն տեղն ունի 17-րդ դարի ականավոր տպագրիչ, Ֆերական, Փիլիսոփա, բարգմանիչ ու հասարակական գործիչ Ոսկան վարդապետ Երևանցին, որի կյանքն ու գործունեությունն իր ժողովրդի լուսավորությանը, գիտական ու մշակութային առաջընթացին, նրա ինքնանանաչողության ու ազգային ինքնագիտակցության բարձրացման գործին անմիջապես ժառանգելու մի բացառիկ օրինակ է: Ոսկան Երևանցու մասին ստեղծվել է բավական հարուստ գրականություն, որը, սակայն, իմանականում նվիրված է նրա տպագրական տիտանական գործունեության լուսաբանմանը: Ճիշտ է, այդ ուղղությամբ դեռ շատ բան կա անելու, բայց, մեր կարծիքով, ոչ պակաս կաևոր է նրա բողած տեսական ժառանգության, լինի դա բարգմանական, թե ինքնուրույն, ուսումնասիրությունն ու գնահատությունն: Ընդ որում՝ եթե նրա ֆերականական հայացքները համեմատարար գնահատված են¹, ապա նույնը չենք կարող ասել նրա Փիլիսոփայական հայացքների մասին: Այդ տեսակետից առաջմ, ճիշտ է, ինչ-որ բան արվել է², որը, սակայն, անբավարար է հայ Փիլիսոփայության պատմության մեջ Ոսկանի տեղն ու դերը հասկանալու համար:

Ոսկան Երևանցու իմաստասիրական ժառանգության մեջ առանձնահատուկ արժեք ունի ընթերցողի ուշադրությանը ներկայացվող ոչ ծավալուն աշխատությունը, որը հեղինակը զետեղել է Առաքել Դավրիմեցու «Գիրք պատմութեանց» կորողային երկի առաջին հրատարակության մեջ (Ամստերդամ, 1669, էջ 638-645): որպես նրա ԾՀ գլուխ: Խոկ հանի որ նույն գրի նախորդ՝ ԾԷ գլուխը պարունակում էր հենց Ոսկանի ինքնակենսագրությունը և կոչվում էր «Պատմութիւն կենաց Ոսկանայ Վարդապետի Երևանցւոյ տպագրողի գրոյն և այլոց» (էջ 629-638), ուստի այն վերնագրված է՝ «Յաղագս միութեան եւ միաւորութեան. նոյն են երեւ զանազան: Արարեալ նունյոյ Ոսկանայ

¹ Տե՛ս, օրինակ, Հ. Ներսէս Տէր-Ներսէսեան, Ոսկան վարդապետի ֆերականական բնբունութեանը, «Բազմավէս», 1966, թիվ 12, Հ. Միսիթարյան, Ոսկան Երևանցին իրու ֆերականության պատմություն, Երևան, 1974:

² Տե՛ս, օրինակ, Հ. Գաբրիելսան, Հայ Փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Երևան, 1958, էջ 308-319, Հ. Միթրոյան, XVII դարի հայ Փիլիսոփայական մտքի նենական վերլուծություն, Երևան, 1983, էջ 248-253:

վարդապետի»: Փաստորեն «Արարեալ նունյ Ուկանայ վարդապետի» հատվածը չի մտնում աշխատության բուն վերնագրի մեջ, այլ ավելացված է պարզաբն նախորդի հետ կապ հաստատելու համար:

Թե ինչո՞ւ Ուկանը իր ինքնակենագրությունը գետեղի է հենց Դավրիմեցու և ոչ թե մեկ այլ գրքում, ասենք թե կուոզ իր Քերականության կամ Աստվածաշնչի մեջ, այս հարցի պատասխանը մենք տվել ենք Դավրիմեցու աշխատության ուկանյան հրատարակության մասին մեր հոդվածում³: Ավելորդ համարելով վերարտադրելու ամբողջը, ասենք թե կուոզ իր Քերականության կամ Աստվածաշնչի մեջ, այս հարցի պատասխանը մենք տվել ենք Դավրիմեցու աշխատության ուկանյան հրատարակության մասին մեր հոդվածում³: Ավելորդ համարելով վերարտադրելու ամբողջը, ասենք թե կուոզ իր Քերականության մասին մանրամասնությամբ ներկայացված տեսնելով դարի առաջին վեց տասնամյակի հայ մշակույթի աչքի ընկնող դեմքերի գործունեությունը, մինչդեռ ոչինչ չգտնելով տպագրական իր տիտանական գործունեության մասին, Ուկանը, որը բազ գիտակցում էր իր կատարածի մեծությունն ու կարևորությունը, դարի պատմությունից դուրս չմնալու, ընդհակառակը, իր արժանի տեղը գտնելու համար, հարկ է համարել անձամբ լրացնելու Դավրիմեցու կամքից անկախ ստեղծված լուրջ բացը: Հետո Դավրիմեցու իր պատմությունը հասցրել էր մինչև 1662 թ., իսկ Ուկանը տպագրական գործունեություն է ծավալել հենց այդ թվականից սկսած մինչև իր հանկարծահաս, մասամբ և առեղծվածային մահը՝ 1674 թ.: Դրանով պետք է բացատրել, ավելի ճիշտ՝ այդ է հաստատում այն փաստը, որ իր ինքնակենագրությունը Ուկանը շարադրել է ոչ թե առաջին, այլ երրորդ դեմքով՝ հարմարեցնելով Դավրիմեցու ոինին:

Ոչ պակաս կարևոր են նաև Ուկանի խնդրո առարկա իմաստախրական աշխատության ստեղծման ու տպագրության դրդապատճառներն ու տպագրության հանգամանքները: Հանրահայտ է, որ, սկսած 17-րդ դարի առաջին տասնամյակներից, Հռոմի Կարողիկ Եկեղեցին եռանդագիտ գործունեություն էր ծավալում քրիստոնեական Եկեղեցիներն իր իշխանությանը ենթարկելու ուղղությամբ: Այդ պատճառով Հայաստանում և հայկական գաղրօշախներում ծայրաստիճան սրվել էր միարարականների և հակամիարարականների պայքարը: Ճիշտ է, ընդհանուր առմամբ այն ավարտվեց միարարների պարտությամբ, բայց և այնպես առանձին դեպքերում կարողիկ քարոզիչները, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ, կարողացան հազարավոր հայերի դարձնել կարողիկադավան, որով սկիզբ դրեցին հայրենի ավանդույթներից նրանց օտարացման և ուժացման: Այդ տեսակետից հատկանշական է լիհահայերի բոնի միացման տիտուր պատմությունը, միություն, որի սկիզբը դրվել էր 20-ական թվականների վերջերին, իսկ 60-ական թվականներին Կոյեմես Գալանոսի, Ալիխոս Պիդուի և այլոց եռանդուն Եկեղակավարությամբ առաջ էր տարվում բուռն բափով: Զրավարարվելով գործնական բայլերով, շատերը փորձում էին այդ ամենին տալ տեսական ու պատմական հիմնագրում: Օրինակ՝ 1658-1660 թթ. տպագրված «Միարանութիւն Սուրբ Եկեղեցոյն Հայոց ընդ մեծի Սրբոյն Եկեղեցւոյն Հռովմայ» եռամասնյա հայերեն-լատիներեն ստվարածավալ աշխատության մեջ Կոյեմես Գալանոսը պատմական փաստերի ու գրավոր աղբյուրների կեղծմամբ զարգացման մեջ էր այն սուտ ու պատիր պատմափիլիսոփայությունը, որ իբր հայերը ի սկզբան եղել են

³ Տե՛ս Հ. Միթրոնյան, Առաքել Դավրիմեցու պատմության առաջին հրատարակության մասին, «Բանքեր Երևանի համալսարանի», 1971, թիվ 2:

կարուիկադավան, բայց առանձին սադրիչների շանքերով հեռացել են ճշմարիտ հավատից, որի համար, իրև պատիճ, զրկվել են ազատությունից, ընկել օտարի լծի տակ: Ռւստի վերջնից ազատվելու և սեփական ազատությունը վերագտնելու միակ նաևապարհը վերադան է Հռոմեական Եկեղեցու սուրբ գիրկը:

Արդ՝ Ռւսկանի նման հայրենասեր մտածողը, որ պատանեկան հասակից ականատես էր եղել կարուիկ քարոզիչների գործունեությանը, մասամբ դարձել դրա զոհը՝ արժանանալով հայրենակիցներից ոմանց հալածանելին, փախել-հասել էր Լվով, որտեղ, լավ հասկանալով միարարական շարժման հեռուն գնացող հետին նպատակները, հիասքափած վերադարձել էր հայրենիք, ձեռնադրվել եպիսկոպոս, դարձել Ռւշի Ս. Սարգիս վանքի առաջնորդ, իսկ 1662 թ. Հակոբ Զուղայեցու հանձնարարությամբ մեկնելով Եկոպա, իր տպագրական գործունեության ընթացքում ստիպված էր եղել հաղթահարելու Հռոմի հարուցած գաղտնի ու բացահայտ բազում դժվարություններ, արդյո՞ք կարող էր անտարբեր մնալ միարարների տեսական մոլորիչ քարոզչության և բոնի դավանափոխական գործունեության հանդեպ: Անշուշտ՝ ո՛չ: Մեր խորին համոզմամբ, դրա լավագույն հաստատումն է Ռւսկանի խնդրու առարկա աշխատությունը, որով նպատակ է ունեցել ընթերցողին բացարերելու «միուրյուն» և «միավորություն» հասկացությունների տարբերությունները, ցույց տալու «միավորության» տեսակները՝ գգուշացնելու համար կարուիկ քարոզիչների կողմից ամեն ժայլափոխի լարվող երևելի ու աներեւոյթ բակարդներից: Այդ է հաստատում թեկուզ այն փաստը, որ եթե Գալանոսը ընդունում էր երկու տեսակի միավորություն՝ շփրմամբ և անշփոր, ապա Ռւսկանն ավելացնում է նաև երրորդ ձևը, «որ փոխարկմամբ ասի. յորժամ միաւորութեամբ մինն ի միւսոյն կլանիցի. այսինքն մի ի բնութիւն միւսոյն փոխարկիցի, կամ սակա նուազութեան» (ընդգծումն իմն է - Հ. Մ.): Թվում է, սիալված չենք լինի, եթե ասենք, որ այս հարցադրմամբ Ռւսկանն ի հայտ է բերում իր աշխատության ստեղծման, Դավթիմեցու գրեում նրա զետեղման իրական դրդապատճառներն ու հեռահար նպատակը՝ հայ ընթերցողին հասկացնել, որ այնպիսի անհավասար մեծությունների, ինչպիսին են Կարուիկ և Հայ Առաքելական Եկեղեցիները, միավորումը կարող է տեղի ունենալ միայն ու միայն ուժեղի կողմից նվազի կլանման, այսինքն՝ Հայ Եկեղեցու կարովիկացման նաևապարհով: Փաստորեն, եթե Առաքել Դավթիմեցին, իրև հայրենասեր մտածող ու Հայ Եկեղեցու անկախության պաշտպան պատմագիր, անարգանի սյունին էր գամում լինահայերի դավանափոխման նպատակով տիրահոչակ Նիկոլ Թորոսովիչի և կարուիկ գործիչների գործադրած բոնարարքները, ապա Ռւսկանը տեսականորեն հիմնավորում և արդարացնում է լինահայերի և ընդհանրապես հակամիարարական պայքարը: Ինչ խոսք, դա նույնեան, գուցե և ավելի, կարևոր էր, հետևաբար ոչ պակաս անհանդուրժելի կարուիկ եռանդուն գործիչ Ալոխսոս Պիդուի համար, որքան Դավթիմեցու կծու խոսերը Նիկոլ Թորոսովիչի մասին: Ռւստի պատմական այն իրողությունը, որ Պիդուն, իրև Կարուիկ Եկեղեցու տեսուչ, արգելեց միայն այն չէր, որ նրանում, ինչպես դեպքերի անհայտ ականատեսն է գրում,

կային «քանի անարգանաց զիոնիստներ իւրեանց»⁴, այլև, նույն հեղինակի վկայությամբ, «էին ի մատենին քանի անպատշաճ զլատինացւոց և զիոնվմէական հաւատոց»⁵: Հարկ կա՞ ասելու, որ Պիոտրի նման աչալուրջ գործիչը չէր կարող հասկացած չլինել Ռուկանի տեսական հարցադրումների անպատշաճությունը Կարոլիկ Եկեղեցու համար: Բայց եթե դժվար էր, գուցես անբույշատրելի, այդ պատճառով գրի վաճառքն արգելելը, ապա նույնան հեշտ ու համոզիչ էր «հովիվ» կոչված Նիկոլի մասին Դավիթիցու արտահայտած անհարգալից մտքերը վկայակոչել:

Ռուկանի այս աշխատությունը կարևոր է նաև հեղինակի դավանարանական հավատամքը որոշելու համար, որը վաղուց ի վեր եղել ու մնում է լուրջ տարակարծությունների առարկա:⁶ Հարկ չհամարելով վերարձարձել առանց այն էլ չափից ավելի ծեծկված այդ հարցը, կուզենայի ընթերցողի ուշադրությունը հրավիրել այն քանի վրա, որ, բնարկելով «միուրյուն» և «միավորություն» հասկացությունները, Ռուկանը, ի տարբերություն իրենից առաջ ու հետո գրած հեղինակների, զարմանալիորեն լուրյան է մատնում Քրիստոսի բնուրյան հարցը: Պատճառը միանգամայն հասկանալի է՝ ստիպված էր լինելու պաշտպանել իրարամերծ երկու տեսակետներից՝ բաղկեդոնական կամ հակաբաղկեդոնական, մեկը կամ մյուսը: Տպագրության գործի անձնուրաց նվիրյալը, բաշ հասկանալով տպագիր խոսի արժեքն ու գինը, որ այն, ի տարբերություն նույն տարիներին առնեն հարցերով Հռոմի Պապի⁷, Ս. Ժողովին կամ վերջինիս բարտուղարին հասցեագրված իր ձեռագիր նամակների, ուղղված է դպրերին, ուստի զերադասել է լոել, բան կեղծել իրեն: Ավելին, նա ոչ միայն գիտեր, թե ե՛րբ, ո՛ւմ, ի՛նչ և ինչպի՛ս գրել, այլև նույնը խորհուրդ էր տալիս նույնիսկ էջմիածնի Կարողիկոսին: Այդ տեսակետից անշափ արժեխավոր է 1673 թ. փետրվարի 18-ին Հակոբ Զուղայեցու տեղապահ Սահակ Մակուեցու գրած նամակը Ռուկանին: Անգամելով նրան վսեմախոն, կորովարան, արիագոյն, բարերշանիկ սրբազն, բարունապետ, աստվածաբան ու պացուցական փիլիսոփա, իր և ամբողջ ազգի անունից խոստովանում է, որ ոչ միայն ոչնչով չեն կարողացել օգնել նրան, այլև շատ-շատերը պատճառել են անսահման վիշտ ու ցավ: Ըստ այդմ՝ նրան միխրաբելու համար ասում է, թե Կարողիկոսը բանիցս փորձել է օգնել, բայց ոչինչ չի ստացվել, «սակայն ի նոյն միտու հաստատեալ կայ վասն քո և տպագրատանդ քան ինչ հոգալ, որով յաւիտեան անխափան մնասցէ: Եւ թէպէտ փորձութիւնն ի վերայ փորձութեան յանախն ի վերայ նորա, և ոչ կարէ անձնի ինչ

⁴ «Բոնի միուրիւն հայոց Լեհաստանի ընդ Եկեղեցւոյն Հռոմայ: Ժամանակակից յիշտակարանք», Ս. Պետրոսուրգ, 1884, էջ 215:

⁵ Նույն տեղում:

⁶ Այդ մասին եղած հարուստ գրականուրյունից տե՛ս, օրինակ, Ժամանակին մեծ աղմուկ հանճած Կարապես եպս. Ամառունու «Ռուկան վրդ. Երևանցին և իր ժամանակը» գիրքը (Վենետիկ, Ս. Ղազար, 1975) և այդ կապակցությամբ մեր հորդված՝ գրախոսությունն՝ «Սիմեոն Զուղայեցի և Ռուկան Երևանցի», «Բանքեր Երևանի համալսարանի», 1978, թիվ 3:

⁷ Տե՛ս Հ. Պոլոս Անանեան, Ռուկան վարդապետի նամականին, «Բազմավեպ», 1966, թիվ 11-12, էջ 296:

օգնութիւն լինիլ, վասն պարտեաց բազմութեան, այլ ոչ երբէք ունի զանց առնել գործառնութենէ զայդմանէ, ըստ որում եւ գիրս մաղրանաց առ Պապն և առ բազմութեաց գրեաց իւրաքանչիւր պատշաճի և ըստ դիտաւորութեան խնդրուածոց բոց»⁸:

Ասենի նաև, որ այսօր՝ երկու հազարամյակների միջակայքում, Ռուկանի փոքրածավալ աշխատությունը, չնայած շուրջ երեխուկեսդարյա հնությանը, չի կորցրել իր տեսական ու գործնական կարևորությունը: Գաղտնիք չէ, որ մեր օրերում, կապված ոչ միայն կրոնական, այլև քաղաքական, տնտեսական ու մշակութային և այլ կարգի՝ ոչ ճիշտ կամ սխալ հիմունքներով կայացած «միավորությունների» փլուզման և նորերի գոյացման հետ, «միության» և «միավորության» հարցերը ձեռք են բերել նոր հնչեղություն: Այդ է պատճառը, որ «միություն» և «միավորություն», «պարզ» և «բարդ», «ամբողջ» և «մաս», «համակարգ» և «ենթահամակարգ» ու նման շատ այլ հասկացություններ ներկայումս դարձել են գիտական ու փիլիսոփայական լայն բնեարկման առարկա:

Ռուկան Երևանցու աշխատության աշխարհաբար տպագրությունը, փաստորեն, հինգերորդ հրատարակությունն է, առաջինը, ինչպես ասվեց, կայացել է 1669 թ., երկրորդը՝ 1966 թ. Աստվածաշնչի ոսկանյան տպագրության 300-ամյակի առողիկ (տե՛ս «Հասկ», 1966, թիվ 3-5, բացառիկ), իսկ երրորդը և չորրորդը՝ ուսուերեն (քարգմ. Մ. Դարրինյան) և գրաբար բնագիրը գուգադրաբար հրատարակության ենի պատրաստել մենի (տե՛ս «Պատմա-բանասիարական հանդես», 1971, թիվ 3): Այն մեզ է հասել նաև ձեռագիր վիճակում⁹, որն ընդօրինակված է տպագրից, միայն թե վերջում՝ «քաղադրեալ» բառից հետո գրիչն ավելացրել է՝ «և Քրիստոսի Աստուծոյն մերոյ փառք յաւիտեանս ամէն»: Սկզբի մի փոքրիկ հատված կա նաև Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 9121 ձեռագրում (էջ 104թ):

Թարգմանության ժամանակ ամեն կերպ շանացել ենի հարազատ մնալ հեղինակի ոչ թե տարին, այլ ոգուն: Ուստի, երբեմն պահպանել ենի հեղինակի գործածած հասկացությունները ու դարձածները, իսկ հիմնականում աշխատել ենի անպայման գտնել դրանց ժամանակակից համարժեքները: Առանձին դեպքերում ստիպված ենի եղել ավելացնելու լրացուցիչ բառեր ու բառակապակցություններ՝ դրանի առնելով սեպամկ փակագծերի մեջ: Թե որքանով է մեզ հաջողվել իրականացնել մեր առջև դրված նպատակը՝ ընթերցողին փոխանցել մեծ հայրենասերի իմաստափրական երկի ազատատենչ ոգին, բողնում ենի ասելու խստապահանց ընթերցողին:

Վերջում, օգտվելով առիթից, կցանկանայի շնորհակալությունս հայտնել շնորհալի բանասեր Խ. Սամվելյանին՝ Ռուկանի աշխատության աշխարհաբար քարգմանության միտքը հուշելու և տպագրության հարցում սատարելու համար:

⁸ Նույն տեղում, էջ 302 (ընդգծում իմբ է՝ Հ. Մ.):

⁹ Տե՛ս Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 8233, էջ 129-134թ: Ի դեպ՝ «Ցուցակ միաւորութեան Աստուծոյ» (տե՛ս հ. Բ, Երևան, 1970, էջ 701), որը, փաստորեն, հակասում է աշխատության բուն բովանդակությանը:

**ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.
ՆՈՐԻՅԱՆ ԵՆ, ԹԵ ՏԱՐԲԵՐ,
ԳՐՎԱԾ ՆՈՐԻՅԱՆ ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ**

Հայտնի է, որ երբեմն միուրյունը և միավորությունը դրվում են մեկը մյուսի փոխարեն, սակայն դրանք խիստ տարրերվում են իրարից, որովհետև միուրյունը վերաբերվում է պարզին, իսկ միավորությունը՝ բաղադրյալին: Քանզի ուր կա միայն պարզը, այնտեղ չկա բաղադրյալ, ինչպես նաև՝ միավորություն, այլ կա միայն գուտ և անխառն էուրյուն, որն առաջանում է միուրյունից: Մինչդեռ միավորությունը պարզ մի * չէ, և նրա կեցուրյունը պայմանավորված է այն էուրյուններով, որոնցից կազմված է՝ առ ի լինելուրյուն մեկ այլ էուրյան: Այդպիսինները միշտ չեն և բոլոր դեպքերում չեն, որ կոչվում են մի, այլ մեկ դեպքում կոչվում են մի, իսկ մեկ այլ դեպքում՝ բազում, ինչպես դա հաստատվում է մեր բնուրյամբ, որովհետև մարմնի և հոգու միավորությունն այն բանի համար չեն, որ լինի միայն հոգի, կամ միայն մարմնին: Քանի որ [միայն] հոգին, ինչպես և [միայն] մարմինն առանձին վերցրած, մարդ չէ, այլ դրանց երկուսի համակցությամբ և միավորությամբ է գոյանում մարդը, որը հոգուց և մարմնից է: Ուստի մարդը, որ երկուսի միավորությունից գոյացավ, չի կարող լինել սոսկ հոգի և ոչ սոսկ մարմնին: Հետևաբար, հոգին առանձին մարդ չէ, ինչպես և մարմնը, այլ երկուսի միավորությամբ է լինում մարդը: Այսպես նաև Մեծ Դավիթն է իր «Առածք հինգ» ** -ում անհատների մասին ասում, թե այն կարող է լինել և կոչվել մեկ բնուրյուն: Այստեղ մի կողմ ենք քողնում պարզ էուրյունների [հարցը], քանի որ միանգամայն պարզ միուրյուն են, կարիք չկա ուսումնասիրելու: Իսկ բաղադրյալ անհատների մասին ասում է, որ [դրանք] չեն կարող մեկ բնուրյուն լինել և կոչվել, որովհետև դրանք միավորված են բազումից՝ [որակապես] նոր մեկ այլ իրի մեջ, որը գոյուրյուն չուներ նախքան նրանց միավորվելը: Այսինքն՝ թեև կա հոգի, կա նաև մարմնին, բայց քանի դեռ չեն միավորվել, չկա մարդը, որը պետք է բաղկացած լինի հոգուց և մարմնից և ոչ թե նրանց միուրյունից: Մեկ է հոգին, մեկ է նաև մարմնը, թեպես սրանք ևս միավորված են իրենց մասերից, ինչպես բնախոսներն են ասում, սակայն մարդու լինելուրյան համար մի մասը դնում է հոգին, իսկ մյուս մասը՝ շնչավոր մարմնը, որոնք նույնը չեն, այլ միավորված են մեկի, [այսինքն] մարդու լինելուրյան համար: Նույն կերպ [պետք է բացատրել] նաև [այն] բոլոր միավորությունները, որոնց միավորությունն անփոխելի ու անկորնչելի է, այսինքն՝ միավորվողները չեն փոխարկվում մեկը մյուսին, և կամ մեկը չի կանվում մյուսից, այլ մեկը մյուսի հետ շաղկապվում է անշփոք միավորությամբ, և շաղկապվող մասերը

* Գերադասել ենք պահել հեղինակի բառը, որովհետև «մեկ», «միուրյուն», «միակ» և համաման այլ հասկացություններով փոխարինելու դեպքում ունենում ենք իմաստի կորուստ:

** Միջնադարում, ի բիզս այլ գործերի, հայ մատենագիրներն ավանդաբար Դավիթ Անհաղթին են վերագրել նաև «Առածք հինգ» անանուն փոքրիկ ստեղծագործությունը:

գոյացնում են մեկ այլ իր, որը նախապես գոյություն չուներ: Հստ այդմ՝ մեկ այլ առարկայի մեջ միավորվելու դեպքում ասում են, որ մասերը նախորդում են նրան, ինչպես ցույց տրվեց վերը հոգու և մարմնի միավորության օրինակով: Քանի հոգու և մարմնի միավորությամբ չեղավ միայն հոգի կամ միայն մարմին, այլ մարդ որը միայն հոգի չէ և ոչ էլ միայն մարմին, այլ միաժամանակ և՝ հոգի է, և՝ մարմնին: Նույնը կարելի է տեսնել բոլոր իրողություններում՝ թե՛ թե՛ բնության, թե՛ արիթմատիկ և թե՛ գիտության մեջ: Օրինակ՝ բնության մեջ ձեռքի մասերը, որ ե՞ն մատները և քարը, չեն միավորվում մեկ մատի մեջ, այլ միավորվում են մեկ ձեռքի մեջ, որ հինգ մատների և քարի մեկ ամրողություն է: Արդ՝ մեկ մատն ունի մատի միություն, բայց ձեռքը մատի միություն չէ, այլ նրանում միավորված բազմարիկ մատների միավորություն է և միաժամանակ՝ ձեռքի միություն, որը գոյանում է մատների միավորությունից: Նույն ձևով մարմինը, որն ունի մարմնի միություն, սակայն իր մեջ ունի բազմարիկ անդամների միավորություն, ինչպես այդ մասին ասում է Ս. Պողոս «Առ Կորնթացիս» առաջին թղթի տասներկուերորդ գլխի տասներկուերորդ և խաներորդ համարներում՝ «ինչպես մարմններ մեկն է և շատ անդամներ ունի, և այն մարմնի բոլոր անդամները թեպետև շատ են, բայց մեկ մարմին են»: Կան շատ անդամներ, որոնք ունեն [մեկ] անդամի միություն, և կան շատ անդամներ, որոնք ունեն միավորություն մեկ մարմնի մեջ: Հստ այդմ՝ մարմինն իր միությունն ունի իր անդամների շարահարությամբ, իսկ անդամները, թեպետև իրենց մեջ ունեն միություն, սակայն մարմնի նկատմամբ ոչ թե միություն են, այլ միավորությունն: Արհեստներում նույնպես բոլոր մասերը, միավորվելով մեկ ամրողչի մեջ, առաջ են թերում իրենցից տարրեր մեկ ամրողչի մեջ, այսինքն՝ տուն, որը վերը թվարկած մասերից ոչ մեկը չէ, այլ նրանց միավորումից գոյացած մեկ այլ բան, որը կոչվում է ոչ թե պատ կամ պատուհան, այլ տուն, որը մի է միությունից, իսկ մասերի միավորությունը՝ միավորությունից: Դուռը նույնպես իր մասերից բաղկացած մեկ ամրողչ իր է, թեպետև տան մասն է, բայց ինքնին ինչ-որ ամրողչ է, որովհետև ունի իրար կցված մասեր՝ տախտակներ, մեխեր, կողափայտեր և այլն, որոնք միավորված են ի լրումն դռան, [ուստի] միավորված են միավորությունից և մի է միությունից, իսկ դռան միությունը միությունից է և ոչ թե միավորությունից: Հետևաքար, նույնը չեն միությունը և միավորությունը, նաև մին և միավորյալ:

Իսկ գիտություններում այսպես է. յուրաքանչյուր ամրողչ, այսինքն՝ ընդհանուր, [իր] մասերով և ընդհանուր, և մասերի միավորությունից է լինում ամրողչը: Օրինակ՝ անհատների միավորությունից և հավաքումից է լինում տեսակը, տեսակների միավորումից է կազմվում սեռը, իսկ սեռերից՝ ամենաբարձր սեռը և այսպես շարունակ ըստ կարգի, որքան և լինի: Իսկ միությունից միայն մին է, որը չունի միավորություն, ինչպես օրինակ՝ անհատը, որը միայն մի է և իր համակցություն, բայց նման չէ անհատներից տեսակի, իսկ տեսակներից՝ սեռի միավորություններն ու ընդհանրությունները, միությունը և միավորությունը, իսկ

այստեղ՝ մեկ ուրիշ ձևով: Քանզի այստեղ մասնիկներ են անդամները, իսկ մարմինը մեկ ամբողջ է անդամների միավորությամբ: Միջներ այնտեղ մասնիկներ են անհատները, այսինքն՝ Մարտիրոսը, Գրիգորը [և այլն], որոնք անդամների միավորություն են, իսկ ամբողջը, այսինքն՝ մարդը, ժի՞ն, առյուծը, արծիվը [և այլն], անհատների միավորություն է, որովհետև միությունից մեկ անհատն է, որ մի է, իսկ անհատների միավորությունից՝ տեսակը: Թեև ոմանք արեգակը համարում են մեկ տեսակ, նույն ձևով ուրիշներն ընդունում են Հնդկաստանում [այնպիսի] հավիքի գոյությունը, որն իր այրվելիս թերի ու մարմնի շարժումներով ծնունդ է տախի նոր բռչունի: Դրանով ցանկանում են հաստատել, թե կա այնպիսի անհատ, որը միաժամանակ թե՛ անհատ է, թե՛ տեսակ: Բայց զուր են [այդ ամենը], որովհետև տեսակն այն է, որը, ինչպես Պորփյուրն է ասում, կազմված է բազում անհատներից, որը մի չէ և մեկ բվով չէ: Իսկ արեգակը ինքնին տեսակ չէ, թեև, ընդհանրապես իմաստասերների կարծիքով, այն չեն կարող դնել սովորական լուսատուների շարքում, բայց և այնպես պիտի է դասել լուսատուների շարքը՝ տալով նրան այլ որակում:

Բայց այդպիս մոտենալով՝ ոչ մի կերպ չեն կարող տեսակի սահմանումը կիրառել նրա նկատմամբ, որովհետև տեսակ ասելով հասկանում են կա՛մ այն, որը [ի՞նչ է] հարցի դեպքում բաժանվում է բվով իրարից տարրեր բազում [անհատների], կա՛մ այն, ինչը ստորադասվում է սեռին: Քանզի մեկ անհատը չի կարող բաժանվել բազմաբիշ անհատների, նաև անհատը չի կարող համարվել սեռ, այլ այն միշտ ստորադասվում է ցածրագույն տեսակին: Ուստի արեգակը, որ անհատ է, չի կարող սահմանվել որպես տեսակ, այլ [սահմանելի է] միայն իրեն անհատ և բացատրելի է ոչ թե տեսակի, այլ անհատի միավորությամբ: Քանզի տեսակի կեցությունը, բազում անհատների միավորությունից է, որովհետև բազում անհատներից է ասվում տեսակ, ինչպես բազմից ցույց տրվեց: Նույն ձևով բազում տեսակներ միավորվում են մեկ սեռի մեջ, ինչպես, օրինակ, մարդու տեսակը, ձիու տեսակը, առյուծի տեսակը, աղավնու տեսակը և մնացած շատ այլ տեսակներ, որոնց մեկ առ մեկ բվարկելը ձանձրալի է, միավորվում են կենդանու սեռի մեջ և բոլորը կենդանիներ են: Անհատները նույնպես տեսակների միջոցով միավորվում են միավորությամբ, և անբաժան են իրենց ենթակայության ու միության մեջ, որոնք հաղորդակցվում են իրար տեսակի և սեռի միավորության միջոցով: Հետևաբար, նույնը չեն մին և միավորյալը, միությունը և միավորությունը, այլ միանգամայն տարրեր են իրարից, ինչպես պարզը և բաղդրյալը, որովհետև պարզը և մին համեմատելի են իրար հետ, իսկ բաղդրյալներն ու միավորյալները՝ իրար հետ, ինչպես հայտնի [դարձավ] վերը դիտված օրինակներից: Սակայն միավորությունը լինում է տարատեսակ՝ կա միավորություն փոփոխմամբ, որը կոչվում է նաև շփորությամբ. այս դեպքում բոլոր միավորված [իրերը] բողնում են իրենց բնությունը և ընդունում մեկ այլ իր էություն, ինչպես, [օրինակ], տարրերը, որոնք միավորություն չեն կոչվում առանց իրենց իրենց կորցնելու՝ հանուն մեկ այլ էության լինելության: Կա նաև միավորություն, որը կոչվում է փոխարկմամբ, որի դեպքում մեկը կլանում է մյուսին, այսինքն՝ մեկը փոխարկվում է մյուսի բնության, [ընդ որում դա կատարվում է կլանվողի] նվազության կամ նվասության պատճառով, ինչպես, օրինակ, մեր կերած կերակուրները փոխարկվում են

մեր մարմնի բնության: Կա նաև միավորություն, որը կատարվում է ոչ շփորձամբ և ոչ փոխարկմամբ, այլ իրար հետ միավորվում են անփոփոխ և անփոխարկելի միավորությամբ, ինչպես հոգին և մարմինը, երկար և հուրը, որոնք մեկը լյուսին չեն փոփոխում ի լինելություն մեկ այլ եւրյան և ոչ էլ մեկը փոխարկվում է մյուսի, այլ իրենց միավորությամբ մշտապես պահպանում են իրենց եւրյունն ու բնությունը: Ընդ որում հայտնի է, որ ժանի դեռ իրար հետ են, պահպանում են մեկը մյուսին և անբաժանելի են իրարից, պատճառ են դառնում մեկը մյուսի, ինչպես նաև իրենց ենթակայի գոյության: Իսկ բաժանվելու դեպքում, այն, որ նրանցով կար՝ [ենթական], ոչնչանում է. մարմինը վերածվում է իր տարրերին, իսկ հոգին գնում է առ Աստված, որը և, ըստ իմաստասերների, ստեղծել է այս:

Դարձյալ՝ երբ ասում ենք մի, հասկանում ենք նույն պարզ և մաքուր, առանց ուրիշի հետ որևէ խառնուրդի իրը, որը չունի մեկ ուրիշի հետ շարակցություն կամ հալորդակցություն: Այդպիսի միությունը, լինի անձնական թե էական, անխառն է և լիովին մաքուր: Բայց երբ ասում ենք միավորյալ, չենք կարող հասկանալ գուտ և պարզ, այլ ուրիշի հետ բաղադրված և երկու իրից կազմված՝ թե՛ շփորձամբ և թե՛ անշփոր: Իսկ այսքան տարբերություն կա շփորման և անշփորության միջև, որովհետև շփորությամբ [միավորությունը] ոչնչացնում է իրի բնությունը՝ կամ մեկի [բնությունը] մյուսին փոխարկելով, կամ երկուսի [բնությունը] ամրողացվին բոլենիվ իրենցը և մեկ ուրիշ իր լինելով ու նոր ինչ-որ բնություն առաջ բերելով: Իսկ անշփորները միավորումից հետո ևս մնում են նույնպիսին, ինչպիսին էին նախքան միավորվելը, այսինքն՝ առանց այլայլության, առանց փոխվելու և առանց դույզն-ինչ վեասվելու: Իսկ եթե անշփոր միավորության մեջ ինչ-որ ձևով մեկ այլ բան ներբափանցի, չի պահպանվի անշփորությունը: Քանզի միավորության անշփորությունն [այն է], որ միավորվածները, նախքան միավորվելն ունեցած սահմանումը, ունենում են նաև միավորվելուց հետո, առանց որևէ փոփոխության: Իսկ եթե որևէ իր չենի իսկ փոփոխություն ներմուծի, որով կարողանա վեասվել սահմանումը, միավորությունը չի մնա անփոփոխ կամ անշփոր: Վերստին՝ միությունը հակադրվում է բազմությանը, իսկ միավորությունը՝ բաժանմանը, որովհետև միությունը չի կարող լինել բազում, թեև բազումից է լինում, ըստ այնմ, որ մի է: Իսկ ըստ միավորության միավորվածը բազումից է միավորված, թեպետև միավորված լինի մեկ իրի մեջ: Նաև պարզ միությունը անհնար է, որ բաժանվի մասերի, ինչպես, օրինակ, Աստված: Իսկ միավորությունը կարող է բաժանվել նրանց, որոնցից և կազմված է՝ թե՛ ըստ նյութի և թե՛ ըստ մտածողության, ինչպես, օրինակ, մարդը և մյուս բաղադրյալները:

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ԱԲՈՎՅԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԵՏՐԱԿԱՆԵՐԻՑ ՄԵԿԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ

Արովյանի ուսանողական տետրակների մեջ կա մեկը՝ թիվ 42-ը, որը համեստ է և՝ չափերով ($11,5 \times 17,5$ սմ), և՝ ծավալով (ընդամենը 6 թերթ կամ 12 մանրատառ էջ): Ակսվում է հայերեն գրառումներով և ավարտվում գերմաներեն դժվարներունելի, վերամբարձ դատողություններով: Հարցերը, որոնք շոշափվում են այդ էջերում, բոլորն ել հետաքրքրական են, թեպես ցարդ բավարար ուշադրության չեն արժանացել: Գրառումներից միայն մի հատված՝ Հայաստանի անցյալ, կորած փառքի մասին գրաբար բարձրաբրուչ մի խորհրդածություն, տողերիս գրողը մեջ է բերել ու վերլուծել «Խաչատուր Արովյան, կյանքը, գործը, ժամանակը (1809-1836)» մենագրության մեջ (1967)՝ մնացածի հրապարակումը բողնելով ավելի բարեդեպ ժամանակների, մանավանդ, որ շատերի վերծանումն ու սկզբնաղբյուրների նշտումը կապված էր լուրջ դժվարությունների հետ: Բայց տարիներն անցան իրար հետևից, իսկ բարեդեպ ժամանակներն այնպիսն ել չեկան: Հապալելը, հետևաբար, այլևս անհմաստ է: Ակսենտ տետրակի առաջին էջից, ուր ամփոփված գրառումները վերաբերում են անտիկ աշխարհի գրականությանը, դիցարանությանը և բարոյական ըմբռնումներին: Հնարավորության սահմաններում կփորձենք կոահել ու մատնանշել Արովյանի օգտագործած սկզբնաղբյուրը, որը գերմաներեն մի ուկեփորիկ պիտի լինի:

Առաջին մեկուկս տողը վերծանվում է անսխալ, և Արովյանը, պիտի կարծել, դրանք բաղելիս ապրել է հիացման ու ներքին հոգումի ոչ ֆիշ պահեր.

«Զիա՞րդ քննուշ եղան կինն՝ որոյ հանեալ կրծոց իւրոց զուրճ ասէ.

- Պատուս, սուրո այս ոչ վիրատրէ զիս»:

Ո՞վ էր այդ բնեկուշ ու խիզախ կինը, և ո՞վ՝ Պատուսը, որոնց ողբերգական կերպարներով հմայվել է Արովյանը: Այս հարցերով հանախ ենք դիմել արևմտյան գրականության ու պատմության գիտակներին, բայց օգնություն, այնուամենայնիվ, ստացանք անտիկ հեղինակների ընթերցումից, և միանգամայն անսպասելի:

Պատուսը հոռմեական պետական գործիչ, կոնսուլ Յեցինա Պետուսն է, իսկ բնեկուշ կինը՝ նրա տիկին Արիան (Ալվագ): Երբ Պետուսը կավդիսու կայսեր դեմ նյութած դավադրությանը մասնակցելու համար 43 թվականին դատապարտվում է մահվան, կանխավ բացառելու համար արժանապատվության հետագա որևէ ուժնահարում, բերևս նաև՝ ունեցվածքի բոնագրավում, վեռում է ինքնասպանությամբ վերջ տալ կյանքին: Իր հերքին կինը էլ, հավանություն տալով ամուսնու այդ ժայիլին, բայց նաև երկմտելով, որ կարող է հապաղել ու հետագել, առաջինը ինքն է դաշույնն իր սիրում և, փոխանցելով նրան, ասում. «Պե՛տուս, չի՞ ցավում»: Արիան սիրելի կերպար էր գրողների համար՝ Պլուտարքոսից մինչև Միշել Մոնտեն և ոռմանտիկներ: Մատնագրական բուն սկզբնաղբյուրը Պինդիուս

Կրտսերի նամականին է (Գիրք 3-րդ, նամակ 16, 3-13): Արովյանը, սակայն, բվում է, ձեռքի տակ է ունեցել ոչ այդ գիրքը, այլ զրույցի գերմաներեն որևէ վերապատում՝ ցանկանալով, որ Արիայի նման ամուր կամքի ու արժանապատվության տեր կանայք երևան գային նաև հայ իրականության մեջ:

Երկրորդ արտահյուրությունը նույնափես կանանց մասին է, այն էլ, մեր համոզմամբ, Հին աշխարհի կանանց, որոնց նմաններին այնքան կարիքն ուներ՝ հանուն գոյատևման և ազգային ու հոգևոր վերածնության մշտապես մաքառող հայ ժողովուրդը: Ահա՝ Արովյանի բուն գրառումը.

«Զիա՞՞ր քաղցր մայրն, որ պահատէր զորդին. «Ողորմեա» ինձ, որդեակ իմ, և մեսի՞ր»:

Այս թևավոր խոսերի սկզբնաղյուրը նույնափես որոնել ենք երկար ժամանակ, ավելի տևական, քան նախորդի, բայց առայժմ հավանական ենթադրությունից այն կողմ չենք անցել: Թվում է, Արովյանի սկզբնաղյուրը Պլուտարքոսի ժողոված «Սպարտայի անանուն կանանց ասույրները» երկն է, ուր նույն միտքը արտահայտված է փոքր-ինչ այլ ձևով: Հիշելով նրանցից մի քանիսի արժանահիշատակ գործերը, Պլուտարքոսն այնուհետև գրում է. «Մեկ ուրիշը (այսինքն՝ մեկ ուրիշ սպարտացի կին - Պ. Հ.) լսելով, որ որդին փախուստ է տվել թշնամու առաջ և կենդանի մնացել, գրում է նրան. «Վատ փառի ես տիրացել. կամ մաքրի՛ր այն, կամ մետի՛ր»¹: Տարբերությունները, մեր կարծիքով, նրանցից են առաջացել, որ Արովյանն օգտվել է գերմաներեն վերապատումից ու շանացել սպարտացի կնոջ խոսերի միայն հիմնական միտքը կամ էռությունը ներկայացնել, մինչդեռ Պլուտարքոսի երկի ոռու թարգմանիչը ճգտել է հարազատ մնալ հունարեն բնագրի տառին:

Երրորդ արտահյուրությունը փոխ է առնված Ավետարանից: «Էլի՛, էլի՛ լամ ասաղբանի կամ՝ լամ սապաղբանի»: Այս խոսերը խաչված Հիսուս Քրիստոսի թերանցից լսված վերջին բառերն էին (ՄԱ.ՏԹ. Իէ 45-50, տե՛ս նաև՝ ՄԱ.ՐԿՈՍ ԺԵ 33-37):

Որտեղի՛ց են առաջ եկել հայ ին թարգմանության և Արովյանի գրառման տարբերությունները: Մեր կարծիքով՝ գերմաներեն Ավետարանից, որն այդ պահին եղել է Արովյանի ձեռի տակ և որից օգտվել է քաղլածքը կատարելիս:

Հայերեն՝ «Էլի՛, էլի՛ լամ սապաղբանի»:

Գերմաներեն՝ "Eli, Eli, lama asabthani":

Գորատառ տողը Արովյանը վերծանել է հապենապորեն ու որոշ մխալներով՝ լամ սապաղբանի, մինչդեռ մ-ից հետո բնագրում առկա է ա գիրը, իսկ դ-ի փոխարեն՝ թ, այսինքն՝ ասարբանի: Գերմաներեն Ավետարանից Հիսուսի խոսերը տառադանելով հայերեն, բայց և զգալով, որ այն դաշն չէ հայ թարգմանությանը, որն Արովյանը, հարկավ, անգիր գիտեր, հիշողությամբ ավելացնում է նաև հայերեն համազոր ձևը՝ «կամ սապաղբանի», որոնք տարօրինակ ձևով էին հնչեցնում գերման թարգմանիչները:

Ընդամենը մի քառ, բայց որքա՞ն թարգմանությունը և արտասանված ինչպիսի ներշնչանենով...

¹ Плутарх, Застольные беседы, Л., 1990, с. 337. Изречения неизвестных спартанок.

Այստեղ վերջանում է նշումների առաջին խումբը՝ բոլորն ել բարոյագիտական խնդիրներին առնչվող, և նրանց հաջորդում են նորերը՝ արդեն գրականության ու դիցարանության մասին, որոնք նախորդներից զանազանելու համար վերնագրված են «Վասն բանաստեղծութեան», ու վերջին բառերն ել չորս կողմից ընդգծված են երկար ու կարճ գծերով:

Դատելով բուն նշումներից՝ Արովյանին նախ և առաջ զրադեցրել է գրականության ծագման հարցը, և անմիջապես ել շանացել է, հարկավ, իր օգտագործած սկզբնադրյութների հետևությամբ՝ տալ հստակ ու աներկմիտ պատասխան:

«Բանաստեղծությինն է դուստր բնութեան»: Ուրեմն՝ եթե բանաստեղծությունը բնության ծնունդն է, սակայն ու հասակ է առնում բնությունից, նշանակում է՝ ենթակա է նույն օրենքներին, ինչ բնության մյուս բոլոր երևույթներն ու արարածները, և արտացոլում է միևնույն բնության իրողությունները, անցերեն ու անձերը: Ի դեպ, համանման տեսակետ ընդհանրապես արվեստի, հետևապես և գրականության կամ բանաստեղծության մասին, իրեւ նրա ձևերից մեկի, արձարծել է, օրինակ, Գյորեն «Փորորկի ու գրոհի» շրջանի իր հոդվածներում՝ «Բնության պարզ նմանություն, գրեալկերպ, ոճ»²: Նրա ընկալմամբ՝ երբ շնորհալի արվեստագետը ձեռնարկում է վերարտադրել բնությունը, միաժամանակ շանք չխնայելով նշորեն ընդօրինակել նրա կերպարներն ու գույները, այդպիսին կարող է հասնել «գրեթե անհավատալի նշմարտության»³: Հետազոտողներ նույնպես նշել են, որ, ըստ Գյորեի, արվեստը բնությանը նմանվելու ձև է, իսկ արվեստագետի խնդիրը՝ բնության էությունը կուհելն ու վերարտադրելը⁴: Արվեստի, բնականարար նաև գրականության ու բնության փոխհարարերությունների մասին այսպիսի հայեցություն էին զարգացնում նույն շրջանի գերման ուրիշ գրողներ, նաև՝ Արովյանի նախասիրած ոուս հեղինակները, որոնց տեսակետն էլ, մեկ-երկու բառով, ամփոփել ու բղբին է հանձնել: Համոզվելու համար՝ ծանօթանանք այդ հայեցություններից մի քանիսին: Օրինակ՝ ըստ Ի. Համանի, «Բանաստեղծությունը գեղեցիկ բնության նմանողությունն է», «Իսկ բնությունն ազդում է զգացումների և հույզերի միջոցով»⁵: Իսկ ահա՝ Բյուրգերի կարծիքով՝ «Գերմանական մուսան կարիք չունի գիտական ուղևորություններ կատարելու, նա պետք է տանը նստած անգիր անի իր բնության հավատապատումը», և որպես զորագոր միջոց, որն ազդեր գերման ժողովրդի վրա՝ սիրելու և ընդունելու համար իր բանաստեղծների ստեղծագործությունները, հանձնարարում է վերջիններիս ուշադրությամբ վերծանել «բնության գիրք»⁶: Ն. Մ. Կարամզինը նույն խնդիրների մասին արտահայտվել է ավելի որոշակի. «Ի՞նչ է արվեստը, հարց է տալիս նա և անմիջապես պատասխանում ու բացատրում՝ Բնության նմանողություն: Խիս անած ենուղերը եղել են առաջին տնակների օրինակները և նարտարապետության հիմունքը. զարդված եղեգի նեղերից սուրացող քամին կամ աղեղից բռչող նետերը և կամ երգող բռչնակները

² Einfache Nachahmung der Natur..., 1789.

³ И.-В. Гете, ОБ ИСКУССТВЕ, М., 1975, с. 93.

⁴ Նույն տեղում, էջ 28:

⁵ История эстетики, Памятники..., т. II, М., 1964, с. 541.

⁶ Նույն տեղում, էջ 585:

սովորեցրել են մեզ երաժշտություն, առարկաների ստվերները՝ նկարչություն և գեղանկարչություն, ճյուղի վրա իր մահացած ընկերոջ համար բախծող տատրակը հրահանգիչն է եղել եղերերգու բանաստեղծի: Սա էլ, զրկվելով սիրելի ընկերուից՝ նրա նման է արտահայտում իր վիշտը, և մանուկ ժողովուրդների բոլոր երգերն սկսվում են բնության առարկաների կամ երևույթների հետ համեմատություններով»⁷:

Կյանքի վերջին տարիներին (1846 թ.), փորձելով բնութագրել Արևելքի ժողովուրդներից մեկի բանաստեղծությունը, որը ծնվում, սնվում ու հասակ էր առնում հենց բնությունից ու բնության մեջ, Արովյանն այդ երեսույթը մեկնում էր «փորբրկի ու գրոհի» գեղագետների սկզբունքներով՝ նկատելով նախ, որ ժողովուրդն ընդհանրապես «ունի հանպատրաստից հորինելու զարմանալի ունակություն», և երկրորդ, որ նրա բանաստեղծական ներշնչանքի ազդակներն ու առարկաները բոլորն էլ բնության մեջ են ու իրենց բնական վիճակում: «Նրանք խիստ պարզ ու անպահույց լեզվով,- ասում է Արովյանը,- երգում են իրենց հովհանները, լեռները, ջրվեժները, առվակները, ծաղիկները, գեները, ճժույգները, ուզմի սիրանները, իրենց գեղեցկուիհիներին ու սրանց երապույրները, բոլորն էլ մատչելի նրանց զգացմունքներին ու ըմբռնումներին, զարդարում [իրենց խոսքը] համեմատություններով և շանում այդ ամենը, որքան կարելի է, ներկայացնել կենդանի ձևով [և] մեղեդային երգեցողությամբ, որն, իհարկե, փոքր-ինչ կվիրավորի եվրոպացու լսողությունը, բայց բանկագին է իրու արտահայտությունը, եղանակը հոգևոր կյանքի ու մտածողության հույժ ինքնատիպ մի ժողովրդի, որ սովոր է հաջարի ու լուսավորված եվրոպացների ամենահամեղ կերակուրների համեմատությամբ նախապատիվ համարել իր կորեկ հացը»⁸: Հարկ կա՞ ավելացնելու նաև, վերջում նկատում է Արովյանը, որ այս բանաստեղծությունը նպաստում է խուսափելու կամ նվազ չափով մեղմելու կիսավայրենի լեռնականների բարեկերը և վառ պահում նրանց մեջ սերն առ հայրենիք⁹:

Գրականության կամ ֆերրության գերհամառու բնորոշումից հետո, Արովյանին զրադեցնում է բանաստեղծության ձևավորման խնդիրը՝ կապված գեղեցիկ արվեստներից մասնակորապես երկուսի՝ երգի ու երաժշտության հետ, որոնք վաղնջական ժամանակներում խոսի հետ միասնարար էին հանդես գալիս, և նրանցով գերվում ու հմայվում էին ոչ միայն սոսկական մահկանացուները, այլև աստվածները, նաև բնության անրան արարածներն ու անշունչ առարկաները՝ բոլուններն ու գազանները, ծառերն ու ծաղիկները, լեռներն ու գետերը, անգամ ամենափարասիրու ու անկոտրում էությունները՝ մահվան բագավորության տիրական ու արքուն պահապանները:

Բայց Արովյանը ոչ թե այդ առիվ ծավալում է իր մտքերը, այլ լոկ մի դրվագ է հիշում տվյալ բնագավառի հին ու նոր, իրական ու առասպելական կախարդ վարպետներից ամենահոչակավորի կյանքից, այն էլ, կարծես, ասելիքն առկախ բողնելով.

«Օրֆէոս յեղերս Հերրուսայ կանգնեալ՝ նազարանէ զնիմֆայս»:

7 Նույն տեղում, էջ 795:

8 Խ. Արովյան, VII, էջ 357:

9 Նույն տեղում:

Օրփեոսի մասին (որը և մեր ակնարկած կախարդ վարպետն է) Արովյանը կարող էր անհրաժեշտ տեղեկությունները բաղել առաջին հերթին անտիկ դիցարանությանն ու պատմությանը նվիրված ամենատարբեր ձեռնարկներից ու բառարաններից, հետևաբար դժվարանում ենք ներկա պահին մատնանշել նրա օգտագործած բուն աղբյուրը:

Անտիկ հեղինակներից Արովյանը խորին պաշտամունք ուներ մասնավորապես Օվիդիոսի անձի և գործի նկատմամբ: Այս վերջինի «Մետամորֆոգներ» պոեմում էլ (գիրք 10-րդ և 11-րդ) վերապատմված են Օրփեոսի շուրջ հյուսված հոգեցունց լեզենդները: Արովյանն այդ գիրքը իրապես կարդացել էր, և այս մասին վկայում է 1841-ին, «Աղասու Խաղը» պոեմի սևագիր, ընդարձակ տարբերակում, բայց թե ո՞ր բավակնին, չի նշված: Համեմայն դեպք, խնդրո առարկա նշումների թերթիկը 1831-ի արգասիի է, իսկ Օվիդիոսին Արովյանը կարող էր կարդալ և՝ այդ, և՝ հաջորդ տարիներին, ըստ որում՝ դեռ Դորպատում:

Օրփեոսին վերաբերող գրառման անմիջական շարունակությունն է հաջորդ, բավականաչափ ծավալուն դրվագը, ուր Արովյանի ուշադրությունը անտիկ մշակույթի դասական օրրաններից փոխադրվում է հյուսիսային ծայրագավառներ՝ Շոտլանդիայի և Իռլանդիայի պատմության առասպելական ժամանակներ, երբ ապրում ու ստեղծագործում էր մեկ այլ հանճարեղ բանաստեղծ՝ կույր գուսան Օսիանը, որը նույնպես խևական կախարդ էր, իոդու աշխերով տեսնում էր անցածգնացած դարերն ու հերոսներին, նրանց սիրանեները, մարդկային բազմություններ, տեսնում ու ներբողում...

«Մերութիւն, բայց կուրացեալ Օսիան, լուաւ զշորշոփ (տարրերակ՝ զշշիւն - Պ. Հ.) ստուերաց հարց իւրոց և հոգույ ակամք ետես զդամարհակ նոցա: Աստեղի ցոլանային զանգուածով հոգույ նորա. նա կոչեաց զիւր Մոլֆինա, խաղայր առաջի նորա և երգէր: Եւ ստուերակերպ գործք մեծագործ նախնեաց իւրոց զեռային զիոգուվ նորա»:

Ամեն ինչ այսաեղ ումանտիկ շղարշով է պարուրված, մինչդեռ (արդի հայեցակետից) Օսիանի խնդիրը խիստ վարկածային ու անըմբոնելի էր, մինչ տեղի ունեցավ նրա «ժառանգության» գյուտն ու հալրացավը. բայց նրանով հմայված էր 18-րդ դարի երկրորդ և հաջորդ դարի առաջին տասնամյակների գրական հասարակայնությունը ողջ Եվրոպայում:

Ըստ ավանդության՝ շոտլանդական այս առասպելական զրականն ու գուսանը ապրել է ավելի քան մեկուկես հազարամյակ առաջ, բանավոր հանապարհով նրա հիշատակն ու ստեղծագործության պատառիկները փոխանցվել էին սերնդից-սերունդ, իսկ որոշ ժշշանեներ անգամ մուտք գործել (գրի առնվել) 12-րդ դարի շոտլանդական մեռագիր մատյանները: Այնուհանդերձ, 18-րդ դարի կեսերին նրա հայրենիքում հիշվում էին միայն Օսիանի մասն և ինչ-ինչ բեկորներ նրա արժանահիշատակ խոսքերից՝ հարկավ ժամանակի հետ աղոտացած ու այլափոխված: Արովյանի նկատողություններն ահա այս գուսանի մասին են, միայն թե ո՞չ նրա բուն ստեղծագործությունների, որպիսիք մեջտեղում չկային, և անկարելի էր վերականգնել, այլ նրանց, որոնք վերագրվեցին նրան և ամբողջ մի դար մոլորության մեջ պահեցին գրեթե բոլոր մեծ գրուներին: Ահա թե ի՞նչ կատարվեց Օսիանի հետ: Էղինուրգի համալսարանի շրջանավարտ, ուսուցիչ և բանահավաք Զեյմս Մաքֆերտոն (1736-1796), որի հավաքած ու հրատարակած

բանահյուսական ժողովածուները ջերմ ընդունելության էին արժանացել, նախ՝ 1762 և 1763 թթ., իրար ետևից լույս աշխարհ հանեց «Ֆինգալ» և «Տեմորա» շոտլանդական հերոսական ասեմբը կամ պոեմները, իբր, քարգմանված տեղացիների հին լեզվից (գելերենից), իսկ երկու տարի անց դրանք ամփոփեց մի գրքում՝ այս անգամ խորագրելով «Ֆինգալի որդու՝ Օսիանի ստեղծագործությունները»։ Այդ պոեմներն առլեցուն էին հուզիչ պատկերներով, բնության գրավիչ տեսարաններով, հնարականությամբ և մեղմ քախծով։ Կարճ ժամանակում, ասացինք, նրանք հվանեցին ողջ գրական ծվրոպան։ Օսիանի «ստեղծագործությունների» ազդեցությանը ենթարկվեցին ու նրանց գրական քարձը արժանիքները խոստովանեցին, մասամբ և քարգմանեցին՝ Հերդերն ու Գյորեն, Բայրոնն ու Լամարտինը, Ժուլիովակին ու Պուշկինը։ Բոլորի անկեղծ համոզումն էր, որ հայտնագործվել էին նոր Հոմերոս և «Իլիական» հին Շոտլանդիայի կյանքով ու հերոսների անսովոր աշխարհով։ Երբեմնի քաշարի զորական, արդեն ծերունի գուսան Օսիանը կորցրել էր հերոս որդուն՝ Օսիարին, կուրացել, բայց և անօգնական չէր։ Նա գտել էր նոր ու անդավանան ուղեկից և նեցուկ, հանձնն որդու սիրած աղջկա՝ Տուկարի դուստր գեղանի Մալվինայի, որը Օսիարի զոհվելուց հետո իրեն նվիրաբերել էր նրա ծերունի հորը։ Երկուսով քափառում էին հայրենի բնության գոյտրիկ անկյուններում, զրուցում իրար հետ, հարցուփորձ անում, վերիշում էին ասեմբ ու վեպեր, և այդ զրույցներից էլ ծնվում են Օսիանի զարմանահրաշ երգերը…

Իրականում, սակայն, այդ ամենը Մաքֆերսոնի երևակայության ծնունդն էին և հորինված էին շոտլանդական ժողովրդական բանահյուսության ոճով ու ոգով, 18-րդ դարի 50-ական թթ. Վերջերին և 60-ականների սկզբներին։ Ոչ վերևում հիշված, նաև ուրիշ շատ գրողներ, ոչ էլ Արովյանը, գոնե այն ժամանակ, չեն զգացել Օսիանի գրական կեղծիք լինելը։ Արովյանը ումանտիկ գեղագիտության ոգով էր ընկալում Օսիանին, որի գլուխգործոցները կյանքի էին կոչված հենց բնության շնորհիկ ու վերջինս ներգործությամբ, բնության կանչերը, ձայներն ու ցոլքերն էին նպաստում, որ կույր բանաստեղծի երևակայության մեջ հառնեին նախնական հերոսական գործերը և ազդու կերպարանները, որոնք պատրանեների պես եռում էին նրա չորս բոլորը, դյուրացնում երգելն ու նվագելը, վարպետորեն պատմելը տեսածի ու լսածի մասին։ Ի դեպ, հենրին նմանվելու գգտումը, իրենց սեփական ստեղծագործությունները անցած դարերի մեջ հերթողներին ու անանուն գուսաններին վերագրելու փորձերը, այն էլ, երբեմն, բավականաչափ հաջող փորձերը, Մաքֆերսոնով և Օսիանի հերոսական ասեմբը չեն վերջանում։ 19-րդ դարի առաջին կեսին հրապարակված բազում երկեր են ծանոր և օտար, և մինչև անգամ հայ գրականությունից։

Քրանչսիացի վիպասան Պրոսպեր Մերիմեն հրապուրված սերբական ժողովրդական երգերով՝ հորինեց իր բանաստեղծությունների հայտնի շարքը և տպագրեց որպես Հարավային պատկերների երգեր։ Իսկ ոռու բանաստեղծ Պուշկինը, լիակատար հավաս ընծայելով նրան, ոչ միայն քարգմանեց ոռուսերեն, այլև իր հրապարակմանը կցեց գնահատականի խոսք։ Գերմանացի բանաստեղծ Ֆ. Բոդենշտեդը պարսից դասական հնարերգության նմանողությամբ գրեց և հրապարակեց, այսպես կոչված, «Միրզ Շափու երգերը»։ Իսկ երբ տարիներ անց հրապարակավ բացատրեց գաղտնիքը, սկսեցին կասկածել նրա անկեղծությանը,

որովհետև նմանողությունները փայլուն էին, ու Միրզա Շաֆի անունով մի գյանցացի բուրք ուսուցիչ էր ապրել նույն ժամանակները... Հետո ազերի բուրքները Բողենշտեղի գրածները քարգմանում են իրենց լեզվով, իբր, իրենց հանարեղ բանաստեղծի կորած գրվածները վերականգնելու համար, իսկ Բողենշտեղին էլ պիտակավորում «գրագորի» անարգական կոչումով...

Վերջապես՝ Արովյանն իր հորինած եղերերգական էջերից մեկ-երկուսը դասել է բանահյուսական նյութերի շարքը և նրանց գերմաններեն քարգմանությունները ներկայացրել որպես հայ ժողովրդական երգեր, որոնցից մեկը մինչև իսկ տպագրված է Ձ. Բողենշտեղի «Հազար ու մեկ օր Արևելքում» ուղեգրության մեջ:

Կարե՛ ոռմանանութիվի դարաշրջանն ու գեղագիտությունն էին տրամադրում բանաստեղծներին գրական միստիքիկացիաների, իսկ լավագույն դեպքում՝ նմանությունների (օր.՝ Գյորեի «Գերման-արևելյան դիվան»), որոնք այնուհետև ապրում էին իրենց ինքնուրույն կյանքով, ապրում և ազդում: Օսխանի ստեղծագործությունը նույնպես այդպիսի կեղծիք էր: Արովյանը, եթե մինչև իսկ տեղյակ էլ ինքը նրանց հորինման հաճամաններին, հազիվ թե դադարեր նրանցով հիանալուց:

Հաջորդ դիտողությունը, որ գրականության հարցերին առնչվող նշումներից չորրորդն ու վերջինն է, մի տեսակ, կարծես, ամփոփում է նախորդ ասածները և մեկ-երկու բառով բնուրագրում գրական-ստեղծագործական աշխատանքն ինքյան, որն ուղեկցվում է ինքնամոռաց ու խորհրդավոր պահերով: Արովյանը (թե՞ առ այսօր անծանոթ նրա սկզբնադրյուրը) ասում է.

«Բանաստեղծն յածէ զանու իւր գառարկիւր իւրով, որպէս Ախիլլէս զցնորեալ ստուերօֆ իւրոյն Պատրօլոսի»:

Առաջին ընթերցմամբ բավականաչափ պարզ այս նախադասությունը կարիք ունի նախ՝ նշգրիտ բարգմանության, այլապես բուն իմաստը մուր կմնա, և գլխավոր «մեղավորները» գառարկիւր, զցնորեալ բառերը և յածէ զանու կապակցություններն են:

Զանուարկիւր-ի եզակին առարկ գոյականն է, որ նշանակում է հանելուկ, բայց և՝ ձեռնարկ:

Ցնորեալ մակդիրի համար ցնոր, ցնորքն է և նշանակում է՝ ցնորական, երազական, երևակայական, երևորական:

Ֆածէ զանու նշանակում է՝ տարածել, երկարել ձեռքերը, բայց և, փոխարերական իմաստով՝ լարում է միտոր:

Այսպիսով, արդի հայերենով՝ Արովյանն ասում է. «Բանաստեղծը տարածում է իր ձեռքերը (ասել է թե՝ լարում է միտքը – Պ. Հ.) յուր հանելուկային մտահղացման շուրջ, ինչպես Ախիլլեսը՝ յուր Պատրոկլոսի երևորական ստվերի շուրջ»:

Նշանակում է՝ որքան էլ բնության ներգործությամբ բացվեն բնականից կույր գուսանի հոգու աչքերն ու մյուս զգայարանները՝ տեսնելու, ընկալելու իր շրջապատի կախարդական ձայներն ու պատկերները և վերարտադրելու բազում դարեր առաջ ապրած նախնյաց գործերը, այնուամենայնիվ, գրական-ստեղծագործական աշխատանքն ինքնին բարդ ու հանելուկային աշխարհ է՝ անսպասելիորեն հանող ու անեացող երևորական պատկերներով, որոնց վերարտադրումը պահանջում է մեծ լարում ու հոգեկան տառապանքներ: Այս է մեզ անուղղակիորեն հուշում բնած Ախիլլեսի և մահացած Պատրոկլոսի դեգերող

ստվերի հանդիպման պահի զուգորդումը կամ համեմատությունը գրական աշխատանքի հետ, որը երեւ Արովյանի բուն համոզումն էլ չէ, ապա փոխառություն է նրա համակրանքը շահած օտար, անծանոթ հեղինակից: Հոմերոսի պոեմը քաջ ծանոթ էր Արովյանին, և նա մի հատված քարգմանել է իր ուսանողության տարիներին (Հեկտորի հրաժեշտը), անգամ հրապարակային անորդներից մեկի ժամանակ դրամով գնել էր «Իլիականի» գերմաներեն քարգմանության առաջին հրատակությունը (Ֆոսի), բայց սույն նշումը ավելի վաղ է արված:

Արովյանի մատնանշած դրվագը «Իլիականի» ժամերեքերորդ երգից է և նիշտ որ էությամբ խորհրդավոր:

«Իլիականում» Աքիլլեսը երր տեսիլում պարզում է բազուկները, որ իրապես գրկի ընկերոջը՝ Պատրոկլոսին,

Սակայն հոգին զի շաչելով, ինչպես մի ծովս, չվեց, մտավ
Խորքը երկրի: Ոտքի կանգնեց Աքիլլեսը սաստիկ ապշած...¹⁰

Ասել է, թե ստեղծագործական աշխատանքի պահերին հեղինակին այցելում են արագործներով ու անեւացող տեսիլներ, և միշտ չէ, որ նրա գրիչը կարողանում է հասնել մտերի ետևից, պատկերել կամ վերարտադրել դրանք:

Ի դեպ, այդպիսի հոգեվիճակում է եղել նաև ինքը՝ Արովյանը, 1841-ի Բարեկենդանանին, մինչ թողին էր հանձնում «Վերք Հայաստանի» վեպի նախնական տարրերակը. «Երեք օր, երեք գիշեր ուտելը, իմելը, բնելը, մինչև իսկ տեղից շարժվելն ինձ համար դժոխային տանջանքներ էին: Ես կատաղում էի, երբ կողենվս նույնիսկ նանք էր բռչում... Հայոց նոր լեզուն, որով ես մինչ այդ ամենաաննշան ոտանակորներն անգամ դժվարությամբ էի գրում, արքնացրել էր հիշողության մեջ պատկերներ, գաղափարներ, որոնց մասին մինչ այդ պատկերացում իսկ չունեի: Իմ գրիչը չէր հասնում մտերիս ու գգացմունքներիս ետևից: Հանգավոր տողերը, հորձանք տալով, քափում էին թղթի վրա: Ժողովրդական ամեն տեսակ ավանդություններ, կրօնական հավատալիքներ, առանց որևէ կարգ ու կանոնի, խառնվում էին իրար...» և այլն¹¹:

Այս է ահա՛, ի վերջո, ստեղծագործական աշխատանքը՝ ծանր, ինքնամոռաց, տառապագին, և գրողի խնդիրն է չափ ու կշռի, կարգ ու կանոնի տակ դնել անսպասելիորեն արքնացած հուշերն ու տպափորությունները և երևակայության պատրանեները:

Հաջորդ բոլոր դիտողությունները թևածում են այլ բնագավառ՝ դիցարանության կախարդական աշխարհը՝ նյութ ունենալով ինը հույների ու հոոմեացիների պատկերացումները: Անդրադառնանք դրանց նույն հաջորդականությամբ, ինչպես Արովյանն է գրի առել իր տետրակում.

1. «Մենուս չաստուածուի տայ զանուշահու բուրմունս մանուշակաց»:

Ֆենուս չաստվածուին Վեներան է: Դիցուհու անվան այս անսովոր ձևն ստացվել է գերմաներեն *Venus*-ը մեքենայորեն տառադարձնելու պատճառով: Վեներան ընդհանրապես հայտնի է որպես ինը հոոմեացիների այգիների աստվա-

¹⁰ Հոմերոս, «Իլիական», բարգ. Հ. Համբարձումյանի, Ե., 1955, էջ 422-424, իգ 65-72, 94-98, 100-101:

¹¹ Խ. Արովյան, «Վերք Հայաստանի», Ե., 1984, էջ 274-275:

ծուիի, որի պատճառով նրա անունն ընկալվում էր նաև իրք մրգերի հոմանիշ։ Հետագայում նրան նույնացնում են սիրո և գեղեցկության աստվածուհու՝ հունական Աֆրոդիտեի հետ, միայն թե հոռմեական աշխարհում առավելապես ընդգծում ու ծայրահեղության են հասցնում դիցուհու շնորհներից մեկը՝ սիրային կրթերը։ Այսպիսով՝ Վեներան միաժամանակ կրողն է և՝ հունական Աֆրոդիտեի հաւաքնիշների, և՝ հոռմեական այլափոխումների։

Հերթի պատկերացմամբ՝ երբ քայլում էր Աֆրոդիտեն, նրա շորերից անուշահու բուրմունք էր տարածվում, իսկ շուրջը փրբում էին ծաղիկները։ Հոմերոսն, օրինակ, նրան մշտապես պատկերացնում էր վարդերով, մանուշակներով, նարգիզներով ու շուշաններով շրջապատված, անգամ իր հիմներից մեկում նրան անվանում է «մանուշակներով պասկաված»։ Նկատի առնելով այս հավատալիքները՝ հնարավոր է միագամայն, որ Վեներային վերագրվեր մանուշակներին բուրմունք պարգևելու շնորի։

Ի՞նչ աղբյուր է ձեռքի տակ ունեցել Արովյանը սույն նշումը կատարելիս՝ չենք կարողացել պարզել։

2. *Ուրնայ Մուզայից*. այստեղ բացատրության կարիք են զգում և՝ առաջին, և՝ երկրորդ բառերը, և՝ կապակցությունն ամրողությամբ։ *Ուրնա* բառը լատիններեն է և նշանակում է սափոր։ Նրա մեջ իին հույները, Էտրուսկներն ու հոռմեացիները ամփոփում էին դիակիզումից հետո հանգուցյալից մնացած մոխիրը կամ աճյունը։ Հետեարար, այդ բառի հայերեն համարեմք կիմին աճյունասափոր։ Սովորաբար, առօրյա կյանքում օգտագործվում էին ինչպես պարզ սափորները, այնպես էլ գունազարդվածները, որոնք պատկերում էին իին առասպելների հերոսների՝ աստվածների ու հոկաների գործերն ու սիրանները, դրվագներ «Խիլականից» և այլն։ Առօրյա տնեսական կարիքների համար նմանապես պատրաստում էին սափորներ կամ ամֆորաներ, բայց Արովյանի խոսքն առաջինների մասին է։

Ինչ վերաբերում է մուսաներին («մուզայից»), ապա դիցարանական պատկերացումների համաձայն նրանք դուստրերն էին Զևսի ու Մենեսոսինայի, ընդհանուր բվով ինը, և ընկալվում էին որպես ամեն կարգի մտավոր գործունեության՝ գրականության, գիտության և արվեստի այլևայլ բնագավառների հովանավորածությունների։ Նրանց էին դիմում բանաստեղծները՝ ներշնչանք ու մղում ստանալու համար։ Մուսաներից երկուսը՝ էրատոն և էվտերպեն, հովանավորում ու շնորհներ էին պարգևում բնաբերգակներին, ըստ որում՝ էրատոնի բարեհանության էին արժանանում հատկապես այն բանաստեղծները, որոնք հորինում էին սեռային կրթեր արբանցնող երգեր, իսկ էվտերպի շնորհները տարածվում էին իրենց երգերը սրճագի նվագակցությամբ կատարող բանաստեղծների վրա։ Հաջորդ մուսան կալլիոպեն է, որը էպիկական բանաստեղծության հովանավորն է, մինչ Կլիոն բարեհան է պատմություն գրողների նկատմամբ, Մելապոմենեն՝ ողբերգության կամ ողբերգակ դերասանների, Պոլիհիմենիան՝ պարի և երածշության, Տերպսիկոռեն՝ նեարի ու պարի, Թալեան՝ կատակերգության, վերջապես՝ Ուրանիան՝ աստղագիտության։

Պահպանվել և մինչև մեր օրերն են հասել իին հունական ու հոռմեական նոխ գունազարդումներով սափորներ, որոնց վրա պատկերված են մուսաների գործերից դրվագներ։ «Ուրնայ Մուզայից» արտահայտությունն, անտարակույս, վերաբերում է նման սափորներին, որոնց նմանակները կամ պատկերների

արտատպությունները Արովյանը կարող էր տիսմել, գերմաներից գրեթերից բացի, նաև Գորպատի համարանի դասական հնությունների սրահում։ Գիտենք, օրինակ, որ Ուրամիան պատկերվում էր երիտասարդ, աղջկա տիսելու՝ ձեռքին երկրագումնի Մյուտները՝ յուրաքանչյուրն իր նախասիրած լերբողի կամ արվեստագետի ու երաժշտական գործիքի հետ (Բնար, կիրառ, տավիր և այլն)։

3. «Պրոմեքեն» որմէ բազում առասպեկտ գտամին առ յոյժն (Արքայ յունաց)։

Պրոմեթեոսի մասին հիմ հույնները նիշտ որ հյուսել են բազում առասպեկտներ, միայն թե, հակառակ Արովյանի գրառման կամ նրա օգտագործած աղբյուրի, նա ոչ թե հունաց արքա է, այլ առասպեկտական հզոր ու ամերկյուղ եերու (տիտան), որի աշակցությունն է քանից խնդրել աստվածներից հզորագույնը։ Զեւսը:

Արովյանի ակնարկած «քազում առասպեկտներից» մի ժամփար յուրօրինակ գրական մարմնավորում են առել էսմիթեսի «Եղբայակապ Պրոմեթեոսը» ողբերգության մեջ։ Անտարակույս, Արովյանին ծանոր էր հույն ողբերգակի այդ ստեղծագործությունը։

4. «Եւ մինչը զայ ի Զեսուէ»՝ ասաց Ախիլլես ցհայրն Հօմերոս։

Զեսը կամ Զիսոս (ինքնազրում բառը կարելի է երկու ձևով եւ վերծանիլ) գերմաններն Զευς դիցանվան անհաջող տառադարձությունն է։ Ճիշտը կիթեր Զես, որը, ըստ հույն դիցարանության, աստվածների ու մարդկության հայրն է, հույնների գերագույն աստվածը, երկնի տիրակալը և երկրի վրա կարգ ու կանոն սահմանողը։ Նրա հրամանով են մոլեգնում որոտն ու կայծակը, կուտակվում ամփերը, տեղում անձրիք։ Նա է մարդկանց պարգևում հարստություն, առավում հաշողություն։ Դողոնայի բուրմերը հավատում էին, որ Զեսն է ուղարկում նաև երազները։

Այսպիսով՝ Արովյանի գրառման իմաստն, ըստ դիցարանական պատկերացումների, միանգամայն հասկանալի է, միայն թե մեզ չհաջողվեց «Էլիականի» հազարավոր տողերի մեջ գտնել հենց ցանկալին, ուր, իբր, Աքելլեսը հայր Հոմերոսի հետ խոսում է մինչը Զեսի կողմից մարդկանց առաքելու մասին։ Ասենք և այն, որ հազիվ թե այդպիսի գրույց իրականում տեղի ունենար, որովհետև Հոմերոս, ինչքան հայտնի է, ականատես ու մասնակից չի եղի իր պոեմներում նկարագրված դեմքներին ու դեպքերին։ Համեմայն դեպս, եթե Արովյանի օգտագործած գերմաններն աղբյուրն այդ վկայել է, առա հարկ է համբերությամբ կրկնի ու կրկն վերծանել «Էլիականը», թերևս ակնարկվող արտահայտությունը հայտնաբերվի։

5. «Ինձ այնպէս բռի, թէ բռութիւնն Ակարեաց ազգ մի իրք զգեղուղեց կից՝ յանձնի որոյ կեպաւորեալ զազդի ազգի անաստան և տումեկա»։

Նախ՝ մի վերապահում՝ ՄՅԱԴոց Գրքի համաձայն, Աստված անաստաններին ստեղծել է Արարչության վեցերորդ օրը (Ծննդ. Ա. 24-26), իսկ բռոյսերն ու ծառերը՝ Արանցից ել առաջ, Արարչության երրորդ օրը (Ա. 11-13)։

Նշանակում է՝ ըստ Սուրբ Գրքի (հետևարար և հակառակ Արովյանի) գեղուղեց կիմ հիշեցնող էակի արարումից շատ առաջ բնության մեջ արդեն կային և՛ բռոյսեր ու տումեկեր, և՛ կինդամիներ ու զազաններ, և՛ բռչումներ ու սողումներ, կենդամիներ ստեղծելու առասպեկտ մասին, որին, կարծես, հավատում է Արովյանը։

Այնուամենայնիվ, անասունների ու տունկերի առաջացման այդ վարկածը, շեղփելով հանդերձ Սրբության սահմանած կարգից, միաժամանակ, կարծես, բելադրված էր իրականության ու բնուրյան մեջ առկա որոշ ամբացատրելի իրողություններով:

Եթիւ մարդ ուշադրությամբ գննում ու բննում է քնության արարածներից մեկի կամ մյուսի արտահիմը՝ աչերի ձեր, հասակը, պացքը և այլն, իրենից անկախ, համեմատության կամ նմանության եզրեր է Աշխարում դրանց և մարդկայինի միջև, ըստ որում՝ առավելապես կանաց դեմքի ու հասակի հետ կազմած։ Արևելյան դասական բնարերգությունը առատ է նմանօրինակ համեմատություններով ու այլարանություններով։ Արովյանի միտքը խնդրու առարկա հարցերի բննությանը էր մղել, ամենայն հականականությամբ, արևելցու հետաքրքրասիրությունն ու փերչին էլ բելադրի նրան, իրքի ժերբողի, անտիկ դիցարանության մասին վերսիշյալ գրառումն ավարտել մի նկատողությամբ, որն աղերսներ ուներ նաև հայ դիցարանության ու հայաստալիքների հետ՝ համարձակություն ներշնչելով Սուրբ Գրի առկայության դեպքում զրկելու։ «Ինձ այնպիս է քվում, թե բնությունն ի ցույց է դրել զեղութեղ կին հիշեցնող ինչ-որ արարած, որի նմանությամբ և կերպավորութիւն տեսակ-տեսակ ներառնենում ու ձևակառու-

Եվ այսպես՝ բնուրյունն է ծնողը բուսական ու կենդանական աշխարհի, բնուրյունն է հանդիսանում ակունքն ու բուվանդակուրյունը գեղեցիկ արվեստների ու քանատեղ ծուրյան, բնուրյան ճայների ու լուսառումների ներքորդման շնորհիվ և արբանում ստեղծագործական ուժերը մարդու մէջ, և առ ունակուրյուն է ձեռք բերում տեսներու և վերարտադրելու ոչ միայն մոտիվ, այլև վաղմանական անցյալը, նաև՝ հետափոր գալիքը:

Բնությունը, կարծես, նույնանում է արարող ոգու կամ Աստծո հետ, իսկ Արովյանը, ձերքագատվելով աստվածաբանական սխեմաներից, փարում է պանթեիստական աշխարհությունները:

Այս բանով հարմար ենք դառնում ափարտել մեր ասելիքը Արովյանի Սկատո-
ղուրյունների վերաբերյալ և նրանց ամբողջական, ճշգրտված բնազրի մեջբեր-
մամբ վերապես ունի մեր խոսին:

Նկատի առնելով սույն ինքնազրի հայերեն մասի շարադրանիքի ռեական ու գեղագրական յուրահատկությունները, օտար ամձմանունների մեջ սպրդած անշտուրյունները, գերմաներեն էջերում առկա հերականական և ուղղագրական թերթները, գրչի ալմահայտ անվարժությունը գորերեն տառերը դրույթներու արվեստին, վերջապես՝ նրանց նմանությունը 1831 թ. մայիսին Շ. Գրասսին ուղղված նամակի ձեռագրին (տե՛ս Արովյանի բողոքներ, թիվ 397), կարելի է եղբակացնել, որ տեսրակի բոլոր Այուրերը հայված կամ քարգմանված են 1831 թ. կեսերին, թերևս մայիս-հունիսին:

Ա. Դ. ԵԵՎԱՐԻՐՅԱՆ

ԴՐԱԳԱԳՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ XIV ԴԱՐԻ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐՍԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*

Մաս II

Պատմագիտությունը գտնում է, որ տաճութել Ալիօի և իշխանազում Դավիթ որդիներն էին կապանցի Թորոս ավագ մարածախտ ու սպարապետը և Օշին մարածախտը²⁸: Թորոս ավագ մարածախտի որդիներն էին սպարապետ պարոն Լիպարիտ մարածախտը և պարոն Վասիլ ավագ մարածախտը²⁹: Իսկ Օշին մարածախտի որդին էր մյուս Վասիլ Իշխանը:

Կապանցի պարոն Թորոս ավագ մարածախտը, Լիպարիտից և Վասիլից քաջի, ունեցել է նաև Լիկոս անունով կրտսեր որդի: Ըստ գոյություն ունեցող ժողովրդական գրավոր մի գրույցի, նրանք եղել են իրեն 7 եղբայր և մի քույր³⁰:

Խնդրո առարկա սպարապետ Լիպարիտի և ավագ մարածախտ Վասիլի մասին պահպանվել են մի քանի հավաստի տեղեկություններ: Սպարապետ Լիպարիտի անունը մեզ հայտնի է դեռ 1368 թ. Սահի շրութ տեղի ունեցած ճակատամարտից, ուր գլխովին ջախչախվել էր Տարսոնի մամլուկ ամիրա Շահարօղլի Մանչակի բանակը: Սահի և շրջակա բերդերի պաշտպանները, Լիպարիտ սպարապետի առաջնորդությամբ, ուազմավարական մի հիանակի ծրագիր են գործադրում, որից հետո թշնամին ընկնում է ծուղակը: Մանչակի բանակը փակ տարածության մեջ կոտորվում է, իսկ ամիրան հազիվ կարողանում է ճողովրել դեպի Տարսոն: Սակայն նա, կրած պարտության և կորուստների վեհեք լուծելու համար, հաջորդ՝ 1369 թ. երկրորդ անգամ 60000-անոց մի բանակով արշավում է Սահի վրա: Այս պատերազմը ճակատագրական ելք է ունենում սպարապետ Լիպարիտի համար: ճակատամարտում սպարապետ Լիպարիտը Սահի կամրջի³¹ պաշտպանությունը հանձնել էր քագավոր Կոստանդին VI-ին (1365-1373 թթ.): Սիս բերդաքաղաքի դոմերից մեկը գտնվում էր հիշյալ կամրջի մոտ: Այդ պատճառով կազմությը ուազմագիտական մեծ նշանակություն ուներ ճայրաքաղաքի պաշտպանության

* Ակիզը տես հմբ. Բ-Գ, էջ 191:

28 Պ. Ս. Խաչատրյան, Հովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարիտին» պատմական ողբը, «Պատմա-քանասիրական հանդես», 1964, N 2, էջ 116:

29 ԺԴ Դարի հայերեն ծերագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 451:

30 Ն. Ակինյան, Քաջն Լիպարիտ պատմության, տաղերու և գրույցներու մեջ, «Հանդես ամսօյա», 1933, հունվար-փետրվար, էջ 129-130: Ամենունիկ Մրայայան, Հայ միջնադարյան գրույցներ, Երևան, 1969, էջ 241, «Պատմութիւն քաջ Լիպարիտին և թեր նորին»: Ցովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրեց էմ. Պիվազյան, Երևան, 1960, էջ 271: ՍՍ ձեռ. NN3569, 6951 և 515:

31 Սահի պատմական կամուրջը մինչև օրս օգտագործվում է և կոչվում «Կողան քոփրյութի»: Կիլիկիայի հայերը այն անվանում էին «Անցմանցին կանդարայան»:

գործում: Սպարապետ Լիպարիտը, հայ ասպետների գլուխ անցած, միսրճվում է թշնամու շարքերի մեջ և խուճապ առաջացնում Մանչակ ամիրայի բանակում: Սակայ պաշտպանները սկզբում լավ էին կովում թշնամու ղեմ: Սակայն կովի ճակատագրական մի պահին Կոստանդին VI թագավորը նենգաբար ետ է քաշում իր տրամադրության տակ գտնվող կամրջի պաշտպան մարտիկներին և պաշարման վտանգի տակ թողնում թշնամու դասավորությունների մեջ միսրճված սպարապետ Լիպարիտին ու նրա հետ միասին մարտնչող հայ ռազմիկներին: Մանչակ ամիրայի գինուրները, գրավելով անպաշտպան մնացած կամուրջը, կտրում են Լիպարիտի վերադարձի ճանապարհը: Նա ջանում է նահանջելով անցնել կամուրջը, սակայն դա չի հաջողվում նրան: Սակայ կամրջի շուրջ տեղի ունեցած կովի ժամանակ հերոսի մահով զոհվում են հոգնած ու անօգնական մնացած սպարապետ Լիպարիտը³², սիր Յոհանը³³ և 100 հայ մարտիկներ: Թշնամին Լիպարիտի գլուխը տանում է իր հետ: Ամիրան ափսոսանք է հայտնում Լիպարիտի սպանության առիվ, նա մտադիր է եղել Լիպարիտին իր ծառայության մեջ ընդունել և նրա միջոցով ոչնչացնել իր թշնամիներին:

Սակայ կամրջի պաշտպանությունը լրելուց հետո, Կոստանդին VI թագավորը քաշվում է Սակայ քարարլի գագաթին գտնվող բերդը ու փակել տալիս կամրջի մոտակա քաղաքի դուռը: Սպարապետ Լիպարիտը կամրջի մոտ կովի թեժ պահին ծայնում է թագավորին, որպեսզի օգնեն իրեն: Սակայն թագավորը մնում է անհողողող: Նա տեսնում է Սակայ պարիսպների ստորոտում կովով յուրայիների կորուստը և ապա Սիս մայրաքաղաքի ավերումը:

Ճակատամարտի ժամանակ թագավորի կողմից սպարապետին թշնամու բանակի շարքերի մեջ միսրճված վիճակում անօգնական թողնելու համար գոյություն պիտի ունենար զրավոր մի դրդապատճառ: Դրա լուսաբաննան որոշ տեղեկություններ են պարունակում Լիպարիտի եղբօրք՝ ավագ մարածախտ Վասիլի գրած ժամանակագրության հետևյալ տողերը.

«Կու ասեն, թէ Կոստանդին թագաւոր՝ պարոն Յեթրու որդին, եթեր զիհծելն ու տուր տուեց զպարոն Լիպարիտն ու զքաղաքն տաճկին...»³⁴:

Նետագայում (1373 թ.) Կոստանդին VI-ի նկատմամբ կազմակերպվել է դավադրություն, որի հետևանքով սպանվում է թագավորը³⁵: Դավադրությունը մեկն էր զոհված Լիպարիտի եղբայր, ավագ մարածախտ Վասիլը: Ըստ միջնադարում գոյություն ունեցող ֆեոդալական դրույթների, դա շատ սովորական երևույթ էր:

32 Ք. Ամառյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 431, և Գ, էջ 194:

33 Սույն տեղում, Գ, էջ 624:

34 «Կասեն թէ, պարոն Յեթրու որդի Կոստանդին թագավորը, բերավ տաճկի հեծելազորը ու հանձնեց պարոն Լիպարիտը և (Սիս) քաղաքը»: See in British Museum, Catal.Or. 5458, թր. 143թ: «Պատմա-քանասիրական հանդես», 1963, N 4, էջ 197: Կոնիրիթ, Ցուց. թ. 113, էջ 292: «Յանդես ամսօրյա», 1965, հունվար-մարտ, էջ 30:

35 Սպանության պատճառ է հանդիսացել վախկու և արծարաեր Կոստանդին VI թագավորի անվայել արարքը: Բացիկ է թշնամու հետ նրա կայացրած գաղտնի գործարքը: Նա համաձայնել էր թշնամուն հանձնել Կիլիկիայի Յայկական պետությունը և փոխարենը ստանալ իր անձի ու գանձերի անձեռնմխելիության երաշխիքը, որպեսզի Կարողանա վախել Կիպրոս Կղզի:

Կարելի է ասել, որ պարոն Լիպարիտը և Վասիլը սերում էին Յայոց թագավորական ընտանիքից և Կիլիկիայի հայկական թագավորության գահի հավակնորդներ էին: Այդ պատճառով էլ Կոստանդին VI-ին կասկած էին ներշնչում հայացած այդ վրացի պարոնները: Դրա մասին է ակնարկում տաղասաց Շովիաննես Թլկուրանցին: «Եւ թագաւորն Յայոց երկեաւ ՚ի քաջ Լիպարիտն, զի մի գուցց և զինքն ըսպանան և թագաւորէ»³⁶:

Թագավորի բոլոնորդի պարոն Լիպարիտի և Վասիլի ժառանգության իրավաբանական դրույթունը բնականաբար կասկած էր ներշնչում Կոստանդին VI-ին: Քաջ սպարապետից ընդմիշտ ազատվելու համար, նա կազմակերպել էր արյունավի ու նենգ մի սպանություն, որի պատճառով տուժեց նաև Սսի և շրջակայի հայ բնակչությունը:

Քաջ Լիպարիտի կերպարը աննահացել է հայ ժողովրդի երգերում, զրոյցներում ու պատումներում: Դրա մի արձագանքն են տաղասաց Յովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարիտին» պատմական ողբը, կաֆացի Սարգիս անունով մի անձանոթ երգչի՝ Լիպարիտին ծոնած սրտառուց երգը³⁷, «Եօթ եղբայր հսկայք եւ քոյր նոցին»³⁸ և «Պատմութիւն քաջ Լիպարիտին եւ քեւ նորին»³⁹ ժողովրդական զրոյցները:

Կիլիկիայի հայկական պետության անկումից (1375 թ.) հետո մոռացության և կորստի են մատնվել համարյա բոլոր հայ թագավորների, իշխանների ու ազնվականների գերեզմանները: Սակայն դարեր շարունակ պահպանվել և ուխտատեղիի է վերածվել սպարապետ Լիպարիտի գերեզմանը: Մինչև Առաջին Յանաշխարհային պատերազմը Սիսում գոյություն ուներ Լիպարիտի գերեզմանը, որին բուրբերը Աղճա-Բաբա կին անվանում: Դա գտնվում էր իին Սիս բերդաքաղաքի պարիսպներից ներս, արդի Աղճան վիլայեթի Կողան շրջկենտրոնի կառավարական խոշոր շենքի և նրա բակի⁴⁰ տեղում (1958 թ.): Ըստ ավանդության, այդ տափարակ վայրում էին գտնվում Կիլիկիայի հայ իշխանների և ազնվականների գերեզմանները⁴¹:

Կապանի կոմսերը և կոմսութինները միշտ չեն, որ ապրում էին Կապանում: Նրանք Սիսում, Տարսոնում, Կապանում և շրջակա գյուղերում ունեին ապարանքներ կամ բնակարաններ: Թորոս ավագ մարածախտը ծնվել էր Կապանում: Նրա որդիներից վերոհիշյալ Վասիլը ծնվել էր Սիսում, իսկ նրա եղբայր Լիպարիտը՝ Կապանի Սասն գյուղում⁴²:

³⁶ Յովիաննես Թլկուրանցի, նշվ. աշխ., էջ 271: Պ. Ս. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 114: Հ. Աճառյան, նշվ. աշխ., Բ, էջ 433: Արմենուի Սրբապան, նշվ. աշխ., էջ 239: ՍՍ, ծեռ. NN 3569, էջ 25ա: 6951, էջ 129թ: 515, էջ 26ա:

³⁷ Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 431:

³⁸ Ս. Սրբապան, նշվ. աշխ., էջ 241-244: ՍՍ ծեռ. N 515, էջ 26թ:

³⁹ Ս. Սրբապան, նշվ. աշխ., էջ 238-241:

⁴⁰ Յայոց գերեզմանների հետքը վերջնականապես կորցնելու նպատակով հիշյալ վայրը հարթեցվեց և տապանաքարերը կորստի մատնվեցին: Տեղում կառուցվեց Կողան շրջկենտրոնի վարչատերիտորյալ (կայականության) կառավարական նոր շենքը:

⁴¹ Սիսաք Թելեշյան, Սիս-Մատոյան, Պեյրութ, 1949, էջ 133-134:

⁴² XIV դարի Կիլիկիայի Յայկական պետության Սասն գյուղը գտնվում էր Կապան բերդից հարավ-արևելք, Կապան գետակի հովտում: Այժմ գյուղը կոչվում է Սիսնե: Մինչև Առաջին Յանաշխարհային պատերազմի հայաշինջ տարինները, Սիսնե

Զրույցների, ժամանակագրությունների բովանդակությունից և բանասերների ուսումնասիրություններից եզրակացնում ենք, որ սպարապետ Լիպարիտի տոհմը ոչ մի առնչություն չունի Մուշ քաղաքի հարավ գտնվող Սասունի (Սանասուն) և Սյունիքի Կապան բնակավայրերի կամ Օրբելյանների տոհմի հետ, ինչպես ենթադրել են Դ. Ալիշանը և մյուսները⁴³: Լիպարիտի սասունցի լինելու սխալ կարծիքը տարածվել է «Պատմութիւն քաջ Լիպարիտին և քեռ նորին» գրավոր գրույցի հետևյալ հատվածից:

«Քաջ Լիպարիտն էր 'ի Սասոնյ գաւառն, որ եկեալ բնակեր 'ի Կիլիկ, 'ի ժամանակս վերջին թագաւորացն Յայոց, որ 'ի յագգէն Ռուբինանց Յերմոյ և Թորոսի, և 'ի նոցին թռոանցն...»⁴⁴: Ինչ խոսք, որ սպարապետ Լիպարիտը կիլիկեցի չեր: Նա Կիլիկիա էր եկել իր հայրենի տիրույթ և ծննդավայր Սասոն գյուղից⁴⁵: Դա գտնվում էր Կոկաց աշխարհի Կապանի դրսության սահմանների մեջ, որը մաս էր կազմում Կիլիկիայի Յայկական պետության: Կապանի Սասոն գյուղը և Մուշի հարավի Սասոն գավառը իրար հետ ոչ մի առնչություն չունեն: Այդ բյուրիմացությունն առաջացել է գրույցը կազմողների կամ հետագայում (մինչև XVII-XVIII դդ.) շարադրանքում արտագրողների մտցրած փոփոխությունների պատճառով:

Տեղին կիլիմի այստեղ անդրադառնալ կարևոր մի հանգամանքի ևս, որը մինչ այժմ վրիհպել է բանասերների ուշադրությունից: Յայտնի պատմաաշխարհագրգետ է Յոնիգմանն իր Բյուզանդիայի կայսրության հարավ-արևելյան սահմանների քարտեզում⁴⁶ Կապան բերդի անունը գրել է Կառնիութերու (հայերեն՝ Gabnupert, Gaban, թթ. geben) ձևով: Ակադեմիկոս Ս. Երեմյանը նշել է, որ դա հայերեն Կապան բերդ տեղանվան վրացերեն (մեզ հասել է հունարենը՝ Καπνιστερό) ձևն է և ոչ մի առնչություն չունի բյուզանդական շրջանի հունարենի հետ: Յավանական է, որ է. Յոնիգմանը, բյուզանդական գրավոր աղբյուրներ ուսումնասիրելիս, հանդիպել է XIII-XIV դդ. գրության մեջ հիշատակվող Կառնիութերու տեղանվանը, որը Կիլիկիայից վրացերեն նամակագրության միջոցով հասել է Վրաստան, ապա այնտեղ հունարեն ուղղագրությամբ անցել է Բյուզանդիա: Դա պիտի լինի է Յոնիգմանի աշխատությունում Կապան բերդի անվան «Կապանիսաբերտի» ձևը ստանալու պատճառը: Պարզվում է, որ է. Յոնիգմանի գրած անվանակոչման այդ ձևը արդյունք է XIII դարում Կիլիկիայի Յայկական պետության տարածքում բնակություն

գյուղում ապրում էր 25-30 տուն հայ բնակչություն: Դրանից հյուսիս Բունդուր գյուղում 200 տուն, Կապանից հարավ Դավուր կամ Դավուրենց գյուղում 70 տուն, նրա շրջակա Ծիվիլի գյուղում 150 տուն, և Տրդատենը գյուղում 80 տուն բնակչություն կար: 1921 թ. հետո այս կողմերում հայ բնակչություն չկա:

43 Դ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 548: Նույնի՝ Յայապատում, հ. 2, էջ 539-540, ծան. 15: Ա. Մրապյան, նշվ. աշխ., էջ 98:

44 Ա. Մրապյան, նշվ. աշխ., էջ 238:

45 Մուշի հարավի Սասոն (Սասուն) գավառի անունը Սանասուն տեղանվան կարծացված ձևն է: Իսկ Կապանի Սասոն գյուղի անունը գալիս է «սասանիլ» բայից: Որովհետև հիշյալ երկրանասում, նրա հրաբխային բնույթի պատճառով, հաճախ էին երկրաշարժեր լինում: Մտ անցյալում՝ շրջակայրում կային Կոչեղ և Խախտուկ կոչվող վայրեր:

46 A. A. Vasiliev, *Bizance et les Arabes*, tom III, Die Ostgrenze des Byzantinschen Reiches. Von Ernst Honigman, Bruxelles, 1935: «Fines Orientales Imperii Byzantini c annum 960», քարտեզ:

հաստատած վրացական համայնքի առկայության: Այդ են հաստատում Ամանոս լեռների վրաց ավերգած վաճական հաստատությունները:

Դետաքրքիր տեղեկություններ են հասել Կիլիկիայի Հայկական պետության անկման նախօրեին պետության ավագ մարածախտ, խնամակալ և ռազմական խորհրդի անդամ պարոն Վասիլի ճակատագրի մասին: Նա, ծագումով արքունիքին մոտ կանգնած անձնավորություն լինելու բերումով, Կիլիկիայի Հայոց պետության կազմում գրադեցրել էր բարձր պաշտոններ: Դովիաննես Դարդիլի և պարոն Վասիլի ծեռքով գրված ժամանակագրությունների բովանդակության ու այլ աշխատությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ պարոն Վասիլը, Կոստանդին VI թագավորի սպանությունից (1373 թ.) հետո, Եշանակվել է Սարհամ խնամակալ քագուհու գինվորական օգնական, երբ նա կարգվեց պետության թագավառի⁴⁷ և գանձապահ: Պարոն Վասիլին Հ. Դարդելը համարում է Կիլիկիայի Հայկական պետության գանձը հափշտակող չորս խնամակալներից մեկը: Ըստ VI Վերջին թագավորը, պատերազմական ժամը դրույթան պատճառով, ներում է շնորհում⁴⁸ պարոն Վասիլին և մյուս մեղադրյալ երեք խնամակալներին: Ըստ Հ. Դարդելի տված տեղեկության, 1375 թ. Սի բերդի պաշարման ժամանակ Ըստ VI Լուսինյանի դեմ կազմակերպված դավադրության պարագլուխներից մեկն էլ եղել է պարոն Վասիլը⁴⁹.

Սի բերդի գրավումից ու Ըստ VI-ի Կահիրե գերի տարվելուց հետո, պարոն Վասիլը հավատափոխ է լինում⁵⁰: Ըստ Հ. Դարդելի հաղորդման, պարոն Վասիլը Եգիպտոսի մամլուկ սուլթան Շաբան իրն Հասան էլ Աշրաֆի առաջ, իբր իր թագավորին մատնող, շնորհազորն է լինում և չի տիրանում ոչ մի պաշտոնի⁵¹: Սակայն պարոն Վասիլ մարածախտի գրած ժամանակագրությունից տեղեկանում ենք, որ նա (հավատափոխ ու մամլուկ⁵² լինելուց հետո)⁵³ 1375-1400 թթ. միջև ընդունվել է Եգիպտոսի մամլուկ սուլթանի ծառայության մեջ ու ստանձնել պետական բարձր պաշտոններից մեկը: Դրա ապացույցն է այն, որ 1400 թվականին, Ենգ Թիմուրի բանակների կողմից Սիրիայի Դամասկոս քաղաքը գրավելու ժամանակ, հավատափոխ և մամլուկ

⁴⁷ Հ. Աճառյան, Եշվ. աշխ., հ. Ե, էջ 60-61, հմք. 64: Յովիաննու Դարդելի ժամանակագրություն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 78-79:
Ըստ VI Վերջին թագավորը, Կրպուսից մինչև Սի հասնելը, պետության խնամակալ էր կարգել (1374-1375 թթ.)

⁴⁸ Ս. Նախիկին թագուհի և Կոստանդին VI-ի կին Մարիամին:

⁴⁹ Ըստ VI Վերջինի հորեղբայր, Կորիկոսի կոնս Բոեմոնդի կին և Կոստանդին V թագավորի քոյր, կոնսուլի Ռեմին (Euphemie):

⁵⁰ Կորիկոսի կոնս Բոեմոնդի և Ռեմինի անհարազատ որդի, սեպուհ Բարբորիմեին:

⁵¹ Ավագ մարածախտ պարոն Թորոսի որդի, պարոն Վասիլին:

⁵² Հ. Դարդել, Եշվ. աշխ., էջեր 79, 105 և 108-111:

⁵³ Նույն տեղում, էջեր 130, 135-138 և 154:

⁵⁴ Նույն տեղում, էջ 154:

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Եգիպտոսի մամլուկ պետության գինվորական ու կառավարական կազմի կողիցը կազմված էր հավատափոխ քրիստոնյաներից ու ասիական երկրների բազմազգ մի խառնությոց: Եգիպտոսի բնիկ ժողովուրդը գրեթե մասնակցություն չուներ մամլուկ պետության վարչական կազմում:

⁵⁷ «Պատմա-քանասիրական համես», 1963, № 4, էջ 196-197:

Վասիլը գերի է ընկնում թաթար, վրացի, հայ ու այլ ազգերից բաղկացած մարտիկների ծեռքը: Այդ նախն Վասիլը գրել է հետևյալը. «...ու գիշերն Զ (6)-ը յունուարն, որ ուրբար լուսացաւ է (7) յունուարն փախաւ սուլտանն ու ամէն պարոնայքն, հասաւ թաթարն ու թաղթնեց զոր հասաւ, ու մնաց քաղաքն ի յիրենց ծեռքն, ու բռնեցին զիս: Ու Աստուած արար մեծ սրանչելիք, որ ի բռնել հանդիպեցան ինձ քրիստոնեք, ու գիտացան զմեզ, որ ի մեր երկիրն եկել ին ի պարոնն անկան յառ թագաւորն, ու նորա եղան մեզ վկայը որ Աստուծով խալսեցաք ու դարձուցին այն քրիստոնեքն զմեզ, որ չուանով կապեցին ու քաշեցին 'ի քաղաքն'՝⁵⁴: Լենգ Թիմուրի բանակների կողմից Դամասկոսի գրավման գործողությունները վերջանալուց հետո, Վասիլը շարունակել է նկարագրել իր դրույթունը: 10 հունվարին «...զիս մտուցին ի տարին ծանայն, - ու պահեցին ինչուի յերիկուն, որ մարդ ուժ չարար: Յետև Գ (3) աւուրն, երկուշաբթի մտաք 'ի Դմբչս ու տեսաք մեծ զարմացումն՝ աւելի քան Զօն (1000000) մարդն մեռած: Ու աւաք ուրբար գիշերն, որ շաբաթ լուսացաւ: հասաք 'ի գեր մի Այդ անուն, ու կեցաք Ը (8) օր, ելաք զնացաք 'ի Սայիտինու լեռն, 'ի գեր մի անուն Շահի // ու գտաք զնամալատին ի // յապ տանն, որ մեզ սիրելի էր ու հաճողացն գեղաննուն, ու տեսել էր ի մնել մարդկութիւն, տեսաւ զմեզ ու արար շատ մարդկութիւն, կեցաք առ ինք իբ (22) օր, ու հիւնցայ ծանր հիւնդութիւն: Աստուած արար նոր սրանչելիք, ու ողջացուց: Իջայ 'ի Սայիտ, ու նավեցաք ու հանքարձմանն ուրբար օրն հասայ յերուսաղեմ, ծանր հիւանդ»⁵⁵.

Մեր կարծիքով Երուսաղեմում էլ վերջանում է ծերացած ու հիվանդ պարոն Վասիլ ավագ մարածախսի զինվորական ու քաղաքական արկածներով լի կյանքը: Յավատափոխ լինելուց հետո նա ստանձնել է Եգիպտոսի սուլթանության պետական ատյանում բարձրաստիճան մի պաշտոն, որը կարողացել էր Սայդայի մի ունար մարդու «'ի մէն մարդկութիւն» անել: Բացի այդ, Լենգ Թիմուրի արշավանքի ժամանակ մամլուկների երկիրը պաշտպանելու համար չերքեզ մամլուկ սուլթան Բարորով էլ Զահրի հետ միասին Կահիրեցի գալիս է «'ի Ղազէ»⁵⁶ և այնտեղից «Ես հասայ ի Բսուէ»⁵⁷ առ Թաղրիկութերդին, որ Շամբու⁵⁸ նայիպութիւնն առել էր»⁵⁹, որպեսզի կասեցնեն Լենգ Թիմուրի գորքերի առաջխաղացումը: Սակայն բախսոր չի ժառանգ մամլուկ Վասիլին ու գերի է ընկնում կյանքում երկրորդ անգամ: Վասիլի ժամանակագրությունը շարունակվել է մինչև 1404 թ.: Մենք կարծում ենք, որ Վասիլը մահացել է այդ թվականին կամ դրանից քիչ հետո Երուսաղեմում⁶⁰.

54 Նույն տեղում, էջ 196: Ան բարձր նույնական մուշտում մնանակ մնանակ:

55 Նույն տեղում: Խառնություն մուշտում մնանակ մնանակ:

56 Ծովափնյա Ghaza քայաք, Միջերկրական ծովի հարավ-արևելյան անկյունում:

57 Kiswe բնակավայր Դամասկոսից 20 կմ հարավ-արևմտութ, Նահր Ավայ (Nahr 'Awaj, wani al Ajam) գետակի վրա, Ձերել Ասվադ լեռան կիրճի հարավային ծայրամասում:

58 Չամ, Դամասկոս, Դիմչի:

59 «Պատմա-բնանասիրական հանդես», նշվ. աշխ., էջ 195:

60 Կիլիկիայի Յայկական պետության անկյունից (1375 թ.) հետո, Երուսաղեմում բնակություն հաստատել և այնտեղ էլ մահացել էն նախկին թագուհի Մարիամը (նահ 1405 թ.), և նուն VI-ի զինակիր կոմս Սոհիե Դուկանտը և նրա կինը՝ կոմսուհի Ումին (Euphémie), Մարիամ թագուհու դուստր Բիննան (նահ. 1405) և ուրիշներ:

Դ. Աճառյանը պարոն Վասիլ ավագ մարածախտի անվան մեջ տեսնում էր Երկու տարբեր անձնավորություններ՝ «Վասիլ զրավար և ավագ մարածախտ, որդի Թորոս ավագ մարածախտի»⁶¹ և «Վասիլ պարոն, որդի պարոն որդի Թորոս»⁶²: Երկու նույնանուն պարոնների հոր անունը Թորոս է: Եղել են Լևոն VI-ի մերձավորները և միասին տարվել Կահիրե որպես գերի: Ասպարուսն էլ եղել են հավատափոխներ: Սակայն պատմագիտությունը գտնում է, որ բոլոր եղելությունները պատահել են միևնույն անձնավորության հետ:

Ավագ մարածախտ Վասիլի և սպարապետ Լիպարիտի հայրը՝ ավագ մարածախտ և սպարապետ, Կապանի կոնս պարոն Թորոսը, մեռել է անքնական նահով: Այդ մասին գրված է հետևյալը. «Յետ ԺԲ (12) ամի անցանելոյ Յեթումն հորոն շունն ՚ի Սոյ մահաղեղ արբոյց քաջ զաւրավարին պարոն Թորոսին և սպան զան»⁶³:

Քաղկեդոնական Յեթումը պատկանում էր Կիլիկիայի Յայկական պետության ավագանու դասին և հատկապես Թորոս զորավարին ծանոթ մի անձնավորություն էր: Այդ պատճառով էլ միասին խմել են ինչ-որ մի խմիչք: Յիշալ այս Յեթումը, Կոստանդին VI թագավորի «քաջ զրավար Յեթում» էր: Սպարապետ Լիպարիտի սպանությունից (1369 թ.) հետո նա էր ստանձնել սպարապետի պաշտոնը: Լևոն VI-ի գերվելոց հետո, գրավել էր Կանչի բերդը: Մրա կինը Ծանավոր Զարմանուիին էր: Կերպ հետ միասին պայքար է մողել Եգիպտոսի մամլուկ սուլթանի զորքերի դեմ և գերի բռնել սուլթանի որդուն: Սակայն Գրիգոր անունով մեկը⁶⁴ փրկել է սուլթանի որդուն և սպանել Յեթումին: Կիլիկիայի Յայկական պետության վերջին սպարապետն էր այս Յեթումը⁶⁵: Մրա մահից հետո կինը՝ Զարմանուիին, գրավում է մինչ այդ Կապանի կոմսերին, այդ թվում՝ օրինավոր ժառանգորդ, ավագ մարածախտ Վասիլին պատկանող Կապանի բերդը, և տիրում 5 տարի⁶⁶: Ղավաճանության հոտ է գալիս Զարմանուիու և նրա ամուսին Յեթում զրորավարի բռնած գործերից: Առերևույթ նա քաջ զրավար էր, սակայն նա շարունակել է ծառայել Կոստանդին VI թագավորի թաքուն նպատակներին: Ինչպես հայտնի է, թագավորը թշնամաքար էր տրամադրված Կապանի կոնսուլթյան իշխանական տան անդամների նկատմամբ, հանձինս նրանց տեսնելով գահի հավակնորդների: Այդ պատճառով էլ կազմակերպեց սպարապետ Լիպարիտի սպանությունը: Յիշատակարանի բռվանդակությունից պարզվում է, որ Լիպարիտի հայրը՝ Թորոս զրավարը, թունավորվելով սպանվել է Յեթում անունով ինչ-որ հունադավան մեկի կողմից: Իսկ ի պատասխան պարոն Վասիլը իր համախոհների հետ կազմակերպել է Կոստանդին VI-ի սպանությունը: Պարոն Վասիլը դավադրություն է կազմակերպել նաև Լևոն VI-ի նկատմամբ: Կապանի կոնսուլթյան իշխանական տան անդամների և Սսի վերջին թագավորների միջև գոյություն ունեցող մահացու թշնամությունը բացասական ազդեցություն ունեցավ Կիլիկիայի Յայկական պետության

61 Դ. Աճառյան, նշվ. աշխ., Ե, էջ 60-61, հմք. 64:

62 Նույն տեղում, էջ 61, հմք. 66:

63 «Յանդես ամսորյա», 1965, հունվար-մարտ, էջ 29:

64 Գրականության մեջ և Զեթումի կողմերում հայերը այս Գրիգորին համարել են մատնիչ: Սակայն ուսումնասիրություններից այլ բան է պարզվում:

65 Դ. Աճառյան, նշվ. աշխ.:

66 Նույն տեղում, հ. Բ, էջ 174-175:

վարչակարգի կայունության վրա: Երկու կողմերն էլ տարբեր ձևերով իրար սպանելով, ասպարեզից հեռացնում էին միջյանց: Գրիգորը պիտի լիներ Վասիլի հավատարիմ մարդկանցից մեկը: Ինչպես հայտնի է, Լևոն VI-ի Կահիրե գերի տարբելուց հետո Վասիլը դավանափոխ էր Եղել և ստանձնել Եգիպտոսի սուլթանի արքունիքի բարձր պաշտոններից մեկը: Կանչի բերդում կալանավորված սուլթանի որդուն փրկելով և «հոռոմ շուն Ղերումին» սպանելով, բնական է, որ սուլթանից մեծ պատվի կարժանանային թե՛ դավանափոխ Վասիլը և թե՛ Գրիգորը:

Կոստանդին VI թագավորի սպանությունից հետո, Կիլիկիայի Ջայոց թագավորության գահին տիրանալու համար ավագ մարածախս պարոն Վասիլին խոչընդոտում էր միայն Ջայոց Կոստանդին III (1341-1342 թթ.) թագավորի⁶⁷ և նրա կնոջ՝ վրաց Գեորգի V Պայծառափայլ (1314-1346 թթ.) թագավորի դուստր Սուլթանի տիկնոջ որդին, իշխան Լևոնը: Վերջինս թագավորի որդի էր, իսկ պարոն Վասիլը՝ թագավորի բոռնորդի: Սա էր խանգարող հանգամանքը: Երկուսն էլ սերում էին Օշին թագավորի քույրերից: Այդ առօւնով կարելի է համարել, որ նրանք իրար հետ ունեին ազգակցական հեռավոր կապեր: Լևոնը ծնվել էր թագավոր և թագուհի ծնողներից: Ուստի՝ թագաժառանգ էր, ըստ գոյություն ունեցող իրավաբանական դրույթների: Ջայոց ավագանին, նկատի ունենալով այդ հանգամանքը, անկախ նրանից, որ թագաժառանգի դավանանքը և հայացքները տարբերվում էին Ջայոց պետության և Եկեղեցու կարգերից, ընդունել էր գահի նկատմամբ նրա ունեցած իրավունքները:

Գունդստաբլ իշխան Զեհանը մահանալիս ուներ երկու տղա: Դրանցից Բոհեմոնդը կինք, իսկ Լևոնը երկու տարեկան էին: Լևոնը ծնված էր, երբ Զեհանը թագավոր էր Կոստանդին III (1341-1342 թթ.) ամռնով⁶⁸: Այս հաշվով արքայադուստր Սուլթանը և իշխան Զեհանը ամուսնացել էին 1336-1337 թ.: Լևոնի ծնված ժամանակ մայրը կոչվում է «թագուհի Սուլթան տիկին»: Վերջինիս արքայադուստր լինելու մասին հետևյալն է գրել Լևոն VI թագավորի խոստովանահայր, քարտուղար և պատվիրակ Յ. Դարդելը.

(Օշինի որդի Լևոն V-ը) «...զիօրաքեռորդին իւր զիշխանն Զեհան Լուսինեան, զոր արար գունդստաբլ Ջայոց, և ես նմա ՚ի կնութիւն զՍուլթան տիկին, զդուստր արքայից Վրաց, և ...» (էջ 31): Ըստ հաշվումների տվյալ արդյունքի, 1336-1337 թթ. «Վրաց արքան» էր Գեորգի V Պայծառափայլը: Պարզվում է, որ Լևոն VI Լուսինյան թագավորը Գեորգի V-ի թոռն է:

⁶⁷ Տոհմածառերում Եթրկայացված է Կոստանդին III թագավորի ծագումը: Նրա հրուերայրը եղել է Կիարոսի Լուսինյան Քենիք II թագավորը: Իսկ մորեղայրները եղել են Ջայոց Ղերում II և Օշին թագավորները: Ուստի՝ Կոստանդին III-ը պատկանում էր Լուսինյանների արքունի տանը:

⁶⁸ Յ. Աճառյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 670-671, հմ. 137 և հ. Դ, էջ 577-578, հմ. 2: Յ. Դարդել, նշվ. աշխ., էջ 31:

Յուլգո III Լուսինյան

թագավոր Կիպրոսի և Երուսաղեմի

1267-1284 թթ.

Ամորի Լուսինյան.

Յենի II Լուսինյան.

կոմս Տյուրոսի

թագավոր Կիպրոսի

(մահ. 5/1-1310 թթ.)

1285-1324 թթ.

օ Իզապել.

Դուստր Իայնց Լևոն III

թագավորի

(մահ. 1323 թ.)

Բոհեմոնդ Լուսինյան.

կոմս Կոռիկոսի

(մահ. 17/11/1344 թ.)

օ Ռեմի կոմսուհի.

դուստր Պաղտին

մարտաշախտի Իայնց

(մահ. Երուսաղեմ)

Կոստանդին III Լուսինյան.

թագավոր Յայնց

1341-1342 թթ.

Իշխան John, Զեհան, Զիւան.

(մահ. Սիս 7/8/1343 թ.)

օ 1336/1337 թ. Սուլթան.

Տիկին, դուստր Վրաց

Գեորգի V թագավորի.

(մահ. Սիս 1374 թ.)

Կոստանդին IV

Լուսինյան.

(Guy, Գուիտոն)

թագավոր Յայնց

1342-17/11/1344 թթ.

Իզապելլա.

Լևոն VI Լուսինյան.

վերջին թագավոր

Յայնց.

1374-1375 թթ.

(ծն. 1341, Սիս, մահ.

1393 Փարիզ)

Բոհեմոնդ (Boëmond)

Լուսինյան.

Իշխան, տեր Կոռիկոսի

(մահ. 1363 թ. Վենետիկ)

ծն. 1338 թ.

Մարգարիտ դը Սուլասոն

(Marguerite de Soissons,

մահ. 1381/2 թ. Կահիրե):

Կոստանդին III-ի առավել չափով լատինամոլ լինելու պատճառով, Կիլիկիայի Հայկական պետության պապական (կաթոլիկ) ազդեցության տակ ընկնելու վտանգ էր առաջացել: Ազգային կուսակցության իշխանների ստիպումով Կոստանդին III-ը գահազորուկ է արվում ու թագը հանձնվում է Եղբորը՝ Գվիդոն Լուսինյանին, որը ծանաչված էր նաև Կոստանդին IV (1342-1344 թթ.) թագավոր Հայոց անունով: Դրանից հետո Զեհանը օգնական եղավ Եղբորը՝ Գվիդոնին, և գունդստապի հայոց պետությանը⁶⁹: Քիչ ժամանակ անց, 1343 թ. օգոստոսի 7-ին, Երիտասարդ հասակում մահանում է իշխան Զեհանը⁷⁰: Դրանից մեկ տարի անց, 1344 թ. նոյեմբերի 17-ին, հայերը սպանում են թագավոր Կոստանդին IV-ին և նրա մյուս Եղբորը՝ Կոռիկոսի կոմս Բոհեմոնդ իշխանին, լատինասեր քաղաքականությունը շարունակելու պատճառով: Քանի դեռ Կոստանդին IV-ը ողջ էր, Սուլթան տիկինը և Երկու Եղբորորդիները գտնվում էին ապահովության մեջ: Սակայն Կոստանդին IV-ի սպանությունից հետո նրանց դրությունը փոխվում է: Հայ իշխանների խորհրդով թագավոր կարգվող մարածախտ Պաղտինի որդի Կոստանդին V-ը (1344-1362 թթ. դեկտ. 21) հալածանք է սկսում Սուլթան տիկնոց ու նրա Երկու որդիների նկատմամբ: Թագավորը նախ նրանց բանտարկել է տալիս Կոռիկոսի ծովային ամրոցում և փորձում մեղրով բռնավորել նրանց: Սուլթան տիկինը կասկածելով առատաձեռնությունից, մեղրը նվիրում է մի աղքատ կնոջ, որի պատճառով տեղնուտեղը մահանում է խեղճի Երեխան: Այս Եղելության վրա Կոստանդին V-ը Երկու ասպետներ է ուղարկում Կոռիկոսի բերդը, որպեսզի գաղտնի խեղճանահ անեն տիկին Սուլթանին և նրա Երկու Երեխաններին: Կոստանդին V թագավորը այդ քայլին է դիմում, որպեսզի հետագայում թագի նկատմամբ լատինասեր հավակնորդներ չլինեն ու ժառանգությունը անցնի իր որդիներին: Սուլթան տիկնոց կասկածները ավելանում են, և նա Կոռիկոսի բերդից փախուստի միջոցներ է որոնում: Քիչ ժամանակ անց, հաջողվում է կիպրոսի ծկնորսների նավով գաղտագողի հեռանալ Կոռիկոսի բերդից ու հասնել Կիպրոս Կղզի⁷¹, Կարպասի խորշը: Այս լուրը շատ է զայրացնում Կոստանդին V-ին, և նա լրտեսներ է ուղարկում Կարպաս խորշի ծովափ, որպեսզի մի կերպ բռնեն փախստականներինու բերեն Կիլիկիա: Սակայն դա չի հաջողվում, և Կիպրոսի Ջուկո IV Լուսինյան (1324-1358 թթ.) թագավորը իր խնամի Սուլթան տիկնոջը և նրա Երեխաններին հատկացնում է ապրուստի միջոցներ, բռշակ և Գրիդա ամրոցը՝ 3 տարի ժամանակով: Ապա այստեղից տեղափոխվում են Կիպրոսի ավելի ապահով Ս. Սիմեոն ամրոց⁷²: Դեպքերի ընթացքից զգացվում է, որ Սուլթան տիկնոջը օժանդակողներ են Եղել իր և Երեխանների կյանքը փրկելու գործում: Հավանական է, որ նրանցից մեկն էր Կոռիկոսի բերդապահը:

Սուլթան տիկնոց կյանքը լի է արկածներով, փորձություններով ու հալածանքներով: Նա աննկուն կամքի տեր մի կնոջ օրինակ է: Նա անեն միջոցի դիմել է, որպեսզի որդիներից մեկը նստի Կիլիկիայի Հայոց գահին:

⁶⁹ Ա. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1786, էջ 347-349:

⁷⁰ W. H. Rödt-Collenberg, The Rupenides, Hetumides and Lusignans. The structure of the Armeno-Cilician dynasties, Paris, 1963, planche III. (H₂) № 181.

⁷¹ Հ. Դարդել, Աշվ. աշխ., էջ 52-55: Հ. Աճառյան, Աշվ. աշխ., հ. Դ, էջ 577-578:

⁷² Հ. Դարդել, Աշվ. աշխ., էջ 56:

1363 թ. Կոստանդին V-ից թափուր մնացած գահին տիրելու համար Սուլքանի ավագ որդի Բիհեմոնդ Լուսինյանը փորձում է դիմել պապի միջնորդությանն ու Վենետիկի ճանապարհով գնալ Ավինյոն, սակայն անհայտ պատճառներով մահանում է Վենետիկում⁷³:

1373 թ. Սուլքան տիկինը և իր հարսը (իշխան Լևոնի կինը՝ իշխանուիի Մարգարին դը Սուլասոն) գտնվում էին Կիպրոսի Նիկոսիա քաղաքում, իսկ իշխան Լևոն Լուսինյանը արգելափակված էր Ֆամագուտայի ամրոցում և մեղադրվում էր Կիպրոսի թագավոր Պետրոս I-ի (1358-1369 թթ.) սպանությանը մասնակցելու մեջ: Թենությունից պարզվում է, որ իշխան Լևոնը ոչ մի մասնակցություն չի ունեցել իր ազգական Պետրոս I թագավորի սպանության գործում: Սակայն Կիպրոսի ելենորա թագուհին ու ջենովացի իշխանավորները Լևոնից պահանջում էին 36000 Կիպրոսի արծար դահեկան փրկագին: Սուլքան տիկինը և հարսը չնչին գնով վաճառում են ողջ ունեցվածքը և ծեռք բերում 6000 Կիպրոսի արծար դահեկան: Լևոնը բացում աղաքանքով ընդունել է տալիս փրկագինը ու ազատվում Ֆամագուտայի բերդից: Կիպրոսում իշխան Լևոնի գլխից բազմաթիվ փորձություններ անցնելուց հետո, Սուլքան տիկինը, իշխան Լևոնը և իր կինը 1374 թվականի ապրիլի 2-ին նավով հասնում են Կոռիկոս Կիլիկիայի Յայկական պետության մայրաքաղաք Սիս գնալու և թափուր գահին տիրանալու նպատակով: Կոռիկոսում բազմաթիվ փորձությունների ենթարկվելուց հետո, իշխան Լևոնը չորս համհարգմերով միասին գիշերը նավով, զաղտագողի հասնում է Կիլիկիայի ծովափում գտնվող Գոնդասլաս կոչվող ծովախորշ: Իշխան Լևոնի գինակիր Սոհիե Դովլարտն այլ նավով Գոնդասլասի ծովախորշ է բերում Սուլքան տիկնոջն ու իշխանուի Մարգարիտ դը Սուլասոնին, ծիեր ու վարձկան գինվորներ: Իշխան Լևոնը, մորը, կնոշը և գինվորների մի մասին ծովափին թողնելուց հետո, 25 հեծյալներով գաղտագողի և մեծ դժվարություններով անցնում է բուրքերի ու մանլուկների տիրույթների միջով ու հասնում Սիս մայրաքաղաք:

Ներքին երկպառակություններով ջլատված, եկամուտի աղբյուրներից զրկված ու թշնամու կողմից կտրատված Յայոց պետությունը գտնվում էր հոգեկարգի մեջ: Թշնամին, լավ գիտենալով այդ որությունը, Ծննջան տակ էր պահում Յայոց Երկիրը: Կոստանդին VI թագավորի սպանությունից հետո, մինչև իշխան Լևոնի Սիս ժամանելը, Յայոց պետության գործերը տնօրինել էին ավագ մարածախտ Կասիլը և նյութ երեք խնամակալները⁷⁴: Իշխան Լևոնին հայերը մեծ հանդիսությամբ դիմավորում ու ընդունում են մայրաքաղաք, որպես պետության օրինավոր թագավորի: Նա Սսից 150 հայ ծիավոր ռազմիկներ է ուղարկում ծովափի, որպեսզի Սիս բերեն մորը, կնոշը և մնացյալ վարձկան գինվորներին: Յայ ռազմիկները Սուլքան տիկնոշը, իշխանուիուն ու գինվորների մի մասին տանում են նախ Անավարդա բերդաքաղաք, ապա՝

⁷³ Կիպրոսի Պետրոս I Լուսինյան թագավորը ակնկալություն ուներ Կիլիկիայի Յայկական պետության տիրույթները միացնել իր թագավորությանը: Յարմար առիթ էր որոնում Կոստանդին V-ից թափուր մնացած գահին տիրելու: Նրան կարող էին միայն խոշընդոտել գահի օրինավոր ժառանգործները, իր ազգական Բիհեմոնդ և Լևոն Լուսինյան եղբայրները:

⁷⁴ Տես՝ ծանոթություն 47:

Սիս⁷⁵: Դրանից հետո Դարդելը Սուլքան տիկնոց մասին այլևս տեղեկություն չի տալիս: Պատմաբանները համարում են, որ Սուլքան տիկինը նահացել է 1374 թ. Սիսում: 1375 թ. ապրիլի 22-ին Լևոն VI-ի հետ Կահիրե գերի տարվող ավագանու կանանց շարքում Սուլքան տիկնոց անունը չի հիշատակվում⁷⁶: Փորձություններով լի պալատական կյանք տեսած Սուլքան տիկինը Կիլիկիայի Յայկական թագավորության դժբախտ թագուհիներից մեկն էր: Գահից, հարստությունից և ընդհանրապես կարողություններից զրկվելուց հետո, կյանքի մինչև վերջը պայքարել է որդիներին Կիլիկիայի Յայկական թագավորության գահի ժառանգորդ կարգելու համար: Նա հասավ այդ նպատակին, սակայն սպառված էր ժամանակը:

Թաղաքանության սիսալ ուղի որդեգրելու հետևանքով, Կիլիկիայի Յայկական պետությունը ընկել էր անելանելի դրության մեջ: Իրար հակառակող ներքին հոսանքների և դրսից տրվող ուժեղ հարվածների տակ կորցրել էր գոյությունը պաշտպանելու հնարավորությունները: Կիլիկիայի Յայկական թագավորությունը կարողիկ մի պետություն չէր կարող լինել: Լևոն VI Լուսինյանը ևս իր հոր և մյուս լատինաստրերի նման չուզեց հասկանալ այդ հաճամանքը և կործանեց թե՛ պետությունը և թե՛ իր ժառանգությունը: Սուլքան տիկինը մայրաքաղաքի պաշտրման ժամանակ երկրորդ անգամ Սուում ականատես եղավ իր հույսերի ի դերև ելնելը: Յավանաբար դա եղավ նրա մահվան պատճառը:

Մ. Զամյանը շփոթ պատմություն է տվել 1365-1375 թթ. ժամանակաշրջանի մասին: Իրար է խառնել Կոստանդին VI-ի և Լևոն VI-ի գործերը⁷⁷: Ըստ նրա՝ Լևոն VI-ը ինը ամիս դիմադրել է իր Կապանի բերդում և գերի տարվել այդտեղից⁷⁸:

Լուսինյան Լևոն VI-ի Կահիրե գերի տարվելուց հետո, սպարապետ Լիպարիտի այրիի՛ Մանանա իշխանութու և նրա որդու՝ Յովհաննեսի համար անհմաստ էր մնալ Կիլիկիայում: Կորստի էին մատնվել Կապանի կոնսուլյան տիրույթները և տիտղոսը: Չեր մնացել ո՛չ թագավոր, ո՛չ էլ իշխանություն: Մանանա իշխանութին իր որդու հետ տեղափոխվել⁷⁹ է Վրաստան և այնտեղ էլ հաստատվել: Դրա մի արձագանքն է Տանն Կիլիկիո Միքայել Բ Աջապահյան (1832-1855 թթ.) Կաթողիկոսի 1849 թ. նոյեմբերի 17-ի կրնակի բովանդակությունը⁸⁰, ուր հաստատվում է Սովունսի թիֆլիսաբնակ «Դաւիթ, Գաբրիէլ,

75 Յ. Դարդել, նշվ. աշխ., էջ 103:

76 Նույն տեղում, էջ 148-149:

77 Մ. Զամյան, նշվ. աշխ., էջ 355-360:

78 Նույն տեղում, էջ 359-360:

79 Տե՛ս Յ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 9, էջ 673, հմր 1112: Գարեգին Վրդ. Սրբանձոյանց, Թորոս Սղբար, հ. Բ, 4. Պոլս, 1884, էջ 479: Մ. Զամյան, նշվ. աշխ., էջ 359: Պատահականության արդյունք է 1466 թ. Խարբերդի Սինամուտ թաղամասում հիշվող Լիպարիտի և Մանանայի որդի Յովհաննես Եպիսկոպոսի գոյությունը: Նա այդ ժամանակ պիտի լիներ մոտավորապես 101-102 տարեկան: Մվում է, թե անհնարին է սպարապետ Լիպարիտի որդու և հիշյալ Եպիսկոպոսի նոյն անհնարին է սպարապետ Լիպարիտի որդու և հիշյալ Եպիսկոպոսի նոյն անհնավորություն լինելը:

80 «Լուս», Գրական հանդես, Ե տարի, Թիֆլիս, 1900, էջ 297-300: Բարգեն Ա, նշվ. աշխ., էջ 635-637:

Սոլոմոն և Սոսի» որդիների ազնվական ծագումը՝ Կիլիկիայի Յայոց Լևոն VI թագավորի եղբոր՝ «Յօհաննիսի»⁸¹ սերունդից լինելու: Կոնդակը պարունակում է թագավորի թերություններ և անշտուրյուններ, որի պատճառով էլ թվում է կասկածելի: Կոնդակի սևագիր ընդորինակությունը գտնվել է - «1899 թ. սեպտեմբերի 10-ին Էջմիածնի Մայր Աթոռի գրչագրաց մատենադարանում»⁸²: Կոնդակում հիշատակվող «ազգահամարութեան» մատյանի⁸³ տոհմական ճյուղագրությունը ևս ունի փաստարկման կարիք: Այսուհանդերձ սխալներով լի այդ կոնդակը Ռուս ցարերի մոտ պիտի ծառայեր որպես ազնվական ծագում ունեցողի փաստաթուղթ: Դա շատ կարևոր նշանակություն ուներ Կովկասում իշխանություն հաստատած ցարական կառավարության ներկայացուցիչների և թիֆլիսցի չորս եղբայրների միջև կայանալիք ապագա գործակցության համար:

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը, Վրաստանում ապրում էին Ռուբինյանների իշխանական տան իսկական ժառանգներ: XIV դարի սկզբին, Օշին թագավորի ժամանակ ունիթորական հալածանքներից առաջացած զժողությունների պատճառով, նրանց մի մասը, Կիլիկիայից հեռանալով, բնակություն էր հաստատել Վրաստանում:

⁸¹ Բարգեն Ա, Աշվ. աշխ., էջ 637: Կոնդակում գրված է. «...գիտեմք և վկայեմք ի Յօհաննիսի որ է Եղբայր Արքային Լեւոնի. ծնաւ Ակոր...»:

⁸² «Լումա», էջ 297, ծան.1:

⁸³ Տոհմագրական-Եկեղեցական մատյան (քուբուկ):

ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ

ԵՊՀ-ի մանկավարժության ամբիոնի վարիչ

ԱՄԵՆԱՅՅԻՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ

«Հալի!՝ լոյս տալու համար...: Լոյս տալը,
մեր գոյութեան վախճանն է: Լոյս առնելը,
մեր գոյութեան պատճառը»:

**Գարեգին Ա
Ամենայն Հայոց Կարողիկոս**

Մարդիկ կան, որ անմնացորդ հալվում են ուրիշներին լույս տալու համար, հալվում՝ նվիրումով, մեծ հավատով, կատարածի բարձր գիտակցությամբ ու մեծ ինքնանվիրումով՝ Հարության և Հավերժության գաղափարով ներանձնացած ու փառավորված: Հալվում են մյուսներին ապրեցնելու և իրանիացնելու համար: Ապրում են տուկայով ու տառապելով, բայց լուսավորելու մեծ նվիրումով:

Ահա այսպիսի կյանք է պարգևած Ամենայն Հայոց Կարողիկոս, խոհուն իմաստասեր և վաստակաշատ մանկավարժ Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետին:

Նա ինքը լույսի և հույսի շտեմարան է, հավատի դարրնոց, Հարության ու Հավերժության նկատմամբ հավատ ու հույս ներշնչող Աստծու ընտրյալ, որ կոչված է Աստծու մեծ պատզամբ փոխանցելու, իր միջոցով Բարձրյալին ազգովին հաղորդակցվելու և մեր մեծ սերը, հավատն ու նվիրվածությունը նրան հաղորդելու՝ պահելով ծով հույսը մեր ազգի հանդեպ Աստծու արդար ու բարեհան ողորմածության նկատմամբ, ժանի որ, ինչպես իրացիորեն ասում է Վեհափառ Հայրապետը.

«Յոյսն է եղեր մեր լոյսը

Յոյսն է դարձեր մեր կեանինի ուղեցոյց սլաքը

Յոյսն է մնացեր մեր վերապրումի և յաղթանակի սնունդը

Եւ այդ յոյսը ինձ միշտ սնանենք

Յարութեան հավատին, անմահութեան տեսիլին կենաստու ոյժովը»¹:

Մեր հայոց հոգևոր Առաջնորդի, միջազգային նանաչում ունեցող աստվածարանի և գործչի, մտքի բարձր պացքի և հարուստ խոսի տեր ունեցող շնորհաշատ մտավորականի, երկարամյա մանկավարժական վաստակ ունեցող Մեծ ուսուցչի մասին գրելը բավականին դժվար ու պատասխանատու մի փորձ է:

¹ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Ես հալրեցի աշխարհի...», Ս. Էջմիածին, 1997, էջ 75:

բայց և միաժամանակ մեծ պատիվ՝ տողերիս հեղինակի համար, որ, հուսով ենք, հաշողությամբ պսակել Աստծու օրինությամբ և ներքին բարձր հիացումով:

Նշան Սարգսյանը՝ նույն ինքը Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կարողիկոսը, ծնվել է 1932 թվականին Սիրիայի Քեսար քաղաքում: Հայրենի գյուղի Ռւսումնասիրաց Միացյալ վարժարանի նախակրարանն ավարտելուց հետո, շարունակում է ուսումը Մեծի Տաճան Կիլիկիո Կարողիկոսության Դպրություն, որն ավարտում է 1952 թվականին և նույն տարին էլ ձեռնադրվում կուսակրոն բահան:

1955 թվականին «Հայոց Եկեղեցւոյ Աստուածարանութիւնը ըստ Հայ Շարականներուն» խորագրով վարդապետական ավարտանառ ներկայացնելուց հետո, ստանում է վարդապետական աստիճան:

Այս տարիներից էլ հենց սկսվում է Վեհափառ Հայրապետի մանկավարժական աշխատանքի մեծ նանապարհը, որ շարունակում է մինչ այսօր:

Նա Դպրելանքում աշխատում է որպես ուսուցիչ (1952), իսկ 1956 թվականից գրադիցնում է տեսչի պաշտոնը: 1957-59 թվականներին Վեհափառ Հայրապետն իր ուսումը շարունակում է Անգլիայի Օքսֆորդի համալսարանում՝ ստանալով աստվածարանական բարձրագույն կրթություն: Իսկ «Քաղկեդոնի ժողովը և Հայ Եկեղեցին» խորագիրը կրող ավարտանառ պաշտպանելուց հետո, արժանանում է Աստվածարանության դրկտորի աստիճանի (B. Litt.- Oxon):

Վերադառնալով Բեյրութ՝ նա նորից շարունակում է իր մանկավարժական գործունեությունը Դպրություն: 1964 թվականին ձեռնադրվում է Եպիսկոպոս, 1973-ին՝ Արքեպիսկոպոս:

1977 թվականին ընտրվում է Մեծի Տաճան Կիլիկիո Արռողիկոս Կարողիկոս, իսկ 1983 թվականին դառնում Մեծի Տաճան Կիլիկիո Կարողիկոս՝ մեծ փայլ ու շուրջ տալով Կիլիկյան Արռողին՝ հսկայածավալ աշխատանքներ կատարելով ինչպես ազգային-կրոնական, այնպես էլ մշակութային և շինարարական ոլորտներում, մասնավորապես մեծ ուշադրություն քւենելով Քրիստոնեական առողջ դաստիարակության հարցի վրա՝ իմբնելով Քրիստոնեական Դաստիարակության կենտրոն:

Զափազանց կարևորելով երիտասարդության մեծ դերն ազգի հասարակական կյանքում և նրա ակտիվ մասնակցությունը ինչպես մշակութային, այնպես էլ կրոնական կյանքում, 1963 թվականին Վեհափառ Հայրապետը ստեղծում է Հայաստանյաց Եկեղեցվո Համալսարանական Ուսանողներու Միությունը (ՀԵՀՈՒՄ), որը գործում է շուրջ 35 տարի:

Նա աստվածարանության, գրականության, պատմության և մշակույթի տարբեր հարցերի վերաբերյալ դասախոսություններ է կարդացել Հ.Բ.Ը.Մ-ի Դարուի Հակոբյան Երկրորդական վարժարանում, Բեյրութի Համազգայինի Նշան Փալանջյան Ճեմարանում, Կանանց Ֆոլիչում (այժմ՝ Beirut University College) և Ամերիկյան համալսարանում:

Դասախոսություններով հանդիս է եկել նաև տարբեր երկրներում, հատկապես Ռումինիայում, որտեղ նա հրավիրել էր Ռումինիայի Օրբողոքս Եկեղեցու Պատրիարքի կողմից:

Որպես Մեծի Տաճան Կիլիկիո Կարողիկոս, գտնվելով արտասահմանում, Վեհափառ Հայրապետը սերտ հարաբերությունների մեջ է եղել Ս. Էջմիածնի Մայր Արքունի և մասնավորապես Երջանկահիշատակի Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կարողիկոսի հետ՝ հանախ գտնվելով նրա կողքին և արտահայտելով իր եղբայրական սերեն ու զորակցությունը հատկապես Հայաստանի և հայ ժողովրդի համար նրանից հետո:

Սփյուռքի ողջ հայուրյունը, աշխարհիկ թե հոգևորական, ցնցվելով Հայաստանին բաժին ընկած այդ մեծ ողբերգությունից, մեկ մարդու նման՝ նյուրապես, ֆիզիկապես, հոգեպես և բարոյապես զորավիգ կանգնեց Հայաստանի ժողովրդին՝ համայն աշխարհին մեկ անգամ ևս ապացուցելով այն խորախորհուրդ ու անառարկելի հշմարտուրյունն ու փաստը, որ մենք՝ Հայաստանի և Սփյուռքի հայերս, մե՞կ ազգ ենք ու մե՞կ ժողովուրդ, և որ ո՞չ ժամանակը, ո՞չ տարածուրյունը և ո՞չ էլ որոշ գաղափարական տարածայնուրյուններ չեն կարող սասանել այն ապառաժյա ժայռը, որ ցեմենտված է հայոց նախնիների արմատներին ունեցած մեծ կապվածուրյամբ, մեր երկու միլիոն նահատակներին տված երդումով և Հայոց Աշխարհի խաղաղ ու լուսակերտ ապագան կառուցելու մեծ հույսով ու հավատով։

Վեհափառ Հայրապետը եղավ մեզ հետ, կիսեց մեր ցավերն ու տառապանցները և միաժամանակ հորդորեց տոկալ ու չկոտրվել ցավի ու վշտի ննշման տակ՝ մեզ հղելով հետևյալ իմաստուն խոսքերը. «Մի՛ մոռնար, հա՛յ ժողովուրդ, որ ժառանգորդն ես յարութեան հաւատացող եւ յարութիւնը կենանորոգուրթեան ոյժի գօրութեամբը ապրող ժողովուրդի մը»²: Ու մենք ապրում ենք այդ մեծ գաղափարով տողորված։

Ամենայն Հայոց Կարողիկոս ընտրվելուց հետո շարունակվեց Վեհափառ Հայրապետի սկսած հոգևոր-մանկավարժական մեծ գործունեուրյունը՝ ստանալով է՛լ ավելի թափ ու ընդգրկում, ծավալ ու նշանակուրյուն, որդեգրելով մի նպատակ՝ հանուն հայ ժողովրդի խաղաղ ու բարգավաճ կյանքի ու պայծառ ապագայի։

Ամենայն Հայոց Կարողիկոս ընտրվելուց հետո, Վեհափառ Հայրապետը շարունակվեց իր մանկավարժական գործունեուրյունը Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանում՝ հարուստ փորձն ու գիտելիքները փոխանցելով ձեմարանի սաներին, նրանց մեջ սերմանելով անմահուրյան այն վեհ գաղափարը, որի գիտակցումն ու նրա հանդեպ ունեցած մեծ հավատը վճռորդ ու նակատագրական դեր են ունեցել հայ ժողովրդի կյանքում։ Որպես պատգամ են հնչում Վեհափառ Հայրապետի հետևյալ խոսքերը. «Անմահուրթեան կամքը, անմահուրթեամբ մահուան յաղթելու գիտակցուրիւնն էր որ արեւ դարձաւ մեզ համար խաւար օրերուն եւ ջուր դարձաւ երաշտ օրերուն ու կեանք տուաւ մեր հայոց «փոքր ածու»-ին։ Ատով ապրեցանք և ատով կ'ապրինք այսօր»³:

Դպրեվանքից մինչև Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարան ծավալած հոգևոր-մանկավարժական գործունեուրյանը զուգահեռ, Վեհափառ Հայրապետը զրադվել է նաև ստեղծագործական աշխատանքով՝ բղրին հանձնելով իր կրոնական, փիլիսոփայական և մանկավարժական խոհերն ու մտորումները, հայցներն ու տեսակետները։

Իր աշխատանքներում Վեհափառ Հայրապետը հանգամանալից բննուրյան է առել անձնավորուրյան ձևավորման, մատաղ սերմոդի կրուրյան և դաստիարակուրյան, եկեղեցու, դպրոցի, մայրենի լեզվի, ուսուցչի ունեցած մեծ դերի, Հայրենիք-Սփյուռք միասնուրյան, հոգևորի և նյուրականի հարաբերուրյան և այլ խնդիրներ։

² Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Ես հաղթեցի աշխարհի...», Ս. Էջմիածնի, 1997, էջ 80:

³ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Ես հաղթեցի աշխարհի...», Ս. Էջմիածնի, 1997, էջ 73:

Ցանկացած հարցի, լինի դա կրոնական, փիլիսոփայական թե մանկավարժական, Վեհափառ Հայրապետը տախի է յուրօրինակ պատասխան՝ ինքնատիպ վերլուծուրյամբ և մեկնարանուրյամբ, որտեղ բացահայտվում է Աստծուն անմշացորդ նվիրյալ հոգկորականը, խոհուն իմաստասերը և հմուտ մանկավարժը:

Երիտասարդ սերնդին ուղղված Վեհափառ Տիրոջ յուրաքանչյուր խոսք տոգորված է սիրով, գորովանենով, հավատով ու մեծ լավատեսուրյամբ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վեհափառ Հայրապետի մտքերը մարդու, երա ինքնուրյան, կազմավորման և ինքնանաչման վերաբերյալ:

Մարդը, ըստ Նորին Սրբության, հարանուն և հարափոփոխ մի էակ է, որը կյանքի զարգացման ընթացքի հետ ենթարկվում է փոփոխությունների, փոփոխում է ինքնը մրոնումը, այսինքն «մարդը կայական գոյութիւն մը չէ. - առում է Վեհափառը. - այլ լինելային երեւոյք մը: Հետևաբար, իր ինքնանաչումը շարունակական ընթացք մըն է եւ ոչ թէ առարկայական, մէկ անգամուան համար մտասեւումով ձեռք բերուելիք իրականութիւն մը»⁴:

Մարդու ինքնուրյունը նա նմանեցնում է բազմաշերտ հոդին, որն ամեն անգամ երբ փորս ու պեղս, «նորանոր ուղիսեր գուրս կգան այնտեղից, որոնց կզարմացնեն հանախ մարդ-հողագործին...»:

Կուզենայի ամբողջովին մեշքերի մարդկային կյանքի մեկնության՝ Վեհափառ Հայրապետի խոսքերը. «Եր եիմնական բաղկացորեան մէջ կեանքը՝ մարդու շարունակական կազմաւորումը, տեւական ինքնակերտումը, յարանուն գիտութեան, ընդարձակուող ու խորացող նանաչման ընթացք մըն է: Ով որ կը դադրի գիտնալէ՝ կը դադրի մարդկայնօրէն ապրելէ: Ով որ կ'արհամարհէ նանաչման նիգը՝ կոյր, կայական, մեռելային վիճակի մը կը մատնուի, որուն նոյնիսկ եւ յանախ անգիտակից կրնայ մնալ ինք ենթական»⁵:

Մարդու ձևավորման ողջ գործընթացի մեջ իմաստասեր-մանկավարժը չափանեց կարևորել է մարդու ինքնանաչումը՝ այն համարելով ամենից դժվար, գրեթե անկարելի գիտություն, բայց և միաժամանակ «ամենանիրաժեշտը, կենսականը, հրամայականը և օգտավետ մարդ-էակի համար»:

Ինքնանաչման պրոցեսի ընթացքում մարդը կարողանում է վեր հանել և հստակեցնել իր ունեցած կարողություններն ու ունակությունները, չափավորել իր ցանկություններն ու պահանջմունքները՝ եղած հնարավորություններին համապատասխան, որպեսզի չտարփի ինքնախարենուրյամբ, որը կարող է վիճակը նրան իր հետազա ողջ կյանքում:

Մարդկային կյանքը Վեհափառ Հայրապետը կայացած է համարում միայն հասարակության մեջ՝ իրավացիորեն գրելով. «Մարդկային կեանքը հաւաքական իրագործում մըն է, եւ անհատները որքան ալ որ ուժեղ ըլլան, տաղանդաւոր, ոչինչ կրնան իրագործել, երբ ապրին ու աշխատին անշատաբար մարդկային հաւաքականութենէ»⁶:

Վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցող իրադրությունները՝ թե՛ քաղաքական, տնտեսական, ընկերային և թե՛ հոգկոր ոլորտներում, հանգեցրին լուրջ փոփոխությունների վերոհիշյալ բոլոր բնագավառներում: Բնականարար,

⁴ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Ծանի՛ր զիեզ...», 1983, Անդիլիաս, էջ 14:

⁵ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Ծանի՛ր զիեզ...», 1983, Անդիլիաս, էջ 11:

⁶ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Խորիէ եւ մտիր», Ա. Էջմիածին, 1995, էջ

դրանք առաջ թերեցին նաև արժեքների նկատմամբ մարդկանց վերաբերմունքի լուրջ փոփոխություն:

Այս հարցի վերաբերյալ իր մտահոգությունն է արտահայտում նաև Վեհափոխ Հայրապետը. «Այսօր արժեքների վերիվայր շրջում կա: Մեր երիտասարդությունը արժեքների սխալ ըմբռնում է հառաջ թերում իր մտայնության մեջ: Եվ դա զիսավորաբար գալիս է արևմտյան մշակույթի սխալ հասկացողություններից: Այդ մշակույթի այն երևույթներից, որոնք մակերեսային ու վաղանցուկ են և որոնք այսօր կան, վաղը՝ չկան: Դա վեստում է մեր ազգի բարոյական, ազգային, կրոնական, հոգևոր դիմագծությանը»⁷:

Եվ սրանից ելնելով, գտնում է, որ այսօր մենք այնպիսի դաստիարակչական համակարգի կարիք ունենք՝ լինի դպրոցում, թե հանրության մեջ, որ կարողանա արժեքների գաղափարը նիշան կերպով մենաբանել մեր զավակներին: Մեզ անհրաժեշտ է «հանրային դաստիարակություն, հանրային առողջություն, արժեքների գաղափարի վերաբարմացում»:

Այսօր մեր կրթական համակարգը վերափոխումների գործընթացի մեջ է՝ մանկապարտեզից մինչև բուհ, որի նպատակն է անող սերնդի համար ապահովել համակողմանի և ներդաշնակ զարգացում, տալ նրան լիարժեք դաստիարակություն և նախապատրաստել կյանքին՝ բարձր պահելով նրա մեջ ազգային ինքնագիտակցության ոգին:

Կրթական համակարգի մասին իր արժեքավոր մտորումներն է հայտնել Վեհափոխ Հայրապետը՝ ասելով. «Կրթական մեր համակարգը պետք է ուղղված ուրախ ու անկախ Հայրենիքի կերտումի գաղափարով: Այսօր մենք պետք է ունենանք ազգային մի գաղափարաբանություն: Մեր նոր Հայրենիքի ազատ ու անկախ Հանրապետության հոչակումը հոգեփոխություն պետք է առաջ թերի ժողովրդի մեջ, որ սխանմ փոխել, առանց մարդու փոխելու, հաջողության չի հանգի: Սակայն ուսուցումը միայն ազգային չէ: Մարդ-էակ պետք է պատրաստես: Համամարդկային արժեքներ փոխանցես: Հետևաբար, մարդ-էակ, մարդու մեջ հայր կազմավորելը պետք է լինի մեր նոր փիլիսոփայությունը մանկավարժական դպրոցներուն, հանրային կրթական մեր բոլոր հաստատություններուն»⁸:

Իսկ այս գործում իր անձնահատելի, վեռորոշ ու կարևոր դերն ունի հայ ուսուցիչը, քանզի ուսուցչի ձեռքին է գտնվում մատադ սերնդի ձևավորման, զարգացման և դաստիարակության պատասխանատու գործը: Նա է կերտում ապագա սերունդը: Եվ դրա համար չափազանց կարևոր է, թե ինչպիսի անհատականության տեր մարդ է նաև և ինչպես է կատարում իր մեծ առանձիւթյունը:

Ամենայն Հայոց Կարողիկոսն ասում է. «Երկու տեղ կա իմ կյանքում, որտեղ ես ինձ երշամիկ եմ զգում. առաջինը դասավանդության պահն է, երկրորդը՝ խորանի վրա - Պատարագ մատուցելիս: 1952 թվականից մինչև օրս ս երեք չեմ դադարել ուսուցիչ լինելուց»⁹:

Վեհափոխ Հայրապետը մասնագիտականից առավել մեծ տեղ է տալիս ուսուցչի անձնային որակներին և միանգամայն իրավացիորեն գտնում է, որ ուսուցչի համար ամենակարևորը նվիրումն է գործին, որն իր մեջ ներառում է հետևյալ բաղադրատարրերը.

⁷ Հարցազրույցից, 16 օգոստոսի, 1997, Ս. Էջմիածին:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

1. ապրում, 2. նախանձախնդրություն, 3. ազգային շահի գիտակցում:

Միանգամայն տեղին են հնչում Վեհափառ Հայրապետի մտահոգությունն արտահայտող հետևյալ խոսքերը. «Հայ ուսուցիչը այսօր դարձել է արհեստառոր: Կը սպասէ զանգակին, որ հնչէ, որպէսզի երբայ ուսուցչարան եւ խօսի քէ այդ օրը ինչ նորոյր կայ շուկայի մէջ: Դասարաննեն դուրս ուսուցչութիւնը մեծաւ մասամբ եւ իր հարազատ կոչումով չապրուիր մեր կենացին մէջ: Այսօր մեենք փայլը կը փնտենք - լոյսը մոռցած ենք, շպարը կը փնտոնենք - ներքին գեղեցկութիւնը մոռցած ենք, կեղեւը աւելի կը խօսի, քան աւիշը, երեւալը աւելի կ'արժէ, քան ըլլալը»¹⁰:

Այս, ցավով, այսօր ուսուցիչներից շատերը ընթացիկ շուկայական սպառողական կյանքի հոգսերով ավելի են տարվել:

Եվ այս առումով չափազանց կարևոր է ու հետաքրքիր վաստակաշատ մանկավարժի այն հարցադրումը, թե «ուսուցիչը դասարանից դուրս ինչչա՞ն ուսուցիչ է, երեկոյան մտածո՞ւմ է, արդյոք, իր դասերի մասին, ազատ ժամերին իր ուսուցչության զարգացման, հմտության նոխացման, իր մերոդարաննության բարեկարգման մասին»: Եվ տալիս է հետևյալ պատասխանը. «Այսօրվա ուսուցիչների ստվար մասն իր ինքնարտահայտությունը եղող ապրումը չի դրսելուրում, հոդվածներ չի գրում, չի արտահայտվում: Ապրումն է պակասել այսօրվա ուսուցիչների մոտ»¹¹:

Հիրավի, այսօր սա լուրջ ու մտահոգի հանգամանք է մեր հասարակության ու ժողովրդի համար և, որ ամենազիստավորն է, մեր մատադ սերնդի վաղվա օրը նիշտ կերտելու սուրբ գործի համար, որի հանդեպ ցանկացած թերացում ու ունենալուրյուն անբույլատրելի է և դատապարտելի:

Հայ ժողովուրդը նյութականի մեջ երբեք չի գտել իր գերազույն արժեքը, քանի որ նա միշտ գիտակցել ու ամեն ինչից վեր է դասել գիրն ու գրականությունը, եղել է և է՛ արարող ու մեայուն արժեքներ ստեղծող ժողովուրդ: Խնկ այդ գործում հայ ուսուցչությունը, հայ գրագետներն իրենց պատմական առավելությամբ վեռորոշ դեմ են իսահացել՝ պահպանելով մեր ազգային ինքնությունը, մեր մայրենին ու մեր հոգու գորությունը:

Հուսանք, որ ներկայիս ժամանակավոր դժվարությունները ի զորու չեն լինի խամրեցնելու հայ ուսուցիչների այն բոցավառ շահը, որի կենարար լույսը դարեր շարունակ նիշտ նանապարիի ուղեցույց է եղել մեր երիտասարդ սերունդների համար՝ ոսկեպսակ ունենալով մեր հայոց մշտադալար լեզուն, «դարերի վրա անպատմելի սիրազործություններ կատարած լեզուն»: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը գրում է.

«Վանքերու կամարներուն տակ ան հնչեց տիւ եւ գիշեր:

Մագաղաքներուն վրայ ան շնչեց եւ ներշնչեց:

Քարերուն վրայ ան իմաստ տուալ այլապէս կոյրիմաստ րազարդներուն եւ տուֆե զանգուածներուն:

Պալատներուն մէջ ան հնչեց պատգամաշեշտ:

Բանակներուն հետ խալց իրրեւ յաղերք:

Ցնծութեան սեղաններուն ան շնչուց սրսեր:

Տիրալից պահերուն կապեց գոտին հոգիներուն:

¹⁰ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Խորհեւ և մտիր», 1995, Ս. էջմիածին, էջ 254:

¹¹ Հարցագրույցից, 16 օգոստոսի, 1997 թ., Ս. էջմիածին:

Լեզուին բացուղող մանուկի ժայտն եղաւ:

Եւ այս եղաւ պատմութիւնն Հայոց...»¹²:

Եվ շարունակելով ասում է. «Հայ գիրը կենսատու ջուր է, աւիշ ու արիւն մեր ազգի կեանքին մէջ: Գիրն ապառած կը դառնայ հոգիի դիմացկունութեան որպէս գրաւական»¹³:

Առանց հիացումի ու հպարտության չես կարող խոսել Վեհափառ Հայրապետի «Հայ մարդը հայ գիրքին դիմաց» աշխատության մասին, որտեղ տրվում են հայ գրի այնպիսի խորաքափանց և հոգեցունց բնուրագրումներ ու արժենորումներ, որոնք հեջում են որպիս պատգամ մեզ՝ բոլորին համար.

«Գիրքը մարդուն հոգեմտաւոր աշխարհին արտացոլումն է:

Գիրքը՝ զգացումներու բխումը, գիրի հունով հոսող:

Գիրքը՝ մտածումներու մարմնացումը, գիրի տարազով հանդերձուող:

Գիրքը՝ մարդու շարունակական ինքնակերտումի ամէնէն կարեւոր ազդակը:

Գիրքը՝ բաղաբակրութեան տարածման եւ զարգացման անիւը:

Ի՞նչ պիտի ըլլար բնուրիւնը առանց լոյսին:

Խաւար է աշխարհը առանց գիրքի:

Խոպան է մարդկային կեանքի հողը առանց գիրքի ակօսումին»¹⁴:

Գրի արժեքն է՝ լ ավելի է կարևորվում հատկապես մեզ՝ հայերին համար, բանի որ նա հայի համար եղել է, ինչպես գրում է Վեհափառ Տերը, «Պատիւր, պարտքը, տագնապը, նանապարիը, ընկերը, հանգոյցը յաւերժութեան և ժամանակի, զրահանդերձը, «օնանասփիւռ» հայութեան, «սպեղանիք զօրաւորք», բալասանը, այգեստանը, կենդանագիրն ու «Մանանայ»-ն, նուագարանը հայ հոգիին, և արիւնը հայուն»:

Հիրավի, հայ գրին տրված զարմանակրաշ, խորախորհուրդ ու համապարփակ մի բնուրագրություն: Ավելին, թերևս, չես ասի:

Զորավոր ու նշանակած են հեջում Մեծ մանկավարժի հետևյալ խոսերը. «Մենք կանք մեր լեզուին շունչը մեր ազգին մէջ կենդանի պահող գիրով ու գիրենով: Սրբութեան, նուիրականութեան օծումն ունի իր մէջ Հայ գիրքը: Ո՞ւր կը գտնեմ հայ կեանքին հայկականութիւնը: Ո՞ւր կը հանդիպի հայ հոգիին հայեցիութեան:

Չենագիրներուն մէջ հազար-նիւթեան եւ հազար-գութեան:

Չենագիրներէն եւ անոնց ժառանգորդ:

«Տիպ ու Տառ»-ի մարմնացումներէն վեր յառնող եւ յաւերժակենցաղ

Մեսրոպներով՝ նշանաւոյզ եւ նշանաւարարատ,

Եղիշեներուն մէջ՝ դիւցանաշունչ եւ նախանձավառ,

Եզնիկներուն մէջ՝ իմաստարան եւ շնորհագիր,

Խորենացիներուն մէջ՝ հայրենապաշտ եւ խորիմաստ,

Դաւիր Անյաղըներուն մէջ՝ ճախրագնաց եւ հետորարան,

Շիրակացիներուն մէջ՝ տիեզերախնդիր եւ տրամարան,

Նարեկացիներուն մէջ՝ հոգեսոյզ եւ ներիայեաց,

¹² Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաքողիկոս, «Հող, մարդ և գիր», 1996, Ս. էջմիածին, էջ 186:

¹³ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաքողիկոս, «Հայ մարդը հայ գիրքին դիմաց», Հոգեմտավոր նառագայրումներ, 1997, Ս. էջմիածին, էջ 469:

¹⁴ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաքողիկոս, «Հայ մարդը հայ գիրքին դիմաց», Հոգեմտավոր նառագայրումներ, 1997 թ., Ս. էջմիածին, էջ 468:

Շնորհալիներուն մէջ՝ աղօրամբմունջ եւ մեղեդիարարքառ,
Տարեացիներուն մէջ՝ լիարան և շտագով,
Քոչակներուն մէջ՝ ժողովրդախոս և տաղասաց...,
Սայար- Նովաներուն, Արովեաններուն,
Դուրեաններուն, Պարոնեաններուն,
Բաֆֆիներուն, Զօհրապներուն, Ահարոնեաններուն,
Միծարեններուն, Վարուժաններուն, Թէքեաններուն, Օշականներուն,
Զարեաններուն, Զարեններուն, Սեւակներուն մէջ,
և դեռ այնքան-այնքան ուրիշներուն մէջ, շիրմէն անդին եւ ասդին,
Երկնի մէջ լուսաւորեալ եւ երկրի վրայ դեռ զինուորեալ՝ յոլովարժէք եւ
կենսախայտ»^{15:}

Այո՞ւ, Վեհափա՞ն Տեր, Դուք իրավացի եք, այստեղ է հայի հոգին, այս անուններով մկրտված գրեթեի միջով է անցնում հայի հանապարհը՝ «դարերու հանդրուաններով եւ գալիքի դեռ անձանօք հորիզոններով՝ յաւերժուրեան մշտարքարքան յուշարձան ունենալով Հայ Գիրքը՝ անխորտակելի գէնքը յաղուրեան»^{16:}

Մայրենի լեզու, հայ գիրք, հայի աննկուն ու մարտնչող հոգի և քրիստոնեական մեծ հավատք,- ահա սրան են մեր ժողովրդի այն զորավոր ու անխորտակելի ուժերը, որոնց դեմ անկարող գտնվեց ցանկացած զենք ու բռնուրյուն:

«Հայ ժողովուրդը քրիստոնեական կրօնի մէջ գտաւ յոյսի վարդապետուրիւնը՝ որ ինքնին լոյս է կեանի...»¹⁷⁻ գրում է Վեհափան Տերը:

Այսօր անառարկելի ու անժխտելի է այն փաստը, որ հայ քրիստոնեական հավատքը և Հայաստանյայց Եկեղեցին անզնահատելի ու վճռորոշ դեր են խաղացել հայ ժողովրդի թե՛ գոյապահապանման և թե՛ նրա ազգային, հոգեոր, մշակուրային, կրթական, պատմական արժեքների ստեղծման գործում:

«Եկեղեցին ժողովուրդն է հաւատելին մէջ միացած,- ասում է Վեհափան Հայրապետը,- հայօրէն ապրող եւ մեր ազգային ինքնուրիւնը հոգեւոր այս հարսուրեան մէշէն արտահայտող: Եկեղեցին համահաւաքոյրէն է, միասնուրիւնն է բոլոր անոնց, որոնք կը հաւատան ի Քրիստոս, հայօրէն, և ուսաւորչօրէն, Մեսրոպարար, Վարդանարար»^{18:}

Խիստ բռնուրագրական ու խորիմաստ են հնչում Վեհափան Հայրապետի խոսքերը Հայաստանյայց Եկեղեցու կոչման ու ծառայուրյան վերաբերյալ: Նա գրում է. «Հայաստանեայց Եկեղեցու սկզբանատիպ, բռն եւ միակ կոչումը հայ հոգուն հոգեկան սննդի աղրիւր լինելն է: Այսինքն, մարդ-էակի հոգեղէն բնուրեան համապատասխան հոգեկան կեանին, բարոյական նկարագրին ի սպաս դրուած ծառայուրիւնը, մարդու հոգեկան ապրումների բիւրեղացման, ազնուացման եւ բարձրացման այնքան կենսական գործը»^{19:}

¹⁵ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Հայ մարդը հայ գիրքին դիմաց», Հոգեմտավոր ճառագայրումներ, 1997 թ., Ս. Էջմիածին, էջ 498-499:

¹⁶ Նույն տեղը, էջ 525:

¹⁷ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»-ին մէջ», Ս. Էջմիածին, 1996, էջ 54:

¹⁸ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Անցեալը անցած չէ...», Անրիլիս, 1991, էջ 141:

¹⁹ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»-ին մէջ», Ս. Էջմիածին, 1996, էջ 37:

Նա Հայաստանյայց Եկեղեցին անվանել է «հայ ժողովրդի համար հոգեւոր ճշմարտութիւնների, բարոյական սկզբունքների, ազգային առողջ գիտակցութեան ներշնչման - վառարան եղող հոգեւոր հայրենիք»²⁰:

Հայ Եկեղեցու առամելուրյունը, նրա կոչումի առաջնահերթ ուղղությունն ու բրանդակուրյունն է «առողջ պահել հայ հոգին աստուածային վեհագոյն ապրումների, բարոյական ազնուագոյն սկզբունքների Ենրգործութեամբ»:

Եվ այս բոլորը մեր Եկեղեցին իրականացնում է՝ ծավալելով ազգաշահ, կրոնական, քարոզական, դաստիարակչական, կրթական, հրատարակչական, մատենագիտական, քարգմանչական համապարփակ գործունեություն: Խև այս ամենի մեջ, բնականարար, իր ուրույն տեղն ունի կրոնական դաստիարակությունը՝ որպես նոր սերնդին հոգեւոր բարձր արժեքների հաղորդման ու փոխանցման կարևոր աղբյուր և միջոց:

Կրոնական դաստիարակությունը, ըստ Վեհափառ Հայրապետի, հարկավոր է սկսել դեռ ընտանիքում, որն իր շարունակական ընթացքը պետք է ստանա կրօջախներում. «Կրոնը մտի հարց չէ: Կրոնը մարդ-էակի ներքին զգացողության հարց է, որը կազմավորվում է վաղ մանկության տարիքից»²¹: Այդ խև առումով, Վեհափառը չափազանց կարևորում է քրիստոնեական կրթության հարցը, որը «մարդ-էակը Աստուծոյ գիտակցութեան մէջ կ'ամրացնէ»:

Այսօր, հիրավի, մենք կարիք ունենք մեր կյանքում Ավետարանի լուսավոր ճշմարտության Ենրքափանցման և Ենրգործման: Դրա համար պետք է որ երեխաները դեռ մանուկ տարիքից հաղորդակցվեն այդ լույսի հետ, որը նրանց մեջ հույս, հավատ ու սեր կամքմանի Աստծու, մարդկանց և շրջապատող աշխարհի նկատմամբ:

Մեր ժամանակի միջազգային նախաչում ունեցող հոգեւոր Մեծ Առաջնորդ, խոհուն փիլիսոփա և վաստակաշատ մանկավարժ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոսի կրոնական, փիլիսոփայական և մանկավարժական խորիմաստ, քազմաբնույթ և արժեքավոր հայացքների մասին կարիքի է անվերջ խոսել, բանի որ նրա միտքը մի անհատակ օվկիանոս է, որքան պեղես, այնքան անգին գանձեր կգտնես:

Խոսք ուզում եմ ավարտել Վեհափառ Հայրապետի հետևյալ պայծառ մտածումով. «Հաւատենով գոտեպնդուած, յոյսով վառուած եւ սիրով ողողուած՝ Քաղենի միասին, ձեռք-ձեռքի, կողդ-կողդի, որպէս մէկ ազգ, մէկ անունով, մէկ արիւնով, մէկ նանապարհով, դէպի մէկ ապագայ»²²:

20 Խույն տեղը, էջ 56:

21 Հարցազրույցից, 16 օգոստոսի, 1997, Ա. Էջմիածին:

22 Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կարողիկոս, «Ծանիր զիեզ...», Անրիլիաս, 1983, էջ 67:

ՄԻԼՎԱ ՍՈՒԲԻԱՍՅԱՆ

ԽՈՍՈՒՄ ԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ

Ինչպես արվեստագետների, գիտականների, հասարակական-քաղաքական գործիչների, գրողների, այնպես էլ մտավորական հոգևորականների և Կաթողիկոսներից յուրաքանչյուրի կյանքը ու գործունեությունը, հետաքրքրասիրությունների աշխարհը, կյանքի, մարդկանց հկատմամբ հայացքները յուրովի ներկայացվել են ստեղծագործությունների, ինքնակենսագրական հուշերի և հատկապես գրած նամակների մեջ: Թերեւս նամակներում է անկաշկանդ ձևով դրսուրվել ու բացահայտվել նրանց ապրած կյանքը, ապագայի իղձերը, ցանկությունները, երազներն ու տվյալուաճները: Երբեմն նամակները եղել են անձնական, իսկ մեծ մասամբ՝ ազգային-հայունասիրական և հաճախ համամարդկային բնույթի: ՀՀ պետական կենտրոնական արխիվում, որը մեր հանրապետության կարևոր օջախներից մեկն է, հանգրվանել են հայ ժողովրդի ազնվագույն մտավորականների նամակները՝ Կոմիտաս, Արշակ Չոպանյան, Գրիգոր Չոնրապ, Սիամանթոն, Դամիել Վարուժան... Գուրգուրանքով, մեծ հոգատարությամբ պահպանվում են նաև եկեղեցական մտավորականների անձնական արխիվները՝ Խրիմյան Հայրիկ Կաթողիկոս, Գարեգին Հովսեփյան Կաթողիկոս, Սաղաքիա Օրմանյան Պատրիարք, Կարապետ Եախսկոպոս Տեր-Մկրտչյան...

Արխիվում խնամքով պահպանվում են նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի թղթակցությունները սիյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչ, հայագետ-գիտական, հայրենասեր Հայկ Բերբերյանի հետ: Նամակներին ծանոթանալու և ուսումնասիրելու համար դրանք սիրով մեզ տրամադրեց ՀՀ արվեստի, գրականության և մամուլի արխիվի տնօրեն Սանդրո Բեհրույդյանը: Նրանց միջև նամակագրությունը հաստատվել է 1957 թ., երբ Գարեգին Սարգսյանը երիտասարդ արենա, դեռևս ոչ այնքան հայտնի հոգևորական էր, Օքսֆորդի համալսարանի ուսանող, իսկ Հայկ Բերբերյանը՝ հայտնի, ճանաչված, ծանրակշիռ վաստակով մտավորական: Այդ վակերաթղթերը փայլուն վկայությունն են նրանց սրտամոտ, չերմ, անխախտ բարեկամության:

Մեծանուն արվեստագետի և Սարգսյան հոգևորականի նամակ-պատասխանաները գրի, գրականության, արվեստի, կրոնի, պատմության, ազգային ցավուու խնդիրներին վերաբերող հարցեր են շոշափում: Այդ նամակները հստակ պատկերացնում են տալիս Կաթողիկոսի կյանքի, հայրենասիրական հայացքների, գրական-գեղարվեստական գործունեության մասին: Բերբերյան գիտականը ողջունել և բարձր է գնահատել երիտասարդ վարդապետի ուսումնասիրությունները, պրատումները մատենագրության ասպարեզում: Ասածին ապացուցման Հայկ Բերբերյանի նամակներից մեկը, որտեղ ասվում է. «Ծնորհակալութեամբ ստացայ Հայ քրիստոնեական գրականութեան մասին ձեր հրատարակած գորոյնը, որ հակառակ իր փոքր ծավալին, շատ բան կը պարունակէ եւ կարեւոր

նապատ մըն է մեր մատենագրութեան ուսումնասիրութեան ասպարէզում: Անկեղծօրէն կը շնորհաւորեմ ձեզ այս աշխատանքին համար... «Օրիենտալին էքիումնամիքի» մեջ 1958-ին յօդուած մը հրատարակած էք եղեք: Կարելի՞ է արդեօք օրինակ մը ունենալ»: Թերևս մի գրախոսականի անկեղծ ու ճշգրիտ գնահատական էք այս հակիրճ բնութագրումը:

Նման խոստովանությունները օգնեն են ինչպես մեծ գիտնականին, այնպես էլ երիտասարդ հոգևորականին ավելի ճշգրիտ արժնորել կատարած գործի կշիռը և չափը: Այս մասին են վկայում Գարեգին Վարդապետ Սարգսյանի համակերից մեկի հետևկալ տողերը. «Ստացայ խորին շնորհակալութեամբ Ձեր հրատարակած «Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետին», որում մասին արդեն խօսիլ էք ինձի և նախափորձերին ալ տեսնելու առիթ ունեցած էի ձեր մօտ: Ուշադրութեամբ կարդացի և արդեն իսկ պատրաստեցի գրախոսական մը, որ արդեն իսկ լոյս կը տեսմէ ի մօտոյ «Հասկ»-ին մէջ: Գիտական պրատումի և խղճմիտ աշխատանքի աղոյու Անոյշ մըն է անկախաբար իր հիմքին արժէքէն, իբրև մեթոդ ունի գիտական լուրջ հանգամանք և արժէք... Ծատ շնորհակալ եմ անգլերէն գրոյքին մասին Ձեր յայտնած գնահատական դատաստանին համար, որ ինձի համար լուրջ և արժէքաւոր վկայութիւն է»:

Ընդգրկուն բացատրական փոխադարձ նամակագրական երկխոսություն է ընթացել՝ կապված Գարեգին Կաթողիկոս Հովսեականի ամբողջական երկերի հրատարակությանը վերաբերող մանրամասներին: Ահա ինչ է գրում Գարեգին Վարդապետ Սարգսյանը. «Երկար լուրունէ մը եսոք որոշ կարօտի և ուրախութեան զգացումով մը կը գրեմ այս տողերը գիտական գործունելութեան հաճելի հեռանկարով մը և միշտ նոյն բարեկամութեան զգացումին մէջ: Գալուստ Կիլպէնկեան հաստատութիւնը մեծապէս գնահատելի գաղափարն է ունեցած հրատարակելու հայագիտական ամբողջական երկերը մեծամուն Գարեգին Վաթողիկոս Յովսէփիկանցի»: Պր. Ռուպէր Կիլպէնկեան նմորեց, որ ես ստանձնեմ հրատարակութեան գործին պատասխանատութիւնը: Սիրով ընթառացեցի խորհենով, որ իբրև նախկին աշակերտ Գարեգին Կաթողիկոսի, սիրոյ պարուք մըն էր նաև ինձի աշխատի իր յիշատակի պանձացումին ի խանդիր և միանգամայն փոքրիկ ծառայութիւն մը բերել հայագիտական ուսմանց, որոնք ալնքան մօտիկ են սրտիս և որմէ պղազան գրադումներ զիս այնքան հեռու կը պահեն»:

Նամակի ընթերցումից մեր առջև հառնում է իսկական մտավորականը, հայրենասեր ազգային գործիչը, որի կյանքը նվիրում է եղել Եկեղեցուն, ժողովրդին, հայրենիքին: Նամակներում պր. Բերբերյանին մանրամասն հաղորդում է, թե ինչպիսի բարեխնդությամբ, մանրակրկիտ ուսումնասիրությամբ, առանձին գիտնականների հետ խորհրդակցելով է հրատարակել ձեռագրագետ, պատմարան, բանասեր գիտնականի երկերի ժողովածուն: Այդ ամենը հաստատում է 1969 թ. սեպտեմբերի 21-ին տիար Հայկ Բերբերյանին գրած նամակում. «Ծատ մօտիկ բարեկամներէն փորփ. Լ. Խաչիկեանը, որ մեծապէս հրճուեցաւ երի իմացաւ, որ մօտ ատենէն լոյս կը տեսնէ Գարեգին Կաթողիկոսի ամբողջական երկերու Ա. հատորը: Իր գրանցնակին մէջ աչքէ անցուցի Գարեգին Կաթողիկոսի արխիմիդ ցուցակը: Հետաքրքրական նիւթեր կան այնուեւ ըստ երևոյթին: Դժբախտաբար միայն իննգ-վեց օր մնացի Հայաստան և այնքան գրալած եղայ Էջմիածնի մէջ, որ անկարելի եղաւ ինձի աւելի երկար մնալ Մատենադարան և աչքի անցնիլ

արխիւր»: Կարժէ սակայն առիթով մը երթալ և շուրջ մէկ ամիս մնալով ուսումնասիրել այդ արխիւր և տեսնի թէ ի՞նչ նորութիւններ կարելի է գտնել անոնց մէջ»: Վարձատրված է Գարեգին վարդապետը, քանզի վավերագրերի ցանկում նահապանվում է նաև հաղորդում, որ «Գալուստ Կիլայէնկեան հիմնարկութիւնը իր խորին շնորհակալիքը կը յայտնէ Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Սարգսեանին ամբողջական երկերուն պատրաստութեան բազմապահանջ եւ պատասխանատու հոգը» ստամձնելու համար:

Գարեգին եպիսկոպոս Սարգսյանի պրատող միտքը չէր կարող սահմանափակվել միայն այս գրքերի հրատարակությամբ, և նա ձեռնամուխ է լինում նաև Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի հոդվածների ժողովածուն հրատարակելու: Անհա ինչ է խոստովանում առ 1962 թ. փետրվարի 26-ին ուղարկած նամակում. «Եթե Թաւրիդ էի, ուր Կարապետ Տեր Մկրտչեան սրբազնի յիշատակը այնքան կենանի է, զաղափար ունեցա «Արարատի» մէջ իր հրատարակած յօդուածները ի մի խմբելու և բացատրողական յառաջարանով մը հրատարակելու»: Գարեգին Սարգսյան մտավորականի աշխատասիրությամբ և առաջարանով Աթթիլիասում հրատարակվեց Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի ոգենեան հոդվածների ժողովածուն: Իսկ այդ օրերին հրատարակված իր աշխատության մասին համեստաբար գրում է. «Անցնող տարույն վերջաւորութեան, անզերէն լեզուով գորդիկ մը հրատարակեցի Արևելեան Եկեղեցիներու մասին. փոստի միջոցաւ կ'ուղարկեմ Ձեզի օրինակ մը»:

Նամակները վկայում են, թե ինչպիսի բարեկամական հարաբերություններ են եղել հայ ժողովրդի անվաճի մտավորականների, օտարազգի հայագետների հետ՝ պրոֆ. Վահե Սեթելյան, Պատուա, Ծահնոր, Հ. Միլյուտինանս, Ս. Քոլանջյան, Սիրարիի Տեր-Ներսեսյան և այլն: Մեկ անգամ ևս համոզվում և հստակ պատկարում են կազմում, թե որքան կարեր և ազգանվեր գործունեություն է կատարել ի նպաստ հայ ժողովրդի և Հայոց Եկեղեցու միջազգային հետինակությանը, երբ ծանօթանում են նամակների այն բաժնին, որոնք պատմում են աշխարհի տարբեր տեղերում /Հնդկաստան, Ճան, Փարիզ/ հրավիրված գիտաժողովների, խորհրդակցությունների մասին: Հետաքրքիր է նաև Բերբերյանի նամակը՝ հասցեագրված Գարեգին եպիսկոպոսին. «Օտար հայագետներու Օքսֆորտ ժամանումէ օգտուելով, պիտի խնդրէի, որ անոնց հրատարակութած կամ պատրաստութեան մէջ գտնուող գործերուն ցանկը պատրաստել տայիր իրենց: Մինչեւ պյուր յստակ գաղափար մը չունիմ թէ Տրիստր ինչ պատրաստելու վրայ է»:

Պահպանված այս նամակները մնել անգամ ևս հավաստում են, որ Նորին Սրբությունը վարչական, հոգևոր-Եկեղեցական անվերապահ ծառայությամբ կարևոր է կատարել նաև Մեծի Տաճա Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում նոր սերմի դաստիարակության գործում. «Դժբախտաբար այնքան ծանրաբեռնուած եմ դասերով և տեսչական գործերով, որ գրեթէ երբեք առիթ չեմ ունենար մասնաւոր ուսումնասիրութիւններ կատարելու: Շարաթական 22 պահ դասաւանդութիւն ունիմ: 18-ը՝ Դպրեվանքի լճաճարանի սարկաւագներուն և 4-ը՝ Ճեմարանական լսարանական բաժնին: Դասերս առհասարակ դասախոսութիւններ են, որոնք կը պահանջեն լուրջ պատրաստութիւն: Կողմանակի վաճական պարտաւորութիւններ՝ պատրագներ, քարոզներ, երբեմն հրապարակային դասախոսութիւններ աւելի կը ծանրացնեն գրադումներս և յաճախ կը ցրուուին

ძრფერი: Կը յուսամ մէկ երկու տարիէց կը թէրթեանան դասերս և աղիթ կը գտնէմ բանասիրական խորրով ուսումնասիրութիւնների»: Լիովին չիրականացավ Նորին Սրբության այդ բաղդաճըլ, քանզի ժողովուրդը զնահատեց հայրենասեր հոգևորականի կազմակերպչական կարողությունները, Ասիմիններից ժառանգած առաջին հատկանիշները՝ չերմեռանդ հավատացյալ, քաջ հովապետ, Կրթանկեր ու հայրենասեր մտավորական, և նրանից պահանջեց շատ ավելի կարևոր մի առաքելություն, հովվել հոտը Ամենայն Հայոց Կաթողիկոսության բարձութիւն:

Ուսումնասիրելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի համակաների փոքրիկ մի մասը՝ պիտի ցանկանալինք, որ այն դառնար հասարակության սեփականությունը, որոնցից ամեն մեզը կարող է դիտվել իրեն գրական գեղարվեստական մի փոքրիկ հմուտ, որոնք բարորշում են Նորին Սույր Օծության հոգու վեհությունը, սրտի ազնվությունն ու մարդասիրությունը։ Հրապարակի վրա են մեր մշակույթի, գիտության, գրողների հաշամաքոր գործիչներից շատերի /թումանյան, Տերյան, Խաչակրյան.../ համականը, որոնք ազգային և անհատական խնդիրներ արձարձելուց բացի, ընթերցանության սիրված գործեր են դարձել։ Հուսանք, որ մեծանուն հեղինակների շարքում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի համականին են կներկայացվի ընթերցողին, որը ոչ միայն գրական, այլև գիտա-մշակութային մեծ արժեք ունի։

ՎՈԼՈԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵՎՍ ՄԻ ԹՎԱՑՅԱԼ ՀԵՐԹԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ*

«Եւ տաց խաղաղութիւն յերկրին ձերում, եւ ննչիցք, եւ ոչ ոք իցէ ոյ զարդութեցոցամիցէ զձեզ. եւ կորուսից զգազան չարս յերկրէ ձերմէ. եւ պատերազմ մի՛ անցցէ յերկիր ձեր»:

(ՂԵՒՏԱԿԱՆ ԻԶ 6)

Վարագիանի՝ ռազմաճակատ մեկնելուց հետո անցել էր արդեն մեկ տարի: 1944 թվականի ամառն էր: Պատերազմը վաղո՞ւց արդեն մտել էր իր բեկումնային շրջան: Անկասկա՞ծ էր և որոշակի՞ նրա ելքը. Գերմանիան անվերապահորեն պետք է պարտվեր: Պատերազմական գործողությունները երկի թե վերջնականութեն անցել էին արդեն օտար հոդի վրա՝ խորհրդային սահմաններից դուրս, և նրան գործնական մասնակցություն էին բերում նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան և Ֆրանսիան: Գերմանիական «հաղթական» անհվը վերջնականութեն շրջվել էր, տապալվել: Իսկ նրա աղվեսահակ դաշնակիցը՝ Թուրքիան, անելանելի վիճակում էր հայտնվել: Չեր գտնում իր տեղը: Ի՞նչ քայլի դիմեր: Նրա այս վիճակը ճիշտ և ճիշտ նման էր այն վայրի գազամին, որը դուրս էր պրծել որցից և հայտնվել որսորդների շրջանում և փախուստի տեղ չուներ: Թուրքիայի միակ մտատանջությունն էր՝ ի՞նչ անել, ինչպես անել, որպեսզի մաքոր դուրս գա, մաշկը փրկի այս խառնախուզ, խուճապային վիճակից...

Պատերազմական այդ երեք դառնալեն տարիների ընթացքում մեր թաղում չկար մի ընտանիք, որի համար բացառված լիներ ուազմաճակատից «սև թուղթ» ստանալը: Սյույնի չարագույժ բոյ ստացել էր նաև մեր՝ Արքահամյացների ընտանիքը, սակայն որը խստագույնն թաքրու էր պահպում Սաթենիկ տատիցս: 1944 թվականի գարնանային ծաղկավետ մի կենսալի օր ընմիշտ Կտրվել էր հորեղբորս՝ նեռն Առու-Առու իր ծաղկումն ապրող պատաճի Վարագիանի, իմ առաջին անմոռաց ուսուցչի կանքի թելը: Ինչ վերաբերվում է հորս՝ Վազգենին, ապա նա, փառք Աստուծո, ողջ և առողջ էր և կովում էր Ռումինիայի հոդի վրա՝ ընդունելով գերմանական պարտվող բանակի:

Սարենիկ տատս թնկ միշտ ախ ու վախի մեջ էր և աչքերը՝ տևապես արցունքով լի, բայց ներքուստ հաստատապես հույսով էր և համոզված, որ իր երկու որդիներն էլ ողջ են և անվճառ, և անառարկելի է նրանց վերադարձը: Բայց, ավա՞...

Պատերազմական անցնող այս երեք տարիների ընթացքում, դպրոցական ամառային արձակուրդի ամիսներին, նև այլևս զրկված էի անհոգ ու

* Երրորդ մասը տես՝ թիվ, Բ-Գ, էջ:

զվարճաներով լի բովանդակալից կյանքից: Ես այդ ժամանակաշրջաքըուն «Մուկվա» կինոթատրոնի մոտակայքում, Ասիսկին հիմնովին քանոված Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու շրջակայքում, Արովյան փողոցի վրա, հատվող ծխախոտ էի վաճառում, «ձեռքի սարքած»: Թեև տարիքս անհամապատասխան էր այդ գործին, սակայն, ի՞նչ արած, պետք էր ինչ-որ ձևով օգնել ընտանիքին: Ո՞չ միայն ես էի այդպիսի գործի լծել, այլև մեր թաղի համարյա բոլոր իմ հասակակից երեխաները: Ժամանակների պահանջն էր այդ տղամարդիկ պետք է կովեի՛ն ուազմանակատում, իսկ մնացածները՝ հայթայթեին իրենց գոյության միջոցներ՝ այդ պարտականությունների մեջ անգամ երեգրավելով նաև անշափահան երեխաներին: Ես վաճառում էի հորաքրոջ՝ Քարմիլեի պատրաստած ծխախոտները՝ ինարկե համաձայնությամբ և թուլտվությամբ իմ ծնողների: Հորաքրոյս տնային պայմաններում «արտադրում» էր այդ ծխախոտները, իսկ ես, իմ հասակակից մի քանի ազգական տղաներով, վաճառում էինք այն: Խմ «աշխատանք» շահավետ էր այնքանով, որ ես իմ վաստակած գումարով քաղցրավենիր էի գնում իհաճ և երկու քույրերին համար:

Այստեղ տեղին է օգտագործել ժողովրդական թեավոր, իմաստուն մի ասացվածք՝ «Մկան շեոք շրադացին օգուտ է»:

Իհաճ այսպես էր թվում, թե ես արդեն հատուն տղամարդ եմ: Երկի թե այսպես էր, պետք էր աշխատել և այդ չնշին վաստակով սատար կանգնել մեր ընտանեկան հոգսերին...

* *

1944 թվական իհաճ համար կարծես ճակատագիրս կանխորշող տարի եղավ: Մեր թաղը մի յուրատեսակ, հատուկ պահպանողական մոտեցում ուներ մեր ժողովրդական ավանդական ազգային-եկեղեցական տոնակատարությունների նկատմամբ: Մեզ համար այդպիսի նվիրական տոնախմբություններից էր նաև շուրջ նշվող Համբարձումը: Այն իր խորքում խորհրդանշումն է մեր Տեր Հիսուս Քրիստոսի հարության և համբարձման: Այս տոնն իր խորհրդով նաև վերահաստատումն է բնության զարյունքի: Զմուն հանգստավետ նիրից հետո դաշտ ու այգի կրկին չքնաղագեղ իր տեսքն է ընդունում և իր երիմներանգ ծառ ու ծաղկությունների մոտ: Աստվածատեղ բնության այդ կախարդից վերազգեստավորումը պետք ընդունելի է և կենսահաղորդ մարդ էակի մոտ, որովհետև աստվածային այս հրաշագործությունը, անցնելով մարդկային բանականության պրիզմայով, անասելի վեհացնում է նրա հոգին, վսեմացնում:

Համբարձման ճախատոնակի օրը մեր թաղի քիչ թե շատ չափահան աղջկեները, խումբ կազմած, դուրս են գալիս քաղաքից, բարձրանում մոտակա կուսական բլուրները և այնտեղից բազմատեսակ ծաղկեներ հավաքում, կազմում գեղեցիկ մի ծաղկենիքունչ և վերադառնում: Այնուհետև քաղաքի տարբեր մասերի յոթ աղբյուրներից ջուր էին հավաքում մի գեղեցիկ սափորի մեջ՝ անշուշտ, ինարկե, այս գործողությունը կատարելով բացառապես լուսկաց, առանց խոսելու, ապա ծաղկենիքով կարծես խցան: սափորը: Երբ աղջկեները իրենց

սրբազն այս առաքելությունը կատարած-վերջացրած վերադառնում էին թաղ, անմիջապես նրանց էր շրջապատում մի հոծ բազմություն՝ մեծ թե փոքր:

Այնուինաւ սկսվում էր նվերահավաքի արարողությունը: Չափահաս կանայք իրենց տներից դուրս էին բերում ով ինչ կարող էր՝ լավաշ հաց, պանիր, ձու, կանաչեղին, մրգեղին, անուշեղին և այլ ուտեստեղին և հանճնում աղջկերի այդ խմբին:

Երբ ավարտվում էր այս ավանդական արարողակարգը, աղջկերը հիշյալ սափորի մեջ էին լցնում հարևանների տված որոշ մանր իրեղեններ՝ կոճակ, հասարակ զարդեղին, ովունք և այլ նմանատիպ բաներ՝ հաջորդ օրը հետաքրքրաշարժ վիճակահանության արարողություն կատարելու համար: Վիճակահան իրեղենները սափորի մեջ լցնելուց հետո, կրկին նրա փողը փակվում էր նույն այդ ծաղկեփնչով: Իսկ երբ վրա էր համում երեկոն, սափորը դրվում էր մի բարձր տաճ տամբիք և աչալշորեն հսկվում աղջկերի կողմից:

Ինչնէ, Զշված թվականի Համբարձման տոնի օրը, վաղ առավոտյան, Սարենիկ տասու և ես, արդեն խելահաս պատաճի, ուրքով գնացինք Ս. Սարգիս եկեղեցի: Երբ տեղ հասանք, եկեղեցին արդեն լեփ-լեցուն էր հավատավոր բազմությամբ՝ անշուշտ, իհարկե, ճնշող մեծամասնությամբ մեծահասակների: Մասնակից եղանք Սուրբ Պատարագի հոգեպարապ արարողությանը, որից հետո պատարագիչ Սրբազն Հոր ձեռքից Ս. Հաղորդություն ստացանք և Ս. Հոգով միջիթարված ու սրբագործված վերադարձանք տուն:

Երբ հասանք թաղ, արդեն երկու պատաճների և երիտասարդների եռուցեան սկսվել էր: Նրանք վերջին պատրաստություններն էին տեսնում՝ մեզ համար ամենամետարքից ու հոգումնալի պահի՝ վիճակահանության արարողությունն սկսելու համար: Արարողության գլխավոր դերակատարը թվում էր, թե հինգ-Վեց տարեկան գեղեցկատես մի աղջնակ էր: Այդ օա, այդ առաքինի ու սուրբ աղջնակը պետք է վիճակախորհուրդ իրերը մեկի-մեկի դուրս բերեր սափորից: Նա իր հագին ուներ սափուակ արբեշում զարդանախ շրջագենստ, իսկ գլխին՝ գովնագույն առինքնող ծաղիկներից հյուսած մի ծաղկեպսակ:

Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո, հավաքոված անցավ օրվա խորին եղրափակիչ արարողակարգին՝ վիճակահանությանը: Նշված սափուակազգեստ փոքրիկ աղջնակը մեկ առ մեկ սափորից դուրս էր բերում իրեղենները, իսկ երիտասարդ մի աղջիկ, իր ձեռքին ունենալով հախօրոք կազմված ճակատագրախորհուրդ՝ բանաստեղծական երկտողերի տեսրը, հրապարակում էր տվյալ իրեն վիճակված բնորոշումը: Երբ հանվել էին արդեն մի քանի իրեր և ընթերցվել նրանց վիճակված բնորոշչի բանաստեղծական վիճակագիր-ճակատագիր խորհուրդները, յոթերորդն իմ վիճակը դուրս եկավ: Ես սրտի տրոփով և անհամբերությամբ սպասում էի երիտասարդ վիճակարմներց համար խիստ անակնկալ, անսպասելի և չարագոված եղավ վիճակը.

«Ժանգուու մախար,

Քեզ ո՞վ է խապրա՞»:

Այս տողերի արտասանությունը լսելով, ես կարծես կաթվածահար եղա: Մի՞թե ի վերուստ այսպիսի ճակատագիր էր ճախասպհմանված իհած: Ես, չարագոված բանաստեղծական-վիճակահանական տողերի ազդեցության տակ,

տատամսել-մնացել էի: Նկատելով իմ հոգեկան տագնապալի վիճակը, Սաթենիկ տասու և մեծահասակ կանանցից ոմանք մոտեցան իմ և սփոփանքի խորեր ասացին.

- Կարիք կա՞ արդյոք այդպես սրտամոտ ընդումել այդ, չե՞ որ այս բոլորը պարզ զվարճանքի խաղեր են:

Բայց և այնպես ես ո՞չ մի կերպ չի կարողանում տիրապետել իմ: Խոռվել էր հոգիս: Ես իսպառ կորցրել էի հավասարակշի դատողությունս:

**

Անցավ մեկ տարի: 1945 թվականի մայիսի 9: Հաղթանակի' և խաղաղությա՞ն օր: Խորհրդային Միությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան և Ֆրանսիան, իրենց միացյալ զինված ուժերի ուազմա-ստրատեգիական համագործակցությամբ, երևի թե առժամանակյա փրկեցին աշխարհի խաղաղաբարձ ժողովուրդներին ստանայահակ չար ուժերի բացահայտ ավերիչ գործողությունների դրսուրումներից: Չար ուժերը չըվեցին, վերացան լուսաշող աշխարհի երեսից: Ֆաշիստական, նացիստական Գերմանիան վերջնականապես խայտառակ կերպով պարտություն կրեց: Նեռն այս անգամ էլ ի զրորու չեղավ իրականացնել իր չարաբարո, աշխարհավեր նկրտումները:

Հաղթանակ' և խաղաղություն: Հաղթանակը՝ հաղթանակ, բայց աշխարհի ժողովուրդների համար առաջինը և ամենակարևորը խաղաղությունն է, որ, ի բարեխստություն նրանց, վերահստատվեց երկրի վրա: Իսկ այդ խաղաղության ամենից շատ կարոտ էր մեր բազմաչարչար, բազմատառապյալ հայ ժողովուրդը: Սակայն ցավալիորեն և ի դժբախտություն մեզ, այդ խաղաղությունը շատ թանկ ձեռք բերվեց մեր ժողովրդի համար: Երեք հարյուր հազար անմեղ հայ զինվորներ գործ գնացին այդ հագնադրող պատերազմում:

Խաղաղության մեջ թող հանգչեն համայն զոհվածների սուրբ աճյունները:

Ես եկել եմ վերջնական այն համոզման, որ մարդկությունը, անկանած, իր սկզբանավորությունն ստացել է ամենակարող Աստուծոն արարչագործությամբ, բայց իր գոյությամբ շարունակում է մնալ մարդկային մեղսալից զարգելիության ազդեցության ոլորտում: Թվում է, և դա անժխտելի է, թե այս դեպքում «ամենազոր» Ների Անդրգործությունն անհերթելի է: Այս կերպ վարվելով և չգիտակցելով իր կատարածի հետևանքները, մարդկությունը փորում է իր գերեզմանը, գնում դեպի կործանում անդառնելիորեն կորստյան մատնվելով և հավերժորեն զրկվելով հոգու աստվածաշնորհ հարությունից:

Հաղթանակի հենց առաջին օրն իսկ, մայիսի 9-ին, կեսօրին մոտ, անսպասելիորեն տուն մտավ հայրս՝ զինվորական իրերի մի ուսապարկ ձախ ուսից կախված: Սովորաբար զինվորական իրերի ուսապարկը գցում են աչ թեմին, բայց քանի որ հորս աչ թեր վիրավոր էր և դեռևս վիրակապված, այդ պատճառով էլ ուսապարկը տեղափոխված էր ձախ մաս:

Ինչպես արդեն ձեզ հայտնի է, որը, իհարկե, թելադրված էր իրերահաջորդ գործողությունների զարգացումից, որի մասին խոսելը նաև չափազանց ցավալի է իմ համար, իմ մանկության առաջին և անփոխարինելի ուսուցիչն ու դաստիա-

բակը՝ իմ թամկագիմ Վարազդատ նորեղբարոք, այլևս չեկավ Բամալրելու մեր բազում տարիներ տառապած Եմուամիքի ամհամթերի ամբողջությունը:

清
高
山

Զորացրվելուց և տուն վերադառնալուց հետո դեռևս մեկ ամիս էլ չէր աճեց, եթե Խորհրդային Հայաստանի իշխանությունները Կազգեն հորս, որպես Հայրենական պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ, առևտիք մի կրպակ տրամադրեցին, և նա սկսեց զբաղվել մահրավաճառությամբ. ծխախոտ, թեյ, շաքար, աղ, քաղցրավենիք և այլ մթերքներ: Մեր ընտանեկան տնտեսական վիճակն աստիճանաբար բարելավվեց: Հորս թախանձագին հորդորմանից հետո, վերջապես, Գրիգոր պապս լուսեց օգմեն իր որդուու Վազգենին:

Մենք՝ երեք երեխամերս, շարումակում էինք ուսումնառությունը Բամբական դպրոցում: Դե ևս, ինարկն, չէի դադարել երաժշտական դպրոց Բամբախուոց, միայն թե չկար մասնին տարիների ոգևորությունը: Թաղի երեխամերի բացասական ազդեցության տակ են ամեն կերպ ձգտում էլ Բամբեկ ծմողմերին՝ տողմել երաժշտական դպրոցը: Իմ այս կարծիքին Բամբորեն ու Կորակամապես դեմ էր Սաթենմիկ տառս: Բայց ես շարումակում էի Բամբու: Վաղո՞ւց արդեմ Սաթենմիկ տառս իմ երաժշտական դպրոց չէր ուղեկցում, դադարել էր, բամի որ ես հիմք կարող էի տմօրինել իմ ամձնական Բանուեսու:

Երաժշտական դպրոցի հերթական՝ սեպտեմբերյան ուսումնական տարեցրամի վերաբացման ինկ առաջին դասամարտ սոլֆեզով՝ ընդուածութ երաժշտական տեսական առարկան էր։ Բոլոր մատած մեր տեղերում ամենամեծ սպասում էինք մեր ուսուցչութուն։ Երբ առ մերս մտավ, և ըստ պատշաճի կատարվեց ողջույնի

արարողակարգը, շատ արագ մի թռուցիկ հայացք մետեց մեզ վրա և, նամոզվելով, որ բոլոր մերկա ենք, առանց մերկա-բացակա ամենու, սկսեց դասը.

- Սիրելի երեխաներ, այսօր ես կխոսեմ այն մասին, թէ ի՞նչ բան է երածոտությունը, ե՞րբ է սկզբանավորվել այն, իմացիսի՝ զարգացման էտապմերով է անցել և ի՞նչ է իրենից մերկապացմուն այժմ:

Նախ ասեմ, որ մարդկային հասարակության նոգեոր հարստության մեծագույն դրսնորումներից է երածոտությունը: Այն նամագույն ժամանակմերուս և այժմ էլ մարդկային հասարակության կողմից կիրավուում է և՛ որախության, և՛ տիրության, և՛ կրամքի բաց, աճրովանդակ ժամանակահատվածը իհշ-որ ձևով բովանդակվից դարձելու միջոց: Եկեք փերադառնանք ավելի վաղ շրջան: Ինչպես գիտեք, երածոտությունը բաղկացած է երկու ամբաժանիք գործոնների համատեղումից՝ ծայն և տակու: Այս առումով այսուեղ նարը է առաջանում՝ իսկ ո՞րմ է դրամցից առաջանանք, ո՞րմ է ավելի վաղ ստեղծվել: Պատասխանը երկի թե մետեխան է: Երբ մախամարդն սկսել է թիշ թե շատ նավարական, նամալեթային կրամք վարել, կենցադային պայմաններից ելմելով, կարիք է զգացել օգտագործելու կոչմակ: Երկու կոշտ առարկաներ, որոնք կմպաստնին ավելի մեռու տարածության վրա լսելի դարձնելու իր ազդամշամները, հարվածել են միմյանց և նամայնքի անդամներին որևէ գործողության, համրահավաքի և կամ, նատկապես, որսի հրավիրելու տղամարդկանց: Այնուժենուն մարդկային հասարակությունը, քաղաքակրթության մախմական զարգացման փուլը անցնելուց հետո, կարիք է զգացել տակտային այդ նարվածները նամատեղել, նամածովել ձայնային ազդամշամների մետ: Հարգածային տակտերի և ձայնային ելեկցիների նամակցումից ստեղծվել է մարդկային հասարակության նոգեոր հարստության առաջին՝ նվաճումներից մասն արդեն թիշ թե շատ զարգացում ապրած և ձեռվորման տեսք ստացած երածոտությունն իր ժամանակին մարդկային հասարակության համար ծառայել է որպես աշխատանքային, կենցադային նավարական պրոցեսներուն համաշխափություն և կանոնավորություն մոցմենու միջոց:

Այնունեկ զարգացման բազմապիսի գործընթացներով, վերջին մի քամի դարերի ընթացքում երկի թե այլ նաև է իր ձեռվորման կատարելությանը: Ինչո՞ւ եմ ասում երկի թե, որովհետև մարդկային հասարակությունը և իր նոգեոր դրսնորումներն ունեն զարգացման իրենց գործընթացները (տնտեսություն, ճարտարապետություն, գիտություն, արվեստ, մշակույթ և այլն), և այդ զարգացման պրոցեսը նրենք չի դադարում, ընդհատվում, այլ շարումակական է, ամրմիտական:

Քամի որ երկրագմի վրա ապրում են բազմաթիվ ժողովուրդներ՝ բաղադրակրթության զարգացման իրենց տարրեր աստիճաններով, ազգային նոգերանության իրենց լուրատնեսակ, լուրամատուկ դրսնորումներով, ապա ցեղային, ազգային երածոտության մեջ այդ ամենը ձեռվորվել և դրսորվել է տվյալ ժողովրդին բնորոշ լուրամատուկ լադային առանձնահատկություններով: Քաղաքակրթության զարգացում ապրած լուրաբամշյուր ժողովուրդ իր երգ-երածությամբ ամա այս լադային դրսնորումներով է առանձնանում և գատորոշվում: Դարերի ընթացքում նայ ժողովրդի արարիչ ոգու դրսնորումներից մներ նամդիսացող երածոտությունը, ցավոր սրտի, ումի մի լուրամատուկ, առանձնահատուկ,

աշխարհի որևէ ժողովրդի ոգու դրսնորումներին ոչ բնորոշ լադային դրսնորում տիրություն, տրտմություն, թախիծ... Մեր ժողովրդի երածշտության ահա այս լադային առանձնահատկությունն էլ հենց գալիս է նրա դարավոր տառապալից, չարքաշ, շատ անգամ նաև՝ ողբերգական կյանքի ոգու ներգործության դրսնորումներից:

Խոսելով լադային այս առանձնահատկության մասին, ես երբևէ չեմ բացառում այն հաճամանը, որ մեր ժողովրդն ունեցե՞լ է և ունի՞ մարդու մոտ բարձր տրամադրություն ստեղծող, հոգին վեհացնող երածշտություն:

Երկու դասաժամ մեր ուսուցչութին խոսեց երածշտության տեսության մասին:

Դասերից հետո երբ ես տուն վերադարձա, զգում էի, որ ինձ հետ ինչ-որ բան է կատարվում: Խմ ուշադրության բնեուում էր հատկապես այն, թե ինչո՞ւ, ի՞նչ պատճառով մեր ժողովրդին այսպիս ողբերգական ճակատագիր է վիճակված, որը էլ ամառարկելիորեն դրսնորվել է նաև մեր երածշտության մեջ: Ինչո՞ւ...

**

1945 հայթական թվականի սեպտեմբերի 2: Դպրոցական ամառային արձակուրդներից հետո, մեկ օր՝ առաջ, վերսկվել էին նաև հանրակրթական դպրոցի դասերը: Դպրոցական այդ օրվա հենց առաջին երկու դասաժամերը տրամադրվել էին հայ գրականության առարկային: Առաջմ, ի բարեախտություն և հորախություն մեզ՝ երեխաներիս, դասաւերտման և դաս պատասխանելու որևէ հանձնարարություն չունեիմք: Այդ իսկ պատճառով էլ բոլորս բարձր տրամադրության մեջ էինք, գլուխմերս գրասեղանի տակ թաքցնելու առիթ չունեիմք՝ խոսափելու համար դասապատասխանումից:

Ես ամսելի ոգևորությամբ էի հատում հայոց լեզվի և գրականության դասերին: Խսկ ինչո՞ւ՝ կիրացնեք: Որովհետև այդ ժամերին դասավանդվող հայ գրականությունը ուղղակիորեն կապ ուներ և գեղարվեստորեն համեմված էր մեր անվերջանալիորեն տառապյալ ժողովրդի հովանք ու հետաքրքրաշարժ պատմությամբ: Խմ սերմին վիճակված չէր դպրոցում ուսանելու հայոց պատմություն, որովհետև երկաթե վարագույրի ներսում բացառապես արգելված էր մատաղ սերմին ծանրթացնել իրենց մայր ժողովրդի պատմությանը՝ իհարկե բացառությամբ ուսու ժողովրդի: Միակ դասավանդվող պատմության առարկան, այսպես ասած, «ԽՍՀՄ ժողովուրդների պատմություն»-ը էր, շուրջ հազար էշ ծափալով, որի շուրջ ինցունիթին տակուը ուսու ժողովրդի պատմությունն էր: Եզրակացությունն արդեն բոլորիդ պարզ է... Խսկ մենք էլ՝ մնացյալ ժողովուրդների մատաղ սերունդներս, այդ պակասը լրացնում էինք մեր մայրենի գրականությանը ծանրթացնալով:

Դասարանում բոլորս աշխատութ զրոյցներով հատած էինք մեր տեղերում և սպասում էինք հայ գրականության ուսուցչին: Վերջապես մերս մտավ պարոն Խաչատրյանը, ողջունեց մեզ, դասամատյանով մերկա-բացակա արեց և սկսեց:

- Երեխաներ, սեպտեմբերի 1-ով վերջացան ձեր ամենգ կյանքի երջանիկ օրերը: Դուք այժմ ևեք ձեռնամուխ պետք է լինեք ձեր ամենակարևոր ու

անփոխարիմելի պարտականությունների կատարմանը: Կրկին հերթական խորհուրդն է՝ չթերանալ դասասերտման դժվարին, բայց և ապագայի լուսաշող ჩեղանակարներով լեցուն հաճելի պարտականություններում: Եթե դուք ձեր ուսման տարիներին մի փոքր ծովություն հանդես բերեք և թերանաք այդ բանում, ապա ժամանակ անց շատ կզշաք ձեր թերացումի և չկատարածի համար: Սրտագին մաղյում եմ ձեզ հաջողություններ ուսման մեջ:

Մի փոքր դադար տալուց հետո, պարո՞ն Խաչատրյանը շարունակեց.

- Քանի որ այսօր մեր առարկայի առաջին դասաժամն է, և դուք ել դեռևս ամառային արձակուրդներից ստացած քաջոր ու հիշարժան տպավորությունների մեջ եք, ապա չեմ ուզում ձեզ շատ ծանրաբռնել: Այդ իսկ պատճառով ձեզ հանձնարարում եմ հաջորդ դասաժամին ներկայացնել մի ազատ շարադրություն՝ «Մեր բակը» խորագրով: Այդ շարադրամբում դուք անգամ կարող եք գետնել նաև ամառային ձեր տպավորությունները:

Կրկին փոքր դադար տեղի ունեցավ, որի ընթացքում պարո՞ն Խաչատրյանը ուշադիր զննեց մեզ՝ կարծես ստուգելու համար մեր բոլորի տրամադրությունները: Այնուհետև շարունակեց.

- Սիրելի, թամկագին երեխաներ, ևս մի շատ կարևոր հարցի մասին: Վերջապես ավելի քան երեք ամիս է, ինչ մենք անմնացրող վայելում ենք անքա՛ց ցանկալի խաղաղության բերկրանքը: Ֆաշիստական, ազգայնապաշտ Գերմանիան վերջնականապես ջախչախիչ պարտություն կրեց: Ծնորհավորում եմ բոլորիդ Հայութանակի առթիվ: Ձեզ հանձնարարված այդ ազատ թեմայով շարադրության մեջ դուք կարող եք անգամ գետնել Հայութանակի ու խաղաղության թեման, այդ առթիվ ձեր ստացած բերկրալից տպավորությունները՝ անտարակույս շշեղվելով ընդհանուր խորագրից: Այսքանը:

Երբ ես դասերից հետո դպրոցից տուն վերադարձա, ողջ ճանապարհին և տանը անհանգիստ մտմտուի մեջ էի: ի՞նչ գրել, ինչպե՞ս գրել... Հէ՞ որ դա իմ առաջին «ստեղծագործական» փորձն էր: Երկա՛ր մտորելուց հետո, վերջապես, որոշեցի գրել հետևյալը.

ՄԵՐ ԲԱԿԸ

Մեր տունը գտնվում է Երևան քաղաքի Ծիլաշի թաղամասում, Սև շուկայի մոտավորապես հարևանությամբ: Այս քարե չափավոր շինություն է: Քանի որ տունը գտնվում է փողոցի անկյունային մասում, ապա նրա երկու ֆասադային մասերը երեսպատված են ցեմենտ-պաղով: Այն օժտված է քիչ թե շատ քավարար հարմարություններով. մեկ ընդարձակ հյուրասենյակ, երկու սնցասենյակ, բակի կողմից՝ բաց պատշաճմբ, խորանոց և այլ օժանդակ կոմունալ հարմարություններ: Ծենքի հարավային ողջ ճակատով մեկ փոված է մեր բակը, որն ունի շուրջ 200 քառակուսի մետր տարածություն: Այս պարսպապատ է՝ ուղղանկյուն ձևավորումով: Մեր բակը շատ գեղեցիկ տեսք ունի: Այսուեւ կան մի քամի խաղողի վազեր, ծիրանի, սալորի, տանձի և խճճորի ծառեր, իսկ դրսի մասից՝ մի մեծ թթենմի:

Բակի հարավ-արևմտյան անկյունում, Աերսից, ժամանակին վեր էր խոյանում Էլեկտրական բարձրաքերձ մի պուն, որի վերին մասը փայտյա էր, իսկ ստորինը՝ երկաթյա: Սյամ երկաթյա մասը կարծես խրված էր, միաբնակա թետոնն մի ընդարձակ մակերեսի մեջ: Էլեկտրական այդ պունը հշանավոր էր մեր ողջ թաղամասում: Նշանավոր էր նրանով, որ ամեն տարի, գարնանը, երկու սպիտակափետոր արագիլներ հեռու երկրներից թոշում-գալիս էին մեր բակ, տեղավորվում իրենց իսկ կողմից տարիներ առաջ ծաղի ճյուղերից հյուսած մի ընդարձակ զամբյուղ-բույնի մեջ և այդպիսով դառնում մեր բակի, մեր թաղի լիարժեք անդամներ: Այդ երկու անմեղ էակներով հետաքրքրվում էին մեր թաղի բոլոր անդամները՝ մեծ թե փոքր: Թաղի բոլոր մարդիկ բարի նախանձով էին վերաբերվում նրանց: Այդ երկու չքնա՞ղ թոշումները երբեք միմյանց չեն նեղացնում, միշտ սիրով էին և չափազանց համերաշխ: Մենք ամեն կերպ ձգտում էինք չխաթարել նրանց անմեղ համագիտությունը, ամեն կերպ հետամուտ էինք նրանց բարեկեցիկ կյացքին: Նրանք անվախ ու անվարան ժամերով իշխում էին մեր բակ, կերակրվում մեր կողմից: Այդպիս էին վարդում առա հարեւանները: Կարծես որպես ընտանիքի, թաղի անդամներ, նրանք այդպիս ամիսներ շարունակ լինում էին մեզ մոտ՝ մեր թաղում, մինչև ո՞ւշ աշուն, այնուհետև թոշում-չվում տաք երկրներ: Նրանց չվել-գնալուց հետո կարծես մեր բակը դատարկվում էր, ամայանում, դառնում անկենդան:

Մեր տաճ բաց պատշգամբից պարզորոշ երևում և մինչև հոգուս խորքը զօնարկում էին Մեծ և Փոքր Արարատներ՝ աստվածաշնչական այդ երկու հրաշք լեռները: Ես շատ հաճախ, չքավարարվելով և չգոհանալով մեր բաց պատշգամբից բացվող այդ հրաշալի, ներքիաթային տեսարանով, բարձրանում էի մեր տաճ տաճիք, նստում այնտեղ և ըմբոշխնում այդ հրաշք տեսարանի անսահման ու անվերջանալի ներգործությունը: Ի՞նչն էր ինձ այդպիս գերում ու առինքնում, ինչո՞ւ էի ես այդպիսի վիճակ ապրում: Երկի թե այդ մասին միայն իմ փոթորկու ներաշխարհը կարող է բացատրություն տալ: Երբ ես դիտում էի այդ կախարդի ներդաշնակ երևույթը, ինձ պատկերացնում էի լեռներից այն կողմ, Վասպուրական աշխարհում, Վանում, իմ նախանձների տաճը, որոնք դեռևս գերության կապանքների մեջ են անօրենքների ծերպին: ԶԵ՞՞ որ ծնողներս բազմաթիվ անգամներ պատմել են իրենց հայրենի հողը և, բազմաթիվ տառապանքներից հետո, Արարատի փեշերով մազապուրծ հասել երևան:

Հիշալ տեսարան-պատկերի առավել գերող ու առինքնող հատկանիշն այն էր, որ երբ ես մեր տաճ տաճիքից դիտում էի հավերժական ձյունապատ այդ երկու լեռները, մեր բակի Էլեկտրական պունը, իր արագիլների հետ միասին, ճիշտ և ճիշտ գտնվում էր նրանց երկուսի մեջտեղում: Այդ տեսարանով Ավագ և Կրտսեր Արարատները և մեր բակի Էլեկտրական վերապաց պունը կարծես գրկախանուվում էին, միաձովվում, սարյանական վրձնահարվածի մի ամբողջական կախարդիչ պատկեր ստեղծում: Առավել ներգործուն էր լինում տեսարանը, երբ այդ երկու սպիտակափետոր թոշումները վեր էին ճամփորում իրենց բնից: Այդ պահին թվում էր, թե նրանք Արարատյան լեռների ձյունապատ գագաթներից են վեր խոյանում թոշելով դեպի աներևույթը, անհունը...

Սյունա ժամերն անցնում էին, և ես, ինքնամոռաց զգացումներով պարփակված, ըմբողջնո՞ւմ էի աստվածային այդ պարգև-պատկերի վայելչությունը:

Ցավով պետք է ասել, որ ես միայն մի քանի տարի ըմբողջնեցի բնության այդ հրաշք երևույթը: Ժամանակ անց եղավ այնպես, որ ամառային մի օր մեր քակ մտան մի քանի տղամարդիկ՝ զինված իրենց արհեստավորական գործիքներով, և կտրեցին էլեկտրական այդ սյունը հիմքից ու տարան: Ես խորին ցավ ապրեցի կատարվածի համար: Առավել սարսափելի ցավ ապրեցին մեր թաղին «անդամագրված» երկու շքնա՞ղ ու սուրբ այդ թոշունները: Նրանք մի քանի օր պտտվում էին օդում, ճիշտ և ճիշտ մեր թաղի վրա: Ակնհայտորեն զգացվում էր, որ նրանք իրենց բույնն են փնտրում: Ինձ թվում էր, թե նրանց թևերի շարժումները բոլորովին այն չէին, ինչ նախկինում: Նրանց թոփշը և թևերի շարժումները կարծես դարձել էին անկանոն, հուսահատական:

Երեք օր հետո մենք անդամալիորեն և ընդհիշտ գրկվեցինք այդ սպիտակափետուրներին տեսնելու բերկրանքից: Նրանք վերացան, աներևութացան մեր տեսահաշտից:

Այս դեպքից հետո ես երկա՞ր ժամանակ համար տիսրություն էի դարձել, չխոսկան, լուսկաց: Ծնողներիս բարեխորհուրդ հորդորներն անգամ չէին ներգործում ինձ վրա: Այլևս չկային իմ կյանքին անուրանալի իմաստ տվող, մեր քակի, մեր թաղի զարդ հանդիսացող այդ երկու անմե՞ն էակները: Քանդված էր նրանց բույնը: Չար ձեռքերը կտրել-տարել էին այն և այդ թոշուններին դարձրել բնավեր:


Ես երկա՞ր ժամանակ հոգու խորքում ճշում էի. բարի՛ մարդիկ, վերադարձե՛ք մեր քակի, մեր թաղի էլեկտրական սյունը, վերադարձե՛ք մեր քակի, մեր թաղի, մեր շքնա՞ղ բնության այդ երկու անփոխարիմելի զարդ հանդիսացող բարի ու անմեղ թոշուններին:

ԿՈՉ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Ազգերի գոյատևման հիմքում ընկած է նաև գիտության և կրթության զարգացումը, հոգևոր մշակույթի պահպանումը։ Այդ տեսակետից մեզ՝ Հայերին համար ուսանելի է հրեաների օրինակը։ Նրանք ոչինչ չեն խնայում իրենց երկրի ռազմական ներուժի զարգացման, գիտության ու կրթության որորտներում դրամական ներդրումների համար և ահա թե ինչու են հասնում համաշխարհային նվաճումների։

Հայաստանի Հանրապետությունում Գյուղատնտեսական Ակադեմիան միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որն ագրոպարենային համակարգի 25 մասնագիտությունների գծով պատրաստում է որակյալ մասնագետներ, լուծում գիտահետազոտական անհրաժեշտ հիմնախնդիրներ և արտադրության աշխատողներին ապահովում միջազգային բիզնեսի գիտության և տեխնիկայի վերջին նորությունների տեղեկատվությամբ։ Ուրախալի է, որ Գյուղատնտեսական ակադեմիայում գործող ուսումնական ծրագրերը, ԱՄՆ Կալիֆորնիայի Ֆրեզնոյի համալսարանի ազգային բարձրագույն դպրոցի փորձագետների գնահատմամբ լինվին համապատասխանում են միջազգային չափանիշներին։

Գյուղակադեմիան այսօր սերտ կապեր է հաստատել ԱՄՆ-ի, Անգլիայի, Ռուսաստանի Դաշնության, նախկին ԽՍՀՄ-ի մի շարք երկրների համանման բարձրագույն գիտական օլախների հետ՝ հանրապետությունում միջազգային առաջատար վարչությունների հետ։



1995 թվականից ակադեմիան որպես բռնպարեց եռաստիճան համակարգ՝ բակալավրատուրա (4-5 տարի), մագիստրատուրա (2 տարի) և ասպլիբանտուրա (3 տարի)։ 1996 թվականից ակադեմիան աշխատեց քառաստիճան համակարգով՝ նշվածներին ավելացնելով ներակադեմիական քոլեջը, որը որոշակի չափով մեղմացնում է ուսանողների ընտրության հավաքագրական խնդիրը։ Իսկ 1997-98 ուսումնական տարում ակադեմիայում բացվեց վարժարան։ Հենակետային վարժարաններ են ստեղծվել Գեղարքունիքի, Սրագածոտնի, Տավուշի և Շիրակի մարզերում։ Խնդիրը է դրված առաջիկայում հանրա-

պետության մյուս մարզերում ևս կազմակերպել վարժարաններ, դրանով իսկ անցնելով ուսուցման հնդաստիճան համակարգի: Ակադեմիան որոշակի հաջողությունների է հասել նաև համագործակցության ասպարեզում: Նոր ծրագրերի մշակման համար ակադեմիային գործնական օգնություն են ցույց տալիս ԱՄՆ-ի Գյուղդեպարտամենտի շուկայավարության աջակցման ծրագրի և Ֆրեզնոյի համայստարանի մասնագիտները: Նրանց օգնությամբ ակադեմիայի 6 լսարաններում տեղադրվել են ԱՄՆ-ից ստացված նոր մակնիշի 27 համակարգիչներ:

Դրանց շնորհիվ ուսանողները դասերից հետո անվճար ուսումնասիրում են համակարգչային տեխնիկան:

Ակադեմիան, կրթության և գիտության գարգացումից բացի, պատասխանափություն է կրում հանրապետություն գյուղատնտեսական բիզնեսի, գիտության ու տեխնիկայի վերջին նորությունների տեղեկատվության ապահովման համար: Ժամանակակից առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման, գյուղում եղած տեխնիկայի արդյունավետ շահագործման, ֆերմային տնտեսությունների արտադրատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման, շուկայական ծառայություններից օգտվելու, արտադրանքի իրացման կազմակերպման և արդիական այլ հիմնահարցերի վերաբերյալ ակադեմիայի դասախոսները հրատարակել են գիտահանրամատչելի գրքույկներ, հոգվածներով հանդես են եկել մասմուլում և մասնագիտական հանդեսներում, ելույթ ունեցել ուսդիոյով և հեռուստատեսությամբ:

Ակադեմիայում ուսուցման որակի և մեթոդիկայի բարեկավման լաբորատորիաները ժամանակակից սարքավորումներով համալրելու, բարձրորակ գյուղմասնագետների արտասահմանյան երկրներում մասնագիտանալու, գիտական ու գործնական խորհրդակցություններ, հանդիպումներ, առաջավոր փորձի և նոր գյուտերի մասսայականացում կազմակերպելու, գյուղմեքենայացման փոխադրման, գյուղի ջրարբացման գիտականորեն կազմակերպելու խնդիրները ավելի շոշափելի կլինեին, եթե ակադեմիան չունենար լուրջ փինանսական դժվարություններ: Նշված խնդիրները մասնամբ լուծելու նպատակով ստեղծվեց ակադեմիային աջակցող «Գյուղատնտես» հիմնադրամը:

Եվ աչա «Գյուղատնտես» հիմնադրամը մեծ հույսով ու ակնկալիիքով գիմում է մեր բոլոր հայրենակիցներին՝ սատար կանգնելու Մայր Հայրենիքում գյուղատնտեսական կրթությանն ու արտադրության զարգացմանը:

Այս գժվարին պայմաններում «Գյուղատնտես» հիմնադրամը ձեր հատկացումների շնորհիվ նախատեսում է աջակցել ակադեմիայի ֆինանսական միջոցների ձևակորմանը և նրա նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, անասնաբուժական մասնագիտության համար նոր մասնաշենքի կառուցմանը և այն լաբորատոր սարքավորումներով համալրմանը, ուսանողական անհատական կրթաթոշակների սահմանմանը, կարիքավոր աշխատակիցներին և ուսանողությանը դրամական օգնություն հատկացնելով, ակադեմիայի արտաքին կապերի զարգացմանն ու կրթության որակական ցուցանիշները միջազգային չափանիշներին հասցնելու:

Այս նվիրական գործին մասնակցող հայրենակիցների անունը գրվելու է հիմնադրամի «Ռուկեփորիկ» մատյանում՝ հավերժացներով իր արժանագայել գոյության պատմական փաստը:

Զեր համեստ մուծումներով շտապեցեք տեղ գտնել այդ ցուցակում:

Խորին հարգանքներով ու չնորհակալությամբ՝ «Գյուղատնտես» հիմնադրամի խորհուրդ:

Հայաստանում կարող եք.

ա) Աւզգակի կանխիկ մուծում կատարելով Հայկական Գյուղատնտեսական ակադեմիայի 351 աշխատանքակում, հիմնադրամի հաշվապահին:
բ) Գումարը փոխանցելով արդշինքանկի Մաշտոց մասնաճյուղի «Գյուղատնտես» հիմնադրամի 121130018850 հաշվեհամարին:

Մասնակցել կարող եք՝

1) 12113008868 Fund “Gughatnes” for supporting to Armenian Agricultural Academy.

2) Citibank, NA, 111 Wall Street 19th floor, Zone 1 New York, NY 10042 SWIFT CITI, US 33.

3) 36017242 ARDSHINBANK, Mashtots branch, 3 Deghatan Str. 375010, Yerevan, Respublik of Armenia SWIFT: ASHBAM 22.

**ԱՌԻԲԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ» հիմնադրամի նախագահ**

ԱՅ Յ Բ Ե Թ Ա Ա Կ Մ

Ե Ա Թ Ե Վ Ե Բ Ա Կ Մ

**ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝
ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐքԻ
ՄԱՀՎԱՆ ՔԱՌԱՍՈՒԹԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ**

Ապրիլի 17-21-ին, Կ. Պոլսո Հայոց Պատրիարք երջանկահիշատակ Գարեգին արք. Գաղանցյանի մահվան քառասունքի արարողությանը ներկա գտնվելու նպատակով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի բարձր կարգարոդությամբ Մայր Աթոռ Սր. Էջմիածնից Թուրքիա մեկնեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արք. Պողապալյանը և Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հովհիկ արք. Սամեթուրյանը:

Ծաբաթ օրը, ապրիլի 18-ին, երջանկահիշատակ Գարեգին արք. Գաղանցյանի մահվան քառասունքի առթիվ պատրիարքարանի Սր. Աստվածածին աթոռանիստ Մայր եկեղեցում Սր. Պատարագ մատուցեց Գրշ. Տ. Հովհիկ արք. Սամեթուրյանը, հընթացս որի քարոզեց Տ. Ներսես արք. Պողապալյանը՝ «Ո՞ր է, մահ, յաղթութիւն քը, ո՞ր է, դժոխը, խայլոց քո» (Ա. Կորնթ. ԺԵ 55) բարձրանով:

Հավարտ Սր. Պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանի նախագահությամբ:

Ապա հոգևոր դասն ու ժողովուրդը ուղևորվեց դեպի Շիշլիի հայոց գերեզմանատուն՝ հանգուցյալ Պատրիարքի շիրիմին հատուկ հոգեհանգստյան պաշտոն կատարելու: Գերեզմանատանը հավաքվել էր մեծ թվով բազմություն՝ Պատրիարքի հարազատները, հոգևոր դասի անդամներ: Արարողության ավարտին դամբանական խոսեց Տ. Ներսես արք. Պողապալյանը: «Ինչպես որ Հիսուսի հոգին խաչելությունից հետո քառասուն օր իր աշակերտների հետ ապրեց, և քառասմերորդ օրը իր աշակերտները բարի ճանապարհ մայթեցին իրեն դեպի երկնային դրախտ, այսպես էլ մենք այսօր բարի ճանապարհ ենք մայթում Գարեգին Պատրիարքին դեպի իր վերջնական ճանապարհը: Ես բերել եմ Վեհափառ Հայրապետի եղբայրական հարգանքն ու խնարհությունը նրա գերեզմանի առջև, ինչպես նաև մեր հավատացյալ ժողովրդի: Մենք այս հարգանքն է, որ կրերենք, որովհետև Գարեգին Պատրիարքը էլ հիսուն տարի իր ծառայությամբ խոնարհվեց իր ժողովրդի և եկեղեցու առջև», - ասաց Տ. Ներսես արք. Պողապալյանը:

Հաջորդ օրը, ապրիլի 19-ին, Սամաթիա թաղի Սր. Գևորգ եկեղեցում Տ. Ներսես արք. Պողապալյանը մատուցեց սր. պատարագ, հընթացս որի Կրկնազատիկի առիթով իր պատգամը հաղորդեց հավատացյալ ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ «ԿԻԼԻԿԻԱ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆՔ

Նորին Սուտք Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ մարտի 30-ին Մեծի Տաճառ Կիլիկիի կաթողիկոսության նորակառույց «Կիլիկիա» թանգարան-մատենադարանի բացման արարողությանը ներկա գտնվեց նաև Մայր Աթոռ Սրբ Էջմիածնի պատվիրակությունը՝ Սյունիաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Աբրահամ Եպս. Մկրտչյանը, հոգ. Տ. Արտակ արդ. Տիգրանյանը և Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Մուշյանը:

Պատվիրակությունն իր հետ Անթիլիաս էր տարել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքն ու պետք՝ 17-րդ դարի մի ձեռնախաչ:

Թանգարանի բացմանը S. Արքահամ եպս. Մկրտչյանը ընթերցեց Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը, որում Նորին Սրբությունը հույս է հայտնում, թե «Անդիլիասի Թանգարան-Մատենադարանը պիտի դառնա ոչ սույ ցուցանիշ մեր հայ քաղաքակերտական ստեղծագործականության քաղաքակրթական օրրան լիբանանյան հարուստ հովհան Վրա, այլ պիտի դառնա քաղաքակրթող օջախ մեր նոր սերունդին համար»:

Դեռևս Մեծի Տան Կիլիկիի Կաթողիկոս եղած տարիներին Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսն ունեցավ «Կիլիկիա» թանգարան-մատենադարանի կառուցման մտահղացումը, որի շարունակողը դարձավ Կիլիկիի հաջորդ Հայուսպետ Արքամ Ա Կաթողիկոսը:

Թանգարանում հավաքված են ուրարտական ժամանակներից մինչև 19-րդ դարի ցուցանմուշներ՝ դարավոր մասունքներ, եկեղեցական ուլուզօծ և արձաթյա իրեր, ծիսական զգեստներ, ձեռագիր ու տպագիր գրքեր, խաչքարեր, թագավորական դրամներ, հնագիտական իրեր, որոնք բերվել են Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսության պատմական նատավայր Սիս մայրաքաղաքի կաթողիկոսարանից:

Օեմի վերջին՝ երրորդ հարկը հատկացված է 19-րդ դարից մինչև ժամանակակից Ալարիշների և քանդակագործների ստեղծագործություններին:

«Կիլիկիա» թանգարան-մատենադարանը Ակատվեց մշակութային կարևոր օջախ ոչ միայն հայության, այլև Լիբանանի համար:

Թանգարանի բացմանը ներկա էր նաև Լիբանանի նախագահը:

ՄԱՍԻՆ ԴՐԱՎԱՆ ՄԱՅՐ ԱԹԵՐՈՒ

ՆՎԻՐՎԱԾ ՆԱՀԱՏԱԿ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Արարատյան Հայրապետական թեմի նախաձեռնությամբ ապրիլի 23-ը հայտարարված էր Մեծ եղեննի նահատակ հոգևորականների հիշատակի օր:

Երևանի քաղաքային պանթեոնում, Կոմիտաս վարդապետի շիրմի մոտ, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Արարատյան Հայրապետական թեմի հոգևորականաց դասի և «Մանկունք» արական մանկական երգչախմբի մասնակցությամբ:

Արարողությանը Աերկա էին նաև մեծաթիվ հավատացյալներ:

Դիմելով հավաքվածներին՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը նշեց, որ ոգեկոչելով Ապրիլյան Յահատակների հիշատակը՝ անհրաժեշտ է առանձնակի շեշտել նաև այն հոգևորականներին, ովքեր մինչև Վերջ անբաժան մնացին իրենց հոտից, մինչև Վերջ կատարեցին հոգևորականի իրենց առաքելությունը և մարտիրոսացն:

**ՕԴԵՍԱՅՈՒՄ ՕՐՀՆՎԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՈՒԻ
ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԲ
ՀԱՎԵՐԺԱՅՆՈՂ ԽԱԶՔԱՐԸ**

Արդեն ժանի տարի հայ ժողովուրդն իր խոնարհության ու երախտիքի խոսքը, ժարեղեն լեզվով ու անմահ Պատարագների շնորհիվ, կտավների ու բանաստեղծության տեսնով, հնչեցնում է Երկիր մոլորակի տարրեր ծագերում՝ մեկնդմիշտ հավաստելով, որ հայն անմահ է, ու որքան էլ տանչեն, հալածեն, սպանեն, միևնույն է, հեքիարային փյունիկի պես կրկին վեր է հառնելու, վերընճուղվելու և նամիկեզրին բուսած ծաղկի նման ու ծաղկելու է... միշտ:

Այս գիտակցումով էր ապրիլի 24-ին Օդեսայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում ի մի եկել տեղաբնակ ողջ հայությունը:

Առավոտյան, ինչպես Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում ի Հայաստան, ի Արցախ և ի սփյուռս աշխարհի, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ևս մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ, որին ներկա էին տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, հյուրեր, հավատավոր հայորդիներ: Օրվա պատարագիչն էր տեղի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Արգար Ֆին. Գըլընյանը: Հընքաց Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ, օրվան պատշաճող և իմաստալից ժարող խոսեց Ռոկոս Խորինայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նարան, եպս. Հովհաննիսյանը:

Իր խոսքում Սրբազն Հայրն անդրադառագ օրվա ժամանակին, մեկ անգամ ևս խորհրդին, մեղք հետո եկեղեցու բակում տեղադրվելիք խաչքար-հուշարձանը հիշեցրեց, որ ֆիչ հետո եկեղեցու բակում տեղադրվելիք խաչքար-հուշարձանը հավատիքն է այն մեծ հարգանքի ու խոնարհության, որ դրսւորում է մեղանից յուրաքանչյուրը 1915 թվականի մեկ ու կես միլիոն անմեղ նահատակաց նկատմամբ, նաև շնորհակալություն հայտնեց բարերար Խաչիկ Գրիգորյանին



Խարան Մորանցանը և բարերար Խաչիկ Գրիգորյանը
նորաօծ խաչքարի մոտ

ազգանվեր ու շնորհակալ նախաճռնության համար՝ վերջինիս թեմի անունից հանձնելով օրինության և գնահատանիքի գիր:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի խաղաղություն Մեծ եղեռնի անմեղ զոհերի հոգիների:

**

Օրվա երկրորդ կեսին, մեծաթիվ հավատացյալների ու հրավիրյալների ներկայությամբ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում տեղի ունեցալ նահատակաց հիշատակը հավերժանող խաչքար-հուշարձանի օրինությունը՝ ձեռամբ Ռուկրանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նարան եպս. Հովհաննիսյանի:

Օրինության կարգից հետո տրվեց սիրո նաշ՝ ագապե, որին մասնակցում էին ներկա բոլոր հավատացյալները:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԴԱՆԻԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԶԱՏԿԱԿԱՆ ՃԱՄԲԱՐԻՆ»

«ԶՅԱՅԱԾ մեր փոքր թվին և սահմանափակ ուժերին՝ մեր նպատակը պետք է լինի առավելագույն բարձր մակարդակի վրա օտարների առջև ներկայացնել, թե ինչպիսի՞ն է եղել Հայ Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի պատմական անցյալը, ժամանակակից ներկան, և թե ի՞նչ ենք մենք սպասում զայիր ապագայից», - այս եղրափակիչ պատգամով ունկնդիր տասն ուսանողներին դիմեց գերաշնորհ S. Տաթև արքեպոս. Սարգսյանը Դամիա կատարելիք ուղարկությունից առաջ:



Եվ իրոք, ուսանողական խումբը (որի կազմում լինելու պատվին էի արժանացել նաև ես) կարիք ուներ նման հայրական պատգամի, քանի որ պատմության մեջ առաջին անգամ հնարավորություն էր ընձեռվել Եվոպական մի պետության մեջ մասնակցելու «Զատկական ճամբար» կոչվող գիտաժողովին և այնտեղ ներկայացնելու հայ հոգևոր և մշակութային կյանքը: Մասնակիցների թվի մեջ էին ընդգրկվել ՀԵՌԻՄ-ի (Հայ Եկեղեցու Ուսանողական Միություն) հինգ անդամներ՝ ԵՊՀ-ի աստվածաբանական, պատմության, կենսաբանության և Եկոնոմիկայի ֆակուլտետներից, թժշկական ինստիտուտից երկու ուսանողուիի և Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծեմարանից երեք ուսանող: Նրանց առաջնորդում էին ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետի դեկան S. Չամին արքեպոս. Աճեմյանը, Ուսանողական Միության գլխավոր պատասխանուու S. Տաթև արքեպոս. Սարգսյանը և «Դամիա-հայկական առաքելություն» կազմակերպության Հայատանայաց ներկայացուցիչ Մայր Վեստ քահանան:

Այցելության նպատակն էր հայ Երիտասարդներին հնարավորություն ընձեռել ծանոթանալու Դամիային՝ իբրև երկիր, կառավարման դեմոկրատական համակարգին, ընդհանուր հասարակական կյանքին, Դամիայի ազգային Ավետարանական-Լյութերական Եկեղեցուն և մասնավորապես քրիստոնեական

ուսանողական շարժմանը, միևնույն ժամանակ գործնականորեն շփվել Դանիայի ուսանողների հետ «Զատկական ճամբար» շրջանակում: Այս գեղեցիկ զաղափարը մտահղացումն էր «Դանիա-հայկական առաքելության» դեկավարության և հովանավորվում էր Դանիայի կառավարության Դեմոկրատիկ ֆոնդի կողմից:

Մարտի 28-ին մեր պատվիրակությունը ճանապարհ ընկավ դեպի հյուսիսային այդ անձանոթ երկիր: Առաջին երեք օրերը խումբն անցկացրեց Կոպենհագենում և հնարավորություն ունեցավ այցելելու Հիլերոդի քրիստոնեական մասնավոր Ս. Հովհաննես Մկրտչի անվան դպրոց ու այնուղի ծանոթանալու պետության կողմից սահմանված միջնակարգ կրթության համակարգին: Այնուհետև նրանք եղան Գուդվինգի բարձրագույն դպրոցում, Աստվածաշնչի բարձրագույն դպրոցում, պաղյամենուում, թագավորական պալատում, այցելեցին նաև գթության բույր Քրիստոն Վինդին, որն անձամբ ժամանակին խնամել է Մեծ Եղեռնից փրկված և Լիբանանում ապաստան գտած հայ մանուկներին: Նա հիմնադիրներից մեկն է «Թոշոնց բույն» կոչվող որբանոցի, որն այսօր հանձնվել է Մեծի Տանն Կիլիկիի Կաթողիկոսության տնօրինությանը:

Հաջորդ երեք օրերի ընթացքում խումը եղավ Օրիուայի համալսարանում, Վիերոգ քաղաքի հիվանդանոցային համալիրում և նոյն քաղաքի Մայր տաճարում, որը ընդունելության արժանացավ տեղի առաջնորդ Քարաստեն Նիստեն եպիսկոպոսի կողմից:

Ապրիլի 4-ին Ֆին կղզու վրա գտնվող Որինգ քաղաքում Ակավեց «Զատկական ճամբարը»: Իրքու հավաքատեղի՝ նշանակվել էր քաղաքի գիմնազիան: Մասնակիցների թիվը շուրջ վեց հարյուր էր: Հրավիրվել էին նաև ուսանողներ Լեհաստանից, Գերմանիայից և Ռւկրանիայից: Գիտաժողովի հիմնական թեման էր՝ «Ի՞նչ է ճշմարտությունը»:

Ամենօրյա ծրագիրը բաղկացած էր չորս մասից.

1) Նախապատրաստություն դասախոսությունից առաջ:

ա. Անձնական ընթերցանությունն և խոկում:

բ. Աստվածաշնչի խմբակային սերտողություն:

Այս ընթացքում ընթերցվում և քննարկվում էր առաջիկայի դասախոսությունում հիմնական թեման հանդիսացող աստվածաշնչային հատվածը:

2) Հիմնական դասախոսություն:

Օրինակ՝ «Ի՞նչ է ճշմարտությունը», «Ծշմարտությունը մեր մեջ է», «Ծշմարտությունը անձ է», «Ծշմարտության բացահայտումը» և այլն:

3) Սեմինարներ:

Հատուկ ընտրված մասնագետների կողմից պատրաստվել էին զանազան թեմաների վերաբերյալ շուրջ երեսունից ավելի ամփոփ գիտական ներկայացումներ, որոնցից կարելի էր ընտրել երկուս՝ ըստ նախասիրությունների:

4) Զանազան այլ միջոցառումներ՝ երաժշտական երեկոներ, սպորտային մրցույթներ, նկարչության և ձեռագործի ժամաներ:

Այս ամենից բացի, ընդհանուր հայտագրի մեջ տեղ էր գտել երկու հատուկ հանդիսություն՝ հայկական խմբի մասնակցությամբ: Առաջինը Մահկազարդի կիրակի օրը՝ ապրիլ 5-ին կատարված Դոնբասերի արարողությունն էր, իսկ երկրորդը կոչվում էր «Հայկական երեկո»:

Պետք է խոստովանել, որ մեր ուսանողներից մի քանիսը սկզբում փոքր-ինչ կաշկանդված էին՝ իրենց ուժերը և նախնական պատրաստվածությունը թերագնահատելու պատճառով։ Սակայն առաջին իսկ օրվանից ակնհայտորեն երևաց ՀԵՌԻՄ-ի անդամների՝ պատմաբան Լուսինն Խառարանի, տնտեսագետ Արմինե Փանոսյանի, Կենաւրան Արեգ Թադևոսյանի և այլոց քաջատեղյակությունը կրոնական ցանկացած հարցի վերաբերյալ, իսկ աստվածաբանական ֆակուլտետի երկու ներկայացուցիչները՝ Վաշագան Պապյանը և Անահիտ Ավագյանը, միանցանակորեն փայլեցին իրենց գերազանց գիտելիքներով։ Բժշկական ինստիտուտի ուսանողությանը Լիլիանա Զագարյանը և Զարուհի Ավագյանը բացահայտեցին եկեղեցական շարուկանները երգելու կատարյալ ունակություն և արժանացան սրբազն հայրերի բարձրագույն գնահատականին։ Օդենս քաղաքի Մայր տաճարում անցկացված պատրարքի ժամանակ Արքուր սարկավագ Հայրապետյանին առիթ ընձեռվեց երգելու մեր Պատարագից մեկ հատված։ Կատարումից հետո խանդավառությունն ալճքան մեծ եղավ, որ ամբողջ եկեղեցին թնդաց ծափահարություններից։ Մի երկուր, որը երբեք չէր պատահել իրենց եկեղեցում որևէ արարողության ժամանակ։ Մանուկ կիսասարկավագ Ղալայշյանի նախաձեռնությամբ մի քանի ուսանողներ ներկայացան վուելով լրցումներին և ի զարման բոլորի՝ կարողացան հասնել եղրափակից փու-


Դուքսացեք արարողությունը կատարվեց Շահն արքեպիսկոպոսի հախագահությամբ: Նշենք նաև, որ Տաթև սրբազնի մտահղացմամբ արարողության ընթացքուն ընթերցվող երկխոսությունը հայր Մաքրի Կողմից թարգմանվեց դահնիերեն և մեծ հիմքունություն պատճենեց Աբեկանիից:

Հայկական երեկոյի ընթացքում Տաթև արքեպիսկոպոսը ներկայացրեց «Հայ Եկեղեցի և հայ Երիտասարդություն» երկխոսության անցած փուլերը և ներկա զարգացման խնդիրները: Այնուհետև հնչեցին հայկական ժողովրդական եղանակ, մշակված խմբերգեր: Ունկնդիրներին զարմացրեց նաև այլ օրերի ընթացքում մեր սովորած անգլերեն ժամանակակից հոգևոր երգերի կատարումը: Ի վերջո բոլորը հշեցին, որ հիացած են հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգությամբ և կոստոմնայից երիտասարդությամբ:

Ապրիլի 8-ին «Դանիա-հայկական առաքելության» փոխախազանի Յորգան Սալյագոյի կողմից տրվեց հրամեցուի ընթրիք։ Մեր ուսանողներն ուրախ էին, որ հաջորդ օրը պետք է վերադառնային հայրենիք, բայց միևնույն ժամանակ նժկար էր հեռանալ հոգեհարազար դարձած այն ընտանիքներից, որոնք այդ օրերին սկսանական հոգեհարազար էին բոլորին օշախներում։

Բոլորի հոգիներում միևնույն զգացմունքն էր տիրում՝ հարազատություն։ Բոլորն էլ չափազանց գոհ էին, որ ընդամենը տասներկու օրվա ընթացքում հնարավոր դարձավ ձեռք բերել այս աստիճանի մտերմություն, և վստահաբար այս օրերի տպավորությունները պիտի հիմք հանդիսանան ճակատագրով իրար աւնաբան նշան երկու ազգերի բարեկամության զարգացման համար։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՍ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 3-ին, ուրբաթ.- Խօս Մեծի Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Սր. Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Զինաստանի Ժողովրդական Հանրապետության Գիտությունների ակադեմիայի փոխնախագահի, ԶՃՀ Ժողովրդական Աերլայացուցիչների Համաշխական ժողովի Մշտական համաձայնադրույթի քարտուղար Յան Խոյունի զիսավորած չին գիտնականների պատվիրակության:

Հայաստանի Գիտությունների Ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը մինչ կմերկայացներ հյուրերին, շնորհափորեց Վեհափառ Հայրապետին Գահակալության երրորդ տարեդարձի առիթով:

Նորից Արբորթյունը աշեց, որ հայ-չինական հարաբերությունները ունեն պատմական հիմքեր. Չինաստանում գործել են հայկական եկեղեցիներ, իսկ Չինաստանում հայերի ենթկայության մասին գոյություն ունեն բազմաթիվ օտար հրատարակություններ:

Վեհափառ Հայրապետը հետաքրքրվեց հայ-չինական գիտական Աերլայիս կապերով, իուս հայտնեց դրանց ամրապնդման համար:

Հանդիպմանը ներկա էր նաև Հայաստանում Զինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յան Կեժման:

Ապրիլի 5-ին, Կիրակի.- Ծաղկազոր:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գեր. Տ. Ներսէս արքեպո. Պողապալլանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիշ սրբազնան՝ «Ծերք եւ տղայք ոստովը ձիթենեօր միաբանուեամբ

երգէին. օրհնութիւն Որդոյ Դաւթի, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն» (Ծարական) բնարանով:

Ս. Պատարագին մերկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան Մայր տաճարում կատարվեց Պոնքացերի արարողությունը: Աստվածաշնչյան ընթերցվածներից հետո Ավագ Խորանի վրա Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանը, Տ. Բագրատ արքեղա Գալստյանը և Տ. Արշակ արքեղա Խաչատրյանը ծնրադիր երգեցին «Բաց մեզ Տէր» տաղը:

Այսօր Հայր. Եկեղեցին մտավ Աւագ Ծարաթի՝ սրբազն արարողություններով ու հիշատակություններով շրջան:

Ապրիլի 7-ին, Երեքշաբթի.- Աւագ Երեքշաբթի: Յիշատակ տասն կուսաճացն: Աւետումն Ս. Աստուածածին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար արքեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարող խոսեց պատարագին Հայր սուրբը՝ «Ահաւասիկ կամ աղախին Տեառն» (Ղոկ. Ա. 38):

Ապրիլի 9-ին, հինգշաբթի.- Աւագ Հինգշաբթի: Յիշատակ ընթեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրապար քնն. Գրլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ Մայր տաճարի լուսարարապետ Գեր. Տ. Հովհիկ արքեպոս. Սամանուրյանը ընթերցեց Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդության վերաբերյալ ճառը:

Երեկոյան Մայր տաճարում կատարվեց Ս. Եփրեմի կողմից հաստատված և Գրիգոր Վկայասեր Հայրապետի կողմից թարգմանված կարգը՝ Պտնդուայի արարողությունը: Ավագ Բենի վրա Վեհափառ Հայրապետը 12 ճեմարանականների և Համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի ուսանողների ուղերձը լվաց ջրով և ապա օծեց յուղով: Արարողության վերջում քարող խոսեց Վեհափառ Հայրապետը՝ օրվա խորհրդի վերաբերյալ:

Ապրիլի 10-ին, ուրբաթ.- Աւագ Ուրբաթ: Յիշատակ շարչարանաց եւ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ապրիլի 9-ին, ուշ երեկոյան, Մայր տաճարում կատարվեց մեր Տէր Հիսուս Քրիստոսի Մատնության, Չարչարանքների և Խաչելության հիշատակության կարգը: Աստվածաշնչյան ընթերցումներից, հոգեպարար շարականների ու սաղմունների երգեցողությունից հետո, Խավարման գիշերվա խորհրդանշական միջնորդությամբ քարող խոսեց Գեր. Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանը. «Էլի, Էլի, յամա սարարթանի, այս ինըն է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս» (Մատթ. իէ. 46) բնարանով:

Ապրիլի 10-ին, առավոտյան ժամը 11.00-ին, կատարվեց Խաչելության կարգը: Ժամը 16.00-ին կատարվեց Թաղման կարգ: Տիրոջ խորհրդանշական գերեզմանի առաջնորդությամբ և «Պարգևատուն ամենեցուն» շարականի երգեցողությամբ, Մայր Աթոռի միարանությունը, ողջ ուսանողությունը և հավատացյալները թափոր կազմած պտտվեցին տաճարի շուրջ:

Ապրիլի 11-ին, շաբաթ.- Աւագ Շաբաթ: Պահք: Ծրագալոյց Զատկի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց գեր. Տ. Գրիգորիս արքեպիս. Բուժիաթյամբ: Ս. Պատարագից առաջ, Երեկոյան ժամերգության ավարտին, ընթերցվեցին Աստվածաշնչյան հատվածներ՝ ի շարու որոնց սարկավագները Ավագ Բնեմից կարդացին Դանիէլի թուղթը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ սրբազնն:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո «Այսօր յարեաւ» շարականի երգեցողությամբ հոգևորականների և ուսանողների թափորը Վեհափառ Հայրապետին առաջնորդեց Վեհարան, որ կատարվեց Տնօրինեթի արարողություն, որից հետո շնորհափորեցին Վեհափառ Հայրապետին՝ Ս. Հարության տոնի առիթով:

Վերջում միաբանությունն ու ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, հավաքվեցին միաբանական սեղանատանը՝ միասին անձկացնելու խթման ընթրիքը, որի ժամանակ հնչեցին Հարության շարականներ, ինչպես նաև ազգային երգեր: Այս ուրախ սիրո ճաշը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի խոսրով, որում Նորին Սրբությունը շեշտեց Ս. Հարության գաղափարի կյանքում ներթափանցման կարևորությունը:

Նոյն օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետին առաջին անգամ այցելեց Հայաստանի Հանրապետության նոր վարչապետ պր. Արմեն Դարբինյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայրապետական օրինությունը տալով պր. Դարբինյանին, իր վսուահությունն արտահայտեց, որ նոր վարչապետը կարծնորի խիստ պատասխանատու պաշտոնը իր նվիրվածությամբ ու փորձառությամբ:

Նորին Սրբությունը շեշտեց, որ Եկեղեցին գորավիգ կիմի կառավարության ազգօգուտ ճեղմարկները կյանքի կոչելու գործին: Վեհափառ Հայրապետը կարևորեց Եկեղեցի-պետություն միասնական գործակցությունը, մասնավորապես համագործակցությունը՝ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարության ծրագրերի իրականացման, ինչպես նաև Սփյուռք-Հայրենիք կապերի ամրապնդման ասպարեզմերում, վերջինիս մեջ ընդգծելով Հայ Առաքելական Եկեղեցու արտասահմանյան թեմերի կարևոր դերը:

Պր. Դարբինյանը վստահեցրեց Վեհափառ Հայրապետին, որ ամեն զանք կգործադրի Հայաստանում տնտեսական բարեփոխումների իրականացման համար: Կարևորելով սոցիալ-տնտեսական բարեփոխումների անհրաժեշտությունը, վարչապետը շեշտեց Եկեղեցու կարևոր դերը, հատկապես նշելով մաս առաքելությունը ժողովրդի հոգևոր-բարոյական վերարդենության գործում:

Ապրիլի 12-ին, Կիրակի.- Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Ս. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընթերակայությամբ Գեր. Տ. Ներսէս արքեպիս. Պողապալյանի և Ամեթիլիսի միաբան Գեր. Տ. Տաթև արքեպիս. Սարգսիանի: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Ս. Հարության տոնի առիթով իր հայրական պատգամը հղեց համայն հայ ժողովրդին (Տե՛ս էջ 3):

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ նորընտիր ճախագահ պարունակությունը:

Քոչարյանը, Ազգային ժողովի նորընտիր նախագահ պարունակությունը, վարչապետ պարուն Արմեն Դարբինյանը, Սահմանադրական դատարանի նախագահ պարուն Գագիկ Հարությունյանը, նախարարներ, ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ և պաշտոնական այլ անձինք:

Հավարտ Ս. Պատարագի Վեհարանի ընդունելության սրահում տեղի ունեցավ հյուրասիրություն՝ ի պատիվ հյուրերի:

Ապրիլի 13-ին, երկուշաբթի.- Բ օր Զատկի: Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննեսի քնն. Ալեքսանդրանը: Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստի «Վասն համօրէն Անջեցելոց»:

Ապրիլի 14-ին, երեքշաբթի.- Գ օր Զատկի:

Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնեց Լոռենո՞ւ բժշկական քննության:

Ապրիլի 15-ին, չորեքշաբթի.- Դ օր Զատկի:

Երևանի Ս. Զորավոր եկեղեցում Ս. Պատարագ մատուցեց երկար ժամանակ Մայր Աթոռում իր կայքը հաստատած Գեներքերի Արքեպիսկոպոսի լիազոր Աներկայացուցիչ Հայր Ֆիլիպ Վեներ Մթորը: Ս. Պատարագին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները և սարկավագները՝ Մայր Աթոռի դիվանապետ Գեր. Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանի գլխավորությամբ: Ներկա էին մեծ թվով հայ հավատացյալներ և Մեծ Բրիտանիայի դեսպանատան աշխատակիցները: Հընթաց Ս. Պատարագի քարոզեց Հոգեհանգստի Հայր Ֆիլիպը:

Ապրիլի 19-ին, կիրակի.- Կրկնազատիկ: Նոր կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրին Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագին Հայր սուրբը՝ «Ես այս է յաղթութիւնն որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր» (Ա. Հովհ. Ե 4) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Ապրիլի 24-ին, ուրբաթ.- ԺԳ օր Յինանց: Յիշատակ բիւրաւոր ճահատակացն մերոց: որբ կատարեցան յընթաց համաշխարհային առաջին պատերազմի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Հոգեհանգստյան Ս. Պատարագ մատուցեց Գևորգյան Շնմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. Վրդ. Նաջարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագին Հայր սուրբը՝ «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. Զէ աստ, այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ 5-6) բնաբանով:

Ս. Պատարագից հետո Մեծ Եղենմի զոհարդանի առջև կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ «Վասն համօրէն Անջեցելոցն, որբ կատարեցան յընթաց համաշխարհային առաջին պատերազմի»:

Մինչ այդ առավոտյան, ժամը 10.30-ին, Մայր Աթոռի միաբանները, Ներսէս արքեպոս. Պողապալյանի գլխավորությամբ, որ Աներկայացուցիչ Ամենայն Հայոց

Հայրապետին, բարձրացան Միծունակաքերդի Նահատակաց հուշահամալիր, որտեղ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի և Սահմանադրական դատարանի նախագահի և բարձրաստիճանաց այլ պաշտոնական հետ ծաղկեասակներ գետեղեցին և հարգանքի տուրք ընծայեցին Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին: Ապա զոհերի հիշատակը հավերժացնո՞ւ անմար կրակի մոտ, նախագահությամբ Գեր. Տ. Ներսէս արքեպո. Պողապալյանի, կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Ապրիլի 26-ին, կիրակի.- Գ կիրակի: Աշխարհամատրան: Կանաչ կիրակէ:
Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Անդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ արեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագի Հայր սուրբը՝ «Զի դու ես վեմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից գեկնելեցի իմ» (Մատթ. Ժ. 18) բնարանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Ապրիլի 28-ին, երեքշաբթի.- ԺԷ օր Յինանց:

Այսօր Մայր Աթոռ Սր. Էջմիածին այցելեցին ԱՊՀ անվտանգության մարմինների նեկավարները՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Անվտանգության և Ներքին Գործերի նախարար Սերժ Սարգսյանի ուղեկցությամբ:

Վեհապահի դահլիճում պատվիրակությանն ընդունեց Մայր Աթոռ Սր. Էջմիածնի դիվանապետ Ներսէս արքեպո. Պողապալյանը:

Սրբազն հայրը փոխացելով հյուրերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջուռնը, բարձր գնահատեց ԱՊՀ անվտանգության մարմինների նեկավարների համատեղ աշխատանքը, հույս հալտնեց, որ ԱՊՀ երկրների միջև գոյություն ունեցող եղացրությունն առավել կամրանա:

Սրբազն հայրը հյուրերին պատմեց Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրման, Մայր Աթոռ Սր. Էջմիածնի մասին:

Համեղիպման ավարտին հյուրերը շրջեցին Մայր Աթոռի թանգարաններում:

Ապրիլի 29-ին, չորեքշաբթի.- ԺԸ օր Յինանց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսէս արքեպո. Պողապալյանն ընդունեց Հայաստան ժամանած մի խումբ անզիացի լրագրողների:

Սրբազն հայրը լրագրողներին պատմեց Հայ Առաքելական Եկեղեցու 1700-ամյա պատմության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մասին:

Պատասխանելով լրագրողներին հետաքրքրող հարցերին, սրբազն հայրը ներկայացրեց Եկեղեցու վիճակը Հայաստանում և տիտրորդային շրջանում, անդրադարձավ Հայաստան ներթափանցած բազմաթիվ աղանդերի խնդրին, Հայ Առաքելական Եկեղեցու էկումենիկ հարաբերություններին, դարաբաղյան հիմնահարցին:

Ապրիլի 30-ին, հինգշաբթի.- ԺԸ օր Յինանց:

Այսօր Մայր Աթոռ Սր. Էջմիածնում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսէս արքեպո. Պողապալյանն ընդունեց Հայաստանում հավատարմագրված Ռումինիայի դեսպան Կոմստանտին Գիրդային /նատավայրը՝ Թբիլիսի/:

Դեսպանը սրբազն հորը հանձնեց Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտին Անդրեևի նամակը՝ ուղղված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Նոյն օրը Մայր Աթոռ Սրբ է շնորհվել Հայոց ազգի համար՝ ապահով կատարելու համար:

Վեհարանի հանդիսությունների դամբիճում ուսանողական կազմակերպությունների անդամ համաժողովի շուրջ 100 մասնակիցներին ընդունեց Մայր Աթոռ Սր. Էջմիածնի դիվանագետ Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանը: Մրագան հայրը խոսեց Հայ Առաքելական Եկեղեցու պատմական դերի, ավանդույթների մասին, կիսեց իր մտորումները համաժողովում արծարծվող խնդիրների շուրջ:

Ինչպես սրբազան հորը տեղեկացրի պատվիրակության անդամները, համաժողովի նախառական է քննարկել ուսանողության ու երիտասարդությանը առնչվող տարրեր հիմնախնդիրներ, այդ թվում՝ երիտասարդների շրջանում առկա բարյանահոգեքանական մժմուլորտի վերաբերող խնդիրներ:

Համաժողով Հայ Եկեղեցու Ուսանողական Միության հետ համատեղ Ասխածեռնել են Հայաստանի մի շարք ուսանողական և երիտասարդական կազմակերպություններ՝ առաջատար բուհերի հճանակառավարման կառուցները, Կուսակցությունների երիտասարդական-ուսանողական միությունները, հասարակական կազմակերպությունները:

ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

(1974-1983)

1979

716. Աբրահամյան Աշոտ Գարեգինի: - Եջմանի 1678 թ. գաղտնի ժողովը: [Ուսումնասիրություն]: 1979, հուլիս, էջ 36-46:

717. Ազարանգեղոսի պատմություն հայոց: (Վարդապետություն Սուրբ Գրիգորի): [Թարգմանություն Ա. Տեր-Ղևոնյանի]: 1979, փետրվար, էջ 35-48, մայիս, էջ 53-64, հունիս, էջ 33-43:

718. Աճեմյան Շահե արքեպիկոպոս: - Էկումենիկ կյանք: Հայեկեղու մասնակցություն «Հավատքի եւ կարգի» ժողովներուն: 1979, հունիս, էջ 58-62:

719. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եւ պետական բարձրաստիճան անձնավորություններին միջեւ փոխանակված հեռագրեր նոր տարվա առթիվ: 1979, հունվար, էջ 12-14:

720. Այվազյան Արգամ: - Ցինայի ճարտարապետական հուչարձանները: [Կիմագիր արձանագրություններ]: 1979, հուլիս, էջ 47-51: Երեք խաչքարի նկար:

721. Այց Բոնոնի ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի: 1979, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 48-53:

Բովանդ. Վեհափառ Հայրապետի օրինության խոսքը Բոնոնի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում: - Հանդիպում Բոնոնի հայ հավատացյալների հետ: - Վեհափառ Հայրապետի պատգամը Բոնոնի հայ հավատացյալներին:

722. Այցելություն Իրաքի հայոց տիրախմամ թեմին: [Արսեն Եպիկոպոս Բերբերյանի կողմից]: 1979, ապրիլ, էջ 21-22:

723. Այցելություն Հայկական ՍՍՀ Մինհստրների խորհրդի նախագահ մեծահարգ Ֆադեյ Տ. Սարգսյանին: [Վազգեն Ա Վեհափառի]: 1979, հունվար, էջ 15:

724. Այցելություն Հայկական ՍՍՀ Մինհստրների խորհրդի նախագահ տիկար Ֆադեյ Տ. Սարգսյանին: [Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի]: 1979, հունիս, էջ 3:

725. Այցելություն Ֆրանսիայի Հանրապետության նախագահ, նորին վսեմություն Վալերի Ժիվկար Դեստենին: 1979, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 156-160:

Բովանդ. Հրաժեշտի համաժողովրդական ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի: - Վեհափառ Հայրապետի այցելության վերջին օրերը Փարիզում: - Ա. պատարագ Փարիզի ս. Շովիաննես Սկրտիչ Եկեղեցում: - Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս Փարիզին: [Երկու ներդիր]:

726. Առաքել Պատրիկ: - Ենթադրությունից դեպի հավանականը: [«Զվարքնոց» տաճարի ճարտարապետի մասին]: 1979, մարտ, էջ 48-49:

727. Ավետիքյան Վաչագան Մարկարակավ: - Ռոգենոր ճենարանի

Վերաբացումը: 1979, նոյեմբ., էջ 39-42:

728. Ավետիքյան Վաչագան սրկ.: - Սիամանթոյի ծննդյան 100-ամյակին նվիրված գրական-երաժշտական երեկո Շոգենոր ճեմարանի հարկի տակ: 1979, մարտ, էջ 61-62:

729. Ավետիքյան Վաչագան սարկավագ: - Միքոց Վարդանանց տոնակատարությունը Եւ Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձ Մայր Աթոռում: 1979, փետրվար, էջ 5-7:

730. Ավրամիտիս Ստեփանոս: - Այցելություն ի Հայաստան: 1979, փետրվար, էջ 49-52:

731. Արարացյան Անանիա Վարդապետ: Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Մերձավոր Արեւելքի հատուկ հանճնաժողովի նստաշրջանը Մայր Աթոռ ս. Եջմիածնում: 1979, դեկտ., էջ 8-14:

Երկու նկար: 732. Արարացյան Անանիա Վարդապետ: - Հովհաննես այցելություն Աղրբեջանի հայոց տիրախնամ թեմ: 1979, նոյեմբ., էջ 25-34:

Բովանդ՝ ժամանում Բաքրու: - Բաքրի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: - Վեհափառ Հայրապետի քարոզ Բաքրի ս. Գրիգոր Լուսավորիչ հայոց եկեղեցում: Այց Բաքրի 26 կոմիսարների հուշարձան: - Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ եւ քարոզ: - Այցելություններ: - Ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի: - Վեհափառ Հայրապետի խոսքը ճաշկերութիւն: - Այցելություն Աղրբեջանական ՍՍՀ Մինհատրների խորհուրդ: - Կրկին այցելություններ: - Այցելություն Աղրբեջանական ՍՍՀ Մինհատրների խորհրդին առընթեր կրոնական

գործերի լիազոր տիար Աբդուլլա Ախաղովին: Վերադարձ Մայր Աթոռ:

Չորս լուսանկար: Ներդիր:

733. Արարացյան Անանիա Վարդապետ: Վրացական քույր եկեղեցու նոր պարբերականի հրատարակությունը: 1979, դեկտ., էջ 27-29:

Նկ. «Զվարի վազիս» վրացական կրոնական պարբերականի շապիկը:

734. Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Եւ Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովք արքեպիսկոպոս Մանուկյանը Մայր Աթոռում: 1979, մարտ, էջ 12:

735. Բերբերյան Արսեն Եպիսկոպոս: - Կ. Պոլսի Պրոկեր պատրիարքի նամակը հայոց Սահակ Պարթև կաթողիկոսին (5-րդ դար): [Ուսումնասիրություն]: 1979, հուլիս, էջ 24-28:

736. Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի հայոց ս. Գեւորգ Եկեղեցու Վերանորոգության 150-ամյակը: [Եկեղեցու նկարը]: 1979, փետրվար, էջ 13-14:

737. Բունիաթյան Գրիգորիս վրդ.: - Ամավերջի հանդիսություն Շոգենոր ճեմարանում: [Խմբանկար Վեհափառի հետ]: Ներդիր]: 1979, հունիս, էջ 4-9:

738. Բունիաթյան Գրիգորիս վրդ.: - Այց Սինգապուրի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: [Տարոն ծ. վրդ. ճերեցյանի կողմից]: 1979, ապրիլ, էջ 25-26:

739. Գերագույն Շոգենոր Խորհրդություն: - «Ա. Գրիգոր Լուսավորիչ», «ս. Սահակ-ս. Մեսրոպ» եւ «ս. Ներսես Շնորհալի» շքանշանների տվյալների կամոնադրությունները: [Երեք շքանշանների նկարները: Ներդիր]: 1979, հունվար, էջ 28-30:

740. Գալստյան Շնորհը արքեպիսկոպոս: - Աստվածաշնչական սուրբեր: 1979, փետրվար, էջ 15-

20, ապրիլ, էջ 27-32, մայիս, էջ 7-14, հունիս, էջ 15-22, հուլիս, էջ 5-12, նոյեմբ., էջ 43-54, դեկտ., էջ 21-26:

741. Գըվըգյան Մյուռոն արեղա: - Ամանորը Մայր Աքռօռում: 1979, հունվար, էջ 31-35:

742. [Գըվըգյան Մյուռոն արեղա]: - Ուժութիւն անդրամիկ քարոզ: 1979, մարտ, էջ 13-14:

743. Գրիգորյան Կամսար: - Պետքրութզ-Լենինգրադ: (Հայուսական ծաշկութային կապերի պատմությունից): 1979, մարտ, էջ 41-47: Նկ.: Լենինգրադի հայկական եկեղեցու շենքը: Ներդիր:

744. Ղարքինյան Մելիք Ղետնդի: - Հայոց եկեղեցու մեջ երախտավորը: (Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու ծննդյան 200-ամյակի առթիվ): 1979, ապրիլ, էջ 42-49: Նկ.: Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի:

745. Դիվան Մայր Աքռոի: - Հաղորդագրություն: [Ս. Զահիսիմե Վանքի պեղումների մասին]: 1979, մայիս, էջ 4-6:

746. Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ Տ. Եղիշե պատրիարքը, Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Սերովը արքեպիսկոպոսը եւ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանապետ առ. Չահե արքեպիսկոպոսը Մայր Աքռում: 1979, հունվար, էջ 3-4:

747. Դիվան Մայր Աքռոի: - Հաղորդագրություն: [Կեհափառ Հայրապետի հովվագետական այցելությունը Աղքածանի թեմ]: 1979, նոյեմբ., էջ 23-24:

748. Եկումենիկ կյանք: - Եկեղեցների Համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի 31-րդ նստաշրջանը ճամայկայում: 1979, ապրիլ, էջ 52-53:

749. Եկումենիկ կյանք: 1979, փետրվար, էջ 53-58:

Բովանդ. Ժողով Բագելում օրորդոց Եկեղեցների աստվածաբանական ճեմարանների մասին: - Տ. Չահե արքեպիսկոպոս Աճեմյանի գեկուցումը:

750. Եկումենիկ կյանք: 1979, նոյեմբ., էջ 60-63:

Բովանդ. Միջազգային ծիսագիտական ընկերակցության 7-րդ համագումարը: - Յնդկական մալարար Եկեղեցու պետը ԱՍՍ-ում: - Եկեղեցների Համաշխարհային խորհրդի ժողովը Բոստոնում: - Այցելություն Աթենքի եւ Համայն Քելլադայի տ. Սերաֆիմ միտրոպոլիտին: - Մարտելի արքեպիսկոպոս Կարդինալ Ոնծե Եչեգարայի այցելությունը սուրբ Սահակ-Մեսրոպ Մայր Եկեղեցի:

751. Թահմիզյան Նիկողայոս]: - Դիտողություն Կոմիտաս վարդապետի «Պատարագին» վերաբերող մի քյուր կարծիքի մասին: [Երկու էջ ձայնագրություն]: 1979, դեկտ., էջ 31-38:

752. Թահմիզյան Նիկողայոս]: - Սովուս խորենացին եւ հայ իին ու վաղ միջնադարյան երգարվեստը: [Ուսումնասիրություն]: [Խազագիր ձեռագրային երեք էջ]: [Զայնագրություն]: 1979, մայիս, էջ 25-33, հունիս, էջ 44-53:

753. Խորհրդակցական հանդիպում Պրագայում նկիրված Եկեղեցների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի առաջիկա նստաշրջանին: 1979, հունվար, էջ 63:

754. Կրկին Լիոնում: 1979, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 93-96:

Երեք նկար: Ներդիր:

Բովանդ. Հայրապետական ս. պատարագ Լիոնի հայոց ս. Հակոբ Եկեղեցում: - Ողջերի ճաշկերույթ Լիոնի «Տերմինուս հյուրանոցում»: -

Վեհափառ Հայրապետի հրաժեշտի խոսքը Լինում:

755. Կուսակրոն քահանայի ծեռնադրություն: [Կ. Պոլսում]: [Ծնորհը պատրիարքը Մինաս սարկավագ Մուրաֆյանին ծեռնադրություն է քահանա Վերանվանելով հայր Մեսրոպ]: 1979, մայիս, էջ 46:

756. Դանգիստ Դրավարդ: - Վասպուրականի մանրանկարիչ Պոսկ արեղա: [Ուսումնասիրություն]: [Քինզ մանրանկար]: 1979, դեկտ., էջ 39-44:

757. Դադորդագրություն: - Ամենայն Հայոց Կարողիկոսութեան եւ Սեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսութեան Մերկայացուցիչներու միջեւ կայացած ժողովին: 1979, նոյեմբ., էջ 17-19:

758. Հայաստանյաց Եկեղեցու Շրուտսային Ամերիկայի Արևմտյան թեմի 52-րդ թեմական պատգամավորական ժողովը: 1979, նոյեմբ., էջ 57:

759. Հայոց Հայրապետը Առնուվիլում: 1979, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 145-149:

Բովանդ. Առնուվիլի քաղաքագլուխ Կլոր Բիթելի քարիգալստյան խոսքը: - Պատարագ Առնուվիլի Հայոց Վարագա ս. Խաչ Եկեղեցում: - Վեհափառ Հայրապետի քարոզը Առնուվիլի Վարագա ս. Խաչ Եկեղեցում:

760. Հայրապետական ս. պատարագ եւ քարոզ Փարիզի հայոց ս. Շովհաննես Մկրտիչ Մայր Եկեղեցում: 1979, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 113-126:

Բովանդ. Վեհափառ Հայրապետի քարոզը Երկրորդ Ծաղկագարդի տոնին առիվ Փարիզի ս. Շովհաննես Մկրտիչ Մայր Եկեղեցում: - Սարդարապատի հերոսամարտի ողեկոչումը Փարիզի «Սալ Գավո» դահլիճում: - Վեհափառ Հայրապետի ուղերձը Ֆրանսիական Հան-

րապետության կապի մինիստր Նորբեր Սեգարի կողմից կազմակերպված ճաշկերութին:

761. Դանգիստ արժանապատիվ տ. Գրիգոր ավագ քահանա Իլյազյանի (1897-1979): [Կենսագրական-մահախոսական: Դիմանկարով]: 1979, մարտ, էջ 63:

762. Դանգիստ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանի: [Կենսագրական-մահախոսական: Դիմանկարով]: 1979, մարտ, էջ 63:

763. Դանգիստ Մ. Միքայել ավագ քահանա Միքայելյանի (1881-1979): [Կենսագրական-մահախոսական: Դիմանկարով]: 1979, հուլիս, էջ 63:

764. Դանուն Երկրագնդի խաղաղության: 1979, ապրիլ, էջ 56-57:

765. Ռեռագրերի փոխանակում Նորին Սրբություն Շոռնի Շովհաննես-Պողոս Բ Պապի եւ Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգեն Ա-ի միջեւ: 1979, դեկտ., էջ 3-4:

766. Դատիտյան Արքուն: - Առաքելական Հայրեր: [Ուսումնասիրություն]: 1979, հուլիս, էջ 13-23:

767. Դատիտյան Արքուն: Շահրաբայան Պարգեւ: - Նոր Կոտակարանի գրաբար բնագրից կատարված արեւմտահայերեն նոր քարզմանության հրատարակությունը: 1979, մարտ, էջ 11:

768. Դատիտյան Արքուն: - Ծնորհը արքեպիսկոպոս Գալուստյան. Համաքրիստոնեական սուլթար, Խթանպուլ, 1978, 233 էջ: (Գրախոսություն): 1979, մարտ, էջ 3-10:

769. Դատիտյան Արքուն: - Սուլթապիփան Հայրապետ Կիպրացի (315-403): [Ուսումնասիրություն]: 1979, ապրիլ, էջ 33-41:

